

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

3(657)
ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
СЕНТЯБРЬ-ДЕКАБРЬ
SEPTEMBER-DECEMBER

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈՐՈՒՆՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ԱՐՇՐԱՆ ԱՎԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԵՆՅԱՆ, ԳԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱՏԻՆՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ
ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՎԱՉԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՅԱՆ, ԳԵՎՈՐԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՐԱՍԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՎԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ԱՐՏՐԱՆ ԱՎԱԿՅԱՆ, ԳԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ
ԽԱՐԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԽԱՐԱՏՅԱՆ, ՎԱՉԵ
ՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ԳԱՅԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԿ
ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՐԱՍԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՎԱՐՅԱՆ

- © Լրաբեր հասարակական գիտությունների
- © Вестник общественных наук
- © Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Էդիկ Մինասյան – Երևանի պետական համալսարանը 1920-ական թթ. (հիմնադրման 100-ամյակի առթիվ).....	12
Կարինե Խոջայան – Ֆրանսիայում ապրիլի 24-ը՝ Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր հռչակելու ներքին և արտաքին շարժառիթները.....	27
Մարիամ Հովսեփյան – Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության գործունեության անդրադարձը «Ճակատամարտ» թերթում (1918-1919 թթ.).....	38
Վարդիթեր Գրիգորյան – Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիան (XIX դ. 30-ական թթ.– XX դ. առաջին տասնամյակ).....	53

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Սարգիս Հայրապետյան – Է.Ս. Մարգարյանի հայագիտական հետազոտությունները (անվանի մշակութաբանի ծննդյան 90-ամյակի առթիվ).....	63
Ամալյա Հարությունյան – Իրավագիտակցության բնույթի և բովանդակության բացահայտման տեսական-մեթոդաբանական հիմքերը.....	75

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Մելինե Թորոսյան – Գենդերային տարբերություններն առօրեականության հարթությունում.....	81
---	----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուրի Սուվարյան – Տնտեսական զարգացումը և քաղաքական ինստիտուտները.....	92
Մարիանա Քոչարյան – Կրթության տեղեկատվայնացման ազգային հայեցակարգի ձևավորման անհրաժեշտությունը ՀՀ-ում.....	105
Մանյա Պողոսյան – Դիվելոպմենտի (գործակալ պատվիրատու) ֆինանսական և հարկային հաշվառման հիմնախնդիրները ՀՀ-ում.....	117

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Վերժինե Սվազյան – Նոր Նախիջևանը և հայ ժողովրդական բանահյուսությունը (նվիրվում է Նոր Նախիջևանի հիմնադրման 240-ամյակին).....	129
Սուսաննա Հովհաննիսյան – Հովհաննես Թումանյանը և Վան-Վասպուրականի զանգվածային տեղահանությունը.....	147
Գոհար Կարապյոզյան – Նախիջևանը XIII-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների գրառումներում.....	163
Մհեր Քումունց – Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում (ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի. համաժամանակյա և տարաժամանակյա քննություն).....	183
Արևհատ Խաչատրյան – Հումանիտար գիտությունների հումանիտար առաքելությունը.....	198

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նաիրա Շահվաղյան – Բեմադրական արվեստի (ռեժիսուրա) ինքնուրույնացումը և Ազնիվ Հրաչյան՝ բեմադրիչ.....	206
Ավետիս Ավետիսյան – Մեղրիի Անապաստանաց վանքի որմնանկարները.....	219

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մկրտչյան – Զատիկ և Համբարձում տոները (1920-1930-ական թթ.).....	231
Կարեն Հովհաննիսյան – Թուխ Մանուկ Ավետարանները.....	242
Սուրեն Հոբոսյան, Անի Սարատիկյան – Գինեգործության նորահայտ կենտրոն Լոռիում.....	256

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ռուբեն Սահակյան, Ռոստոմ Սարգսյան – Հայաստանի Հանրապետությունում միլիցիայի դպրոցի կազմավորման պատմությունից (1919-1920 թթ.).....	268
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալիս Ներսիսյան – <i>Արարապ Աղասյան</i> , Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը).....	276
---	-----

Արմեն Կարապետյան – <i>Ավերդիս Հարությունյան, Վան-Վասպուրականի կրոնամշակութային կյանքը և պետականության ստեղծման փորձը (1908-1918)</i>	279
---	-----

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Լիլիթ Հարությունյան – «Կոմիտասը և իր ժառանգությունը» միջազգային գիտաժողովը՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյա հոբելյանին.....	283
Աննա Ասատրյան – «Հովհաննես Չեքիջյան–90» գիտական նստաշրջանը.....	288

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Հենրիկ Սվազյան – Հայ մամուլի պատմության անձանձիր հետազոտողը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանի ծննդյան 80-ամյակի առթիվ).....	293
Հասմիկ Հարությունյան – Յուրի Մկրտումյան՝ քաղաքացին, գիտնականը, մանկավարժը (ծննդյան 80-ամյակի առթիվ).....	298

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Эдик Минасян – Ереванский государственный университет в 1920-е гг. (к 100-летию со дня основания).....	12
Карине Ходжаян – Внутренние и внешние мотивы провозглашения 24 апреля во Франции национальным днем памяти геноцида армян.....	27
Мариам Овсепян – Освещение деятельности правительства Первой Республики Армения в газете "Чакатамарт" в 1918-1919 гг.	38
Вардигер Григорян – Консистория Грузино-имеретинской епархии Армянской апостольской церкви (30-е гг. XIX в. – первое десятилетие XX в.).....	53

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Саргис Айрапетян – Арменоведческие исследования Э.С. Маркаряна (к 90-летию со дня рождения известного культуролога).....	63
Амалия Арутюнян – Теоретико-методологические основы выявления природы и содержания правосознания.....	75

СОЦИОЛОГИЯ

Мелине Торосян – Гендерные различия в повседневной жизни.....	81
--	----

ЭКОНОМИКА

Юрий Суварян – Экономическое развитие и политические институты.....	92
Мариана Кочарян – Необходимость формирования национальной концепции информатизации образования в РА.....	105
Маня Погосян – Проблемы финансового и налогового учета девелопера (агент-заказчик) в РА.....	117

ФИЛОЛОГИЯ

Вержине Связлян – Новая Нахичевань и устное народное творчество армян (посвящается 240-летию со дня основания Новой Нахичевани)..	129
Сусанна Ованесян – Ованес Туманян и массовое переселение из Вана-Васпуракана.....	147
Гоар Карагезян – Нахичеван в записках европейских путешественников XIII-XVII вв.	163

Мгер Кумунц – Суффиксные средства образования антонимов в однокоренных и разнокоренных словах (на основе Сюникско- арцахской диалектной лексики: синхроническое и диахроническое исследование).....	183
Ареват Хачатрян – Гуманитарная миссия гуманитарных наук.....	198

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Наира Шахваладян – Автономизация постановочного искусства (режиссура) и Азнив Рачия как режиссёр.....	206
Аветис Аветисян – Росписи монастыря Анапастанац г. Мегри.....	219

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Самвел Мкртчян – Праздники Пасхи и Вознесения господня в 1920- 1930-ые гг.	231
Карен Оганнисян – Евангелия "Тух Манук".....	242
Сурен Обосян, Ани Саратикян – Нововыявленный центр виноделия в Лори.....	256

ПУБЛИКАЦИИ

Рубен Саакян, Ростом Саргсян – Из истории формирования школы милиции в Республике Армения (1919-1920 гг.).....	268
--	-----

РЕЦЕНЗИИ

Алис Нерсисян – <i>Арарат Агасян</i> , Потери армянского изобразитель- ного и прикладного искусства на территории Османской империи (от гамидовских погромов до наших дней).....	276
Армен Карапетян – <i>Аветис Арутюнян</i> , Религиозно-культурная жизнь Вана-Васпуракана и опыт создания государственности (1908-1918).....	279

НАУЧНАЯ ХРОНИКА

Лилит Арутюнян – Международная конференция "Комитас и его наследие", посвященная 150-летию со дня рождения Вардапета (Архимандрита) Комитаса	283
Анна Асатрян – Научная сессия "Ованес Чекиджян-90".....	288

НАШИ ЮБИЛЯРЫ

- Генрик Связян** – Неустанный исследователь истории армянской периодики (к 80-летию со дня рождения член-корра НАН РА Альберта Харатяна)..... 293
- Асмик Арутюнян** – Юрий Мкртумян – гражданин, ученый, педагог (к 80-летию со дня рождения)..... 298

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

Edik Minasyan – Yerevan State University during 1920-s (In Commemoration of the 100 th Anniversary).....	12
Karine Khojayan – Domestic and External Motives for Declaration of April 24 in France as National Day of Commemoration of the Armenian Genocide.....	27
Mariam Hovsepyan – The Coverage of the Activities of the Government of the First Republic of Armenia in Newspaper "Chakatamart" (1918-1919).....	38
Varditer Grigoryan – Consistory of the Georgian-Imereti Diocese of the Armenian Apostolic Church (From 30s of the XIX century – up to the first decade of the XX century).....	53

PHILOSOPHY AND LAW

Sargis Hayrapetyan – E.S. Margaryan's Researches in the Field of Armenology (Towards the 90 th Anniversary of famous Culturology.....	63
Amalya Harutyunyan – Theoretical-Methodological Bases of Disclosure of Nature and Content of Legal Consciousness.....	75

SOCIOLOGY

Meline Torosyan – Gender Differences in Daily Life.....	81
--	----

ECONOMY

Yuri Suvaryan – Economic Development and Political Institutions.....	92
Mariana Kocharyan – The Need to Formulate a National Concept of Educational Informatization in RA.....	105
Manya Poghosyan – The Problems of Developers (Agent Customer) in Financial and Tax Accounting in RA.....	117

PHILOLOGY

Verjine Svazlyan – Nor-Nakhijevan and the Armenian Popular Folklore (Dedicated to the 240 th Anniversary of the Foundation of Nor Nakhijevan).	129
Susanna Hovhannisyan – Hovhannes Tumanyan and Van-Vaspurakan widespread Displacement.....	147
Gohar Karagezyan – Nakhichevan in the Notes of the 13th-17th Century European Travellers.....	163
Mher Kumunts – Affixal Means of Forming Antonyms in Words of the Same and Different Roots (According to Syunik-Artsakh Dialectical Vocabulary: Synchronous and Asynchronous Examination).....	183
Arevhat Khachatryan – Humanitarian Mission of Humanities.....	198

CULTURE AND ART HISTORY

Naira Shahvaladyan – The Autonomy of Staging Art (Directing): Azniv Hrachya as Theatre Director.....	206
Avetis Avetisyan – The Mural Painting of the Anapastanac Monastery in Meghri Town.....	219

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Samvel Mkrtchyan – The Festivals of Easter and Ascension in 1920s and 1930-s.....	231
Karen Hovhannisyan – "Tukh Manook" Gospels.....	242
Suren Hobosyan, Ani Saratikyan – A New Winery Center in Lori.....	256

PUBLICATIONS

Ruben Saakyan, Sargsian Rostom – From the History of Formation of the Police School in the Republic of Armenia (1919-1920).....	268
--	-----

LITERARY REVIEWS

Alice Nersisyan – <i>Ararat Agasyan</i> , The Losses of Armenian Fine Arts and Applied Arts in the Territory of Ottoman Empire (From the Hamidian Massacres to Our Days).....	276
Armen Karapetyan – Avetis Harutyunyan, Religious and Cultural Life of Van-Vaspurakan and the Attempt of State Creation (1908-1918).....	279

SCIENTIFIC CHRONICLE

- Lilit Harutyunyan** – “Komitas and His Legacy”: International Conferenc
dedicated to the 150th Anniversary of Komitas Vardapet..... 283
- Anna Asatryan** – Scientific Conference “Hovhannes Chekijyan-90”..... 288

OUR JUBILEES

- Henrik Svazyan** – The Devoted Investigator of the Armenian Press (In
Commemoration of the 80th Anniversary of Albert Kharatyan)..... 293
- Hasmik Harutyunyan** – Yuri Mkrtumyan as Citizen, Scientist and
Pedagogue (In Commemoration of the 80th Anniversary)..... 298

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. (հիմնադրման 100-ամյակի առթիվ)

Էդիկ Մինասյան

Պատմական գիտությունների դոկտոր
Երևանի պետական համալսարան, Պատմության ֆակուլտետ
ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
Էլ. փոստ՝ eminasyan@ysu.am
Հոդվածը ներկայացվել է 31.10.2019, գրախոսվել է 03.12.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Երևանի պետական համալսարանի հիմնադրումը կրթության կարևորագույն և կենսական անհրաժեշտության իրողություն էր հայ ժողովրդի կյանքում: Այն կրթության, լուսավորության նկատմամբ ունեցած համազգային ցանկությունների, դարավոր ձգտումների իրագործման արդյունք էր: Հայ ժողովուրդը, որ դեռևս միջնադարում հասել էր համալսարանական կրթօջախներ ունենալու մակարդակին, պատմության նորագույն շրջանում ավելի քան զգում էր դրա անհրաժեշտությունը, առավել ևս անկախության և սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու պայմաններում: Հասկանալի պատճառներով Հայաստանը, բացի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժնից, չունենալով բարձրագույն ուսումնական որևէ հաստատություն, զրկված էր երկրի ներսում ազգային կադրեր պատրաստելու հնարավորությունից:

Պատահական չէ, որ Ամենայն հայոց բանաստեղծը՝ Հովհաննես Թումանյանը, դեռևս 1917 թ. մայիսին գրել է. «Պետք է ստեղծել Հայոց համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի ջահ՝ Հայկական համալսարան...»¹:

Ուղիղ 100 տարի առաջ՝ 1919 թ. մայիսի 16-ին, Հայաստանի Առաջին հանրապետության նախարարների խորհուրդը որոշում ընդունեց համալսարան հիմնելու մասին՝ առաջնահերթ համարելով բացել պատմալեզվաբանական ֆակուլտետ²: Որոշման մեջ մասնավորապես ասվում էր.

¹ Երևանի պետական համալսարան-90 2009, 8:

² ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 220, թ. 78:

«Լսեցին... հանրային կրթության մինիստրի զեկուցումը՝ Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 5 միլիոն ռուբլի հատկացնելու մասին:

2. Որոշեցին.

ա) հիմնել Երևանում համալսարան՝ հետևյալ չորս բաժիններով՝
 ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսաիրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով,
 բ) համալսարանը բանալ 1919-1920 ճեմարանական տարում,
 գ) մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը՝ ըստ հանրային կրթության մինիստրի առաջարկության,

դ) առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը,

ե) համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել 300.000 ռուբլի՝ հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրությանը»³:

Անհրաժեշտ է փաստել, որ Հայաստանի Առաջին հանրապետության իշխանությունները երկրի համար չափազանց ծանր սոցիալ-տնտեսական իրադրության մեջ, ինչպես նաև սովի, համաճարակի, մեծ թվով գաղթականության առկայության պայմաններում գիտակցեին և խիզախորեն իրականացրեցին այդ ազգանպաստ գործը:

Նշված որոշման հիման վրա 1919 թ. հունիսի 5-ին Նախարարների խորհուրդն ընդունեց «Երևանի համալսարանի մասին» օրենք⁴:

Համալսարանի տեսուչի (ռեկտոր) պաշտոնում նշանակվեց Եվրոպայում և Ռուսաստանում մեծ հռչակ ունեցող իրավագետ, Մոսկվայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր Յուրի Լամբարյանը: Վերջինս հռոմեական և քաղաքացիական իրավունքի մասնագետ էր և այդ ժամանակ աշխատում էր Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես պրոֆեսոր և ռեկտորի պաշտոնակատար⁵: Սահմանվեց համալսարանի պրոֆեսորի աշխատավարձի չափը՝ մինիստրական, իսկ արտասահմանից հրավիրելու դեպքում՝ ավելի բարձր⁶:

Համալսարանի հանդիսավոր բացումը Ալեքսանդրապոլում. գործունեության առաջին շրջանը

Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի՝ 1919 թ. դեկտեմբերի 5-ի ՀՀ նախարարների խորհրդին ուղղված զեկու-

³ ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 220, թ. 78:

⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, թ. 83, հմմտ. ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 105:

⁵ ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 220, թ. 114, 132:

⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 105:

ցագրից տեղեկանում ենք, որ Երևան քաղաքում հարմար շենքեր չգտնելու պատճառով նախարարությունն առաջարկել է համալսարանը ժամանակավորապես տեղափոխել Ալեքսանդրապոլ (Գյումրի), որտեղ կային բոլոր հարմարությունները: Նշված գրության հիման վրա վարչապետ Ա. Խատիսյանի մակագրությամբ որոշվել է «Հայաստանի համալսարանը ժամանակավորապես մինչև ուսումնական տարվա վերջը տեղափոխել Ալեքսանդրապոլ»⁷: Մինչև համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բազումը անհրաժեշտ էր լուծել երկու կարևոր խնդիր՝

1) այն ապահովել որակյալ դասախոսական կազմով,

2) ստեղծել ընդունելության կարգ և կազմակերպել ընդունելություն:

Նշված խնդիրների իրագործմանն էլ ձեռնամուխ եղան համալսարանի կազմակերպիչները: Հանրային կրթության վերոնշյալ նախարարները և կազմակերպիչները՝ Յու. Ղամբարյանն ու նրա օգնական, հայտնի քիմիկոս Դ. Զավրյանը, անժխտելի, մեծ ավանդ ունեցան ոչ միայն համալսարանի բացման, այլև նրա անդրանիկ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետը բարձրորակ դասախոսական կազմով ապահովելու գործում: Հենց նրանց ջանքերով դասախոսական աշխատանքի հրավիրվեցին ժամանակի նշանավոր գիտնականներ, փորձառու և ճանաչված մանկավարժներ՝ Մանուկ Աբեղյանը (հայ գրականություն), Գրիգոր Ղափանցյանը (համեմատական լեզվաբանություն), Ստեփան Մալխասյանցը (պատմական լեզվաբանություն), ֆակուլտետի առաջին դեկան Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (հայոց պատմություն և հայ գրականության հին շրջան), Երվանդ Տեր-Մինասյանը (հայոց պատմության հին շրջան), դեկանի պաշտոնակատար (1920 թ. հունիս-հուլիս) Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը (հայ եկեղեցու պատմություն և գրչության արվեստ), Սիրական Տիգրանյանը (հայ իրավունքի պատմություն և հոգեբանություն), Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Աշխարհբեկ Քալանթարը (Արևելքի պատմություն և հնագիտություն) և ուրիշներ:

Երկրորդ կարևոր հարցը ուսանողության հավաքագրումն էր, որը կարգավորվեց ՀՀ նախարարների խորհրդի՝ 1919 թ. հուլիսի 8-ին հաստատած՝ «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնների» համաձայն, ըստ որի՝ «իսկական ուսանող» կարող էին դառնալ առաջին հերթին միջնակարգ կրթությամբ քաղաքացիները՝ առանց սեռային խտրականության, ապա՝ միջնակարգ կրթություն չունեցողները, որոնք ընդհանուր ժողովի թույլտվությամբ կարող էին ընդունվել որպես ազատ ունկնդիր: Դիմումի հետ պահանջվում էր ներկայացնել միջնակարգ կրթության վկայական կամ դրա վավերացված պատճենը, ծննդյան և զինվորական ծառա-

⁷ Ղարիբջանյան 1994, 36:

յության վկայականները: Ուսանողները պետք է վճարեին ուսման վարձ՝ տարեկան 500, իսկ ազատ ունկնդիրները՝ 100 ռուբլի: Դիմումների թիվը համալսարանում մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը եղել է 632: Սակայն համալսարանի ժամանակավոր կանոնների համաձայն՝ ընդունվել է ընդամենը 260 ուսանող, որոնցից 121-ը՝ հիմնական, իսկ 139-ը՝ որպես ազատ ունկնդիր: Հետաքրքիր է, որ ուսանողների մեջ մեծ թիվ են կազմել ուսուցիչները⁸:

Նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1920 թ. հունվարի 31-ին, Ալեքսանդրապոլի (Գյումրի) առևտրային դպրոցի շենքում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին խորհրդարանի փոխնախագահ Ա. Սահակյանը, նախարարապետ (վարչապետ) Ա. Խատիսյանը, հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, օտարերկրյա դիվանագետներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, նույնիսկ անգլիական կառավարության ռազմաքաղաքական կոմիսար, գեներալ Ուորտրոպն իր շքախմբով, ամերիկացի կոմիսար-գնդապետ Հասկելը, ֆրանսիական ռազմաքաղաքական հետախուզության պետ Պուադեպարը, Պարսկաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ասադուլլա խանը, Դենիկինի զինվորական ներկայացուցիչ, հայկական դիվիզիայի նախկին պետ Ջենկևիչը և ուրիշներ⁹:

Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի առաջին ռեկտոր (տեսուչ) Յու. Ղամբարյանը: Համալսարանի բացման անհրաժեշտությունն ու նրա սոցիալ-քաղաքական դերն ընդգծեց նաև Ն. Աղբալյանը՝ ասելով. «Այս համալսարանում միտքը պիտի լինի մատչելի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ձրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքների»¹⁰:

Վարչապետ Ա. Խատիսյանն իր ողջույնի խոսքում կոչ արեց «բռնության շղթան» տապալելուց հետո «կործանել նաև տգիտության շղթան»:

Համալսարանը բացման առիթով 300-ից ավելի ողջույնի հեռագրեր ստացավ: Ելույթներին հաջորդեց պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, պրոֆեսոր Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի անդրանիկ դասախոսությունը՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմայով: Մեսրոպ արքեպիսկոպոսը նվիրյալ հայրենասեր էր, իսկական մտավորական, տիրապետում էր մի քանի օտար լեզուների: Հաշվի առնելով նրա գիտակրթական մակարդակն ու

⁸ Ղարիբջանյան 1994, 38:

⁹ Ղարիբջանյան 1994, 39:

¹⁰ Հառաջ 1920, փետրվարի 6, N 27:

մանկավարժական հարուստ փորձը, կազմակերպչական ունակությունները՝ նրան հրավիրել էին Հայաստանի նորաբաց համալսարան որպես՝ հայ գրականության և կրոնական մատենագրության առարկաների պրոֆեսոր և պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան (1919 թ. հունիսից մինչև 1920 թ. դեկտեմբեր): Մի տարուց փոքր-ինչ ավել ժամանակահատվածում նրան հաջողվեց մեծածավալ աշխատանքներ կատարել ոչ միայն ֆակուլտետի ուսումնական գործընթացը կազմակերպելու, այլև գիտական աշխատանքներ հրատարակելու ուղղությամբ:

Համալսարանի բացման արարողությունը վերածվեց իսկական տոնախմբության:

1920 թ. հունվարի 31-ին՝ համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բացման օրը, լույս տեսավ «Հայաստանի համալսարան» մեկօրյա թերթը, որի վաճառքից ստացված եկամուտը հատկացվեց չքավոր ուսանողների օգնության ֆոնդին¹¹:

Պատմալեզվաբանական ֆակուլտետը աստիճանաբար համալրվեց բարձրորակ մասնագետներով: Բացման ժամանակ ֆակուլտետում ունկնդիրների թիվը 262 էր, իսկ դասախոսներինը՝ 32:

Առաջին օրը՝ փետրվարի մեկին, առաջին հանդիսավոր դասախոսությունը կարդալու պատիվը վիճակվել էր անվանի հայագետ Ստեփան Մալխասյանցին: Բացի ուսանողներից՝ դասախոսությանը ներկա էին նաև ՀՀ հանրային կրթության նախարարը, համալսարանի ռեկտորը, նրա օգնական-կազմակերպիչը, ֆակուլտետի դասախոսները և ուրիշներ: Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի ուսումնագիտական և կազմակերպչական աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ են պարունակում դեկան Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, դեկանի պաշտոնակատարներ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանի ու Հակոբ Մանանդյանի զեկուցագրերը և ֆակուլտետի ժողովների նիստերի արձանագրությունները, որոնք հաշվետվություններ են կատարված աշխատանքների մասին¹²: Դրանք մեզ տեղեկություններ են տալիս մասնագիտական գրականության ձեռքբերման դժվարությունների, ուսումնական գործին առնչվող հայրենանվեր աշխատանքների, ինչպես նաև դասախոսությունների որակի բարձրացման, տեքստերի տպագրության նախապատրաստման և հրատարակման, ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների, դիմորդների ընդունելության, ուսումնական պարապմունքների արդյունավետության բարձրացման խնդիրների մասին:

¹¹ Հայաստանի համալսարան 1920, 31 հունվարի:

¹² ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 190, 191:

Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումը: Համալսարանը Երևան տեղափոխելու մասին 1920 թ. հունիսի 21-ի ՀՀ կառավարության որոշումը

Շտաբայում պարզ դարձավ, որ չնայած ֆակուլտետում անվանի դասախոսների անձնուրաց ջանքերին, ինչպես նաև ուսանողության մեծ խանդավառությանն ու ջանասիրությանը, այնուամենայնիվ, առաջին կիսամյակի արդյունքները չէին բավարարում տնօրինության սպասելիքները՝ ֆակուլտետի դասախոսներին ու ղեկավարությանը բերելով այն եզրահանգման, որ համալսարանը՝ որպես ուսումնագիտական հաստատություն, պետք է իր գործունեությունը ծավալի ոչ թե Ալեքսանդրապոլում, այլ մայրաքաղաքում:

Համամիտ լինելով վերոնշյալ հարցադրմանը՝ նորանշանակ նախարար Գ. Ղազարյանը Նախարարների խորհրդին առաջարկեց համալսարանը տեղափոխել Երևան¹³: Այդ առաջարկի հիման վրա էլ 1920 թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշեց.

1. համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան,
2. ուսուցչական սեմինարիայի շենքը (այժմ՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի շենք – Է.Մ.) հատկացնել համալսարանին,
3. պրոֆեսորների համար գտնել մասնավոր շենքեր¹⁴:

Ուսուցչական սեմինարիայի շենքի վերանորոգման համար նախարարությունը հատկացրեց 500 000 ռուբլի: Համաձայն նշված որոշման՝ Երևանում համալսարանը պարապմունքները պետք է վերսկսեր 1920 թ. հոկտեմբերի 16-ին, սակայն քաղաքական լարված իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ այդ որոշումը իրագործել: Հայաստանի խաղաղ զարգացումը խաթարվեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի հետևանքով: Համալսարանը Երևան տեղափոխվեց դեռևս պատերազմի օրերին. նրա հետագա գործունեությունը պարզապես անհնար դարձավ թուրքերի կողմից գրավված Ալեքսանդրապոլում: Համալսարանը չկարողացավ վերսկսել իր պարապմունքները միակ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետում:

Համալսարանը Երևանում վերաբացվեց Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին: Որքան էլ բացասական էր խորհրդային նորաստեղծ իշխանությունների վերաբերմունքը Հայաստանի Առաջին հանրապետության ղեկավարության նկատմամբ, այնուամենայնիվ, կարևորելով համալսարանի գոյության պատմական փաստը, որոշվեց ոչ թե փակել, այլ ուղղակի վերակազմավորել այն՝ ծառայեցնելով երկրի շահերին ու խնդիրներին: Միաժամանակ, ելնելով գիտակրթական այդ կարևոր օջախը միայն խորհրդային իրավակարգի ծնունդ տեսնելու ցանկությու-

¹³ ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 115:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 117 և ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 128:

նից՝ տասնամյակներ շարունակ անտեսվեցին Հայաստանի Առաջին հանրապետության՝ սկզբնական տարիներին արված ձեռնարկումները և գոյություն ունեցող փաստաթղթերը:

ՀԽՍՀ լուսժողկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի հրամանը: Երևանի ժողովրդական համալսարանի հանդիսավոր բացումը և գործունեության առաջին շրջանը

Ըստ ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ հրամանի («Երևանի համալսարանը վերակազմելու մասին»)՝ «Երևանի համալսարանը վերակոչվում է Երևանի ժողովրդական համալսարան, նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են, և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական, իսկ նախկին համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասատուները և ասիստենտները համարվում են արձակված: Լուսավորական ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվում է համալսարանի վերակազմության հանձնաժողով, որի վրա պարտականություն է դրվում սույն հրամանը հրապարակելու օրից մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել կոմիսարիատ հաստատության՝ նոր համալսարանի կազմակերպման հիմունքները, ծրագիրը, դասախոսների կազմը և շտատները: Հանձնաժողովի նախագահ է նշանակվում ընկ. Կողբետյանցը, անդամներ՝ ընկ. Գ. Չուբարյանը, Գ. Պիճիկյանը և ուսանողության երկու ներկայացուցիչներ»¹⁵:

Լուսժոմկոմատը 1920 թ. դեկտեմբերի 28-ին հաստատեց Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնադրությունը¹⁶: Նույն օրն էլ ՀԽՍՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը ստորագրեց «Երևանի ժողովրդական համալսարանի կազմակերպման մասին» հրամանը¹⁷:

Երևանի ժողովրդական համալսարանը առաջին իսկ օրվանից իր աշխատանքն սկսեց իբրև նոր տիպի բարձրագույն դպրոց¹⁸: Նրա կանոնադրության առաջին իսկ հոդվածում շեշտվում էր, որ նորաստեղծ «Երևանի ժողովրդական համալսարանը բանվորագյուղացիական ազատ դպրոց է, որ մասսաների սեփականությունն է դարձնում բնական և սոցիալական գիտություններն ու նրանց ուսումնասիրության մեթոդները՝ նպաստելով կյանքի գիտակցական վերաշինությանը կոմունիստական աշխարհայացքի հիմունքներով»:

¹⁵ ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու 1921, 17-18:

¹⁶ ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու 1921, 35-39:

¹⁷ ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու 1921, 34-35, հմմտ. Կոմունիստ 1921, հունվարի 4:

¹⁸ Ղարիբջանյան 1921, 49:

1921 թ. հունվարի սկզբին լուսժողկոմատը հրավիրեց համալսարանի խորհրդի առաջին նիստը, որտեղ քննարկվեց նրա վարիչի (ռեկտորի) ընտրության հարցը (ռեկտոր անվանվել է 1922 թ. փետրվարից): Փակ (գաղտնի) քվեարկությամբ ռեկտոր ընտրվեց պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանը¹⁹: Պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ականավոր պատմաբան Հ. Մանանդյանը եղավ համալսարանի երկրորդ ռեկտորը: Նա բազմակողմանի և խորը գիտելիքների տեր հայագետ էր: Անցել էր հիանալի դպրոց՝ ուսանելով Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի, Սանկտ Պետերբուրգի և Դորպատի համալսարաններում: Հ. Մանանդյանը հեղինակ է հայերեն, ռուսերեն և գերմաներեն ավելի քան 150 աշխատությունների՝ նվիրված հայոց հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, պատմական աշխարհագրությանն ու մշակույթին: ԵՊՀ-ում 1921-1931 թթ. նա առաջինն էր, որ դասավանդել է հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմություն: Ռեկտորի պարտականություններից ազատվելուց հետո Հ. Մանանդյանը ղեկավարել է արևելագիտական և պատմագրության ֆակուլտետները, 1921-1925 թթ. եղել է համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1939 թ. նա ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ, իսկ 1943 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1925-1931 թթ. եղել է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր:

Դեռևս 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ձևավորվել էին և գրեթե լիովին հայտնի էին պատմալեզվաբանական ֆակուլտետի բոլոր 90 դիմորդների (ընդունվածների) անունները: 1921 թ. հունվարի 23-ին նախապատրաստական աշխատանքներից հետո Երևանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը, իսկ հունվարի 24-ին վերսկսվեցին պարապմունքները:

Երևանի ժողովրդական համալսարանի վերաբացման պաշտոնական, հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1921 թ. հունվարի 23-ին՝ կիրակի օրը, Ս. Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում (այժմյան Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքում): Այդ օրը ակումբում հավաքվել էին մայրաքաղաքի հասարակայնության հարյուրավոր ներկայացուցիչներ, համալսարանի դասախոսներ, ուսանողներ, զինծառայողներ: Համալսարանի խորհրդի անդամները և դասախոսները Լուսավորության ժողկոմի և ռեկտորի հետ տեղ գրավեցին բեմում: Հանդիսավոր նիստը «Ինտերնացիոնալի» հնչյունների ներքո բա-

¹⁹ Համալսարանի ռեկտորներից միայն Հակոբ Մանանդյանն է, ըստ ժամանակավոր կանոնադրության, ընտրվել փակ (գաղտնի) քվեարկությամբ: Հետագայում ռեկտորները նշանակվել են ՀԽՍՀ լուսժողկոմատի, ԽՍՀՄ բարձրագույն կրթության պետական կոմիտեի, ապա՝ մինիստրության կողմից, Ղարիբջանյան 1921, 50:

ցեց Հ. Մանանդյանը: Ճառով հանդես եկավ ՀԽՍՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը, որը, վերլուծելով բարձրագույն կրթության և գիտության դերը, մասնավորապես նշեց. «...Ժողովրդական համալսարանը պետք է հանդիսանա մտքի գիտական աշխատանոց բանվորության և գյուղացիության համար: Դասախոսական զբաղմունքներից այստեղ ավելի մեծ տեղ պետք է բռնեն լաբորատորական և սեմինարական աշխատանքները, այն է՝ ուսանողների ինքնաշխատությունը դասատուների ղեկավարությամբ: Ուսանողները պետք է աշխատեն յուրացնել գիտական հետազոտման մեթոդը և այդ ուղղությամբ վարժվեն և հմտանան»²⁰:

Եզրափակիչ խոսքում ռեկտոր Հակոբ Մանանդյանը, շնորհակալություն հայտնելով բարեմադթանքների համար, նշեց, որ Հայկական բարձրավանդակը զուրկ է եղել բարձր ուսումնավայրերից, հայ մտավորականությունը ստիպված է եղել գործել ու աշխատել երկրի սահմաններից դուրս, և այժմ նա պետք է վերադառնա իր հայրենիքը՝ տառապած աշխատավորության գիտական պետքերին ծառայելու: «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Գրիգոր Չուբարյանը²¹:

Երևանի համալսարանի վերաբացումը բացառիկ կարևոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Աշխարհասփյուռ հայ մտավորականությունը վերջապես լայն հնարավորություն էր ստանում աշխատելու հայրենիքում և ծառայելու հարազատ ժողովրդի գիտական ու հոգևոր պահանջմունքներին: Մեր երիտասարդության համար բացվեցին մայրենի լեզվով բարձրագույն դպրոցի դռները: Դրանով պետք է բացատրել այն մեծ ոգևորությունն ու խանդավառությունը, որով ժողովուրդն ընդունեց համալսարանի վերաբացման լուրը: Այդ ուրախալի փաստը մեծ ցնծությամբ ընդունեց նաև սփյուռքահայությունը, որը խորապես գիտակցում և բարձր էր գնահատում ազգային կրթօջախի պատմական դերը²²:

Երևանի ժողովրդական համալսարանը վերաբացվեց հանրապետության համար չափազանց ծանր պայմաններում: Այդ հանգամանքը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ նրա գործունեության վրա, մանավանդ սկզբնական շրջանում: Համալսարանի դերակատարությունն ու գործունեությունը բարձր գնահատելով՝ ՀԽՍՀ կառավարության նախագահ Ա. Մյասնիկյանը 1923 թ. գրել է. «Մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Երևանում: Նրա համար միջոցներ չպետք է խնայել: Սրանք անհրաժեշտ և կենսական մեծություններ են: Որովհետև համալսարանը այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսական ճառա-

²⁰ Ղարիբջանյան 1921, 51-52:

²¹ Ղարիբջանյան 1921, 52:

²² Ղարիբջանյան 1921, 52:

գայթեր են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գյուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու է դարձյալ համալսարանը: Արդյունաբերությունն ու արհեստը չէին կարող բարգավաճել առանց ճարտարապետի, որին նույնպես պատրաստելու է համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանալու է շարունակ և անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանը այդ սիրտն է...»²³:

Հայաստանի կառավարությունը սկզբնական շրջանում կարողացավ ստեղծել սոսկ ժողովրդական համալսարան, և երկու տարուց ավել տևող կազմակերպչական աշխատանքներից հետո միայն դարձավ պետական համալսարան:

Այն ուներ ընդամենը երկու ֆակուլտետ՝ բնագիտական և հասարակագիտական²⁴: Մաթեմատիկական և մյուս բնական գիտությունները կենտրոնացվել էին բնագիտական ֆակուլտետում: Երիտասարդության հոսքը մեծ էր երկու ֆակուլտետներում էլ: Չնայած համալսարանի գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցների սղությանը, լաբորատորիաների, կաբինետների, ինչպես նաև որոշ մասնագետների ակնհայտ պակասին, այնուամենայնիվ, հենց առաջին օրվանից՝ 1921 թ. հունվարի 24-ից համալսարանի պարապմունքները սկսվեցին:

Վերակառուցված համալսարանի հասարակագիտական ֆակուլտետի կազմում էր պատմագրության բաժինը: Պատմագրական առարկաների ուսումնասիրության կազմակերպումն ու ղեկավարությունն իրականացվում էին պատմության առարկայական հանձնաժողովի կողմից, որը գլխավորում էր Հակոբ Մանանդյանը: Ուսումնասիրվում էին Հայաստանի պատմություն, ընդհանուր պատմություն և հեղափոխական շարժումների պատմություն, լեզվաբանական և գրականագիտական առարկաներ: Պարապմունքներն ընթանում էին միանգամայն կազմակերպված ձևով: Համալսարանը տեղափոխվել էր Աստաֆյան (այժմ՝ Աբովյան 52) փողոցում գտնվող նախկին ուսուցչական սեմինարիայի՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի սև, տուֆաշեն, երկհարկանի շենքի առաջին հարկը, քանի որ երկրորդ հարկը ծառայում էր որպես զինվորական հիվանդանոց: 1921 թ. հոկտեմբերի 10-ին համալսարանում վերսկսվեցին պարապմունքները: Շենքը կառուցվել էր 1902-1903 թթ. Ստեփան Ավետիքյանին պատկանող այգու տեղում, ինժեներ Ն. Կիտկինի նախագծով: 1933-1935 թթ. կառուցվեց երկրորդ հարկը,

²³ Երևանի պետական համալսարան –90 2008, 49:

²⁴ 1921 թ. հունվարի 2-ին դասախոսների ֆակուլտետային ժողովներում փակ (գաղտնի) քվեարկությամբ հասարակագիտական ֆակուլտետի ղեկան ընտրվեց Սիրական Տիգրանյանը, իսկ բնագիտական ֆակուլտետի ղեկան՝ Դավիթ Ջավոյանը. տե՛ս Ղարիբջանյան 1921, 53:

իսկ 1939 թ. համալսարանի դասախոս Ն. Բունիայանի նախագծով՝ աջ թևը, որտեղ այժմ մեծ դահլիճն է²⁵:

Հանրապետության ժողկոմխորհը, ելնելով ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հեռանկարներից և այդ առնչությամբ մասնագիտական կադրեր ունենալու պահանջներից, 1921 թ. հոկտեմբերից համալսարանում ուսուցումը կազմակերպեց ավելի լայն ընդգրկմամբ: Նախկին երկու՝ բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետների փոխարեն բացվեցին հինգ՝ բնագիտական, արևելագիտական, տեխնիկական, մանկավարժական և խորհրդային շինարարության ֆակուլտետներ: Ծայրաստիճան քայքայված հանրապետությունը նաև մանկավարժների, ինժեներների, գյուղատնտեսների և բժիշկների մեծ կարիք ուներ²⁶:

1921 թ. պատմագիտական մասնագիտացումների հիմքի վրա ստեղծվեց արևելագիտության ֆակուլտետը, որը 1922-1923 ուստարում ստացավ «պատմագրական» անվանումը: Վերջինս գործեց մինչև 1924-1925 ուստարին: Թե՛ արևելագիտական, թե՛ պատմագրական անվանված ֆակուլտետների հիմնական խնդիրը մանկավարժական կադրերի պատրաստումն էր: Նշված ուստարում հայագիտական բոլոր մասնագիտությունները կրկին ներառվեցին հասարակագիտական ֆակուլտետի մեջ՝ կազմելով վերջինիս պատմագրական բաժինը: Ելնելով հանրապետության և ԽՍՀՄ հայաբնակ վայրերի համար մայրենի լեզվով բարձրագույն կրթությամբ մանկավարժների օրավուր աճող պահանջարկից՝ 1926 թ. ստեղծվեց մանկավարժական ֆակուլտետը, որի կազմի մեջ մտավ պատմագրական բաժինը՝ պատմություն, գրականություն և լեզու մասնագիտություններով: Այդ կառուցվածքը պահպանվեց մինչև 1930 թվականը: Այդ տարիներին՝ 1923-1924 թթ., պատմագրական բաժնում աշխատելու հրավիրվեցին ճանաչված լեզվաբան, խորը գիտելիքների տեր, մանկավարժական մեծ հմտություններ ունեցող Հրաչյա Աճառյանը, պատմաբան ու հրապարակախոս Լեոն (Առաքել Բաբախանյան), որը դասավանդում էր հայոց պատմության նորագույն շրջանը: Նույն թվականին ընդհանուր պատմության դասախոսությունները կարդալու համար հրավիրվեց Ստեփան Ներսիսյանը: Նրա դասախոսություններն իրենց գիտական հագեցվածությամբ, տրամաբանական կառուցվածքով և պատմական փաստերի խոր վերլուծությամբ արժանանում էին ուսանողների հիացմունքին ու համակ ուշադրությանը: Հրավիրվեցին նաև Եվրոպայում կրթություն ստացած տաղանդավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, աշխարհագետ-մանկավարժ Ստեփան Լիսիցյանը, գրականագետ Սիմոն Հակոբյանը, ճանաչված պատմաբան Վահան Ռշտունին և հայոց պատմության մասնագետ, «Նեմեսիս»

²⁵ Ղարիբջանյան 1921, 54:

²⁶ Ղարիբջանյան 1921, 54:

գործողության մասնակից, Թալեաթ փաշայի սպանության կազմակերպիչ Հակոբ Ջորյանը:

1920-ական թթ. ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, քանակապես և որակապես աճելով, դարձավ հզոր կոլեկտիվ: 1920-1930-ական թթ. դասավանդող առարկաների ցանկը և դասախոսների անուն-ազգանունները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարել հայ պատմաբանների և բանասերների ավագ սերունդը ֆակուլտետի ստեղծման, կայացման ու հետագա ամրապնդման գործում: 1920 թվականից սկսած՝ ֆակուլտետում դասավանդել են Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Մանուկ Աբեղյանը (հայ հին գրականություն), Արսեն Տերտերյանը (հայ նոր գրականություն), Գուրգեն Էդիլյանը (մանկավարժություն և հոգեբանություն), Հրաչյա Աճառյանը (հայոց լեզվի պատմություն), Հայկ Գյուլիքևիսյանը (փիլիսոփայություն), Առաքել Բաբախանյանը (հայոց նորագույն պատմություն) և ուրիշներ:

1929-1930 ուստարում համալսարանի դասախոսական կազմի պրոֆեսորներից շատերը անվանի գիտնականներ էին, բազմաթիվ աշխատությունների հեղինակներ ու փորձառու մանկավարժներ: Նրանք ոչ միայն հմտորեն իրականացրին պատմաբան-բանասեր կադրերի ուսուցման գործը, այլև պատրաստեցին իրենց փոխարինողներին: Նրանցից յուրաքանչյուրը ֆակուլտետում նոր ամբիոն հիմնադրեց: Եթե 1919-1920 թթ. համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետում դասավանդող պատմաբանների ու բանասերների թիվը 10-ն էր, ապա 1924-1925 թթ. հասավ 24-ի, 1929-1930 թթ.՝ 30-ի:

Համալսարանի հասարակագիտական ֆակուլտետի պատմագրական բաժինը 1925-1930 թթ. ավարտել է 181 ուսանող²⁷: Այդ բաժնի 1920-ական թթ. շրջանավարտներից են Գրիգոր Միքայելյանը (հետագայում՝ դոկտոր, պրոֆեսոր), Աբգար Հովհաննիսյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), լեզվաբաններ Արարատ Ղարիբյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), Գուրգեն Սևակը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), գրականագետ Մկրտիչ Մկրյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիայի թղթակից անդամ): Այդ բաժնի շրջանավարտներից էին նաև գրողներ Նաիրի Ջարյանը, Գուրգեն Մահարին, Սողոմոն Տարոնցին և ուրիշներ²⁸:

1920-1930 թթ. ընթացքում համալսարանի ֆակուլտետները, բաժինները, ուսուցանվող մասնագիտությունները ենթարկվել են փոփոխությունների՝ ելնելով ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի զարգացման առաջնահերթ պահանջներից:

²⁷ Ղարիբջանյան 1921, 58:

²⁸ Ղարիբջանյան 1921, 87-88:

Գրականություն

ՀԱԱ ֆ. 199, ց. 1, գ. 98, թ. 83, գ. 118, թ. 128, գ. 207, թ. 105, ֆ. 207, ց. 1, գ. 220, թ. 78, 114, 132, գ. 337, թ. 115, 117, 190, 191:

Ղարիբջանյան Լ. 1994, Երևանի պետական համալսարանը 1919-1930 թթ., Երևան, «ԵՊՀ հրատ.», 304 էջ:

Երևանի պետական համալսարան-90 2008, Սրտի խոսք, կազմեց և հրատ. պատրաստեց Վ.Ս. Մաղալյանը, Երևան, «ԵՊՀ հրատ.», 172 էջ:

ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու 1921, պր. 1, Էջմիածին, 122 էջ:

Կոմունիստ 1921, հունվարի 4:

Հառաջ 1920, փետրվարի 6, N 27:

Հայաստանի համալսարան 1920, 31 հունվարի:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ.
(հիմնադրման 100-ամյակի առթիվ)**

Էդիկ Մինասյան

1919 թ. մայիսի 16-ին, ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ ազդարարվեց Երևանի համալսարանի հիմնադրումը: Համալսարանը աշխատանքները պետք է սկսեր Երևանում, մեկ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետով, 1919-1920 ուսումնական տարում: Սակայն շենքային հարմարավետ պայմանների չլինելու պատճառով, այն տեղափոխվեց Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) և իր գործունեությունը սկսեց այնտեղ: Պարապմունքները սկսվեցին փետրվարի 1-ին և շարունակվեցին մինչև հունիս: Մեկ կիսամյակ անց՝ 1920 թ. հունիսի 21-ին, ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ, համալսարանը պետք է տեղափոխվեր Երևան և իր պարապմունքները վերսկսեր 1920 թ. հոկտեմբերի 16-ին: Սակայն թուրք-հայկական պատերազմի պատճառով դրանք հետաձգվեցին: ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած հրամանով «Համալսարանը վերակոչվում է Երևանի ժողովրդական համալսարան»: 1921 թ. հունվարի 23-ին Երևանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը: 1921-1923 թթ. վերաբացված համալսարանի հիմնադիրների՝ Հակոբ Մանանդյանի, Մանուկ Աբեղյանի կողքին բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետներում դասավանդելու հրավիրվեցին նշանավոր մանկավարժներ, Ռուսաստանի և Եվրոպայի տարբեր երկրների հեղինակավոր բուհերն ավարտած, ճանաչված ու տաղանդավոր դասախոսներ Արսեն Ղամբարյանը, Ալեքսանդր Հակոբյանը, Գրիգոր Չուբարյանը, Ստեփան Տերտերյանը և այլք: Երևանի ժողովրդական համալսարանը ժողովմխոր-

իի 1923 թ. հոկտեմբերի 20-ի որոշմամբ վերանվանվեց *Երևանի պետական համալսարան*:

Բանալի բառեր՝ Աշոտ Հովհաննիսյան, Երևանի ժողովրդական համալսարան, Երևանի պետական համալսարան, գյուղատնտեսական, բժշկական, տեխնիկական, խորհրդային շինարարության ֆակուլտետներ:

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ В 1920-Е ГГ.
(к 100-летию со дня основания)**

Эдик Минасян

16-го мая 1919 года Совет министров РА принял решение об основании университета в Ереване. Университет должен был стартовать с единственным историко-лингвистическим факультетом в 1919-1920-ом учебном году. Поскольку в Ереване не было соответствующего для университета здания, открытие университета состоялось 31-го января 1920 года в Александрополе (ныне Гюмри), в здании торговой школы. По решению Совета министров РА от 21-го июня 1920 г. университет должен был быть перевезен в Ереван, в здание учительской семинарии на улице Астафьян. Занятия должны были начаться 16-го октября 1921 года, однако началась турецко-армянская война, и занятия возобновились лишь 24-го января 1921 года. После советизации Армении по первому приказу первого наркома просвещения Ашота Иоаннисяна от 17-го декабря 1920 года университет был переименован в “Народный университет Еревана”. 23-го января 1921 г. состоялось торжественное открытие университета. В 1921-1923 годах в университет были приглашены выдающиеся и талантливые педагоги и ученые Акоп Манандян, Манук Абебян, Арсен Гамбарян, Александр Акопян, Григор Чубарян, Степан Малхасянц, Арсен Тертерян и другие, получившие образование в лучших вузах России и Европы.

По решению Совнаркома от 20-го октября 1920 года Народный университет Еревана был переименован в Ереванский государственный университет. В начале 1930-х годов на основе университетских факультетов были созданы отдельные институты – медицинский, сельскохозяйственный, инженерно-технический (строительный), политехнический, кооперативно-экономический и педагогический.

Ключевые слова – Ашот Иоаннисян, Народный университет Еревана, Ереванский государственный университет, сельскохозяйственный, медицинский, технический институты, факультет советского строительства.

YEREVAN STATE UNIVERSITY DURING 1920-S

(In Commemoration of the 100th Anniversary)

Edik Minasyan

On May 16, 1919 the Yerevan University was founded by the resolution of the council of ministers of Republic of Armenia. The University started in the academic year 1919-1920 in Yerevan with only one faculty of linguistics and history. But it had to move to Alexandropol (now Gyumri) because there were no proper premises. The ceremony of opening took place on 31 of January in the building of Commerce school: the classes started on the 1 of February and continued till June. On 21 of June the University had to move to Yerevan and was allocated in the building of the Teacher training seminary in Astafyan street. The classes were to begin on 16 of October, 1920 but were cancelled because of the Turkish-Armenian war and restarted only on 24 of January, 1921. After sovietization of Armenia, the University was renamed “People’s University of Yerevan” by the first order signed by commissar of education Ashot Hovhannisyan on 17 of December, 1920. The only faculty was closed and departments of natural science and social science were opened instead. On January 23, 1921 the official ceremony of opening of the University in Yerevan took place. In 1921-1923, together with founder lecturers, Hakob Manandyan and Manouk Abeghyan, such famous and talented pedagogues as Juri Ghambaryan, Alexander Hakobyan, Grigor Chubaryan, Stepan Malkhasyants, Arsen Terteryan and others were invited to teach, who had graduated from authoritative universities of Russia and Europe. By the order of People’s Education Committee from October 20, 1923, People’s University was renamed Yerevan State University. In the beginning of 1930s, as a result of reconstruction of University faculties, the medical, agricultural, cooperative-economic, constructional and pedagogical institutes were established.

Key words – Ashot Hovhannisyan, People’s University of Yerevan, Yerevan State University, agricultural, medical, technical institutions, the Soviet construction faculties.

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԱՊՐԻԼԻ 24-Ը՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐ ՀՈՉԱԿԵԼՈՒ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Կարինե Խոջայան

Քաղաքական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան, Քաղաքագիտության ֆակուլտետ
Ալեք Մանուկյան 1, 0025, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ k.khojayan@hotmail.com
Հոդվածը ներկայացվել է 25.03.2019, գրախոսվել է 04.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Ֆրանսիայի նախագահ Էմմանուել Մակրոնը, 2019 թ. փետրվարի 5-ին Փարիզում ելույթ ունենալով Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի ամենամյա հավաքին, հայտարարեց ապրիլի 24-ը Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր հռչակելու իր որոշման մասին, որը, ինչպես և ակնկալվում էր, քննարկումների և քննադատությունների լայն ալիք բարձրացրեց Թուրքիայում: Իսկ ապրիլի 24-ը Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր սահմանելու մասին որոշումը բնավ նոր գաղափար չէր: Առաջին անգամ 1986 թ. ֆրանսիական խորհրդարանում այն բարձրացրեց Կոմունիստական կուսակցությունը՝ հանդես գալով առաջարկով՝ յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը նշել Հայոց ցեղասպանության հիշատակի օր: Նա կոչով դիմեց միջազգային հանրությանը՝ ճանաչել մարդկայնության դեմ իրականացված այս ոճրագործությունը¹:

Ապրիլի 24-ը Ֆրանսիայում հիշատակի ազգային օր հռչակելու մասին դրույթը առկա էր նաև նախագահ Մակրոնի նախընտրական խոստումներում: Այս մասին Ֆրանսիայի նախագահը խոսել էր նաև Երևանում՝ 2018 թ. հոկտեմբերին Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի շրջանակներում իր այցի ժամանակ²:

Այնուամենայնիվ, չմոռանանք, որ Ֆրանսիայի նախկին երկու նախագահներից թե՛ Ն. Սարկոզիի, թե՛ Ֆ. Օլանդի՝ հայկական համայնքին տված նախընտրական խոստումներում նույնպես կային «հայամետ» դրույթներ, որոնք օբյեկտիվ թե սուբյեկտիվ պատճառներով իրականություն չդարձան: Խոսքը մասնավորապես Հայոց ցեղասպանության ժխտումը քրեա-

¹ Բարսեղյան 1998, 8-9:

² Արմենյարես, 11.10.2018:

կանացնելու որոշման մասին է, որն այդպես էլ կյանքի չկոչվեց, թեև առաջին անգամ Սարկոզիի նախագահության տարիներին էր, երբ օրինագիծն ընդունեցին խորհրդարանի երկու պալատները, սակայն Ֆրանսիայի նախագահը հապաղեց այն ստորագրել, և ընդունված օրենքը 2012 թ. բեկանեց Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը:

Նման օրենք ընդունվեց նաև Ֆ. Օլանդի նախագահության ժամանակ: Այն հարցն ավելի լայն համատեքստում էր դիտարկում և ենթադրում էր պատժի սահմանում մարդկայնության դեմ գործած հանցագործությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտման համար, սակայն այս օրենքը նույնպես կյանքի չկոչվեց:

Ինչևէ, Ցեղասպանության ժխտումը քրեականացնելու մասին օրենքը և ապրիլի 24-ը Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր սահմանելու մասին որոշումը, իհարկե, համադրելի չեն և իրավական տարբեր հարթություններում են: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ Է. Մակրոնը, ըստ էության, դարձավ այն նախագահը, որը կատարեց հայկական համայնքին տված իր նախընտրական խոստումը:

Փորձենք վեր հանել տվյալ ժամանակահատվածում ձեռնարկած քայլի տրամաբանությունը *real politik*-ի տեսանկյունից:

Ինչպես հայտնի է, 1998 թվականից ի վեր Ֆրանսիայի իշխանությունների ձեռնարկած այս կամ այլ քայլերը, ուղղված Հայոց ցեղասպանության մասին օրինագծերի, բանաձևերի, օրենքների ընդունման, գրեթե միշտ պայմանավորված են եղել թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական նպատակահարմարությամբ:

Գաղտնիք չէ, որ 2017 թ. մայիսի 7-ին կայացած նախագահական ընտրությունների ժամանակ ընտրողների ավելի քան 66 տոկոսի աջակցություն ստացած նախագահ Մակրոնի վարկանիշը վերջին ամիսներին կտրուկ անկում է ապրում: Համաձայն Ֆրանսիայում անցկացված վերջին հարցումների (2019 թ. փետրվար)՝ նախագահի վարկանիշը եղել է 30 տոկոս, այն ժամանակ, երբ կառավարության ղեկավար Էդուարդ Ֆիլիպինը ամիսներ շարունակ գերազանցում է Մակրոնի վարկանիշը՝ հասնելով 36 տոկոսի³: Մեկ այլ հարցման համաձայն՝ Մակրոնի վարկանիշը կազմել է 28 տոկոս, երբ կառավարության ղեկավարինը՝ 31 տոկոս⁴: Նշենք, որ Էդուարդ Ֆիլիպը Ֆրանսիայի քաղաքական դաշտում ոչ անհայտ և 2015 թ. «Հանրապետականներ» (*Les Républicains*) կուսակցության ձևափոխված «Միություն հանուն ժողովրդական շարժման» աջակողմյան քաղաքական կուսակցության անդամ է: Այս կուսակցությունից էին թե՛ նախագահներ ժակ Շի-

³ La Tribune, 22.02.2019.

⁴ Le Journal du Dimanche, 16.02.2019.

րակն ու Նիկոլա Սարկոզին, թե՛ վերջին նախագահական ընտրություններում Մակրոնի գլխավոր մրցակից 5-րդ հանրապետության 19-րդ վարչապետ Ֆրանսուա Ֆիլոնը, որը, 2017 թ. նախագահական ընտրությունների շեմին հայտնվելով քաղաքական սկանդալի կիզակետում, չմասնակցեց ընտրություններին:

Այս համատեքստում պետք է նկատել, որ Ֆրանսիան թևակոխում է ընտրությունների շրջան. այս տարի (2019 թ.) տեղի են ունենալու հերթական համաեվրոպական ընտրությունները, և մայիսի 26-ին Ֆրանսիան ընտրելու է Եվրոպական խորհրդարան գործուղվող երկրի պատվիրակների: Ավելին, առաջին համապետական ընտրություններն են լինելու նախագահ Մակրոնի համար և հերթական փորձությունը վերջինիս «Առաջ հանրապետություն» (*La République en Marche!*) կուսակցության համար, հատկապես, եթե հաշվի առնենք նախագահի նվազող վարկանիշը: Իսկ արդեն հաջորդ տարի՝ 2020 թ., նախատեսված են մունիցիպալ ընտրությունները:

Փաստորեն, կարելի է արձանագրել, որ իր այս քայլով Մակրոնը, ըստ էության, ապահովեց ինչպես 500-600 հազարի հասնող Ֆրանսիայում բնակվող հայերի, այնպես էլ ֆրանսահայ համայնքի աջակցությունն առաջիկա ընտրություններին:

Առհասարակ Ֆրանսիայում հայկական օրակարգի ակտիվացումն ընտրությունների նախաշեմին ամենևին նոր երևույթ չէ: Բավական է հիշել 1998 թ. մայիսի 29-ը, երբ Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ընդունեց Սոցիալիստական կուսակցության նախաձեռնած Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը: Ֆրանսիայում դրան հետևում և հաջորդում էին ընտրական գործընթացներ. 1997 թ. նախագահ Շիրակի կողմից խորհրդարանն ազատ արձակվելու կապակցությամբ երկրում անցկացվեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ: 1998 թ. մարտի 15-ին Ֆրանսիայում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, իսկ ահա 1999 թ. հունիսին (օրինագծի ընդունումից հետո)՝ ԵՄ կառավարման մարմինների ընտրություններ: Ազատ արձակվելով խորհրդարանը՝ Շիրակը ցանկանում էր Ազգային ժողովում ստեղծել մեծամասնություն, սակայն այս բոլոր ընտրություններում հաղթեցին սոցիալիստները, այսինքն՝ նրանք, որոնց պատկանում էր օրինագծի ընդունման նախաձեռնությունը⁵:

2000 թ. հոկտեմբերին Ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը Մարսելի քաղաքապետի թեկնածու Ժան-Կլոդ Գոդենի նախաձեռնությամբ մտավ Սենատի օրակարգ, որն ընդունվեց նոյեմբերի 8-ին: Ժան-Կլոդ Գոդենը, ստանալով տեղի 80 հազար բնակչություն ունեցող հայկա-

⁵ Ходжаян 2014, 112.

կան համայնքի աջակցությունը, վերընտրվեց Մարսելի քաղաքապետի պաշտոնում⁶:

2001 թ. Ֆրանսիայի ԱԺ-ն ընդունեց Ցեղասպանության ճանաչման մասին բանաձև, որը նախագահ Շիրակի ստորագրելուց հետո ստացավ օրենքի ուժ: 2002 թ. Ֆրանսիայում նախատեսվում էին անցկացնել նախագահական և խորհրդարանական ընտրություններ: Ընդհարմար այն էր, որ նախագահ Շիրակի դիրքերը բավականաչափ թուլացել էին, իսկ «Միություն հանուն ժողովրդական շարժման» քաղաքական ուժին, որի անդամ էր նախագահը, անհրաժեշտ էր ամրապնդել դիրքերը խորհրդարանում:

Նույնը տեղի ունեցավ Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենսդրական նախաձեռնությունների պարագայում: 2006 թ. Ֆրանսիան ընդունեց Հայերի ցեղասպանության ժխտման համար քրեական պատասխանատվության ենթարկելու մասին օրինագիծ: Այս իրադարձությանը հաջորդեց ինչպես 2007 թ. խորհրդարանական, այնպես էլ նախագահական ընտրությունների անցկացումը⁷:

Նմանատիպ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ իշխող «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցությունը: Նախագահական և խորհրդարանական ընտրություններից ամիսներ առաջ՝ 2011 թ. դեկտեմբերին, Ֆրանսիայի Ազգային ժողովը, իսկ 2012 թ. տարեկան նաև Սենատը հաստատեցին ցեղասպանության ժխտման համար քրեական պատասխանատվության ենթարկելու մասին օրինագիծը:

Նույն սցենարը կրկնվեց նաև 2016 թ., երբ նորից նախագահական և խորհրդարանական ընտրությունների նախաշեմին խորհրդարանի երկու պալատներն ընդունեցին նմանատիպ մի օրենք, որը ևս այդպես էլ կյանքի չկոչվեց:

Տվյալ ժամանակահատվածում ապրիլի 24-ը հիշատակի ազգային օր սահմանելու մասին որոշումը ներքաղաքական հարթության մեջ դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերջին շրջանում ֆրանսիական հասարակությունում գերիշխում են ծայրահեղ աջակողմյան տրամադրություններ: Ասածի վառ ապացույցն է «Ազգային ճակատ» կուսակցության գրանցած աննախադեպ բարձր արդյունքը 2017 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ կուսակցության առաջնորդ Մարի Լը Պենն ընտրությունների երկրորդ փուլում ստացավ կուսակցության համար ընտրողների աննախադեպ աջակցությունը՝ ընդհանուր ձայների 33,9 տոկոսը⁸: Ավելին, միգրացիոն ճգնաժամի հետևանքով ֆրանսիական հասարակությունում աճող ոչ միանշանակ վերաբերմունքը ներ-

⁶ Ходжаян 2014, 115.

⁷ Ходжаян 2014, 117.

⁸ Ministère de l'intérieur 2017.

գաղթին ծայրահեղ աջակողմյան տրամադրությունների ստեղծման առիթ է հանդիսացել: «Հասարակական կարծիքի ֆրանսիական ինստիտուտի» անցկացրած հարցման արդյունքների համաձայն՝ ներգաղթյալների հոսքը Ֆրանսիա հասարակությունն ընդունում է բավական բացասական երանգի ներքո, և այն զուգորդվում է նախևառաջ անվտանգության խնդիրների, ինքնության պահմանման, տնտեսության ակնման և այլնի հետ⁹:

Այսպիսով, հաշվի առնելով Ֆրանսիայում սպասվող ընտրությունները, նախագահի նվազող վարկանիշը, հասարակության մեջ առկա ծայրահեղ տրամադրությունները, ինչպես նաև «դեղին բաճկոններ» անվանումը ստացած սոցիալական խնդիրներով պայմանավորված բողոքի զանգվածային ակցիաները, ակնհայտ է, որ ֆրանսիական իշխանությունների՝ ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր հայտարարելու մասին որոշումը նախևառաջ ուղղված է մի շարք ներքաղաքական խնդիրների լուծմանը: Այն նաև քայլ կարող է համարվել դեպի հասարակության ծայրահեղ աջակողմյան հատված՝ մեղմելու առկա տրամադրությունները:

Խնդիրն արտաքին քաղաքական հարթության մեջ դիտարկելիս հատկանշական է, որ ապրիլի 24-ը հիշատակի ազգային օր հռչակելու մասին Ֆրանսիայի որոշումն ընդունվում է Ֆրանսիա-Թուրքիա, Թուրքիա-Եվրամիություն բավական լարված հարաբերությունների հենքի վրա: Վերջին շրջանում թուրք-ֆրանսիական հարաբերությունների վատթարացման պատճառները բազմաթիվ են՝ սկսած տնտեսականից մինչև աշխարհաքաղաքական խնդիրներ: Դրանց շարքին կարելի է դասել Արևելյան Միջերկրածովյան ավազանում Կիպրոսի Հանրապետության ավիամերձ շրջաններում հայտնաբերված գազի պաշարների ֆրանսիական Total նավթագազային ընկերության կողմից իրականացվող որոնողահետախուզական աշխատանքները, սիրիական հարցում թուրք-ֆրանսիական առճակատումը, ԵՄ միգրացիոն ճգնաժամի ու դրա հետևանքների շուրջ մի շարք տարածանություններ, ռուս-թուրքական ռազմատնտեսական հարաբերությունների զարգացումն ու խորացումը: Եվ այստեղ, ըստ էության, նախագահ Մակրոնի այսօրինակ քայլը ձևավորված առկա քաղաքական իրադրությունում արտահայտում է Ֆրանսիայի հստակ դիրքորոշումն ինչպես Ֆրանսիայի Թուրքիայի միջև առանցքային նշանակություն ունեցող մի շարք հարցերում առկա տարածանություններին և Թուրքիա-Եվրոպական միություն արդեն իսկ կասեցված հարաբերություններին, այնպես էլ Թուրքիայի ռևերանսներին դեպի Ռուսաստանի Դաշնություն: Մասնավորապես, խոսքը Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ պետության կողմից ռուսական U-400 զենի-

⁹ IFOP, Novembre 2018.

թահիրթիռային համակարգերի ձեռքբերման շուրջ Ռուսաստանի Դաշնության հետ պայմանավորվածության մասին է: Ակնհայտ է, որ, բացի տնտեսական բաղադրիչից, այս հարցն անհրաժեշտ է ավելի լայն աշխարհաքաղաքական համատեքստում դիտարկել: Պետք չէ մոռանալ, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի միասնական հակահրթիռային պաշտպանության համակարգի անբաժան մասն է, և Թուրքիան ռազմավարական նշանակություն ունի Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության համար ԵՄ անվտանգության ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, Եվրամիության համար Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի անդամ պետություն, ուղիղ հարթակ է դեպի մերձավորարևելյան տարածաշրջան, որտեղ Ֆրանսիան ներգրավված է ռազմական գործողություններում:

Վերջին շրջանում Թուրքիայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների զարգացման հետևանքները Ֆրանսիայի համար ունեն ոչ միայն աշխարհաքաղաքական, այլև աշխարհատնտեսական նշանակություն: Գաղտնիք չէ, որ Թուրքիան բազմիցս է հայտարարել սեփական հակահրթիռային պաշտպանական համակարգի ձևավորման իր մտադրության մասին, իսկ արդեն 2018 թ. նոյեմբերին Թուրքիայի նախագահ Ռ.Թ. Էրդողանը հայտարարեց վերջինիս մեկնարկը¹⁰: Այս համատեքստում պետք է նշել, որ դեռևս 2018 թ. Թուրքիան պայմանագիր ստորագրեց ֆրանս-իտալական համատեղ Eurosam և թուրքական երկու Aselsan և Roketsan ընկերությունների հետ Թուրքիայի օդային և հակահրթիռային պաշտպանության համակարգերի ստեղծման նպատակով ուսումնասիրություն կատարելու համար¹¹: Պայմանավորվածության համաձայն՝ այս հետազոտության արդյունքները պետք է հիմք հանդիսանային Թուրքիայի օդային և հակահրթիռային պաշտպանության ծրագրի եռակողմ իրականացման և այս ուղղությամբ Թուրքիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև երկարաժամկետ համագործակցության համար¹²: Դաշինքի համար առանձնակի կարևորություն ունի այն, որ այս ուղղությամբ աշխատանքներն ընթանալու էին ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ: Այն համահունչ պետք է լիներ ՆԱՏՕ-ի ընդհանուր պաշտպանական համակարգի տրամաբանությանը, քանի որ նախատեսվող համակարգը պետք է լիներ Eurosam-ի նախկինում մշակված SAMP-T օդային պաշտպանության համակարգի արդիականացված տարբերակը:

Հետևաբար, Թուրքիայի կողմից ռուսական «Տրիումֆների» ձեռքբերումը ԵՄ-ն, ի դեմս Ֆրանսիայի, ընկալում է ոչ միայն և ոչ ամենևին ԵՄ-ՌԴ, ՆԱՏՕ-ՌԴ կամ ՌԴ-ի դեմ սահմանված պատժամիջոցների, այլև ընդ-

¹⁰ Defense news, 02.11.2018.

¹¹ MBDA, 05.01.2018.

¹² MBDA, 05.01.2018.

հանուր ԵՄ անվտանգային համակարգի համատեքստում: Ահա այս տրամաբանության մեջ է անհրաժեշտ դիտարկել Եվրոպական միության և Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության ահազնացող անհանգստություններն այս ուղղությամբ: Դա է վկայում նաև ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հայտարարությունն առ այն, որ «Վաշինգտոնը, Փարիզն ու Հռոմը Անկարայի հետ քննարկում են Թուրքիայի համար ռուսական Տրիումֆին այլընտրանք ձեռք բերելու շուրջ»¹³:

Թուրքիայի ու Ֆրանսիայի հարաբերությունները սիրիական ճգնաժամի համատեքստում հակադիր քաղաքական բևեռներում են: Գաղտնիք չէ, որ սիրիական հակամարտությունում, որը միջնորդավորված պատերազմի (proxy war) դասական օրինակների շարքին կարելի է դասել, ներգրավված են միջազգային գրեթե բոլոր քաղաքական դերակատարները, այդ թվում՝ Ֆրանսիան ու Թուրքիան: Դեռևս 2014 թվականից Ֆրանսիան Սիրիայում և Իրաքում իրականացնում է ռազմական գործողություններ՝ ուղղված Իսլամական պետության ահաբեկիչների դեմ պայքարին: Խոսքը, մասնավորապես, «Շամալ» կոչվող օպերացիայի մասին է: Առհասարակ, Ֆրանսիայի շահերը մերձավորարևելյան տարածաշրջանում և հատկապես Սիրիայում ու Լիբանանում, իսկ վերջին տարիներին ավելի լայն՝ Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջանային համատեքստում, գրեթե միշտ առաջնային տեղ են զբաղեցրել երկրի արտաքին քաղաքական օրակարգում:

Սիրիական հարցում վերջին ամիսներին Ֆրանսիայի և Թուրքիայի միջև հարաբերությունները լարվեցին հատկապես այն բանից հետո, երբ պաշտոնական Փարիզը հայտարարեց, որ Սիրիայից ԱՄՆ-ի կողմից ամերիկյան զորքի դուրսբերումից հետո Ֆրանսիան չի պատրաստվում լքել Սիրիան և միտված է մնալ այնտեղ՝ պաշտպանելու տեղի քուրդ բնակչության շահերը¹⁴: Հայտնի է, որ Ֆրանսիան աջակցում է քրդական ազգային ինքնապաշտպանական ջոկատներին, որոնց Անկարան համարում է ահաբեկիչներ, և որոնց դեմ սիրիական Մանբիջում Թուրքիան պատրաստվում էր համապատասխան ռազմական գործողություններ ծավալել:

Թուրքիա-Ֆրանսիա հարաբերությունների խնդրահարույց թեմաներից են նաև Կիպրոսի թերակղզում հայտնաբերված գազի հանքավայրերի շահագործման շուրջ ծագած խնդիրները: Մասնավորապես, ֆրանսիական Total-ն այն երեք հիմնական ընկերություններից մեկն է, որ սկսել է հորատման աշխատանքները կիպրական շելֆում: Դա, իհարկե, առաջացնում է թուրքական կողմի սաստկացող դժգոհությունները՝ պայմանավոր-

¹³ Агентство ТАСС, 13.02.2019.

¹⁴ Représentation permanente de la France auprès des Nations Unies à New York, 20.12.2018.

ված միջերկրածովյան ավազանում հայտնաբերված գազի պաշարների նկատմամբ Թուրքիայի նկրտումների հետ: Հարաբերությունները լարվեցին ընդհուպ այն աստիճան, որ Միջերկրածովյան ավազան՝ հորատման տեղանքի շուրջ բերվեցին ֆրանսիական ու թուրքական ռազմածովային նավատորմները:

Եզրակացություններ

Այսպիսով, այսօր առավել քան երբևէ ակնհայտ է, որ թուրք-ֆրանսիական երկկողմ հարաբերությունները և այս երկրների արտաքին քաղաքական շահերը մի շարք առանցքային նշանակություն ունեցող հարցերում կտրուկ հակադիր բևեռներում են: Հակաթուրքական հռետորաբանությունն ակնհայտ նշմարվում է հատկապես համաեվրոպական ընտրությունների շեմին, երբ աջակողմյան ուժերը որպես նախընտրական խոստում բացեիբաց խոսում են Թուրքիայի եվրասիատեգրացիոն նկրտումների վերջնական չեղարկման մասին: Այս մասին մասնավորապես հայտարարեց գերմանացի Մանֆրեդ Վեբերը՝ առաջիկա համաեվրոպական ընտրություններում Եվրոպական ժողովրդական կուսակցությունը ներկայացնող առանցքային գործիչներից մեկը¹⁵: Հետևաբար, քաղաքական իրադրությունների այսպիսի ձևավորման պարագայում ապրիլի 24-ը հիշատակի ազգային օր հռչակելու մասին որոշումը նախևառաջ հստակ քաղաքական ուղերձ է դեպի Թուրքիան և Թուրքիայի վերջին ժամանակներում վարած քաղաքականությանը: Այն ուղղված է նաև առ ֆրանսիական հասարակությանը, որտեղ ծայրահեղ աջակողմյան տրամադրությունները թելադրող դիրք են զբաղեցնում:

Ինդիրն այս համատեքստում դիտարկելու պարագայում ակնհայտ է, որ կարճաժամկետ հեռանկարում Ֆրանսիայի իշխանությունների այսօրինակ որոշումն ուղղված է մի շարք ներքին և արտաքին խնդիրների լուծմանը: Միևնույն ժամանակ, այն հերթական անգամ ապացուցում է այն բազմիցս հաստատված թեզը, որ քանի դեռ մարդկության դեմ գործած՝ XX դարի առաջին հանցագործությունը չի արժանացել լիիրավ իրավական գնահատականի, այն շարունակելու է մնալ մեծ քաղաքականության առանձին դերակատարների աշխարհաքաղաքական խաղաթղթերից մեկը:

Գրականություն

Բարսեղյան Լ. 1998, Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 132 էջ:

¹⁵ Reuters News Agency, 06.03.2019.

- Ходжаян К. 2014, Проблема вступления Турции в Европейский Союз: позиция Франции, изд. "Гитутюн" НАН РА, 184 с.
- La Tribune 22.02.2019, La popularité de Macron cesse de s'effriter, <https://www.latribune.fr/economie/france/la-popularite-de-macron-cesse-de-s-effriter-808417.html> (22.02.2019).
- Le Journal du Dimanche 16.02.2019, Sondage. Deuxième mois consécutif de hausse pour Emmanuel Macron, <https://www.lejdd.fr/Politique/sondage-deuxieme-mois-consecutif-de-hausse-pour-emmanuel-macron-3859094> (16.02.2019).
- Ministère de l'intérieur, Résultats de l'élection présidentielle 2017, [https://www.interieur.gouv.fr/Elections/Les-resultats/Presidentielles/elecresult__presidentielle-2017/\(path\)/presidentielle-2017/011/077/index.html](https://www.interieur.gouv.fr/Elections/Les-resultats/Presidentielles/elecresult__presidentielle-2017/(path)/presidentielle-2017/011/077/index.html) (20.02.2019).
- IFOP pour le Journal du Dimanche Novembre 2018, Le regard des Français sur l'immigration, <https://www.ifop.com/wp-content/uploads/2018/12/115985-R-apport-03.12.2018-COMPLET.pdf> (20.01.2019).
- Defense news, November 02, 2018, Turkey hires 3 companies to build indigenous long-range air defense system, <https://www.defensenews.com/industry/techwatch/2018/11/02/turkey-hires-3-companies-to-build-indigenous-long-range-air-defense-system/> (02.11.2018).
- MBDA 2018, Turkey contracts Eurosam, Aselsan and Roketsan to define its future indigenous air and missile defense system, <https://www.mbdasystems.com/2018/01/05/turkey-contracts-eurosam-aselsan-and-roketsan-to-define-its-future-indigeneous-air-and-missile-defense-system/> (05.01.2019).
- Արմենպրես, 11.10.2018, Ֆրանսիայում ապրիլի 24-ը կհիշվի որպես Հայոց ցեղասպանության հիշատակի օր. Էմանուել Մակրոն, <https://armenpress.am/arm/news/950622.html> (07.01.2019).
- Агентство ТАСС, 13.02.2019, Столтенберг: США, Франция и Италия обсуждают с Турцией альтернативы покупке Анкарой С-400, <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/6111627> (13.02.2019).
- Représentation permanente de la France auprès des Nations Unies à New York, 20.12.2018, Intervention de M. François Delattre, représentant permanent de la France auprès des Nations unies, <https://onu.delegfrance.org/L-heure-du-desengagement-de-la-Syrie-n-est-pas-venue> (20.12.2018).
- Reuters News Agency, 06.03.2019, Turkey cannot become an EU member, says EPP's Weber, <https://www.reuters.com/article/us-germany-politics-csu/turkey-cannot-become-an-eu-member-says-epps-weber-idUSKCN1QN1A9> (06.03.2019).

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԱՊՐԻԼԻ 24-Ն՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐ ՀՈՉԱԿԵԼՈՒ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՐԺԱՌԹՆԵՐԸ

Կարինե Խոջայան

2019 թ. տարեսկզբին Ֆրանսիայի նախագահը հայտարարեց Ֆրանսիայում ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր սահմանելու իր որոշման մասին: Այս քայլը, անշուշտ, պետք է համարել ցեղասպանությունների, որպես մարդկության դեմ գործած հանցագործության կանխարգելման նպատակով ձեռնարկած միջոց: Նաև նկատենք, որ նմանատիպ որոշումների, օրենքների, բանաձևերի ընդունումը Ֆրանսիայում, ինչպես նաև այլ երկրներում հաճախ հետապնդում են նաև մի շարք ներքաղաքական և արտաքին քաղաքական նպատակներ:

Բանալի բառեր՝ հիշատակի ազգային օր, Թուրքիա, ծայրահեղ աջակողմյան տրամադրություններ, հակահրթիռային պաշտպանության համակարգ, սիրիական հակամարտություն, Միջերկրածովյան ավազան, գազի պաշարներ:

ВНУТРЕННИЕ И ВНЕШНИЕ МОТИВЫ ПРОВОЗГЛАШЕНИЯ 24 АПРЕЛЯ ВО ФРАНЦИИ НАЦИОНАЛЬНЫМ ДНЕМ ПАМЯТИ ГЕНОЦИДА АРМЯН

Карине Ходжаян

В начале 2019 года президент Франции объявил о решении отметить 24 апреля как день памяти жертв геноцида армян в Турции. Данное решение однозначно можно рассматривать в качестве превентивной меры подобных преступлений с целью недопущения их повторения в будущем. В то же время принятие законов, решений, резолюций о геноциде армянского народа в разных странах преследует как внутривнутриполитические, так и внешнеполитические интересы, а порой становится политическим инструментом, применяемым против властей Турции.

Ключевые слова – национальный день памяти, Турция, ультраправые настроения, противоракетная оборонительная система, сирийский конфликт, Средиземноморский бассейн, запасы газа.

**DOMESTIC AND EXTERNAL MOTIVES FOR DECLARATION OF APRIL 24 IN
FRANCE AS NATIONAL DAY OF COMMEMORATION OF THE ARMENIAN
GENOCIDE**

Karine Khojayan

In the beginning of 2019 the President of France announced April 24 as the Day of commemoration of the Armenian Genocide in Turkey. Such a decision definitely should be considered as a preventive measure and a step forward convictions of similar crimes against humanity in future. In the meanwhile both in France, and in many other countries very often adoption of laws, decisions, resolutions on the Armenian Genocide has had both domestic and foreign policy context as well. Sometimes it has even been regarded as a political instrument against Turkish authorities.

Key words – national day of commemoration, Turkey, ultra-right moods, anti-missile defense system, Syrian conflict, the Mediterranean, gas reserves.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ»
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ (1918-1919 ԹԹ.)**

Մարիամ Հովսեփյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Մարշալ Բաղրամյան 24/4, 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ mariamhovsepian@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 05.04.2019, գրախոսվել է 15.04.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

«Ճակատամարտ» օրաթերթը 1918-1919 թթ. գրեթե բոլոր համարներում անդրադարձել է Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության գործունեության առավել կարևոր և օրախնդիր դրվագներին: Ընթերցողներին ներկայացրել է երկրի ներքին ու արտաքին խնդիրները կարգավորելու համար գործադիր մարմնի ընդունած որոշումները:

1919 թ. հունիսի 21-23-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից¹ հետո ձևավորված նոր Դահլիճի մասին լուրը չի ուշացել նաև Կ. Պոլսի «Ճակատամարտ» պարբերականում²: Խորհրդարանում օգոստոսի 7-ի նիստում վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը հանդես էր եկել հայտարարությամբ, որով պարզաբանումներ էր տվել կառավարության առաջիկա քաղաքական կուրսի վերաբերյալ³: Ընդ որում՝ Հայաստանն արտաքին քաղաքականության մեջ հավատարիմ էր մնալու հայ ժողովրդի՝ նախկինում որդեգրած ուղեգծին և դաշնակից ուժերի նկատմամբ եղած վստահությանը. «Կառավարութիւնը պիտի ջանայ ստեղծել բարեկամական փոխյարաբերութիւններ դրացի պետութիւններու հետ և փոխադարձ համաձայնութեամբ կարգաւորել Հայաստանի սահմաններու հարցը: Ոչ մէկ պարագայի սահմանային վէճերը Հայաստանի և հարեան պետութիւններու միջեւ չպիտի լուծուին զէնքի ուժով»⁴: Այդ մասին ԳԱԱ ՊԻ հրատարակած «Հայոց պատմություն» վերնագրով բազմահատորյակում նշված է. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը հարաբերությունների կարգավոր-

¹ Հակոբյան 2018, 60:

² Ճակատամարտ 1919, N 243:

³ Ճակատամարտ 1919, N 243:

⁴ Ճակատամարտ 1919, N 243:

րումն ու կայունացումն էր անմիջական հարևանների հետ: Հայաստանի կառավարությունը վերջիններիս հետ հարաբերություններ կառուցելիս աշխատում էր առաջնորդվել բարի դրացիության սկզբունքով և ծագած վեճերն ու բախումները լուծել քաղաքական բանակցությունների, փոխադարձ համաձայնության ճանապարհով»⁵:

Ներքին կյանքում մեր պետական այրերն առաջնորդվելու էին ռամկավարական գաղափարներով ու նպատակներով՝ հետևելով քաղաքական սկզբունքների ազատությանը, բարենորոգելով և ազգային դիմագիծ տալով երկրի վարչական մեքենային ու պետական գրագրությունը դարձնելով միայն մայրենի լեզվով՝ հայերենով⁶: Բացի այդ, վարչապետը կարևորում էր ևս մեկ հանգամանք. կառավարությունը պետք է արագ ձևավորեր «զեմստուն և քաղաքային ինքնավարութիւնները», պետք է իրականացներ «կալուածատիրական բոլոր հողերու ազգայնացումը՝ այն բաժանելով սակաւահող գիւղացիութեան»⁷:

Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր մարմինը մշակութային լայն ինքնավարություն էր նախատեսել օտար ազգաբնակչության համար, «առանց որու մեր երկիրը գոյութիւն չի կարենայ ունենալ»⁸:

Այս ուղենշային շեշտադրումների հիման վրա էր ձևավորվել կառավարության քաղաքականությունը, որը բազմաճյուղ էր ու բազմաուղորտ⁹: Ընդ որում, հայոց նորանկախ երկրի կառավարությունն օժտված էր նաև օրենսդրական լիազորություններով, երբ սկզբնական շրջանում իրականացնում էր Ազգային խորհրդի, իսկ հետո, խորհրդարանի հանգստի շրջանում՝ օրենսդիր մարմնի գործառնությունները. «Այդ ժամանակամիջոցներում կառավարության կողմից ընդունված օրենքները բազմաթիվ են և իրենց քանակական առումով չեն զիջում, եթե չեն գերազանցում խորհրդարանական օրենքներին»¹⁰:

Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության աշխատանքներն ու ծրագրերը «Ճակատամարտի» էջերում

«Ճակատամարտը», կարևորելով նոր կառավարության ուղեգծի և ծրագրերի մասին ընթերցողներին ծանոթացնելու անհրաժեշտությունը, ոչ միայն հանգամանորեն անդրադառնում էր գործադիր մարմնի առաջին նիստերին ու որոշումներին, այլև մանրամասն գրում էր պետական այդ

⁵ Հայոց պատմություն 2010, 38-39: Հմմտ. նաև Վրացյան 1993, 296-297:

⁶ Հայոց պատմություն 2010, 36:

⁷ Ճակատամարտ 1919, N 243: Հմմտ. նաև Վրացյան 1993, 297:

⁸ Ճակատամարտ 1919, N 243:

⁹ Վրացյան 1993, 196-197, 200-202:

¹⁰ Վաղարշյան 2005, 21:

կառույցի ողջ անցուդարձի մասին: Ըստ թերթի հրապարակումների՝ վարչապետ Ա.Խատիսյանը օգոստոսի 5-ին տեղի ունեցած խորհրդարանի անդրանիկ նիստում իր զեկուցման մեջ փաստել էր, թե անցած 2 ամսում Նախարարների խորհուրդը հրատարակել է 152 օրենք, 300-ից ավելի որոշում, ներգաղթի և վերաշինության գործի կարգավորման նպատակով հատկացրել է 3.658.000 ռուբլու վարկ, իսկ արևմտահայ գաղթականներին տրամադրել 2.500.000 ռուբլի գումար¹¹: Կառավարության Ներգաղթի և վերաշինության բաժանմունքի ղեկավար էր նշանակվել տաճկահայ Արմենակ Մաքսապետյանը, «որու տնօրէնութեանն է յանձնուած ինչպէս սահմանէն ներս, նոյնպէս արտասահման գտնուող գաղթականութեան գործը, և որու նպատակն է ժամանակավորապէս տեղաւորել ժամանող գաղթականութիւնը ըստ կլիմայի և բուսականութեան»¹²:

Ա. Խատիսյանը պատգամավորներին հորդորում էր իրենց ծրագրերը կազմելիս նկատի ունենալ այն հանգամանքը, որ անհրաժեշտ է հնարավոր պայմաններ ապահովել արդեն նախկին արևմտահայերի համար ևս մեկ ծմեռ Հայաստանում մնալու համար, քանզի կառավարությանը չէր հաջողվել դեպի իրենց ծննդավայր-հայրենիք՝ նրանց ներգաղթի հարցը լուծել¹³: Տաճկահայ գաղթականները տարերայնորեն կուտակվել էին սահմանագլխին՝ սպասելով Թուրքիայի կողմից ներգաղթի թույլտվությանը¹⁴, բայց՝ ապարդյուն¹⁵: Նրանց ներգաղթի գործը կառավարության մտահոգության կենտրոնում էր և խիստ կարևոր էր քաղաքական ու գործնական առումով¹⁶: Մշակվել էր այդ գործընթացի կազմակերպման ծրագիրը¹⁷: Արևմտահայ Գործադիր մարմինը, վարչապետի վկայությամբ, սկսել էր բանակցել դաշնակից պետությունների ներկայացուցիչների հետ՝ նրանց հղելով նամակներ ու դիմումներ¹⁸: «Իրաւունք կայ առանց զինուորական ուժի ներգաղթ թոյլատրելու, բայց որոշուած է չերթալ և չենթարկուիլ թրքական իշխանութեանց: Ընդհանուր տեսակէտն այն է, որ միայն դաշնակից և հայկական զինուորական ուժերով կարելի է Երկիր երթալ, մինչդեռ վերջինս մանտա չունի գրաւումներ ընելու»¹⁹, - տիրող իրավիճակի մասին նշում է Ա. Խատիսյանը:

¹¹ Ճակատամարտ 1919, N 247:

¹² Ճակատամարտ 1919, N 247:

¹³ Ճակատամարտ 1919, N 247:

¹⁴ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 48-49:

¹⁵ Հայոց պատմություն 2010, 65:

¹⁶ Հակոբյան 2005, 147-148:

¹⁷ Հակոբյան 2018, 80-81:

¹⁸ Ճակատամարտ 1919, N 247:

¹⁹ Ճակատամարտ 1919, N 247:

Վարչապետը, կրկին բերելով թվային տվյալներ, գրում է, թե գաղթականների համար տեղ կգտնվեր հայոց նորաստեղծ երկրում, որի «սահմաններու տարածությունը 40.920 քառ. վերստ է»²⁰: Նա նշում է, որ կառավարության դիվանագիտական ջանքերի շնորհիվ հնարավոր է եղել գրավել Կարսն ու Արդահանը, իսկ Շարուրի և Նախիջևանի շրջաններում ճնշել թուրքերի հրահրած և թուրք գնդապետ Խալիլ բեյի գլխավորած թաթարական ապստամբությունը²¹:

Կարգավորվել էին Հայաստանի հարաբերությունները Վրաստանի և Պարսկաստանի հետ²²: Թուրքիայի իշխանությունների հետ բանակցել չէր հաջողվել, իսկ Ադրբեջանը հարաբերություններ սկսելու համար պահանջում էր իրեն հանձնել Ղարաբաղը, «գոր ոչ մէկ պարագային Հայաստանը չի զիջիր»²³: Ռուսաստանի հանդեպ որդեգրել էին չեզոք վերաբերմունք²⁴:

Խորհրդարանում ելույթ ունենալով՝ Ա. Խատիսյանն անդրադառնում է 1-2 ամսում երկրի ներքին կյանքում իրականացված աշխատանքներին: Նրա խոսքով՝ Ներքին գործերի նախարարությունը զբաղվել է գլխավորապես Կարսի, Նախիջևանի և Շարուրի գավառները Հայաստանին միացնելու գործով: Արդեն Նախիջևանի շրջան էին վերադարձել 180.000, իսկ Կարսի շրջան՝ 120.000 փախստական, «որոնցմէ 12.600ը արեւմտահայեր» էին²⁵: Այս ռազմական գործողություններում կանոնավոր բանակի հետ իրենց ուժերն էին միացրել խմբապետական միավորումները: Վարչապետը մասնավորապես գովասանքով է խոսում սասունցիների Հեծյալ գնդի մասին²⁶: Նրա կարծիքով, քանի դեռ Հայաստանը չունի իրական անկախություն, չի կարողանալու կարգավորել իր ելևմտական դրությունը: «Վրաստան և Ատրպեյճան տնտեսապես ուժեղ են, ունին նալթ, թրանզիթ և երկաթուղի: Միս կողմէ, մեր ներքին հարստութիւնն ալ, որ գոնեակն ու բամպակն է, չենք կրնար ծախել: Որոշուած է ներքին 10 միլիոն փոխառութիւն ընել»²⁷, - իր մտահոգություններն այսպես է արտահայտել կառավարության առաջին դեմքը:

Վարչապետի ելույթում յուրահատուկ հնչեղություն էին ստացել թե՛ գաղթականների ու զինվորների, թե՛ ողջ ազգաբնակչության պարենավոր-

²⁰ Ճակատամարտ 1919, N 247:

²¹ Վրաստանի հետ Հայաստանի կառավարությունը ձեռք էր բերել պայմանավորվածություն առ այն, որ վճարելու էր Բաթում-Փոթի-Թիֆլիս գծով Հայաստան մեկնող արևմտահայ գաղթականների ճանապարհածախսը (տե՛ս Ճակատամարտ 1919, N 247):

²² Ճակատամարտ 1919, N 247:

²³ Ճակատամարտ 1919, N 247:

²⁴ Ճակատամարտ 1919, N 247:

²⁵ Ճակատամարտ 1919, N 212:

²⁶ Ճակատամարտ 1919, N 212:

²⁷ Ճակատամարտ 1919, N 212:

ման խնդիրները: Նրա հիշատակած թվային տվյալների համաձայն՝ 1919 թ. մայիսին Հայաստանը սննդամթերքով ապահովվածության տեսանկյունից «սարսափելի վիճակի մէջ» էր²⁸: Ողջ ամսվա ընթացքում Մակուից և Թիֆլիսից եկող ճանապարհներով ստացվել է համապատասխանաբար 24 ու 6 վագոն ցորեն և այլուր, ինչը կազմում էր ավելի քան 30.000 փուֆ²⁹: Թերթը փաստում է, որ ստացված հացահատիկը չէր բավարարում ժողովրդին: Բնականաբար, կիսաքաղց կամ քաղցած մնալով՝ շատերն են մահացել, իսկ գաղթականներին ու զինվորներին հաճախ չէր էլ հասնում նրանց անունով ստացված ուտելիքը³⁰: Ա. Խատիսյանը ներկայացնում է մասնավորապես հետևյալ պատճառները. «Հոս, Կովկասէն, Պարսէն և Թիֆլիսէն, հնարաւորութիւն չեղաւ պարէն փոխադրել, իսկ Պարսկաստանէն կամ Մակուէն ստանալու համար հարկաւոր քանակութեամբ նիկոլայեան կամ պարսկական դրամ չունէինք»³¹:

Սովի դեմն առնելու նպատակով, Հայաստանի կառավարությունը պայմանագիր էր կնքել ԱՄՆ-ի հետ, ինչի շնորհիվ մինչև 1919 թ. սեպտեմբերի մեկը նրանք ուղարկելու էին 1.200.000 փուֆ այլուր՝ փոխարժեքն ստանալով առաջիկա 2-4 տարում³²: Օգոստոսի 5-ի դրությամբ, այդ բեռից Բաթումի նավահանգիստ էր հասել 300.000 փուֆ այլուր՝ 3 շոգենավով³³: Տեղափոխությունը դժվարությամբ էր իրականացվել, որովհետև Հայաստանը քիչ թվով շոգեքարշ և վագոններ ուներ, իսկ եղածները հիմնականում, վարչապետի բառերով ասած, «զբաղուած էին մեր փախստականութեան տեղափոխութիւնով»³⁴: Ա. Խատիսյանը, սակայն, վստահեցնում է, թե իրենք ամեն ջանք թափելու էին, որ ժողովրդի պարենավորման խնդիրը լուծեին: Այդ համատեքստում նա նաև բարձր է գնահատել ԱՄՆ-ի հետ թեկուզ կարճաժամկետ համագործակցության իրենց ձեռքբերումը. «Այս հանգամանքը քաղաքական նշանակութիւն ունի, որ դեռ չճանաչուած կառավարութեան հետ Ամերիկան մէկ քանի տարուայ պայման կը կնքէ»³⁵:

Թեև կառավարությունը գիտակցում էր Ադրբեջանի քաղաքականության բուն նպատակը Հայաստանի հանդեպ, այդուհանդերձ, հանգամանքների պարտադրմամբ և երկրի վառելիքի հարցը լուծելու ակնկալիքով 4 միլիոն փուֆ նավթ գնելու գումարը նախապես էր վճարել Բաքվի իշխա-

²⁸ Ճակատամարտ 1919, N 212:

²⁹ Ճակատամարտ 1919, N 212:

³⁰ Ճակատամարտ 1919, N 212:

³¹ Ճակատամարտ 1919, N 212:

³² Ճակատամարտ 1919, N 212:

³³ Ճակատամարտ 1919, N 212:

³⁴ Ճակատամարտ 1919, N 212:

³⁵ Ճակատամարտ 1919, N 212:

նություններին, բայց դեռևս չէր ստացել օդի ու ջրի պես անհրաժեշտ այդ վառելիքը³⁶:

Երկրի անվտանգությունը և բանակի մարտունակությունն ապահովելու նպատակով, Ա. Խատիսյանը և նրա կառավարությունը կարծում էին, թե անհրաժեշտ է զարկ տալ կամավորական ջոկատների ու խմբերի կազմավորմանը, «որովհետև մեր զինուորները 4 տարուայ ընթացքին յոզնած են, և այդ սիսթեմը պետք է որդեգրել առաջիկային, մանաւանդ որ արեւմտահայերն ալ մտած են այդ շարքերը»³⁷:

Վարչապետը տեղեկացնում է նաև իրենց մեկ այլ կարևոր որոշման, այն է՝ իրավագիտության անվանի պրոֆեսոր Յուրի Ղամբարյանի³⁸ տեսչությամբ³⁹ 1919 թ. սեպտեմբերին Երևանում համալսարան բացելու մասին, «որու անհրաժեշտ ծախքերու համար յատկացուած է 300.000 ռուպլի՝ բոլոր դպրոցներու նախնական ծախքերուն համար»⁴⁰:

Խորհրդարանի ամբիոնից կառավարության գործունեության ծրագրային հայտարարության մեջ ոչ միայն կանոնավոր բանակի ստեղծմանն ու կայացմանը, այլև Հայաստանի ներքին ու արտաքին կյանքի գրեթե բոլոր բնագավառներին նվիրված ենթաբաժիններ կային: Այդ հայտարարությունը կարելի է համարել երկրի վարչապետ Ա. Խատիսյանի գլխավորած կառավարության ծրագրի մակետը⁴¹: Նախաբանում մատնանշվում էր մի կարևոր հանգամանք, որը, թեև դժվարացնում էր գործադիր իշխանության աշխատանքը, բայց հաղթահարելի էր ժամանակի կտրվածքով: Գործադիր մարմինը (Նոր դահլիճը) երկրի կառավարումն ստանձնել էր «անասելի ծանր պայմաններու մէջ»⁴², մասնավորապես՝

- տնտեսությունը հիմնովին քայքայված էր երկարատև պատերազմի, զանգվածային տեղահանությունների և գաղթի հետևանքով,

- ժողովուրդը հոգեպես ու ֆիզիկապես հոգնել և հյուծվել էր սովի ու համաճարակների պատճառով,

- ներքին կյանքը վտանգված էր հատկապես թշնամաբար տրամադրված մահմեդական ուժերի կողմից⁴³:

Կային ծրագրային առաջնահերթություններ, որոնց նպատակային լուծման ուղիներ էր առաջարկում կառավարությունը: Դրանց թվում էին

³⁶ Ճակատամարտ 1919, N 212:

³⁷ Ճակատամարտ 1919, N 212:

³⁸ Յուրի Ղամբարյանի մասին տե՛ս ստորև բերված հղումներում. <https://hy.m.wikipedia.org/wiki/>.

³⁹ Ճակատամարտ 1919, N 248:

⁴⁰ Ճակատամարտ 1919, N 212:

⁴¹ Ճակատամարտ 1919, N 212:

⁴² Ճակատամարտ 1919, N 212:

⁴³ Ճակատամարտ 1919, N 212:

տնտեսական խնդիրները, արդյունաբերություն հիմնելու և այն զարգացնելու նպատակով արտաքին խոշոր փոխառություն վերցնելու անհրաժեշտությունը, ազգային դրամի կայունացումը, հողային հարցը, ներգաղթի հիմնախնդիրը, հաղորդակցության միջոցների և վառելիքի հայթայթումը, պարենավորման գործընթացի կարգավորումը, գաղթականների ու կարիքավոր ազգաբնակչության խնամատարությունը, առողջապահական և կրթամշակութային ոլորտների կանոնակարգումը, պետաիրավական ու դատական անկախ համակարգի հաստատումը, արտաքին մարտահրավերներին դիմակայելը, միջպետական հարաբերությունների հաստատումը և այլն: Այս բոլոր խնդիրներին անդրադարձ կար կառավարության գործունեության ծրագրային հայտարարության մեջ, որը տպագրվել էր «Ճակատամարտ» օրաթերթի սեպտեմբերի 27-ի համարում: Այդ հրապարակման մեջ պարբերականը Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր մարմնի համար առանձնացրել էր հետևյալ առաջնահերթությունները.

- ուժեղ պետական ապարատի, փորձառու պաշտոնյաների անհրաժեշտություն,

- պետական վարչական մեքենայի թերությունների վերացում,

- պարենամթերքի և կենսականորեն անհրաժեշտ առարկաների ներմուծման ապահովում,

- հարաբերությունների հաստատում դաշնակիցների ու հարևան երկրների հետ,

- սոցիալ-քաղաքական բարենորոգումների իրականացում,

- հարկային համակարգի կարգավորում,

- փոխադարձ համաձայնությամբ, սահմանային խնդրի կարգավորում,

- աշխատանքային օրենսգրքի ընդունում,

- ընդհանուր, պարտադիր և անվճար հանրային տարրական կրթության ապահովում,

- բարձրագույն, մասնավորապես պետության հովանու ներքո գործող համալսարանական կրթական համակարգի հաստատում,

- ավերված բնակավայրերի վերաշինություն⁴⁴:

Թերթը պնդում էր, թե վարչապետ Ա. Խատիսյանը վստահ էր, որ, ի հեճուկս արտաքին ու ներքին հիմնախնդիրների, Հայաստանի կառավարությունը ի զորու էր կյանքի կոչել կազմված և հանրությանը ներկայացված սեփական ծրագիրը: Նոր դահլիճի ղեկավարն այդ կապակցությամբ ասում էր. «Կառավարութիւնը կ'առաջադրէ իրեն 2 գլխաւոր խնդիրներ՝ մէկ կողմէ՝ պաշտպանել երկրի ապահովութիւնը արտաքին ու ներքին թշնամիին, իսկ միւս կողմէ՝ ապահովել ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը»:

⁴⁴ Ճակատամարտ 1919, N 212:

նր՝ կարգադրելով պարենաւորման գործը: Նորակազմ կառավարութիւնը այսօր հրապարակ կուգայ լայն ծրագրով ...Նոր կառավարութիւնը կը յայտարարէ, որ յամառօրէն պիտի ձգտի իրականացնել այդ ծրագիրը՝ հիմնելով զայն օրինականութեան վրայ»⁴⁵:

Ա. Իսատիսյանի վերոհիշյալ ծրագրային ելոյթի և դրան նվիրված քննարկումների հրապարակմամբ, «Ճակատամարտ» թերթը կարծես փորձել է իր լսարանին փաստերով վստահություն ներշնչել Հայաստանի Առաջին հանրապետության ղեկավար կազմի և կառավարության որդեգրած ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքների նկատմամբ: Չէ՞ որ պոլսահայ (և հայկական այլ) հասարակայնության մեջ ոչ բոլորն էին դրականորեն տրամադրված առավելապես դաշնակցական անդամներից բաղկացած Դահլիճի հանդեպ⁴⁶: Կային այնպիսիք, որոնց դուրը չէր գալիս նախարարների ու վարչապետի անգամ համեստ հագուկապը⁴⁷, թեև չէր կարելի մոռանալ երկրի աղքատիկ ու գրեթե դատարկ բյուջեն և կառավարության առջև ծառայած բազմաթիվ ու տարաբնույթ խնդիրները:

«Ճակատամարտը» պարբերաբար տեղեկացնում էր կառավարության օրախնդիր որոշումների և ընթացքի մեջ եղող ու արդեն կատարված աշխատանքների մասին: Դա անում էր՝ պահպանելով չեզոքություն և լինելով հնարավորինս անաչառ: «Հայաստանի կառավարության որոշումները» խորագրի ներքո 1919 թ. օգոստոսի 30-ին պարբերականը, առանց որևէ մեկնաբանության, ներկայացնում է տարբեր ոլորտների համար ընդունված որոշումները⁴⁸, ինչպես՝

- պարենավորման նախարարին հանձնարարվել է Ամերիկյան կոմիտեից այլուր ձեռք բերել և այն փոխանակել սերմացուի հետ,
- ելևմտական նախարարությանն է հանձնվել 10.000 դանիական «քուփո»՝ արտերկրում հայկական թղթադրամներ պատրաստելու նպատակով,
- լաստանավ պատրաստելու և այն Սևանա լճի վրա օգտագործելու նպատակով, Պատերազմական նախարարությանը տրամադրվել է 100.000 ռուբլի⁴⁹:

Բանակի կայացումը՝ կառավարության գործունեության և երկրի գոյատևման երաշխիք

Կանոնավոր ազգային բանակ ունենալը «Ճակատամարտը» համարում էր անկախ Հայաստանի գոյության երաշխիք, մանավանդ որ 1919 թ.

⁴⁵ Ճակատամարտ 1919, N 212:

⁴⁶ Ճակատամարտ 1919, N 250:

⁴⁷ Ճակատամարտ 1919, N 250:

⁴⁸ Ճակատամարտ 1919, N 246:

⁴⁹ Ճակատամարտ 1919, N 246:

սեպտեմբերին Հայաստանից պատրաստվում էր հեռանալ դեռևս 1918 թ. Մուղրոսի զինադադարից հետո այնտեղ հաստատված անգլիական զորքի ստորաբաժանումը⁵⁰: «Երկար ատեն է ի վեր կը ծանուցուի, թէ հաւանաբար ետ պիտի քաշուին անգլիական զինուորները Կովկասահայաստանէն: Արդեն իսկ գործադրութիւնը սկսած է, և կը վախցուի, որ սպանալիքները վերսկսին ժէօն թիւրքերու կողմէ»⁵¹, - կարդում ենք թերթում տպագրված Անգլո-հայկական կոմիտեի տեղեկագրում: Պարբերականի հրապարակումները վկայում են, որ, չնայած Հայաստանի պատվիրակության ջանքերին և դիմումներին՝ ուղղված Անգլիայի կառավարությանը և Աշխատավորական կուսակցության ներկայացուցիչներին, ինչպես նաև ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին և եվրոպացի անվանի մտավորական-հասարակական գործիչներին, բրիտանական զորքը դուրս եկավ հայոց պետության սահմաններից, քանի որ այդպես էր թելադրել այդ երկրի քաղաքական շահը⁵², ինչի մասին գրել էր նաև «Ճակատամարտը»⁵³:

Հանրապետության խաղաղ և անվտանգ կյանքի ապահովման հիմնական երաշխավորի՝ բանակի ստեղծման և կայացման նպատակով երկրի կառավարությունն ընդունել էր մի շարք օրենքներ⁵⁴: Դրանց մեջ էր գորակոչի ապահովմանը նպաստող Զինվորագրության օրենքը⁵⁵: Այն հաստատվել էր 1919 թ. սեպտեմբերի 9-ին (մինչ այդ՝ 1919 թ. հունիսի մեկին էր օրենք ընդունվել զորակոչի վերաբերյալ⁵⁶) տեղի ունեցած խորհրդարանական նիստում⁵⁷: Այս օրենքով զորակոչի էին ենթարկվելու 29-32 տարեկան ՀՀ քաղաքացիները, այդ թվում՝ արևմտահայերը, որոնց տարիքը որոշվելու էր զինվորական աստիճաններին կից ստեղծված հանձնաժողովների միջոցով՝ ըստ նրանց արտաքին տվյալների, եթե չունենային ծննդյան վկայական կամ անձը հաստատող փաստաթուղթ⁵⁸: Հիշյալ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հերթական զորակոչը կատարվում է հոկտեմբերի 15-ից սկսած՝ հիմք ընդունելով 1919 թ. հունիսի մեկի և սեպտեմբերի 9-ի օրենքները⁵⁹: Ընդ որում, զորակոչից ազատվում են ընտանիքի միակ կերակրող համարվող անձինք⁶⁰:

⁵⁰ Ճակատամարտ 1919, N 248:

⁵¹ Ճակատամարտ 1919, N 248:

⁵² Գալոյան 1999, 177:

⁵³ Ճակատամարտ 1919, N 248:

⁵⁴ Հայոց պատմություն 2010, 47-48:

⁵⁵ Հայոց պատմություն 2010, 47-48:

⁵⁶ Ճակատամարտ 1919, N 309:

⁵⁷ Ճակատամարտ 1919, N 287:

⁵⁸ Ճակատամարտ 1919, N 287:

⁵⁹ Ճակատամարտ 1919, N 309:

⁶⁰ Ճակատամարտ 1919, N 309:

Ելնելով երկրի խաղաղ ու անվտանգ կյանքի ապահովման հրամայականից՝ «Ճակատամարտը» ամբողջությամբ տպագրում էր կառավարության՝ դասալքության դեմ ուղղված պատիժների մասին որոշումը⁶¹: Բանակը կազմալուծող այդ բացասական երևույթը չեզոքացնելու ակնկալիքով՝ Գործադիրը հիմնում է մասնավոր հանձնախումբ՝ հարյուրապետ Մուրադյանի նախագահությամբ⁶²: Այդ մարմինը տարածում է 6 կետից բաղկացած հայտագիր, որտեղ սահմանված էին հետևյալ կոնկրետ պատիժները.

- 1-6 ամիս բանտարկության կամ 1000-10.000 ռուբլի տուգանքի էին ենթարկվելու պետական կամ մասնավոր այն հաստատությունների տնօրենները, որոնք աշխատանքի էին ընդունել զինվորական ծառայությունը հաստատող փաստաթուղթ («վէսիքա») չունեցող անձանց,

- ժամկետային զորակոչից խուսափողները ենթարկվելու էին 2-4 ամիս բանտարկության կամ 1-3 ամիս կալանքի, ինչին զուգահեռ՝ բաց թողնված յուրաքանչյուր ամսվա համար պարտավորվելու էին 6 ամիս ծառայել,

- 2 անգամից ավել դասալքության դիմողները հանձնվելու էին Զինվորական ատյանին և ենթարկվելու էին մահապատժի⁶³:

Կառավարության նախաձեռնությամբ, 1919 թ. սեպտեմբերի սկզբին Խորհրդարանը զինվորական (ռազմական) նախարարին վարկ էր տրամադրել՝ ԱՄՆ-ից հայ զինվորների համար որակյալ կոշիկեղեն գնելու նպատակով⁶⁴, մեկ այլ վարկ էլ տվել էր նրան՝ մարտական «գնդակներ պատրաստելու և փամփուշտներ լեցնելու արհեստանոց բանալու համար»⁶⁵:

Օրենքներից և որոշումներից բացի, կառավարությունը մի կարևոր ձեռնարկով էր հանդես եկել՝ 1919 թ. դեկտեմբերի 21-ը հայտարարելով Բանակի օր և կազմակերպելով միջոցառումներ, հանգանակություններ ու նվիրատվություններ հօգուտ զինվորների⁶⁶: «Ճակատամարտը» ոչ միայն անդրադառնում է այդ որոշումներին ու միջոցառումներին, այլև հրապարակում է լուրեր և տեղեկություններ իր իսկ ընթերցողների՝ ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայության կողմից բանակին աջակցելուն առնչվող ծրագրերի մասին: Այդ կապակցությամբ օրաթերթում բացվել էր «Մեր պարտքը հայ բանակին» խորագրով բաժինը: Այդտեղ նաև ծավալվում էին քննարկումներ, ներկայացվում էին զինվորներին թեկուզ չնչին գումար նվիրաբերած անձանց անուններ, ինչպես և տպագրում էին հայ

⁶¹ Ճակատամարտ 1919, N 247:

⁶² Ճակատամարտ 1919, N 247:

⁶³ Ճակատամարտ 1919, N 247:

⁶⁴ Ճակատամարտ 1919, N 287: Հմմտ. նաև Հակոբյան 2018, 72:

⁶⁵ Ճակատամարտ 1919, N 287:

⁶⁶ Ճակատամարտ 1919, N 287:

ուղղված նամակներ: «Հայ զինուորը գիտէ մէկ բան - կատարել իր պարտականութիւնը, պաշտպանել հայրենիքը, փրկել հայութեան մնացորդները և մանուկ Հանրապետութիւնը: Ան լաւ հասկցած է, թէ առանց այդ հայութեան ու Հանրապետութեան կարելի չէ գոյութիւն ունենալ այլևս»⁶⁷, - վստահեցնում էր թերթը՝ հանրությանն առաջարկելով ամեն կերպ սատարել բանակին՝ մասնավորապես օգտակար լինելով նվիրատվություններով:

Զինվորներին ու բանակին աջակցելու նպատակով, Կ. Պոլսում սկսված հասարակական շարժումը ղեկավարելու համար ստեղծվել էր հատուկ հանձնաժողով⁶⁸, որի աշխատանքը գտնվում էր «Ճակատամարտի» ուշադրության կենտրոնում: Հայությունը սրտանց մասնակցում էր այդ հանգանակություններին: Վառ ապացույց էին խմբագրությանը հասցեագրված նամակները: Դրանցից մեկում 9-ամյա էլիզա Կ. Մինասյանը Գատրգյուղից գրում էր. «Հայրիկէս ուզած էի, որ Կաղանդի համար ինձի գնէ քուբլա մը, բայց այսօր կուտամ ձեզի այդ քուբլային դրամը՝ 5 ոսկի, որպէս զի դրկէք Հայաստան զինուոր եղբայրներուս»⁶⁹:

«Հագվեցե՛ք հայ զինվորը» կարգախոսը պարբերաբար տեսնում ենք օրաթերթի էջերում:

Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ և թիկունքին ունենալով ողջ հայության գործվալից աջակցությունը՝ Հայոց բանակը հաղթանակներ էր գրանցում: Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանը այդ մասին հպարտորեն փաստում է խորհրդարանի՝ սեպտեմբերի 4-ի նիստում⁷⁰: Նա հայտարարում է ի լուր ամենքի. «Հայրենիքին սպառնացող վտանգը դեռ չէ անցած, այնուամենայնիւ, երկրի դրութիւնը կարելի չէ ընդունիլ յուսահատական: Բանակը և ժողովուրդը կը պաշտպանեն կառավարութիւնը, որ յենուելով այդ ուժերու վրայ՝ պիտի շարունակէ գործը»⁷¹: Վարչապետը շեշտում էր բանակի ինքնակազմակերպման անհրաժեշտությունը՝ հատկապէս անգլիական զորքը Հայաստանից հեռանալուց հետո. «Մենք պէտք է ուժեղացնենք մեր ներքին ուժերը արտաքին վտանգին դէմ...Մեզ կը մնայ մէկ կողմէն՝ չկորսնցնել դուրսէն եկած յոյսը և միւս կողմէն՝ կազմակերպել մեր սեփական ուժերը»⁷²:

Բանակի կազմավորումը կայուն հիմքերի վրա դնելու հրամայականը շեշտված էր Ազգային ժողովում կառավարության ներկայացրած հայտա-

⁶⁷ Ճակատամարտ 1919, N 336:

⁶⁸ Ճակատամարտ 1919, N 336:

⁶⁹ Ճակատամարտ 1919, N 336:

⁷⁰ Ճակատամարտ 1919, N 257:

⁷¹ Ճակատամարտ 1919, N 257:

⁷² Ճակատամարտ 1919, N 257:

րարության մեջ⁷³: Ըստ այդմ՝ Հայաստանն արտաքին թշնամական ուժերից պաշտպանելու գործը պետք է հենվեր պարտադիր և ընդհանուր զինվորական ծառայության վրա⁷⁴: Պետք է ստեղծվեին պահակազորք ու ժողովրդական միլիցիա, իսկ բանակը՝ ազգայնացվեր⁷⁵: Ծրագրվում էր նաև միջոցներ հատկացնել զորքի առողջապահական ու զորանոցների սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու նպատակով⁷⁶:

Եզրակացություններ

Ամփոփելով՝ կարող ենք փաստել հետևյալը.

- ըստ Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումների, 1919 թվականը բավական բեղմնավոր էր Հայաստանի Առաջին հանրապետության Գործադիր մարմնի աշխատանքների համար,

- պետականաշինության հիմքերը երկրի կառավարությունը դրել էր հենց այդ տարվա ընթացքում՝ փորձելով իր որոշումներով և ծրագրերով ոչ միայն նպաստել հայրենի երկրի պաշտպանունակությանն ու խաղաղ կյանքի ապահովմանը, Հայաստանն ազատել սովի ու աղքատության ճիւղերից, այլև բոլոր ոլորտներում և ասպարեզներում ընթանալ դեպի զարգացում ու հզորացում,

- կառավարության գործունեության ամբողջ ընթացքը հանգամանորեն ներկայացված է պարբերականի էջերում՝ հիմնականում լուրի, թղթակցության և հարցազրույցի ժանրերով:

Գրականություն

Գալոյան Գ. 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, «Գիտություն» հրատ., 540 էջ:

Կարապետյան Մ. 1995, Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորումը (1918-1920 թթ.), Հայկական բանակ, N 5-6, Երևան, 21 էջ:

Կարապետյան Մ. 2003, Հայաստանը 1912-1920 թթ., Երևան, «Զանգակ-97» հրատ., 400 էջ:

Հակոբյան Ա. 2005, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, «ՀՅԴ հրատ.», 364 էջ:

Հակոբյան Ա. 2018, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Երևան, «Լուսակն» հրատ., 152 էջ:

⁷³ Ճակատամարտ 1919, N 269:

⁷⁴ Ճակատամարտ 1919, N 269:

⁷⁵ Ճակատամարտ 1919, N 269: Հմմտ. նաև Կարապետյան 1995, 17, Վիրաբյան 2018, 50-51:

⁷⁶ Ճակատամարտ 1919, N 269:

- Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու 2000, Երևան, «Գիտություն» հրատ., 455 էջ:
- Հայոց պատմություն 2010, հ. 4, գիրք 1, Երևան, «Զանգակ-97» հրատ., 799 էջ:
- Ճակատամարտ 1919, Կ. Պոլիս, N 212 (Կառավարության զեկուցումը Հայաստանի խորհրդարանին մեջ), N 243 (Հայաստանի նոր դահլիճը), N 246 (Հայաստանի կառավարության որոշումները), N 247 (Վարչապետ Խատիսյանի զեկուցումը կառավարության քաղաքականության մասին, Հայ գաղթականներու փոխադրութեան մասին, Պատիժներ դասալքութեան դեմ), N 248 (Ա. Խատիսյան դարձյալ վարչապետ, Հայաստանին սպառնացող վտանգը), N 250 (Զապեցե՛ք ձեր կիրքերը, Բաց երկտող մը Զավեն պատրիարքին), N 257 (Վարչապետ պ. Խատիսյանի ճառը Հայաստանի խորհրդարանին մեջ քաղաքական կացության մասին), N 269 (Հայաստանի խորհրդարանին մեջ նոր դահլիճին հայտարարությունները արտաքին և ներքին քաղաքականության մասին), N 287 (Հայաստանի Զինվորագրության օրենքը, Զինվորական վարկեր), N 309 (ՀՀ ներքին գործոց նախարարի շրջաբերականը), N 336 (Հազվեցնենք հայ զինվորը, Հայ մանուկը և բանակը):
- Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան» հրատ., 705 էջ:
- Վաղարշյան Ա. 2005, Հայաստանի Առաջին հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.), Երևան, 206 էջ, <http://etd.asj-oa.am/1412/?fbclid=IwAR2CS5cODMtXsS9X1afB1xNMS3brkFpJiPW50k7UUXW7ulCWtVlalqy5E> (5.02.2018):
- Վիրաբյան Վ. 2018, Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգը 1918-1920 թթ. (Հայագիտության հարցեր, Երևան, N 2, 13 էջ):
- Յուրի Ղամբարյանի մասին տե՛ս ստորև բերված հղումներում. <https://hy.m.wikipedia.org/wiki/> (05.02.2018).

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ (1918-1919 ԹԹ.)**

Մարիամ Հովսեփյան

1918-1919 թթ. «Ճակատամարտ» օրաթերթը գրեթե բոլոր համարներում անդրադարձել է Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության գործունեության առավել կարևոր և օրախնդիր դրվագներին: Ընթերցողներին ներկայացրել է երկրի ներքին ու արտաքին հիմնախնդիրները կարգավորելու համար գործադիր մարմնի ընդունած որոշումները: Ըստ պարբերականի հրա-

պարակումների՝ 1919 թվականը բավական բեղմնավոր էր կառավարության աշխատանքների համար: Պետականաշինության հիմքերը Գործադիրը դրել է հենց այդ տարվա ընթացքում՝ փորձելով իր որոշումներով և ծրագրերով ոչ միայն Հայաստանն ազատել սովի և աղքատության ճիրաններից, այլև կյանքի բոլոր ասպարեզներում ընթանալ դեպի զարգացում ու հզորացում: Այս ամենն անաչառորեն լուսարանված է «Ճակատամարտի» էջերում:

Բանալի բառեր՝ Հայաստանի Առաջին հանրապետություն, կառավարություն, ծրագիր, պետականաշինություն, ներքին ու արտաքին հիմնախնդիրներ, օրենքներ, որոշումներ:

ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРАВИТЕЛЬСТВА ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ГАЗЕТЕ "ЧАКАТАМАРТ" В 1918-1919 ГГ.

Мариам Овсепян

Издававшаяся в 1918-1919 гг. в Константинополе ежедневная газета "Чакатамарт" почти в каждом номере обращалась к наиболее ключевым моментам деятельности правительства Первой Республики Армения. С её страниц читатели узнавали о постановлениях органа исполнительной власти нового независимого государства. Согласно газетным публикациям, 1919 год был довольно-таки плодотворным в деятельности армянского правительства. Именно в этот период были заложены основы государственного строительства. Своими решениями и программами правительство пыталось не только преодолеть царившие в стране голод и нищету, но и содействовать её развитию и процветанию.

Ключевые слова – Первая Республика Армения, правительство, программа, государственное строительство, внутренние и внешние проблемы, законы, решения.

THE COVERAGE OF THE ACTIVITIES OF THE GOVERNMENT OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA IN NEWSPAPER "CHAKATAMART" (1918-1919)

Mariam Hovsepyan

In 1918-1919 "Chakatamart" daily newspaper covered the most important and critical activities of the government of the First Republic of Armenia. Readers learned about the decisions of the Executive authority of the newly independent country to resolve internal and external challenges of the country.

According to the publications, 1919 was quite fruitful in the activities of the government. It was during this period that the foundations of state building were laid. By its decisions and programs, the government tried not only to free Armenia from the shackles of hunger and poverty, but also to take a step forward in all spheres for the development and prosperity of the country. All this was objectively covered on the pages of the publication.

Key words – First Republic of Armenia, Government, program, state building, internal and external challenges, laws, decisions.

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ
ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆ (XIX Դ. 30-ԱԿԱՆ ԹԹ. –XX Դ. ԱՌԱՋԻՆ
ՏԱՄՆԱՄՅԱԿ)**

Վարդիթեր Գրիգորյան

Հայաստանի ազգային արխիվ, առաջատար արխիվագետ
Հրաչյա Քոչար 5/2, 0033 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ vardgrig00@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 07.08.2019, գրախոսվել է 07.08.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Հին Հռոմում կոնսիստորիա է անվանվել կայսերը կից գործող գաղտնի խորհուրդը (լատ. consistorium-համատեղ կանգնած): Հռոմա-կաթոլիկական եկեղեցում այդպես էր կոչվում կարդինալների խորհուրդը, որը հրավիրում էր Հռոմի պապը: Ռուսական եկեղեցու թեմերում թեմակալ առաջնորդներին կից առաջին կոնսիստորիաները բացվեցին XVIII դարում, Հայոց եկեղեցու թեմերում՝ սինոդային կառավարմանն անցնելուց հետո: Էջմիածնի սինոդի գործունեության շրջանում կոնսիստորիան թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմինն էր և գոյություն ունեցավ մինչև սինոդի փակվելը:

Կոնսիստորիայի կառուցվածքը: Իրավասության շրջանակները

1836 թ. Հայոց եկեղեցու կառավարումը կանոնավորող կանոնադրության ընդունումից հետո Ռուսական կայսրության կազմում ստեղծված հայոց վեց հոգևոր թեմերում էլ բացվեցին կոնսիստորիաներ: Յուրաքանչյուր թեմում գործում էր մեկ կոնսիստորիա: Այն կոչվում էր նաև Հոգևոր աստյան: Կառուցվածքային առումով դրանք միատեսակ էին: Հիմնականում նույնաբնույթ էին նաև հետագայում նրանց գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրները՝ պայմանավորված բյուրոկրատական կառավարման թելադրած կանոններով: Հավելենք նաև, որ եկեղեցական կառավարման սինոդային մոդելը մեծ մասամբ կրկնում էր ժամանակի պետական կառավարման մարմինների աշխատելաոճը:

Կոնսիստորիան բաղկացած էր գրասենյակից (դիվանատուն) և ներկայացուցչությունից: Գրասենյակը գլխավորում էր ատենադպիրը կամ քարտուղարը, իսկ աշխատանքներն իրականացնում էին թարգմանիչը, արխիվարիուսը, էկզեկուտորը (տնտեսական գործերի պատասխանատուն) և գրագիրները: Ներկայացուցչությունը կազմված էր չորս անդամից՝ մեկ վարդապետ և երեք ավագ քահանա, որոնց նշանակում էր թեմակալ առաջ-

նորոն Էջմիածնի սինոդի համաձայնությամբ: Գրասենյակի աշխատակիցներին ընտրում էին կոնսիստորիայի անդամները, հաստատում էր թեմակալ առաջնորդը¹:

Գրասենյակի հիմնական գործառույթը կոնսիստորիայի փաստաթղթաշրջանառության գործընթացի կազմակերպումն էր, իսկ ներկայացուցչությանը՝ ընթացիկ հարցերի վերաբերյալ հրամանների և որոշումների ընդունումը: Դա իրականացվում էր պարբերաբար գումարվող կոլեգիալ նիստերի² միջոցով, որոնց կարող էին մասնակցել միայն ներկայացուցչության անդամները: Թեմակալ առաջնորդը նիստերին չէր մասնակցում, սակայն որոշումների վերջնական հաստատումը նրան էր վերապահված: Առարկությունների կամ անհամաձայնությունների դեպքում նա իրավունք ուներ այն վերադարձնելու լրացուցիչ քննարկման:

Կոնսիստորիայի իրավասությունների անմիջական շրջանակներն ընդգրկում էին՝

- թեմի հոգևորականների, եկեղեցիների, վանքերի, ուխտատեղիների և դպրոցների նկատմամբ վերահսկողության իրականացում.
- թեմի վանքերի և եկեղեցիների կայքի կառավարում.
- վանքերի, եկեղեցիների, դպրոցների օգտին կամավոր նվիրատվությունների հավաքման թույլտվության տրամադրում.
- հոգևորականների որբերի և այրիների նկատմամբ խնամաձության ապահովում.
- եկեղեցականների բողոքների քննության իրականացում.
- ծխականների ամուսնությունների հետ կապված հարցերի քննություն.
- թեմի վանքերում օտար անձանց բնակության թույլտվության տրամադրում.
- Վանքական և Հոգևոր կառավարությունների անդամների հաստատում.
- թեմի եկեղեցիների դպիրների նշանակում.
- Էջմիածնի սինոդին հոգևոր աստիճաններ շնորհելու կամ աստիճանագրկելու վերաբերյալ միջնորդությունների ներկայացում.
- վանքերի, եկեղեցիների, դպրոցների շինարարության թույլտվության տրամադրում.
- թեմի վանքերի, եկեղեցիների, հոգևորականների, դպրոցների, ծխականների թվի վերաբերյալ ցուցակները տեղերից ստանալու և պահպանելու իրավունք.
- Հոգևոր ատյանում եղած ֆինանսական միջոցների ամսական ստուգում իրականացնելու իրավունք.

¹ Պոլոժենիե, գլուխ V, հոդ. 72-74:

² Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի նիստերի արձանագրություններն ու օրագրությունները տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2181-2363:

- տարեկան հաշվետվության ներկայացում էջմիածնի սինոդին³:

Ըստ այդմ՝ կարելի է եզրակացնել, որ այն ուներ իրավասությունների բավական լայն շրջանակ և որոշակիորեն սահմանափակում էր թեմակալ առաջնորդի միանձնյա իշխանությունը:

Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի բացումը, գործունեությունը և հիմնական խնդիրները

Հովհաննես արքեպս. Գեղարդակրի (1802-1810) առաջնորդության ժամանակ Թիֆլիսում ստեղծված Հոգևոր կառավարության⁴ հիման վրա 1837 թ. օգոստոսի 7-ին բացվեց նաև Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիան⁵:

Կոնսիստորիայի առաջին անդամներ են նշանակվում Գևորգ վարդապետ Տեր-Դավթյանը, Գևորգ ավագ քին. Մեիրաբյանցը, Հարություն ավագ քին. Վարդանյանցը, Տեր Ստեփաննոս Տեր-Հովհաննիսյանցը⁶: Վերջիններս երկար չեն պաշտոնավարել: 1840-1842 թթ. նոր անդամներ են նշանակվում՝ Եփրեմ վարդապետ Երզնկյանցը, ավագ քին. Մովսես Սայադնեանցը, ավագ քին. Ավետիք Պոպովը, Վարդան քին. Քամոյանցը⁷: Դիվանատան առաջին քարտուղար է նշանակվում Հովհաննես Կարապետի Խուբյանցը (1837-1841)⁸, էլզեկուտոր՝ Հակոբ Կարինյանցը (հետագայում՝ դիվանատան քարտուղար)⁹:

Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի բացվելուց անմիջապես հետո թեմակալ առաջնորդ Կարապետ Բագրատունին (1837-1856) էջմիածնի սինոդի հաստատմանը հանձնեց ծառայողների ժամանակավոր հաստիքացուցակը, սակայն գործի անցնելուց հետո, տեսնելով աշխատանքի իրական ծավալները, որոշեց ավելացնել ինչպես հաստիքների քանակը, այնպես և վարձատրության չափը¹⁰: Սակայն էջմիածնի սինոդն ի սկզբանե ընդդիմացավ՝ առաջարկելով բավարարվել եղածով և աշխատանքի հրավիրել ջանասեր աստիճանավորների, իսկ միջոցների պակասը լրացնել սեփական աշխատասիրությամբ, որն աննկատ չէր մնա. «Առ այս Սինհոդոսդ էջմիածնեայ 'ի 22-ն հոկտեմբերի նոյն ամի N^o 1218 տուե-

³ Պոլոժենիե, հոդ. 77: Թեմակալ առաջնորդի իրավունքների և պարտականությունների մասին տե՛ս գլուխ IV, հոդ. 55-71:

⁴ Երիցեան 1895, 458: Նախորդ Հոգևոր կառավարության անավարտ գործերի ցանկը տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 259, թ. 1-7 շրջ.-ով:

⁵ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 39, թ. 1:

⁶ Ծառայողական ցուցակները տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 39, թ. 51 շրջ.- 66:

⁷ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 83, թ. 26:

⁸ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2184, թ. 2-3 և շրջ.: Ծառայողական ցուցակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 564, թ. 11-13:

⁹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 39, թ. 17; գ. 83, թ. 30:

¹⁰ Մելքոնյան 1999, 62-65:

րէր գիտել, զի նա ոչ կարէ համաձայնել առ հաստատութիւն նորոգ առաջարկեալ շտատի. մինչև չգտանել զայլ հաւատարմագոյն աղբիւրս արդեանց և հրամայել հրավիրել զաստիճանաւորս և զայլ անձինս, զամենայն դժուարութիւնս և չքատր միջոցս լցուցանել սեփական երկասիրութեամբ և անդու գործունէութեամբք, որք և ոչ մնացին անտես յիտումն ժամանակի...»¹¹:

1838 թ. մարտի 25-ին Էջմիածնի սինոդի № 205 հրամանով հաստատած հաստիքացուցակն անփոփոխ մնաց մինչև XIX դարի 40-ական թվականների վերջը:

1847 թ. կաթողիկոս Ներսես Ե-ն կոնսիստորիայի ծախսերը պակասեցնելու նպատակով կրճատեց հաստիքների թիվը՝ թողնելով քարտուղարին, չորս գրագիրներին, իսկ գանձապահի պաշտոնն էլ հանձնվեց կոնսիստորիայի անդամներից մեկին¹²: Ընդ որում, վերջիններիս ծառայության համար վարձատրություն սահմանված չէր: Նրանք պետք է աշխատեին հասարակական հիմունքներով: Վարձատրություն սահմանված էր միայն թեմակալ առաջնորդի¹³ և դիվանատան աշխատակիցների համար¹⁴: Սովորական երևույթ էր նաև մի քանի պաշտոնների համատեղումը մեկ անձի ձեռքում: Այդպիսով փորձ էր արվում միաժամանակ կրճատել կոնսիստորիայի ծախսերը և բարձրացնել տվյալ անձի աշխատավարձը: Դրա փոխարեն ընկնում էր աշխատանքի կատարողականությունը:

Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի գործունեության ծավալները պատկերացնելու համար նշենք, որ տարեկան մտից գրությունների թիվը եթէ XIX դարի 30-ական թվականներին մոտ 121-ն էր, ապա նույն դարի 40-ական թվականներին հասավ 2318-ի¹⁵, իսկ 90-ական թվականներին հատեց 6000-ի սահմանը¹⁶: Դրանք տարաբնույթ էին. տնտեսական, դատական, վարչական, ծխականների և հոգևորականների տարբեր հարցերով խնդրագրեր, կտակների, նվիրատվությունների, նպաստների վերաբերյալ և այլն:

Տարբեր խնդրահարույց գործերի ընթացքը սովորաբար երկար ձգձգվում էր և կարող էր տևել տարիներ: Ինչպես բնութագրել է «Արձագանք» թերթի հոդվածագիրը, չնայած գրագրության ծավալների մեծացմանը, կարճ գրելու սովորությունն ընդունված չէր, ամեն ինչ լինում էր եր-

¹¹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1012, թ. 1-ի շրջ.-2:

¹² ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4058, թ. 5-ի շրջ.- 6:

¹³ Թեմակալ առաջնորդի տարեկան ծախսերի միջին գումարը կազմում էր մոտ 3500-4500 ռ. արծաթով:

¹⁴ Կոնսիստորիայի բացվելուց հետո առաջին քսանամյակում քարտուղարի տարեկան աշխատավարձը կազմում էր մոտ 360, 4-5 գրագիրներին միասին՝ մոտ 600, իսկ մյուս ծառայողներինը առանձին-առանձին՝ մոտ 180-200 ռուբլի արծաթով:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4058, թ. 5-ի շրջ.:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 544, թ. 2:

կար-բարակ օրագրությամբ, ուստի զարմանալի չէր կոնսիստորիայի դանդաղ գործավարության պատճառով նրա հետ առնչվողների մշտական դժգոհությունը¹⁷: Օրինակ՝ տնտեսական-դատական բնույթի գործերը միջինը կարող էին ձգձգվել 10-14 տարի: Այսպես՝ 1838 թ. մայիսին կոնսիստորիան գործ է բացում Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու նախկին երեսփոխանի¹⁸ եկեղեցուն ունեցած 1500 ռուբլի պարտքի վերադարձման մասին: Գործի առնչությամբ գրագրությունը շարունակվում է մինչև 1851 թ.¹⁹: Նույն՝ 1838 թ., Որնակ գյուղի բնակիչ Աստվածատուր Ավետիսի Սաղաղյանցը խնդրագրով դիմում է կոնսիստորիային ապացուցելու իր՝ Թագուի Արղությանցի ճորտը չլինելը: Հարցի առնչությամբ քննությունը շարունակվում է մինչև 1850 թ.²⁰:

13-14 տարի ձգձգվող գործերի քննությունների կարելի է հանդիպել անգամ XX դարի սկզբին: Օրինակ՝ 1900 թ. Թիֆլիսի Սբ Մինաս և Գանձակի Նորաշենի եկեղեցու երեսփոխանների դեմ բացված գործերը շարունակվում են մինչև 1913 և 1914 թվականները²¹: Կոնսիստորիայի անդամ Գրիգորիս ավագ քին. Երզնկյանցը²² տարեկան ամփոփիչ զեկուցագրում գրում էր. «Գործերն իրենց լուծումը շատ դանդաղ են ստանում, շնորհիվ շատ ուշ և մինչև անգամ պատահական ներկայացման Ատենիդ... Օրագրությունները կամ արձանագրությունները միակողմանի են կատարում...»²³:

Չլուծված գործերի կուտակումներին զուգահեռ տարածվեց նաև կաշառակերությունը: Ծխականներն իրենց դիմումների պատասխաններն արագ ստանալու համար հաճախ փորձում էին կաշառել կոնսիստորիայի պաշտոնյաներին: Ընդ որում, դա բնորոշ էր ոչ միայն Հայ, այլև Ռուսական եկեղեցու թեմերին, որտեղ կոնսիստորիաները կաթվածահար վիճակում հայտնվեցին հատկապես XIX դարի 60-ական թվականների սկզբներին²⁴:

Փաստաթղթաշրջանառության քանակի մեծացմանը զուգընթաց՝ կոնսիստորիաների օրակարգային խնդիրներից մեկը դարձավ որակյալ կաղ-

¹⁷ Արձագանք, 1883, № 27, 378:

¹⁸ Հայոց եկեղեցու թեմերի ծխական եկեղեցիների շարժական և անշարժ գույքի կառավարումն իրականացնում էր երեսփոխան (եկեղեցպան) կոչվող պաշտոնյան, որն ընտրվում էր տվյալ եկեղեցու պատվավոր ծխականներից երեք տարի ժամկետով (Պոլոժենիե, գլուխ IX, հոդ. 121-126):

¹⁹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2375, թ. 1-108:

²⁰ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2376, թ. 1-46:

²¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2464, թ. 1-58; գ. 2468, թ. 1-50:

²² Գրիգորիս Տեր-Հովհաննիսյան Երզնկյանցը մինչև կոնսիստորիայի անդամ նշանակվելը զբաղեցրել է Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալի պաշտոնը, եղել է նաև Թիֆլիսի Զրկինյանց Սբ. Կարապետ եկեղեցու քահանա:

²³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 347, թ. 52 և շրջ.:

²⁴ Римский 1999, 87.

րերի հարցը: Բանն այն է, որ ցածր վարձատրության պատճառով շատերը նախընտրում էին աշխատանքի անցնել ավելի բարձր վարձատրվող պետական գրասենյակներում: Կարելի է հանդիպել անգամ իրավիճակի, երբ քարտուղարի պարտականություններն իր վրա էր վերցնում գրագիրը, սակայն վարձատրվում էր գրագրի չափով. «...Յայսմ միջոցի տեղի Ատենադարի ստէպ ստէպ մնայր դատարկ վասն այն՝ զի 'ի պատճառաւ սակաւութեան ռոճկին ոչ ոք 'ի հմուտ աստիճանաւորաց ցանկայր ունել զայն, նոյնպես և վասն այն՝ զի ներկայ միջոցիք ոչ ոք վստահանայր յանձն առնուլ զձանր պատասխանատութիւնս սորին, ուստի և զպաշտօն Ատենադարի ժամանակ առ ժամանակ վարէր մին 'ի գրագրաց՝ ստանալով զռոճիկ գրագրի. յայսպիսի տնօրէնութենէ թէպետ կարճեցան ծախք կոնսիստորիս 'ի չտալոյ զբովանդակ ռոճիկս էկզէկուտօրի, թարգմանի (արխիվարիօսի) և զմասն 'ի ռոճկաց Ատենադարի և գրագրաց, սակայն գործք և թուղթք կօնսիստօրիս բազմացան երեք կամ չորս հազարի չափ...»²⁵:

Ինչպես նշվեց, XIX դարի 40-50-ական թթ. թեմակալ առաջնորդ Կարապետ Բագրատունու և Ներսես կաթողիկոսի միջև հարաբերությունների սրումը բացասաբար անդարդարձավ թեմական վարչական կառույցի կազմակերպման գործընթացի վրա²⁶: Կոնսիստորիայի բացվելուց հետո առաջին քսանամյակում կուտակված խնդիրների լուծմանն ուղղված որոշակի քայլեր ձեռնարկվեցին միայն հաջորդ երկու թեմակալ առաջնորդների՝ Սարգիս արքեպս. Ջալալյանցի (1857-1861)²⁷ և Մակար արքեպս. Թեղուտեցու (1864-1876)²⁸ օրոք:

1859 թ. Սարգիս արքեպս. Ջալալյանցը կոնսիստորիայի անմխիթար վիճակի մասին էջմիածնի սինոդին գրում էր. «Բազմիցս նկատել եմ, թէ զանազան հրամանագիրք դորին և պահանջք այլ և այլ ատենական տեղեաց և պաշտօնատար անձանց ընդ վսէմ առարկայից յընդ երկար ժամանակս մնան յԱտենի կօնսիստօրիային առանց բաւարարական ընթացից, և ընդ նմին բազում գործք եկեղեցական կալուածոց մնան անվերջանալի... վասն, 'ի 22-ն հոկտեմբերի անցեալ ամի N^o 184, յառաջարկեցի կօնսիստօրիային բարուք դատողութեամբ և նուրբ ընտրողութեամբ 'ի բարեկարգել զներկա վիճակ դիւանատան նորին...»²⁹:

²⁵ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4058, թ. 6:

²⁶ Կարապետ Բագրատունու և Ներսես Աշտարակեցու փոխհարաբերությունների մասին տե՛ս Մելքոնյան 2006, 129-134:

²⁷ Ծառայողական ցուցակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5717, թ. 14-19: Կյանքի և գործունեության մասին՝ ֆ. 468, ց. 2, գ. 112, թ. 1-19:

²⁸ Մակար Թեղուտեցու գործունեության մասին տե՛ս Тунян 2011, 1-207; Նշանավոր ճեմարանականներ 2005, 43-50:

²⁹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4058, թ. 2:

Ըստ այդմ, թեմակալ առաջնորդն ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը, ստուգելով կոնսիստորիայի գործերը, կազմեց ծավալուն մի զեկուցագիր-նախագիծ («Գաղափար-Պրոյեկտ»)՝³⁰ որը ներկայացվեց նաև Էջմիածնի սինոդի դատին, քանզի դրա իրագործման համար անհրաժեշտ էր վերջինիս թույլտվությունը: Ինչպես նախկինում, այս անգամ ևս Էջմիածնի սինոդը չչտապեց հավանություն տալ բարեկարգման ծրագրին: Փոխադարձ գրագրությունները շարունակվեցին մինչև XIX դարի 70-ական թվականները: Ինչ վերաբերում է այդ ծրագրի բովանդակային կողմին, ապա այսպես կոչված «Պրոյեկտի» հեղինակները կոնսիստորիայում կուտակված խնդիրների լուծումը կապում էին վարձատրության բարձրացման և համապատասխան կադրերի պակասի լրացման հետ: Ընդ որում, խոսքը գլխավորապես դիվանատան քարտուղարի մասին էր: Երկարատև գրագրություններից հետո, ի վերջո, նրա վարձատրությունը բարձրացվեց, սակայն կոնսիստորիայում տիրող անմխիթար վիճակը չվերացվեց: 1837-1876 թթ. դիվանատան քարտուղարի պաշտոնում աշխատեց մոտ ութ անձ՝³¹ իսկ 1876-1895 թթ. դիվանատունը գլխավորեց Գրիգոր Բեկժանյանցը, որը Թիֆլիս էր տեղափոխվել Աստրախանի թեմից՝³²:

Հերթական անգամ վարձատրության հարցը բարձրացրեց թեմակալ առաջնորդ Գևորգ արքեպս. Սուրենյանցը (1894-1904)³³, որն Էջմիածնի սինոդին ուղղված նամակում գրում էր, որ 1885 թ. վերջինս, կազմելով թեմերի առյուծների հաստիքացուցակները, աշխատավարձը սահմանելիս դարձյալ հաշվի չի առել թեմերի տեղական առանձնահատկությունները: Ինչպես օրինակ՝ գնային տարբերությունները, կոնսիստորիաների ծանրաբեռնվածության աստիճանը և այլն՝³⁴:

Ընդհանուր առմամբ, նույն հարցերը, որոնք բարձրաձայնվել էին դեռևս XIX դարի 40-50-ական թթ., պահպանվեցին նաև հետագայում: Այսպես՝ XX դարի սկզբին Վրաստանի և Իմերեթի թեմի գործերի քննիչ նշանակված Մատթևոս վարդապետը՝³⁵ թեմի գործերի քննության վերաբերյալ իր զեկուցագրում բերում է տասնյակ օրինակներ չլուծված գործերից, որոնցից խնդրահարույց էին հատկապես կալվածքների կառավարման և ծխա-

³⁰ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4058, թ. 1-37:

³¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 39, թ. 26, 30, ֆ. 56, ց. 1, գ. 3133, թ. 1-2, գ. 5542, թ. 2-3, գ. 6677, թ. 8-9:

³² Ծառայողական ցուցակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8621, թ. 24-29:

³³ Ծառայողական ցուցակը տե՛ս Վաւերագրեր 2005, 47: Թեմակալ առաջնորդ նշանակվելու մասին՝ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 541, թ. 1:

³⁴ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 544, թ. 2:

³⁵ Մատթևոս վարդապետ (հետագայում արք.) Մատթևոսյանը (1866-1936) ավելի ուշ՝ 1922 թ., նշանակվեց Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջնորդ:

կանների դիմումների հետ կապված գործերը³⁶: Ըստ էության, տասնամյակների ընթացքում խնդիրների և չլուծված գործերի կուտակումը նպաստեց ինչպես դժգոհությունների առաջացմանը ծխականների շրջանում, այնպես էլ անվստահության մթնոլորտի ստեղծմանը հոգևոր իշխանությունների հանդեպ:

Եզրակացություններ

Կոնսիստորիան, որպես թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմին, «Պոլոժենիե»-ով օժտվեց բավական ընդարձակ իրավունքներով և ուներ գործունեության լայն շրջանակներ:

Ինչպես Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիան, այնպես էլ մյուս կոնսիստորիաները գործնականում չկարողացան լիարժեքորեն ապահովել թեմական վարչական կառույցի արդյունավետ աշխատանքը: Թեմական իշխանությունները չյուրացրին կառավարման նոր համակարգի թելադրած կանոնները: Այն մտայնությունը, որ կոնսիստորիայի գլխավոր գործող անձը դիվանատան քարտուղարն էր, թույլ չտվեց կատարել աշխատանքի համաչափ բաշխում և խուսափել գործերի մեծաթիվ կուտակումներից ու տարիներով ձգձգվող գրագրություններից: Հաճախ դրամական միջոցների խնայման նպատակով մի քանի պաշտոնների պարտականությունների համատեղումը մեկ անձի ձեռքում հանգեցնում էր աշխատանքի կատարման որակի նվազեցման: Դա նպաստեց բացասական երևույթների, մասնավորապես կաշառակերության արմատավորմանը:

Վրաստանի և Իմերեթի թեմի թեմակալ առաջնորդները Հոգևորատյանի բարեկարգման նպատակով քայլեր ձեռնարկեցին, սակայն վերոնշյալ խնդիրներն ամբողջական լուծում չստացան:

Գրականություն

Արձագանք, Թիֆլիս, «Տպ. Յ. Մարտիրոսեանցի», 3 հուլիսի, 1883, № 27, էջ 378:

Երիցեան Ա. 1895, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք 19-րդ դարում, հ. Բ, Թիֆլիզ, «Մ. Շարաձէ», 592 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ) ֆ. 53 (Վրաստանի և Իմերեթի թեմի հայոց կոնսիստորիա), ց. 1, գ. 39, 83, 347, 541, 544, 2181-2363, 2375, 2376, 2464, 2468:

ֆ. 56 (Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդ), ց. 1, գ. 564, 1012, 3133, 4058, 5542, 5717, 6677, 8621, ց. 4, գ. 259, ց. 14, գ. 105:

³⁶ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 105, թ. 9-20:

- Ֆ. 468 (Բանաստեղծ Հ. Թումանյանի ժողոված փաստաթղթերի հավաքածու),
g. 2, գ. 112:
- Մելքոնյան Ա. 1999, Կարապետ արքեպիսկոպոս: Կենսագրություն, Երևան,
հրատ. նշված չէ, 112 էջ:
- Մելքոնյան Ա. 2006, Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոս և Կարապետ
արքեպիսկոպոս (կենսագրական զուգահեռներ), Էջմիածին, «Մայր
Աթոռ Ս. Էջմիածին», է-Ը, էջ 129-134:
- Նշանավոր ճեմարանականներ 2005, Եղիշե ավագ քին. և ուրիշներ (խմբ.
կազմ), Պրակ Ա, Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 468 էջ:
«Պոլոժենիե», գլուխ IV, հոդ. 55-71, գլուխ V, հոդ. 72-74, 77, գլուխ IX, հոդ.
121-126:
- Վաևերագրեր Հայ եկեղեցու պատմության 2005, Գէորգ Ե Սուրենեանց Կա-
թողիկոս Ամենայն Հայոց, Ս. Բէիբուդեան (կազմող), Գիրք ԺԳ, Երեւան,
«Մուղնի», 711 էջ:
- Римский С. 1999, Российская церковь в эпоху великих реформ, Москва, “изд.
дом Грааль”, 567 с.
- Тунян В.Г. 2011, Деятельность католикаса Макара 1885-1891, Ереван, изд. “Чар-
тагагет”, 207 с.

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆ (XIX Դ. 30-ԱԿԱՆ ԹԹ. – XX Դ. ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿ)

Վարդիթեր Գրիգորյան

Հովհաննես արքեպիսկոպոսի (1802-1810) առաջնորդության շրջանում
Թիֆլիսում ստեղծված Հոգևոր կառավարության հիման վրա 1837 թ. օգոս-
տոսի 7-ին բացվեց նաև Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիան:

Ինչպես Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիան, այնպես և մյուս
կոնսիստորիաները գործնականում չկարողացան լիարժեքորեն ապահովել թե-
մական վարչական կառույցի արդյունավետ աշխատանքը: Նրանց չհաջողվեց
յուրացնել գրասենյակային վարչարարության կանոնները: Տասնամյակների
ընթացքում խնդիրների կուտակումը նպաստեց թեմական վարչական կառույ-
ցի լճացմանը:

Բանալի բառեր՝ թեմական կառավարում, կենտրոնական վարչական
մարմին, կառուցվածք, գործունեության ոլորտ, խնդիրներ, բարեկարգում,
լճացում:

**КОНСИСТОРИЯ ГРУЗИНО-ИМЕРЕТИНСКОЙ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ
АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ (30-Е ГГ. XIX В. – ПЕРВОЕ ДЕСЯТИЛЕТИЕ XX В.)**

Вардигер Григорян

В период епархиального правления архиепископа Ованеса (1802-1810) в Тифлисе было основано Духовное правление, на базе которого 7 августа 1837 г. открылась консистория Грузино-имеретинской епархии Армянской Апостольской церкви.

Как консистория Грузино-имеретинской епархии, так и другие консистории на практике не смогли обеспечить эффективную работу епархиальной администрации. Им не удалось усвоить правила канцелярского делопроизводства. Накопившиеся на протяжении десятилетий проблемы в системе способствовали застою в епархиальной административной структуре.

Ключевые слова – епархиальное управление, центральный административный орган, структура, сфера деятельности, задачи, благоустройство, застой.

**CONSISTORY OF THE GEORGIAN-IMERETI DIOCESE OF THE ARMENIAN
APOSTOLIC CHURCH (FROM 30S OF THE XIX CENTURY – UP TO THE FIRST
DECADE OF THE XX CENTURY)**

Varditer Grigoryan

During the diocesan administration of Archbishop Hovhannes (1802-1810), Spiritual government was founded in Tiflis. Based on it, the consistory of the Georgian-Imereti Diocese of the Armenian Apostolic Church was opened on August 7, 1837.

However, both the consistory of the Georgian-Imereti Diocese, and the other consistories in practice failed to ensure the effective work of the diocesan administrative structure. They could not accept the rules of office administration. For decades, the accumulation of problems in the system led to stagnation of the diocesan administrative structure.

Key words – Diocesan administration, central administrative body, structure, field of activity, problems, optimization, stagnation.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

**Է.Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԱՆՎԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)**

Սարգիս Հայրապետյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ hayrapetyan4550@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 19.08.2019, գրախոսվել է 06.11.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Անվանի գիտնական-մշակութաբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Սարգիս Մարգարյանը ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 24-ին Երևանում մտավորականի ընտանիքում: Տևական ու գիտական նվաճումներով հագեցած կյանքում նա ստեղծել է ավելի քան երկու հարյուր գիտական աշխատություն, ընդ որում՝ երեսուն մենագրություն, որոնք հրատարակվել են ոչ միայն Հայաստանում և Ռուսաստանում, այլև աշխարհի բազմաթիվ այլ երկրներում: Է. Մարգարյանը ավելի քան կես դար Հայաստանի յուրատեսակ գիտնական-դեսպանն էր փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութաբանության բնագավառներում՝ նախ Ռուսաստանում, ապա և աշխարհի մյուս երկրներում՝ Հայաստանը ներկայացնելով միջազգային տարբեր կարգի գիտական հանդիպումներում ու համաժողովներում, արտասահմանյան գիտական մամուլում: Այսօր Է. Մարգարյանը ճանաչվում է որպես Հայկական մշակութաբանական դպրոցի ստեղծող¹: Ավելին, նա ընդունվում է որպես երկու ժողովուրդների, երկու երկրների՝ Հայաստանի և Ռուսաստանի մշակութաբան-փիլիսոփա: Լայն է նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ լոկալ (տեղական) քաղաքակրթությունների հայեցակարգից մինչև XXI հարյուրամյակի հումանիզմի իդեալները²: Հայկական թեմաները ևս իրենց տեղն ունեին նրա գիտական հետազոտություններում: Անդրադարձ կատարենք այն աշխատություններին, որոնք հիմնականում տպագրվել են ռուսերեն և անգլերեն: Քննարկելով այդ աշխատությունները՝ հնարավորություն ենք ընձեռում հայ ընթերցողին մոտիկից ծանոթանալու դրանց բովանդակությանը: Ստորև կխոսենք Է. Մարգարյանի հայկական թեմաներով հետազոտությունների մասին:

¹ Айрапетян 2015.

² Տե՛ս նաև Վարտանովա, Հայրապետյան 2009, Պողոսյան, Հայրապետյան 2014:

«Կենսաապահովման մշակույթը և էթնոսը: Էթնոմշակութաբանական հետազոտության փորձ (հայ գյուղական մշակույթի նյութերով)»³ կոլեկտիվ մենագրություն⁴ ունի իր ստեղծման նախապատմությունը: 1978 թ. ապրիլի 17-18-ին Երևանում Է. Մարգարյանի անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվեց գիտաժողով՝ «Էթնիկական մշակույթների հետազոտման մեթոդաբանական հիմնախնդիրները» թեմայով: Գիտաժողովի նյութերում գիտական լայն շրջանառության մեջ դրվեց մասնավորապես «էթնոմշակութային ավանդույթ» հասկացությունը⁵:

1980 թ. երևանյան գիտաժողովի հետքերով Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի մեթոդաբանական սեմինարում Է. Մարգարյանի ղեկավարությամբ կազմակերպվեց ուշագրավ գիտական բանավեճ և քննարկում մշակութային ավանդույթների տեսության հանգուցային հիմնախնդիրների շուրջ, որի նյութերը հրատարակվեցին „Советская этнография“, հանդեսի 1981 թ. 2-րդ և 3-րդ համարներում⁶: Այս քննարկումները, ինչպես նաև ավելի վաղ «Կենսաապահովման մշակույթը և էթնոսը» նախագծի գործնական իրականացումը, որը, ի դեպ, ընդգրկում էր երկու համալիր գիտարշավ (1976 թ. օգոստոս-սեպտեմբեր և 1978 թ. հուլիս-օգոստոս) Հայաստանի աշխարհագրական և ազգագրական առումով երեք տարբեր տարածաշրջաններում՝ Շիրակի, Այրարատի և Սյունիքի մարզերում, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի մշակույթի տեսության բաժնի աշխատակիցների ու ազգագրագետների խմբի մասնակցությամբ (ազգագրագետ Յու. Մկրտումյանի ղեկավարությամբ), հանգեցրին **էթնոմշակութաբանության սկզբունքների մշակմանը՝ որպես հետազոտությունների որակապես նոր ուղղության, որը վերաբերում է ինչպես մշակութային, այնպես էլ էթնիկական համակարգերին:**

Ինչպես նշվում է հետազոտության սկզբում, **կոլեկտիվ մենագրությունը մշակութաբանական և ազգագրական գիտելիքների կապի գիտա-ինտեգրատիվ ձևեր գտնելու և էթնոմշակութաբանական հետազոտության հատուկ տիպ մշակելու փորձ է:** Ուսումնասիրությունը բաղկացած է երկու բաժնից: Առաջինը՝ «էթնոսների ու նրանց կենսաապահովման գործընթացների համակարգային հետազոտության մշակութաբանական նախադրյալները», ունի խիստ արտահայտված տեսական ուղղվածություն,

³ Арутюнов, Маркарян 1983.

⁴ Կոլեկտիվ հետազոտության (Է. Մարգարյան, Ս. Հարությունով (Մոսկվա), Ի. Բարսեղյան, Ս. Ենգիբարյան, Է. Մելքոնյան, Յու. Մկրտումյան, Կ. Սարինգուլյան) ընդհանուր գիտական ղեկավարը Է. Մարգարյանն է, իսկ էթնոմշակութաբանական հետազոտությունների համեմատական-տիպաբանական ծրագրի ղեկավարը՝ Ս. Հարությունովը:

⁵ Маркарян 1978.

⁶ Маркарян 1981, Маркарян 1981.

երկրորդը՝ «Հայկական գյուղի կենսապահովման մշակույթը», ավելի շատ գործնական-ազգագրական բովանդակություն: Ներկայացվող ուսումնասիրությունը նվիրված է հայկական գյուղական մշակույթի համեմատական տիպաբանական հետազոտմանը, որն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության վերոհիշյալ մարզերը, իսկ ժամանակագրական առումով՝ XIX դարը և XX դարի սկիզբը:

Չմոռանանք նշել նաև, որ ըստ հետազոտության մասնակիցներ պատմաբան-ազգագրագետներ Ս. Հարությունովի և Յու. Մկրտումյանի՝ «Հայ ժողովրդի ավանդական մշակույթը ընդգրկվում է... առաջավոր ասիական մշակութային արեալի (տարածման տարածքի-Ս.Հ.) մեջ: ...Հայ ժողովրդի տնտեսական մշակութային տիպը (SUS) մարդկության արտադրող տնտեսության այն առաջին զարգացումն է, որը ծնվեց Առաջավոր Ասիայում և, մասնավորապես, Հայկական բարձրավանդակում»⁷:

Կոլեկտիվ հետազոտությունն իրականացվել է է. Մարգարյանի մշակած ընդհանուր մշակութաբանական հայեցակարգի հիման վրա: Անկյունաքարային գաղափարներից է մշակույթի սահմանումը՝ որպես մարդկային գործունեության յուրահատուկ եղանակ (տեխնոլոգիա): Լայնորեն օգտագործվել են նաև նրա առաջադրած «էթնիկական մշակույթ», «կենսապահովման մշակույթ», «մշակութային ավանդույթ» հասկացությունները:

Կենսապահովման մշակույթի համակարգի քննությունն իրականացվել է Մարգարյանի առաջադրած հետևյալ գիտական սկզբունքների հիման վրա⁸.

- էթնոսներն ու նրանց մշակույթները այնպիսի տարրական տաքսոնոմիական միավորներ են, որոնց համարժեքը տեսակների համապատասխան պոպուլյացիաներն են կենսաբանական էվոլյուցիայի գործընթացներում: Էթնիկական մշակույթները կարևոր դեր ունեն մարդկության լրկալ բազմազանության ապահովման համակարգում.

- բնական միջավայրին հասարակության էկոլոգիական հարմարման անմիջական գործընթացը տեղի է ունենում նրա համապատասխան սոցիալապես-կազմակերպված՝ տարածքային յուրացման ուղիով, որն արտահայտվում է բնակավայրերում, բնակարաններում, ինչպես նաև մարդկանց կյանքի պահպանման համար սննդամթերքի ու հագուստի արտադրության ձևերում: Քանի որ մշակույթի այս բաղադրամասերը անմիջականորեն ուղղված են մարդկանց կենսագործունեության ապահովմանը, ապա դրանք կարող են ինտեգրված լինել «**կենսապահովման մշակույթ**» ընդհանուր հասկացության շնորհիվ.

- այն հանգամանքը, որ մարդկությունը կարողացավ յուրացնել հողագնդի ամենատարբեր էկոլոգիական գոտիները, պահպանելով իր միաս-

⁷ Арутюнов, Маркарян 1983, 196, 254.

⁸ Մանրամասն տե՛ս Арутюнов, Маркарян 1983, 8, 8-9, 35-36, 38, 40, 48, 51:

նական կենսաբանական կառուցվածքը, բացատրվում է մշակույթում արտահայտված իրեն հատուկ որակապես տարբեր հարմարողական մեխանիզմներով: Մշակույթի ծագումը զարգացման աշխատանքային ուղին բռնած մեր նախնիների կյանքում առաջադրեց որակապես նոր հարմարողական հնարավորություններ, և մարդկային հասարակությունը փոխարկվեց համապարփակ հարմարվող-հարմարեցնող համակարգի:

- ամենից առաջ, հենց շնորհիվ միջավայրը վերափոխելու իրենց համապարփակ ներունակությունների՝ մարդիկ, պահպանելով ներքին միասնությունը, կարողացան ձեռք բերել լոկալ բազմազանության այնպիսի շլացուցիչ արդյունքներ, ինչպիսին կենսաէվոլյուցիան է տեսակակազմավորման գործընթացներում:

- կենսապահովման մշակույթի հետազոտման ժամանակ խիստ կարևոր է առանձնացնել **երկու հիմնական հաշվարկման կետ**: Մի կողմից՝ կենսապահովման մշակույթի բաղկացուցիչներից յուրաքանչյուրը մշակույթի բաղադրամաս է և մյուս բաղադրամասերի հետ փոխհարաբերության մեջ է հանդես գալիս մարդկանց գործունեության իրականացման յուրահատուկ միջոցների շարքում: Ոչ պակաս ուշագրավ և կարևոր է նաև մյուս պրոյեկցիան, որն արտահայտում է այդ օբյեկտների արտադրության, բաշխման և սպառման մշակույթը: Դրանով իսկ մշակույթի ցանկացած բաղադրամաս, քննարկված լինելով մարդկային գործունեության իրականացման միջոցների ընդհանուր շղթայում, կարող է քննարկվել նաև իր ստեղծման, բաշխման և սպառման համապատասխան մշակույթների տեսանկյունից:

Մշակութային ավանդույթը կենսափորձի կուտակման ու հաղորդման նոր մեխանիզմ է: Եթե մշակույթը արտահայտում է մարդկային գործունեության յուրահատուկ եղանակը, ապա մշակութային ավանդույթը կոչված է նշանակելու այն եղանակներից մեկը, որի օգնությամբ իրականանում է այդ գործունեությունը:

Է. Մարգարյանի առաջ քաշած տեսական գաղափարների հիման վրա, մշակութաբանության ու ազգագրության շփման գոտում իրականացված միջգիտակարգային հետազոտության շնորհիվ, Հայաստանում ու Ռուսաստանում **դրվեցին էթնոմշակութաբանության հիմքերը**, որը չվրիպեց գիտական հասարակայնության ուշադրությունից: Հրապարակվելուց անմիջապես հետո (մինչ այդ այդպիսի նախադեպ չէր եղել) կոլեկտիվ մենագրությունը քննարկման առարկա դարձավ ԽՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի հատուկ նիստում և արժանացավ ազգագրագետների բարձր գնահատականին, որը, անկասկած, պայմանավորված էր հետազոտության ինչ-որ տեղ հատուկ, ոչ սովորական բնույթով:

1984 թ. նոյեմբերին Երևանում ԽՍՀՄ ԳԱ կենտրոնի հիմնախնդիրների գիտական խորհուրդը կազմակերպեց գիտական խորհրդակցություն: Է. Մարգարյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ «Նոոսֆերաձագումը և գիտությունների ինտեգրացիան», որտեղ առաջին անգամ առաջադրվեց ռեգիոնալ էկոլոգո-նոոսֆերային փորձարկման գաղափարը: Հետագայում մշակույթի, մշակութային ավանդույթի նկատմամբ Է. Մարգարյանի ինտեգրատիվ մոտեցման շնորհիվ հաջողվեց մշակել **ռեգիոնալ էկոլոգա-նոոսֆերային էքսպերիմենտի (ՌԷՆԷ)** ծրագիրը: Այն հիմնավորվեց և զարգացվեց որպես մարդկության գոյատևման և զարգացման համալիր ռազմավարական միջոց և մեխանիզմ: Հեղինակի պնդմամբ, աշխարհում համանման ծրագիր չի մշակվել և գոյություն չունի, սակայն ժամանակին Հայաստանի գիտական հասարակայնության և իշխանությունների կողմից այն չարժանացավ պատշաճ ուշադրության և դեռևս սպասում է իր գնահատողներին, փորձաքննողներին ու իրականացնողներին⁹:

Հայկական թեմաներով Է. Մարգարյանի հաջորդ հրապարակումը¹⁰ նվիրված է հայ ժողովրդի մշակույթի **գավառայնացմանը հակազդող միջոցների որոնմանը**, որը, որքան մեզ հայտնի է, առաջին փորձն է մշակութաբանական գրականության մեջ: Հեղինակի դիտարկմամբ այս երևույթը մեզանում հատկապես նկատելի է դարձել վերջին երեք տասնամյակների ընթացքում: Այսօր գավառականությունը դրսևորվում է ժողովրդի կենցաղում, մտածողության, պետության վարած լեզվական քաղաքականության, դիվանագիտական կարճատես քայլերի, գիտության, մասնավորապես, հասարակագիտության զարգացման ոլորտներում: Է. Մարգարյանի կարծիքով՝ հասարակագիտության գավառայնացված վիճակը այն հիմնական աղբյուրն է, որ մշտապես սնում, իսկ մեր օրերում ավելի է խորացնում ժողովրդի մտածողության ու հոգեբանության, նրա ազգային կեցության բուրյր կողմերի գավառայնացման միտումը:

Գիտնականի սահմանմամբ՝ **գավառականությունը** սոցիալ-հոգեբանական երևույթ է, որն արտահայտվում է մարդկային հոգեբանության, մտածողության նեղության, պահանջմունքների ու շահերի սահմանափակության մեջ՝ պայմանավորելով աշխարհի արդի մարտահրավերներին հակազդումների բացահայտ անհամապատասխանությունը: Երևույթը բնորոշ է ոչ միայն չզարգացած, այլև անգամ զարգացած երկրներին:

Նա մատնացույց է անում մի քանի ընդհանուր հակազդող միջոցներ, որոնց շնորհիվ սկզբունքորեն հնարավոր է հաղթահարել մշակույթի գավառայնացումը: Մասնավորապես, դրան կարելի է հասնել համապատասխան գաղափարների, ինչպես նաև արժեքային ուղղվածությունների,

⁹ Մանրամասն տե՛ս Маркарян 1986:

¹⁰ Маркарян 2002.

արժեքային համակարգերի վերափոխման ուղիով, որոնք իրենց բնույթով համարժեք կլինեն արդի դարաշրջանի իրողություններին, համաշխարհային քաղաքակրթության զարգացման միտումներին և կարող են արդյունավետ կերպով նպաստել այն խնդիրների լուծմանը, որոնք առաջադրում է արդի դարաշրջանը մարդկությանը:

Գավառայնացմանը հակազդող արդյունավետ, մշակված ծրագրերով ապահովված եղանակներ գտնելու խնդիրը բացառիկ հրատապության խնդիր է: Ըստ որում, ստեղծված վիճակը հատկապես խորանում է նրանով, որ հայ ժողովրդի հոգեկերտվածքում կոլեկտիվ, այդ թվում՝ պետական, ինչպես և ազգային-ռազմավարական մտածողությունը չափազանց թույլ է զարգացած և ունի խիստ հզորացման կարիք:

Հաշվի առնելով հայերի հոգեկերտվածքում նշված **վակուումային գոտու** առկայության իրական փաստը, դրա ճակատագրական նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության արդի սրընթաց զարգացող պայմաններում՝ անհրաժեշտ է գտնել համապատասխան հասարակական ու պետական միջամտության եղանակներ դրանց գիտակցված մշակման, արմատավորման և կիրառման համար, ինչքան էլ որ բարդ լինի այդ խնդրի իրականացումը¹¹:

Իբրև մեծ հումանիստ ու հայ գիտնական՝ Է. Մարգարյանը չէր կարող անտարբեր լինել հայերի ցեղասպանության հարցի հետազոտման նկատմամբ: Ընթերցողի ուշադրությանը ներկայացնենք հայոց ցեղասպանության հիմնախնդրի քննության նրա **հայեցակարգը**՝ կառուցված այդ թեմայով նրա աշխատություններից կատարված քաղվածքների վրա¹²:

Է. Մարգարյանն առաջիններից մեկն է մեզանում ձեռնարկել հայոց ցեղասպանության հիմնահարցի մշակութաբանական, քաղաքակրթական քննությունը: Նա ցեղասպանությունը դիտարկում է որպես բռնության մշակույթի յուրահատուկ երևույթ՝ հիշատակելով, որ Թուրքիայում ցեղասպանության զոհ դարձավ մի ամբողջ ժողովրդի հատված, որ հնագույն քաղաքակրթության կրողներից մեկն էր և կարողացել էր նշանակալից ավանդներդնել համաշխարհային մշակույթի ընդհանուր գանձարանում: Հայերը ոչնչացվեցին վաղնջական ժամանակներից իրենց պատկանող տարածքներում, որտեղ նրանք ապրում էին հազարամյակներ:

Է. Մարգարյանին հետաքրքրում էր նաև տվյալ հանցագործության ազդեցությունն այլ ժողովուրդների ու քաղաքակրթությունների, համաշխարհային քաղաքակրթության զարգացման վրա. այդ ընդհանրական մոտե-

¹¹ Маркарян 2002, 66, 70, 73, 74, 76.

¹² Մարգարյան 1995, Маркарян 2002, 68-70, 2005, 107, 2008 280-322, Markarian 1998, 127-154.

ցումը նա բնորոշեց որպես **հայերի ցեղասպանության համաշխարհային ասպեկտ**:

Օգտվելով հայ և օտար պատմագիտության մեջ կատարված հիմնարար հետազոտությունների արդյունքներից, կիրառելով նաև իր մշակած համակարգային, մշակութաբանական, համընդհանրական ու ապրումակցման գիտական սկզբունքները, առաջարկելով բազմաթիվ նոր գիտական հասկացություններ ու մոտեցումներ (ցեղասպանածին երկիր, ցեղասպանածին ակտիվություն, ցեղասպանության խրախուսում, ցեղասպանության ընդլայնված վերարտադրություն, պատմական արդարության սկզբունք, հանցանքի ու պատժի օրգանական կապակցվածության օրենք, ցեղասպանության հրամայական պատժում, ապրումակցում, անկեղծ զոջում, կատարված հանցանքի համար անվերապահ ներողության հայցում և այլն)՝ Է. Մարգարյանը ստեղծեց հայերի ցեղասպանության վերաբերյալ ամբողջական, ուրույն ուսումնասիրություն:

Նա մեծ տեղ է տալիս ցեղասպանության հետազոտման մեթոդաբանական հիմնախնդիրներին: Դա մասնավորապես արտահայտվում է գիտելիքի այն բնագավառների առանձնացմամբ, որոնք կոչված են հետազոտելու ցեղասպանության տարբեր դրսևորումներ: Է. Մարգարյանն ամենից առաջ ներմուծեց **ցեղասպանագիտություն** հասկացությունը՝ նշանակելու համար գիտելիքի ընդհանուր ոլորտը, որի շրջանակներում հետազոտվում են ցեղասպանածին ակտիվության գործընթացները, պատճառները: Սակայն տվյալ հասկացությունն ակնհայտորեն անբավարար է. շատ կարևոր է ցեղասպանության հետազոտման նկարագրական տեսակներից անցնել տեսականորեն հագեցած եղանակների: Անհրաժեշտ է **ցեղասպանագիտությունը** տեսական հիմքի վրա դնել և սկսել **ցեղասպանաբանության** ստեղծման գործընթաց: Այդ հարցի լուծումը կարող է նշանակալից չափով նպաստել տարբեր երկրների, ժամանակի տարբեր փուլերում միևնույն ժողովրդի կամ էլ տարբեր երկրներում նույն ժողովրդի նկատմամբ ինտենսիվորեն իրականացված ցեղասպանությունների համեմատական հետազոտմանը: Ըստ այդմ՝ Է. Մարգարյանն առաջադրում է **համեմատական ցեղասպանագիտություն** հասկացությունը:

Ժամանակի հետ թուրք ժողովրդի մշակույթը, անկասկած, ձեռք բերեց քաղաքակրթության մի շարք որոշիչ հատկանիշներ, այդ թվում՝ պետական համակարգ: Սակայն ողջ հարցն այն է, որ դրանք օգտագործվեցին նվաճումների, ապա հպատակ ժողովուրդների նկատմամբ բռնության, ինչպես նաև պարտադրված անտանելի ճնշմանը հակադրվելու ու ազատագրվելուն միտված նվաճված ժողովուրդների պայքարի ճնշման համար: Այս ամենի հետևանքով Թուրքիայի մշակույթը ձևավորվեց ծայրահեղ դաժանության ու բարբարոսության հիման վրա: Հայերի ցեղասպանությունը

տվյալ սոցիոմշակութային որակների զուգակցման գագաթնակետը դարձավ՝ բնորոշ ողջ մարդկության պատմության ընթացքում ամենադաժան կայսերական կազմավորումներից մեկի գործառնությունը: Է. Մարգարյանը բնութագրում է թուրքական պետության, դրա հին ու նոր կառավարող շրջանների մշակութաբանաքաղաքակրթական էությունը՝ մեջբերելով նշանավոր անգլիացի պատմաբան ու սոցիոլոգ Ա. Թոյնբրիի՝ ժամանակին Թուրքիային տված գնահատականը. նա վերջինիս դասեց այն տիպի քաղաքակրթությունների շարքը, որոնք կանգ են առել իրենց զարգացման մեջ (arrested civilizations): Թուրքիան գուցեև ռազմական, տեխնիկական, տնտեսական զարգացման, «պատմական կեղծարարությունների, դիվանագիտական աճպարարությունների» առումով անցած ավելի քան 100 տարվա ընթացքում առաջադիմել է, սակայն դա ամենևին էլ չի վերաբերում նրա բարոյական զարգացմանը, առաջադիմությանը: Ասվածի վառ ապացույցը վերջինիս այսօրվա պահվածքն է Հայկական հարցի ու հայերի ցեղասպանության հիմնախնդրի առնչությամբ:

Է. Մարգարյանի կարծիքով՝ հայերի նկատմամբ Թուրքիայում իրականացված ցեղասպանության ճանաչման, դատապարտման, նյութական ու բարոյական կորուստների հատուցման խնդիրը դարձել է **համայն մարդկության բարոյականության յուրատեսակ բարոմետրը**: Ցեղասպանությունը հումանիզմի իսկական հակոտնյան է: Յուրաքանչյուր ցեղասպանություն հարկ է գնահատել որպես այն կատարող ժողովրդի բարոյական անկման արտահայտություն: Իսկ չպատժված ցեղասպանությունները մեծապես արգելակում են մարդկության զարգացմանը, նրա մշակույթի հետագա հումանիզացմանը և ծնում նոր ցեղասպանություններ:

Մերօրյա հայագետների, մասնավորապես, հայագետ-փիլիսոփա Սուրեն Սարգսյան-Կատվայանի կարծիքով, հակառակ ընդունված տեսակետի, որ հայագիտության դասական շրջանը ձևավորվել XVIII-XIX դարերում հիմնականում Հայաստանից դուրս՝ հայկական գաղթավայրերում, այն մեզանում «սկզբնավորվում ու հիմնադրվում է V դարում՝ **Մեսրոպ Մաշտոցի ու Մովսես Խորենացու գիտահետազոտական ու գիտակցորեն հիմնավորված գործունեության շնորհիվ**»¹³ (ընդգծումը մերն է - Ս.Հ.): Հետևելով այս տեսակետին և օգտվելով հեղինակի առաջադրած «մշակութաբանական հայագիտություն» եզրույթ-հասկացությունից, ինչպես և հիմք ունենալով հողվածում շարադրված նյութերը՝ Է. Մարգարյանին կարելի է համարել հայագիտության այս ոլորտի սկզբնավորողը մեզանում:

Է. Մարգարյանը մահկանացուն կնքել է 2011 թ. մարտի 12-ին Մոսկվայում. աճյունն ամփոփված է Երևանի քաղաքային պանթեոնում: Նա հա-

¹³ Սարգսյան-Կատվայան 2013, 44, 8:

մարում էր, որ իր աշխատությունները, գաղափարներն ու ծրագրերը, գիտակարգերն ու հայեցակարգերը հայ ժողովրդի մտավոր սեփականությունն են և նպատակ ունեն բարձրացնելու Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում, մանավանդ եթե դրանք ընկալվեն, գործադրվեն ու տարածվեն նաև պետական մակարդակով:

Եզրակացություններ

Հոդվածում քննարկման առարկա դարձած հետազոտությունների ոչ ամբողջական վերնագրերն անգամ խոսում են արծարծված հարցերի հրատապության ու արդիականության մասին. կենսապահովման մշակույթ, էկոլոգիական անվտանգություն, պայքար ազգային մշակույթի ու կեցության գավառայնացման դեմ, ցեղասպանություն ու ցեղասպանությունների կանխարգելում և այլն, որոնք վերաբերում են ինչպես հայ էթնոսին, այնպես էլ համայն մարդկությանը:

Օգտագործելով մշակութաբանական հետազոտություններ կատարելու իր հարուստ փորձը՝ Է. Մարգարյանը մշակել և առաջադրել է բազմաթիվ նոր գիտական դրույթներ, հասկացություններ առանձնացված խնդիրների քննության նպատակով: Կատարված ծավալուն գիտական աշխատանքը հիմք է սովել հեղինակին անելու նոր գիտություններ մշակելու, ստեղծելու խիզախ առաջարկներ, մասնավորապես՝ **էթնոմշակութաբանության, ցեղասպանագիտության:**

Այս հետազոտություններն ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական արժեք: Նրանցում առաջադրված գաղափարները կարող են գործադրվել նաև գործնական հարցեր լուծելու նպատակով: Մասնավորապես, բարձրացնել բնական ռեսուրսներով ոչ այնքան հարուստ մեր երկրի ժողովրդի կենսապահովման մշակույթի մակարդակը, կամ կյանքի օրեցօր գլոբալացող պայմաններում կարևոր է այնպիսի երևույթների դեմ պայքարի կազմակերպումը, որոնք են ազգային մշակույթի, կեցության գավառայնացումը: Քննարկված հետազոտությունները ստեղծել են լուրջ գիտական նախադրյալներ արծարծված թեմաների հետագա մշակման ու նշված երևույթների գործնական կառավարման համար:

Այս հետազոտություններով Է.Ս. Մարգարյանն անուղղակիորեն արել է ուշագրավ «գաղտնի քայլ» հայագիտության մեջ նոր արահետի՝ «մշակութաբանական հայագիտության» բացման առումով:

Գրականություն

- Մարգարյան Է.Ս. 1995, Հարյուրամյակի առաջին զանգվածային ցեղասպանությունը ռազմավարական գոյատևման ու զարգացման տեսանկյունից, Երևան, «Լրագիր» 25 ապրիլի, 12 մայիսի, 9, 13 հունիսի:
- Պողոսյան Գ.Ա., Հայրապետյան Ս.Գ. 2014, Է.Ս. Մարգարյանը մեր օրերի նշանավոր հումանիստ (ծննդյան 85-ամյակի առթիվ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 304-317:
- Սարգսյան-Կատվայան Ս. 2013, Հայագիտության ձևավորման ժամանակի և հիմնադիրների հարցի շուրջ, Երևան, հեղինակ. հրատ., 68 էջ:
- Վարտանովա Ժ.Ա., Հայրապետյան Ս.Գ. 2009, Ականավոր հայ գիտնականը (Է.Ս. Մարգարյանի ծննդյան 80-ամյակի առթիվ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 312-314:
- Айрапетян С.Г. 2015, Маркарян Э.С. 1929-2011 – основатель армянской культурологической и традициологической школы. Культура и образование (Научно-информационный журнал вузов культуры и искусств, № 4, Москва, с. 13-19).
- Арутюнов С.А., Маркарян Э.С. /отв.ред./ 1983, Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования/на материалах армянской сельской культуры/, Ереван, изд. АН Арм.ССР, 319 с.
- Маркарян Э.С. /отв.ред./ 1978, Методологические проблемы исследования этнических культур. Материалы симпозиума, Ереван, изд. АН Арм. ССР, 123 с.
- Маркарян Э.С. 1981, Узловые проблемы теории культурной традиции (Советская этнография, № 2, Москва, с. 78-96).
- Маркарян Э.С. 1981, О значении методологического обсуждения проблем культурной традиции (Советская этнография, № 3, Москва, с. 59-74).
- Маркарян Э.С. 1986, Региональный эколого-ноосферный эксперимент. Обоснование идеи и концепция программы системно-оптимизационных экологических исследований /на примере Армянской ССР. Доклад научному совету по проблемам биосферы АН СССР, Ереван, изд. АН Арм.ССР, 177 с.
- Маркарян Э.С. 2002, О возможных способах противодействия провинциализации культуры армянского народа (Աշխարհայացքայինը ժամանակակից հայ կրթամշակութային համակարգում: Հոդվածների ժողովածու, Երևան, Երևանի համալս. հրատ., էջ 66-82):
- Маркарян Э.С. 2005, Глобальные аспекты геноцида армян. Опыт культурологического анализа, Ереван, Музей-институт геноцида армян НАН РА, 107 с.
- Маркарян Э.С. 2008, Гуманизм 21-го столетия. Идеология самосохранения человечества, Ереван, изд. РАУ, 512 с.

Markarian S. Edward 1998, Capacity for world strategic management, Yerevan, Gitutyun pub., 202 p.

Է.Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՆՎԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՔԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Սարգիս Հայրապետյան

Վաստակաշատ գիտնական Է.Ս. Մարգարյանը, հայագիտական ուղղվածություն ունեցող հետազոտություններում կիրառելով իր մշակած մշակութաբանական հայեցակարգի դրույթները կենսապահովման մշակույթի էկոլոգիական խնդրակարգի, մշակույթի գավառայնացման երևույթի, հայոց ցեղասպանության հիմնախնդրի հետազոտման նկատմամբ, հասել է ուշագրավ արդյունքների: Մասնավորապես, Մարգարյանի ղեկավարությամբ մշակութաբանության ու ազգագրության շփման գոտում իրականացված միջգիտակարգային հետազոտության շնորհիվ դրվել են **էթնոմշակութաբանության** հիմքերը:

Մեծանուն գիտնականը Հայոց ցեղասպանության հիմնախնդրի վերաբերյալ կատարել է հետաքրքիր իրավաքրեագիտական, հոգեբանաբարոյագիտական, մշակութաբանաքաղաքակրթական ուսումնասիրություն՝ հիմք ծառայելով **ցեղասպանագիտության** ստեղծման համար: Այդ հիմքի վրա էլ նա մեզանում առաջինն է մշակել ուրույն մշակութաբանական-փիլիսոփայական հայեցակարգ ցեղասպանության հիմնախնդրի քննության առնչությամբ:

Կատարված հետազոտություններով Է.Ս. Մարգարյանը հայագիտության մեջ բացել է նոր գիտական արահետ, որը կարելի է կոչել **«մշակութաբանական հայագիտություն»:**

Բանալի բառեր՝ կենսապահովման մշակույթ, էթնոմշակութաբանություն, գավառայնացում, ցեղասպանություն, ցեղասպանագիտություն, մշակութաբանական հայագիտություն:

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ Э.С. МАРКАРЯНА (К 90-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ИЗВЕСТНОГО КУЛЬТУРОЛОГА)

Саркис Айрапетян

Неоспорим вклад известного культуролога Э.С. Маркаряна в арменоведение. Разработанная им культурологическая концепция успешно была использована в исследовании ряда вопросов – проблемы геноцида армян, культуры жизнеобеспечения этноса, провинциализации культуры, экологии и т.д. Э.С. Маркаряном были заложены основы этнокультурологии как научной дисциплины. Исследования ученого в сфере права и кримино-

логии, психологии, этики, культурологии цивилизационных проблем могут стать базовыми для геноцидологии.

На этой основе Э.С. Маркарян была разработана культуролого-философская концепция для исследования проблематики геноцида. Э.С. Маркарян по праву можно считать основателем нового научного направления – "культурологического арменоведения".

Ключевые слова – культура жизнеобеспечения, этнокультурология, провинциализация, геноцид, геноцидология, культурологическое арменоведение.

E.S. MARGARYAN'S RESEARCHES IN THE FIELD OF ARMENOLOGY (TOWARDS THE 90TH ANNIVERSARY OF FAMOUS CULTUROLOGY)

Sargis Hayrapetyan

The article presents E.S. Margaryan's researches in the field of armenology. Applying the principles of the cultural concept the author has developed the ecological agenda of the culture of livelihood, the phenomenon of provincialization of culture, the study of the Armenian Genocide, and achieved essential results. Particularly, due to the interdisciplinary research carried out in the area of culture and ethnography under the leadership of Margaryan, the foundations of ethnoculture have been laid.

He has conducted an interesting psychological, cultural and civilization study on the issue of the Armenian Genocide, which may serve as a basis for the creation of the Genocide Studies. So he was the first in our country who had developed a unique cultural-philosophical concept on the issue of genocide.

As a result of his researches, E.S. Margaryan has developed a new scientific path in Armenology, which can be called "cultural armenology".

Key words – culture of livelihood, ethnocultural studies, provincialization, genocide, genocide studies, cultural Armenology.

THEORETICAL-METHODOLOGICAL BASES OF DISCLOSURE OF NATURE AND CONTENT OF LEGAL CONSCIOUSNESS

Amalya Harutyunyan

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NASRA

Address: Arama 44, 0010, Yerevan, Armenia

Email: h.nvard@mail.ru

The article has been delivered on 04.11.2019, reviewed on 03.12.2019, accepted for publication on 06.12.2019

Introduction

For both philosophical-legal thought and theoretical-legal thought, the law is the form of establishment of a system of social goals, values and ideas¹. However, within the philosophical-legal and theoretical-legal thought, such goals, values and ideas have substantially different forms of existence and expression.

It should be pointed out that the structure of the public consciousness is reproduced and cannot but be reproduced in line with its each individual form, that is, in legal, political, economic, moral, religious, aesthetic and other forms. It follows that in any form of public consciousness one can discover a philosophical-legal layer. Furthermore, for now on it is likely to ensure the completeness of the inclusion of the subject and give a complete idea of it when that layer is revealed, in other words, when legal, moral, economic and other thoughts begin to function in that layer².

However, in that case it would be logical to allege that if we wish to find out the essence of the law along with its completeness, then the only adequate option for that purpose would be the philosophizing of legal consciousness. The philosophy of law can then be perceived as a reflexive legal consciousness, as a view of law from "inside" of its shell. Hence, by moving within that boundary from inside we will only enrich our understanding of the law.

If the philosophy of law is only a part of social philosophy, the peculiarity of which is summarized in its content, rather than in methodology and logic, then the chances for penetration into the essence of the law are sharply reduced. Being "out" of the law, without identifying ourselves with the law, we only diminish our chances of understanding the law by mentally moving its boundaries.

¹ Тихомиров 2015, 53-54.

² Теоретико-методологические проблемы права 2007, 19-20.

The philosophy of law must be understood as an outcome of the thought deriving from the logic of legal consciousness itself. Therefore, one's own position on the legal consciousness must be expressed in a categorical manner³.

Nonetheless, if the uniqueness of the philosophy of law relates to the logic of legal consciousness, then in that case on what basis does the general theory of law develop? To say that this too is based on the logic of legal consciousness would mean to allege in fact that the philosophical-legal and theoretical-legal views on law are not qualitatively different from each other. And that's not the case.

On the one hand, as already noted, the theory of law is science, which means that it is subject to the logic of scientific recognition and is developed as a system of scientific knowledge. On the other hand, if it refers to the common law (as a general theory), then it is a theorizing legal consciousness, an embodiment of the logic and principles of legal consciousness. This reflects not the nature of the general theory of law, but the historically established fact that the legal theory of law has, in reality, always regarded the law as an element of the political organization of the society.

This very law is the subject of legal thinking. It is no coincidence that for both political scientists and for most lawyers the law is inextricably linked to the state and can only be understood if that link is taken into account. Therefore, the law, in its borderline expression, is the result of the reflection of legal consciousness.

As a consequence of the fundamental difference between the types of social theory underlying the theory of law, the law for philosophy is a subject, that is to say, an field of study applied, and for the general theory of law it is an area of authority (the law administered through the authority). In addition, the latter is only one of the forms of manifestation through the social force. After all, for the philosophy of law there exists an individual sphere of people's being which is very important, and in case of general theory of law it is only a sphere of social (collective) being of people⁴.

As a rule, there is no qualitative difference between the logics of political consciousness and legal consciousness in the history of legal-political thought. That is the reason why the theoretical debates on many issues often prove ineffective. And the differences are unnoticeable, and above all it is due to the lack of sufficient awareness of the fact that the political and legal consciousness is based on qualitatively different ideas. For example, in the context of the logic

³ See, for example, Чернявский 2016, 77-78.

⁴ See Стандарты научности и homo juridicus в свете философии права. Отв. ред. проф. В.Г. Графский 2011, 120-121.

of legal consciousness, the idea of natural human rights is an obvious product of thought. And the idea of claiming human natural rights is, first of all, developed in the context of the logic of scientific consciousness. It is clear that the advocates of each of these ideas, by arguing with each other and uttering the same words, speak different languages, so the arbitrary arguments of both parties are unconvincing. We are faced with the exact same problem when we consider the idea of the relation between law and state. The integrity of the state and law is, of course, in line with the logic of the political consciousness. And understanding the law as a civil society institution designed to protect citizens from the arbitrariness of the state is inherent to the legal reflection of social reality⁵.

The arguments presented are deemed quite obvious, if we remember what theoretical and practical implications they have. However, a detailed clarification of this issue is not among the priority issues we have chosen

Let us now formulate a number of conclusions regarding the nature of interrelationship of the philosophical-legal and theoretical-legal approaches to the understanding of the nature of law and legal consciousness.

1. The philosophical approach to law is non-legal and in the sense that it is not scientific and in the sense that it serves as a means of reflecting a phenomenon of the law in the context of logic, which is not inherent to legal theory.

2. Legal understanding is not a part of the philosophical understanding of law just as the philosophy of law should not be viewed as an interpretation (or generalization) of legal knowledge. The philosophical categorical and methodological toolkit should not be the basis for legal analysis of law. However, referring to the philosophical-legal interpretation of the subject enables to essentially replenish and enrich the legal interpretation of the law.

3. There are no impassable boundaries between the philosophical-legal and legal theories. And such boundaries become dynamic and transparent as we transition to the level of link between the philosophy of law and the general theory of law. Their differences are consciously pushed to the foreground and are strictly observed only in order to avoid the well-known and spontaneous intermixture of various planes of understanding of the subject. The practical interaction of these two forms of understanding of law is an indisputable fact.

In this regard, we find that the philosophy of law can play a rather constructive role for the general theory of law. It can help the co-legal theory to realize the principle fragmentation of its understanding of law⁶. Such a position will certainly have a positive impact on the results of further and legal

⁵ Осипов 2015, 167-168.

⁶ For details See Ստեփանյան 2016.

analyses. The philosophy of law ⁷helps the analysis of law to link to the operation of a system of the conditions and factors that are typical of social reality in its full extent and in its entirety. The general theory of law should not consider scientific methods of cognition and the results of scientific cognition as self-sufficient, otherwise, fragmentation in the understanding of law will not be realized and taken into account. Still within the domain of scientific recognition, the general theory of law must be combined with philosophy. Without dissolving into the philosophy of law and not attempting to dissolve it in itself, one must form an organic integrity with philosophy in understanding the essence of law.

References

- Осипов М.Ю. 2015, Системы в праве и правовые процессы, Москва, "Наука", 188 с.
- Стандарты научности и homo juridicus в свете философии права 2011, отв. ред. проф. В.Г. Графский, Москва, "Наука", 228 с.
- Теоретико-методологические проблемы права 2007, Москва, "Зерцало-М", 282 с.
- Тихомиров Ю.А. 2015, Право: прогнозы и риски, Москва, "Норма", 364 с.
- Чернявский А.Г. 2016, Роль и значение идеологии для государства и права, Москва, "Норма", 266 с.
- Ստեփանյան Հ. Մ. 2016, Իրավունքի փիլիսոփայություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 644 էջ:
- Ստեփանյան Հ. 2019, Իրավունքի փիլիսոփայության ներածություն, Երևան, "Միվա-Պրեսս", 187 էջ:

ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ամալյա Հարությունյան

Անդրադառնալով իրավունքի և իրավագիտակցության բնույթի ըմբռնման նկատմամբ փիլիսոփայական-իրավական և տեսական-իրավական մոտեցումների փոխկապակցվածությանը՝ կարելի է եզրակացնել՝

1. Իրավունքի նկատմամբ փիլիսոփայական մոտեցումը լինում է ոչ իրավաբանական և՛ այն իմաստով, որ այն գիտական չէ, և՛ այն իմաստով, որ տրամաբանության համատեքստում ծառայում է որպես իրավունք երևույթի արտացոլման միջոց, ինչը հատուկ չէ իրավաբանական տեսությանը:

⁷ Ստեփանյան 2019.

2. Իրավաբանական ըմբռնումը իրավունքի փիլիսոփայական ըմբռնման հատված չէ ճիշտ այնպես, ինչպես իրավունքի փիլիսոփայությունը չպետք է դիտարկվի որպես իրավաբանական գիտելիքի մեկնաբանություն (կամ ընդհանրացում): Փիլիսոփայական կատեգորիալ և մեթոդաբանական գործիքակազմը չպետք է հիմք դառնա իրավունքի իրավաբանական վերլուծության համար: Սակայն առարկայի փիլիսոփայական-իրավական մեկնաբանությանը դիմելը թույլ է տալիս էականորեն համալրել, հարստացնել իրավունքի իրավաբանական մեկնաբանությունը:

3. Փիլիսոփայական-իրավական և իրավաբանական տեսությունների միջև անանցանելի սահմաններ գոյություն չունեն: Դրանք դառնում են շարժուն ու թափանցիկ այն դեպքում, երբ անցում ենք կատարում դեպի իրավունքի փիլիսոփայության և իրավունքի ընդհանուր տեսության միջև գոյություն ունեցող կապի մակարդակը: Իրավունքի ըմբռնման այս երկու ձևերի գործնական փոխազդեցությունն անվիճելի փաստ է:

Բանալի բառեր՝ իրավագիտակցություն, իրավունքի փիլիսոփայություն, իրավաբանական մտածողություն, սոցիալական մտածողություն, իրավունքի իրավաբանական տեսություն, հասարակական գիտակցություն, քաղաքական գիտակցություն:

ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ВЫЯВЛЕНИЯ ПРИРОДЫ И СОДЕРЖАНИЯ ПРАВОСОЗНАНИЯ

Амалия Арутюнян

Рассмотрение природы и содержания правосознания, характера взаимосвязи философско-правового и теоретико-правового подхода к пониманию сути права и правосознания приводит к следующему заключению:

1. Философский подход к праву бывает не юридическим как в силу того, что он не является научным и служит лишь средством выражения феномена права в контексте логики, что не характерно для юридической теории.

2. Юридическое понимание не является частью философского понимания права, равно как и философия права не должна рассматриваться как интерпретация (либо обобщение) юридического знания. Категориальный и методологический философский инструментарий не должен служить основой для юридического анализа права. Однако философско-правовая интерпретация предмета позволяет существенно дополнить, обогатить юридическое толкование права.

3. Между философско-правовой и юридической теориями нет непреодолимых рубежей. И эти рубежи становятся динамичными и прозрач-

ными, когда мы переходим на уровень связи между философией права и общей теории права. Их отличия специально выдвигаются на первый план и рассматриваются лишь с той целью, чтобы избежать общеизвестного и спонтанного слияния различных уровней понимания предмета. Практическое взаимодействие этих двух форм понимания права является неоспоримым фактом.

Ключевые слова – правосознание, философия права, юридическое мышление, социальное мышление, юридическая теория права, общественное сознание, политическое сознание.

THEORETICAL-METHODOLOGICAL BASES OF DISCLOSURE OF NATURE AND CONTENT OF LEGAL CONSCIOUSNESS

Amalya Harutyunyan

In his article referring to the nature and content of legal consciousness, discloses the nature of interrelationship between the philosophical-legal and theoretical-legal approaches to understanding the nature of law and legal consciousness, arrived at the following conclusion:

1. The philosophical approach to law is non-legal both in the sense that it is not scientific and in the sense that it serves as a means of reflecting a phenomenon of the law in the context of logic, which is not inherent to legal theory.

2. Legal understanding is not a part of the philosophical understanding of law just as the philosophy of law should not be viewed as an interpretation (or generalization) of legal knowledge. The philosophical categorical and methodological toolkit should not be the basis for legal analysis of law. However, referring to the philosophical-legal interpretation of the subject enables to essentially replenish and enrich the legal interpretation of the law.

3. There are no impassable boundaries between the philosophical-legal and legal theories. And such boundaries become dynamic and transparent as we transition to the level of link between the philosophy of law and the general theory of law. Their differences are consciously pushed to the foreground and are strictly observed only in order to avoid the well-known and spontaneous intermixture of various planes of understanding of the subject. The practical interaction of these two forms of understanding of law is an indisputable fact.

Key words – legal consciousness, philosophy of law, legal thinking, social thinking, legal theory of law, social consciousness, political consciousness.

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌՈՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Մելինե Թորոսյան

Պատմական գիտությունների թեկնածու
ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի, Եվրոպական Համալսարան
Դավիթ Անհաղթի 10, Երևան 0037
Էլ. հասցե՝ meline.torosyan87@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 21.01.2019, գրախոսվել է 16.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Վերջին շրջանում մեր հասարակությունում արդիական են դարձել «սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատումներ», «տղա երեխաների կարևորությունն ընտանիքում», «գենդերային անհավասարություն», «գենդերային խտրականություն» և նմանաբնույթ թեմաների քննարկումները և դրանց վերաբերյալ տրվող մեկնաբանությունները: Իսկ ինչպե՞ս են գենդերային տարբերությունները¹ դրսևորվում առօրեական հարթությունում, ամենասովորական իրավիճակներում, որոնց մենք առնչվում ենք ամեն օր: Հաշվի առնելով «առօրեականություն»² հասկացության լայն շրջանակը՝ խնդիր դիտարկել ենք գլխավորապես ընտանեկան հարաբերությունների կառուցման հարթությունում՝ անհրաժեշտության դեպքում հղումներ անելով առօրեականության այլ միջավայրերի՝ համայնք, աշխատավայր, կրթական օջախներ: Առօրեականության և գենդերային տարբերությունների փոխառնչությունների դիտարկումն արդիական է նրանով, որ հնարավորություն է ընձեռում հասկանալու և բացատրելու այդ տարբերությունները ձևավորող և գործառնող բոլոր գործընթացները:

Գենդերային տարբերություններն առօրեականության հարթությունում

«Գենդեր» հասկացության ընկալման ֆեմինիստական և իրավական մեկնաբանությունների թնջուկում չհայտնվելու համար նպատակահարմար է օգտագործել մարդաբանության մեջ և սոցիոլոգիայում հաճախ կիրառվող «տարբերություն» բառը:

¹ Տե՛ս Симона де Бовуар 1949, 141:

² «Առօրեականության» վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Шютт 2003, 336:

Առաջին հայացքից պարզ առօրյան իրականում դժվար, իսկ որոշ դեպքերում անհնար է մեկնաբանել: Կյանքի սովորական ընթացքի մեջ մարդը չի մեկնաբանում, թե ինչպես է կառուցվում իր առօրյան: Առօրյա կյանքում մարդը մասամբ է հետաքրքրվում իր գիտելիքների մասին, այսինքն՝ մեծ մասամբ չի անդրադառնում իր առօրյայի վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը, իր աշխարհը կազմավորող տարրերի միջև հարաբերություններին, դրանք ղեկավարող սկզբունքներին³:

Փորձենք պարզել՝ արդյո՞ք սեռով պայմանավորված տարբերությունները մեր հասարակությունում ընկալվում և դիտարկվում են որպես խնդիր, որն ունի լուծման կարիք, թե՞ այն դարձել է առօրյայի սովորական մասը, այսինքն, վերոնշյալ գենդերային տարբերությունների վերաբերյալ գիտելիքը և դրանց օգտագործումը դարձել են երրորդ, չորրորդ մակարդակի լեգիտիմացված գիտելիք:

Ելնելով հետազոտվող թեմայի նպատակից և խնդիրներից՝ կիրառվել են խորին հարցազրույցի և ներգրավված դիտարկման մեթոդները⁴: Ընդհանուր առմամբ իրականացվել են 48 խորին հարցազրույցներ⁵ և 12 ներգրավված դիտարկումներ: Հետազոտության անցկացման համար կարևորվել են հետևյալ բաղադրիչները.

1. ընտանիքի սերնդային կառուցվածքը, այդ թվում՝ միասերունդ, երկսերունդ, եռասերունդ, քառասերունդ ընտանիքներ,

2. ընտանիքում առկա երեխաների սեռը՝ այդ թվում՝ միայն արական կամ միայն իգական սեռի, և՛ արական, և՛ իգական սեռի երեխաներ,

3. ընտանիքի անդամների ընտանեկան կարգավիճակը, այդ թվում՝ չամուսնացած երիտասարդ աղջիկներ և տղաներ, ամուսնացած կանայք, որոնք ապրում են սկեսուրների հետ և առանձին, ամուսնացած կանայք, որոնք միաժամանակ ունեն և՛ հարս, և՛ սկեսուր և այլն,

4. ընտանիքի անդամների կրթական մակարդակը, այդ թվում՝ բարձրագույն, միջին մասնագիտական, միջնակարգ, կրթություն չունեցող,

5. ընտանիքի անդամների սոցիալական կարգավիճակը, այդ թվում՝ սոցիալապես ապահովված և անապահով ընտանիքներ,

6. ընտանիքի անդամների զբաղվածությունը, այդ թվում՝ զբաղվածություն ունեցող/աշխատող (ոչ գյուղատնտեսության բնագավառում) և զբաղվածություն չունեցող/չաշխատող:

³ Бергер, Лукман 1995, 323.

⁴ Հետազոտությունն իրականացվել է 2018 թ. Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Սարուխան, Դրախտիկ, Շիրակի մարզի Գյումրի, Ամասիա, Կամո, Արագածոտնի մարզի Ապարան, Դավթաշեն, Շենավան, Սյունիքի մարզի Կապան և Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Կենտրոն համայնքներում:

⁵ Հետազոտական մեթոդների վերաբերյալ մանրամասն տե՛ս Թադևոսյան 2006, 374:

Գենդերային տարբերություններն առօրյայում որոշումներ կայացնելու հարթությունում

Մեր հասարակության մեջ դեռևս XVIII դ. վերջից ընդունված էր որոշել նրա անդամների տեղն ու դիրքը, պարտականությունները, և այդ ամենն իրականացվել է հիմք ունենալով գլխավորապես սեռային, ինչպես նաև տարիքային պատկանելությունը: Հայ կինը պարտավոր էր հետևել ընդունված ավանդական որոշ չափանիշների՝ հնազանդություն, տնային աշխատանքներին նվիրվելու պատրաստակամություն և այլն: Կնոջ խոսքի սահմանափակումները բավական տարածված են եղել մեր ավանդական մշակույթում և ունեցել են ամենից ծայրահեղ դրսևորումները, ընդհուպ չխոսկանության ավանդույթը⁶:

Իսկ **այսօր** ի՞նչ տեղ են զբաղեցնում կինն ու տղամարդը ընտանեկան որոշումներ կայացնելիս, որքանո՞վ են բավարարված իրենց տրված տեղից ու դերից, ի՞նչ գենդերային տարբերություններ են նկատվում այդ առումով. այս հարցադրումները դիտարկենք ընտանիքում կայացվող երեք հիմնական որոշումների հարթություններում՝ կենցաղային պարտականությունների բաշխում, ֆինանսական միջոցների տնօրինում և գյուղատնտեսական աշխատանքների բաշխում:

Ընդհանուր առմամբ, քննվող որոշումների կայացումը համարվում է ինքն իրեն կառուցվող: Հասարակության որևէ անդամ չի տեսնում իր ունեցած դերն այդ հարցում: Օրինակ՝ անհրաժեշտություն չկա, որ տնային տնտեսության (այսուհետև՝ SS) անդամներից ինչ-որ մեկը որոշում կայացնի, թե ով է լվանալու ափսեները կամ անելու լվացքն ու արդուկը: Դրանք արդեն իսկ ի վերուստ որոշված գործողություններ են. պետք է իրականացվեն կանանց կողմից: Կամ, կարիք չկա քննարկելու, թե ով պետք է կառավարի բիզնեսը. այն զուտ տղամարդկային դաշտ է: Համաձայն հասարակության ընկալումների՝ *կենցաղային որոշումները* հստակ բաժանված են կնոջ և տղամարդու միջև, և մեկը չի կարող իրականացնել մյուսի դաշտին պատկանող որոշումները: Կանայք որոշումներ են կայացնում տան մաքրության, սննդի պատրաստման, տան կահույքի տեղափոխման և նմանաբնույթ այլ գործողությունների և իրավիճակների վերաբերյալ: Այսինքն, այն ամենը, ինչը վերաբերում է տան «ներսի գործերին», և ինչին կնոջը պատրաստում են փոքր հասակից: Տղամարդիկ կայացնում են «դրսի գործերին» վերաբերող որոշումներ, այդ թվում՝ բիզնես, մեծ առևտուր: Սրանք այն ոլորտներն են, որոնց կանայք չեն կարող մասնակցել, քանի որ կա՛մ նրանց գիտելիքները չեն տալիս այդ հնարավորությունը, կա՛մ հասարակությունն իր մշակութային ընկալումներով թույլ չի տալիս: Ինչպես, օրի-

⁶ Լալայան 1903:

նակ՝ տեխնիկայի վերանորոգման նպատակով մասնագետի հետ պայմանավորվածություն ձեռք բերելը անվերապահորեն տղամարդու գործն է: Կինն իրավունք չունի մտնելու այդ դաշտ՝ անգամ ընտանիքում տղամարդկանց ժամանակավոր կամ առհասարակ բացակայության դեպքում: Նման իրավիճակներում այդ գործառույթն իրականացնում են համայնքի այլ տղամարդիկ. «*Բա հո կնիկը չի գնա, խոսա... կինն էլ կարա տեգորն ասի: Օրինակ, իմ տղեն անցյալ տարի տունը չի էղել, իմ մեծ տղեն, իմ թոռներն են բերել... կնիկը էթա, խոսա, ամո՞թ չի (Շենավան, իգ., 75տ., այրի):*

Գյուղատնտեսական բնույթի որոշումների և իրականացվող աշխատանքների առումով ևս գործում է սեռային բաժանում: Հողագործությանն առնչվող աշխատանքներից կանայք որոշումներ են կայացնում առավել փոքր չափերով մշակաբույսերի մասով՝ լոլիկ, վարունգ, գազար, կաղամբ և այլն: Դրանց մշակումը նույնպես անում են միայն կանայք: Իսկ մեծ չափով հողատարածքների մշակմամբ զբաղվում են նաև տղամարդիկ՝ կանանց հետ միասին: Եթե կնոջ ֆիզիկական ուժը հնարավորություն է տալիս, ապա նա պետք է կատարի գյուղատնտեսությանն առնչվող գրեթե բոլոր աշխատանքները: Սակայն, եթե ֆիզիկական ներգրավվածության հարցում կնոջ համար առանձնապես սահմանափակումներ չեն կիրառվում, ապա դրանք հստակ գործում են որոշումների կայացման հարթությունում: Կնոջ, հատկապես տան հարսի մասնակցությունը շատ ցածր է գյուղատնտեսական ապրանքների վաճառքի հարցում. «*Եթե ծախելու բան լինի, իրենք պիտի որոշեն: Եթե ես ասեմ ծախենք, ինձ կասեն (նկատի ունի հատկապես սկեսրայրին) դու իրավունք չունես, դրա համար ես չեմ խառնըվում ծախելուն» (Կամո, իգ., 36տ., ամուսնացած):* Գյուղատնտեսական մեծ ապրանքների վաճառքով, օրինակ՝ անասուն, հող և այլն, զբաղվում են հիմնականում տղամարդիկ: Կանայք մասնակցում են ֆինանսական առումով առավել ցածր արժեք ունեցող ապրանքների վաճառքով՝ կաթ, ձու, մածուն և այլն: Անասնապահության ու դրան առնչվող որոշումների և գործողությունների մասով ևս կա աշխատանքների բաժանում կնոջ և տղամարդու միջև: Տղամարդկանց գործն է՝ անասունին խոտ տալը, գոմը մաքրելը, կնոջը՝ կթելը և դրանից հետո արվող վերամշակման աշխատանքները: Սակայն, ինչպես հողագործական աշխատանքների ժամանակ, այս դեպքում ևս կանայք կատարում են նաև տղամարդկանց համար նախատեսված աշխատանքները, իսկ վերջիններս երբեք կիթ չեն անում: Այն համարվում է զուտ կնոջ գործառույթ⁷:

⁷ Կիթի ականատես ենք եղել նաև մեր դիտարկման ժամանակ: Ապարանում ընտանիքի տղամարդը, հարգելով հյուրի ներկայությունը, կատարել էր անասունին վերաբերող բոլոր աշխատանքները, որոնք, սովորաբար, անում է նաև տան կինը: Սակայն կովը կթելու համար նա ընդհատեց հյուրի և իր կնոջ խոսակցությունը, որպեսզի վեր-

Որոշ դեպքերում կանայք են ստանձնում, իրենց սահմանմամբ, «տղամարդկանց համար նախատեսված գործերը»՝ դա համարելով հպարտանալու առիթ. «Ամենօրյա գործերը կանայք պարի անեն, այ Վեռայի ամուսինը անում ա, բայց ես թույլ չեմ տվել, որ իմ ամուսինը անի, նա դպրոց ա աշխատել, ես թույլ չէի տա, որ նրանից հետո հուր գար: Իրա ամուսինը տունն ա, ըտե՛նց, էլի, դասավորելու հարց ա: Հասկանո՞ւ՞մ եք ինչու՞մն ա խնդիրը: Իմ ամուսինն էլ կաներ, եթե էտա, ինքը միշտ դպրոցում ա աշխատել, ինքը պարի իրանից հուր չի գար, էլի: Ըտե՛նց ասեմ: Ակուռապոնի տնից դուր գար» (Սարուխան, իգ., 63տ., ամուսնացած): Մինչդեռ մեզանից յուրաքանչյուրը տեղեկացված է, որ գյուղական համայնքներում կին մանկավարժները համատեղ զբաղվում են և՛ անասնապահությամբ ու հողագործությամբ, և՛ մանկավարժությամբ:

Ֆինանսական որոշումների կայացման հարցում նկատելի են որոշակի տարբերություններ՝ պայմանավորված բնակության վայրով (գյուղական և քաղաքային համայնքներ) և ընտանիքի կառուցվածքով (երկսեռունդ, եռասերունդ ընտանիքներ): Մարզային բնակավայրերում կանայք հիմնականում մասնակցում են առօրյա որոշումների կայացմանը, այդ թվում՝ կենցաղային ապրանքների գնում, տվյալ օրվա սննդի ձեռքբերում, նաև՝ դպրոցում և մանկապարտեզում երեխաներին հատկացվող գումարների տրամադրում: Սակայն պատկերը տարբեր է միասերունդ ընտանիքներում. այստեղ կանայք մասնակցում են ֆինանսական որոշումների փոքր-ինչ ավելի մեծ շրջանակի, օրինակ՝ գույքի ձեռքբերում, տան վերանորոգում և այլն: Նշենք կարևոր մի փաստի մասին ևս. երևույթի վրա ազդեցություն ունի նաև անձի կրթական աստիճանը: Նման մի օրինակի հանդիպեցինք Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքում, որտեղ միասերունդ ընտանիքում ամուսիններով գրեթե հավասար իրավունքով կայացնում էին իրենց ֆինանսական որոշումները, անգամ՝ զուտ տղամարդկանց դաշտին վերաբերող այնպիսի որոշում, ինչպիսին է մեքենայի վերանորոգումը:

Եռասերունդ, քառասերունդ ընտանիքներում ֆինանսական որոշումների կայացմանը հիմնականում մասնակցում են միջին տարիքի կանայք, որոնք ունեն սկեստրի կարգավիճակ: Նման ընտանիքներում հարսը չի մասնակցում անգամ իր համար անհրաժեշտ հիգիենայի պարագաներ գնելուն: Դրանց վերաբերյալ որոշումներն ու ձեռքբերումն իրականացվում է սկեստրի կողմից. «Ամեն ինչ, ինչ-որ իրան պետքն ա... էն քսվելիքից, մապի-տից բռնած: Ես եմ առնում: Ինքը (նկատի ունի հարսը) ասում ա՛՝ մա, թանկ չի՞, 6000 դրամ դուխին, ասում եմ՝ ախչի, մի անգամ ես փչում, դուրս գալիս, 6000 դրամն ինչ ա, ջանդամին լինի» (Դրախտիկ, իգ., 56տ., ամուսնացած):

ջինս գնա և կթի: Իսկ Ամասիայում դիտարկման ժամանակ տան պապիկը նշեց, որ իրենց ընտանիքում «հարգարժան» տղամարդիկ են, որոնք կով չեն կթում:

Ինչ վերաբերում է «ընտանեկան բյուջեի» տնօրինմանը, ապա դրա հիմնական պատասխանատուն տղամարդն է: Կնոջ միակ գործառույթը, որոշ դեպքերում, գումարը պահելն է: Կինն այդ բյուջեից օգտվելիս պետք է հաշվետու լինի իր ամուսնուն՝ այդ վարքը համարելով ճիշտ. «*Հա, գիտե՞ք՝ ոնց ա, այ, էտի, որ ավանդույթ ա, ես հաշվետու եմ ամուսնուս բյուջեի հետ կապված, ես չեմ կարա ինձ ավելորդ բաներ թույլ տամ*» (Դրախտիկ, իգ., 40տ., ամուսնացած): Նման մոտեցման պատճառներից մեկն այն է, որ ըստ կանանց, գումարը պետք է տնօրինեն տղամարդիկ, քանի որ նրանք ավելի ճիշտ են կարողանում կազմակերպել և իրականացնել ֆինանսական որոշումներն ու ծախսերը: Տղամարդկանց երկարատև բացակայության ժամանակ (և ոչ միայն բացակայության) ընտանիքի ֆինանսական որոշումները կայացվում է սկեսուրի կարգավիճակ ունեցող կնոջ կողմից. «*Գումարը ամուսնուս մոտ ա, եթե ինչ-որ բան, եթե պիտի առնեմ իրեն ասում եմ: Եթե ամուսինս պոստերում ա, կիսուրիս եմ ասում*» (Դրախտիկ, իգ., 33տ., ամուսնացած)⁸:

Ֆինանսական որոշումներ ընդունելուն կանանց ունեցած մասնակցությանը վերաբերող նյութի պատկերն այլ է Երևանում և Կապանում: Նման տարբերություն նկատվում է և՛ կանաց, և՛ տղամարդկանց շրջանում: Եթե անգամ առօրյայում այն դեռ ամբողջությամբ չի կիրառվում, գոնե կարծիքի մակարդակում արդեն իսկ նկատվում է որոշակի փոփոխություն: Երևանի Կենտրոն համայնքում կանայք գիտակցում են, որ եթե տղամարդուն հավասար աշխատում և վաստակում են, ապա իրավունք ունեն նաև հավասար որոշումներ կայացնելու (այդ դեպքում խոսքը վերաբերում է գրուցակցի տղային). «*Չէ, տենց բան չկա, որովհետև ես իրա հետ համարժեք փող աշխատող եմ*» (Կենտրոն, իգ., 58տ., ամուսնալուծված):

Կանանց մասնակցության նույն կամ առավել խիստ սահմանափակումներ կարելի է տեսնել համայնքային որոշումների կայացման հարթությունում: Հատկապես գյուղական համայնքներում կանանց սահմանափակ մասնակցությունն ունի մի քանի պատճառ, այդ թվում՝ հասարակական կարծիքը, տղամարդկանց արգելքը, երևույթի ամոթալի դիտվելը: Համայնքային քննարկումները հիմնականում տեղի են ունենում տղա-

⁸ SS-ում սկեսուրի կարգավիճակ ունեցող կնոջ կողմից որոշումներ ընդունելու առումով ավելի մեծ իշխանություն ունենալու վերաբերյալ ակնատես եղանք մեր դիտարկման ժամանակ: Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքներից մեկում, օրինակ, տղամարդիկ պետք է մեքենայով Գավառ գնային՝ ավտոմեքենայի ինչ-որ մաս գնելու: SS սկեսուրը օգտվեց առիթից ու միացավ նրանց՝ հայտարարելով, որ պետք է միրգ գնի և այլ ապրանքներ: Հարսն ընդհանրապես չմիջամտեց նրա որոշմանը, չառաջարկեց որևէ բան գնել, սկեսուրն էլ, իր հերթին, չհարցրեց հարսին, թե ինչ կցանկանա կամ ինչ կառաջարկի գնել: Ինչպես նաև, SS անդամներից որևէ մեկը չառաջարկեց հարսին՝ միանալ իրենց:

մարդկանց մասնակցությամբ և որոշումներով: Հասարակական կարծիքը, թե քաղաքական և/կամ հասարակական գործունեությունը գերազանցապես տղամարդկանց դաշտն է՝ դեռ արդիական է հատկապես մարզային համայնքներում: Եվ կանայք դուրս են մնում հասարակական կյանքում տեղի ունեցող հաղորդակցությունից, որի ժամանակ ձևավորվում կամ վերափոխվում են հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքներ, իրավիճակներ: Հասարակական կյանքի դաշտը կառուցում են տղամարդիկ, նրանք են տիրապետում այն ձևավորելու և փոփոխելու կանոններին, իսկ կանայք չեն տիրապետում դրանց:

Գենդերային տարբերություններն առօրյա աշխատանքների իրականացման հարթությունում

Առօրյա աշխատանքները հասարակությունում հստակ բաժանված են ըստ սեռերի: Ընդ որում, կան աշխատանքներ, որոնց իրականացումը մյուս սեռի կողմից դիտվում է ամոթալի և/կամ անընդունելի: Սակայն կան տղամարդկանց համար նախատեսված որոշ աշխատանքներ, որոնք կատարելու առումով կանայք ունենում են որոշակի կամ ամբողջական մասնակցություն: Խոսքն այն աշխատանքների մասին է, որոնք սահմանված չեն որպես զուտ տղամարդկային և արգելված՝ կնոջ համար: Աշխատանքների բաժանման հիմքում ևս ընկած է «ներսի» և «դրսի» գաղափարը: Աշխատանքների իրականացման սահմանն այնքան հստակ և խիստ է նշված, որ դրա խախտմանը դեմ են նաև կանայք. «*Ես կարծում եմ, որ սահմաններ կան, որ պետք չէ անցնել: Ես՝ որպես կին, դրան դեմ եմ: Օրինակ, ես չեմ ընդունի, որ գնամ մեկի փուն հյուր, ես ու ընկերուհիս նստած լինենք, ամուսինը վեր կենա ամանները լվանա, կամ պղը սրբի: Հիմա ասում են, դրսում այսպես, Ռուսաստանում այնպես, բայց մենք ունենք մեր կողորհյրը, մեր գեները: Չեմ ընդունում, որ պետք ա էսօր ես աման լվամ, վաղը՝ ամուսինս» (Ամասիա, իգ., 29տ., ամուսնացած): Կանայք ոչ միայն դեմ են իրենց գործառույթների մի մասը տղամարդկանց հանձնելուն, այլև՝ այն կիսելու գաղափարին: Որոշ դեպքերում նման երևույթը համարում են «անօրինական» և «հայ կնոջը ոչ հարիր». «*Եթե կինը նստած ա հարևանի հետ բամբասանք ա անում, փռածը ամուսինն ա հավաքում, էփի անտրանելի բան ա հայ կնոջ համար, էփի անօրինական բան ա»* (Շենավան, իգ., 55տ., ամուսնացած): «*Իմ բնույթն այնպիսին է, որ ես չեմ սիրի այնպիսի մի տղամարդ, որն ինձ հետ տներն ավլի»* (Վարդենիս, զրուցակցի հարսն է պատասխանում): Կինը ունենալով երևույթի վերաբերյալ նման ընկալումներ՝ փոքր հասակից իր տղա երեխաներին դաստիարակում է նույն սկզբունքով: Տղա երեխաներին հնարավորինս հեռու են պահում կնոջ համար նախատեսված աշխատանքների իրականացումից:*

Իսկ այն քիչ դեպքերում, երբ մայրերն ուզում են տղա երեխաներին ներգրավել այն գործերի մեջ, որոնք իրականացնում են տան կանայք, դրան խոչընդոտում են սկեսուրները: Միգուցե, դրա հիմքում ընկած է սոցիալական վրեժը. եթե ժամանակին այդ գործերն իրենք են արել, ապա հիմա էլ պետք է տան հարսն անի. «Օրինակ, իմ տղեն փոշին (նկարի ունի վառարանի փոշին) որ հանում ա, տալիս (գրուցակցի սկեսուրը) ասում ա՝ էփի կնգա գործ ա, մի՛ արա» (Շենավան, իգ., 55տ., ամուսնացած)⁹:

Չենք կարող բացատրել, որ կան դեպքեր, երբ տղամարդիկ մասնակցում են կանանց վերաբերող գործերին: Սակայն դրանք չեն կարող լինել այն գործերը, որոնք նկատելի են «դրսի աչքի» համար, օրինակ՝ լվացք փոել կամ պատուհան մաքրել «...չեմ ասում, թե պատուհաններն են լվանում, բայց օգնում են: Լվացք հո չե՛ս տա, որ տղամարդը անի, բայց ինքը կարող է կանգնել և ամանները լվա: ...դե պատուհանը ամոթ է, սա Գյումրի է ազիզ ջան: 10 մատ ունեմ, 10-ի բերանը կփակեմ, մնացածինը ո՞նց փակեմ» (Գյումրի, իգ., 51տ., ամուսնացած):

Փաստորեն, ինչպես որոշումների կայացման դեպքում է, աշխատանքի բաժանումն ըստ սեռերի նույնպես դիտարկվում է որպես ինքն իրեն կառուցվող, ի վերուստ տրված իրողություն: Հենց դա է այն գլխավոր պատճառներից մեկը, որ հասարակությունը չի տեսնում նաև այն փոխելու հարցում իր մասնակցային դերը:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք նշել, որ՝

- Հասարակությունն ունի իր հստակ դերային պատկերացումները կին-տղամարդ հարաբերությունների վերաբերյալ: Դրանից ելնելով՝ հասարակությունը որոշում է նաև կնոջ և տղամարդու ներգրավվածության աստիճանը ընտանեկան, քաղաքական-հասարակական հարցերի քննարկումների մակարդակում: Եվ կանայք դուրս են մնում հասարակական կյանքում տեղի ունեցող հաղորդակցությունից, որի ժամանակ ձևավորվում կամ վերափոխվում են հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքներ, գաղափարներ, իրավիճակներ:

- Մեր հասարակությունը հայրիշխանական է և ապրում է տղամարդկային փոխհարաբերությունների օրենքներով: Եթե անգամ կանայք մասնակցում են որոշումների կայացմանը, ապա դրանք «փոքր» են: Կնոջ

⁹ Ներգրավված դիտարկումների ժամանակ մենք ականատես չեղանք այնպիսի մի դեպքի, որ հյուրի համար սուրճ կամ ընթրիք պատրաստեին տան տղամարդիկ: Չնայած այն հանգամանքին, որ հյուրն այդ ընտանիքներում համարվում էր մեծարման արժանի մարդ՝ վերջինիս մենակ թողնելով՝ տան կինը գնում էր խոհանոց սուրճ պատրաստելու, բայց տղամարդը չէր անում դա:

որոշումների կայացման աստիճանը չի մեծանում և չի հավասարվում տղամարդու հնարավորությանն անգամ այն դեպքերում, երբ նա գումար է վաստակում:

- Կնոջ մտքով անգամ չի անցնում, որ կարելի է տղամարդուն ներգրավել իր կողմից իրականացվող աշխատանքների մեջ, ինչպես, օրինակ՝ լվացք կամ արդուկ անել: Կանայք հաճախ չեն ընկալում կամ չեն գիտակցում, որ այն, ինչ կատարվում է իրենց հետ կամ իրենց միջավայրում՝ գենդերային տարբերությունների դրսևորում է: Ավելին, քանի որ նման իրավիճակների հանդիպում ենք ամեն օր ու ամեն պահի, ուստի դրանց կարևորություն չենք տալիս, քանի որ դրանք արդեն իսկ սովորական երևույթ են մեզ համար:

▶ Ընտանիքի և հասարակության տղամարդակենտրոն մոդելը պահպանվում է նաև կանանց կողմից, ինչն ակնառու է հատկապես հարս-սկեսուր հարաբերություններում, ինչն առաջին հայացքից թվում է որպես սերնդային բախում: Սակայն պատճառը միայն դա չէ: Դեռ մի քանի դար առաջ, ինչպես վկայում են ազգագրական նյութերը, կնոջ կարգավիճակը փոխվում էր արդեն միջինից բարձր տարիքային խմբերում, երբ կինը սկսում էր մասնակցել ընտանիքում որոշումների կայացմանը: Այսինքն՝ այդ տարիքից սկսած՝ կինն անցնում է տղամարդկային բևեռ և կարող է մասնակցել տղամարդկային որոշումների կայացմանը: Սկեսուրի կարգավիճակ ունեցող կինը սկսում է պաշտպանել տղամարդու իշխանությունը և հարսին թույլ չտալ խախտել ընտանիքում առկա այդ աստիճանակարգությունը: Այսինքն՝ սկեսուրը սկսում է պահել իրենց ընտանիքի այն մոդելը, որը տղամարդակենտրոն է, և որտեղ պետք է իշխի տղամարդը:

▶ 8-9 տարեկանից սկսած՝ երեխաների մեջ դրվում է սեռային-դերային բաժանումը. աղջիկ երեխաները ներգրավվում են կանանց համար նախատեսված աշխատանքների իրականացման մեջ, տղա երեխաները՝ տղամարդկանց: Այդ տարիքից երեխաները սկսում են յուրացնել հասարակության կողմից ձևավորված և թելադրվող նորմերը: Ծնողը և հասարակությունը երեխաներին գիտելիք են տալիս իրենց սեռին վերաբերող պարտականությունների, առավելությունների և սահմանափակումների վերաբերյալ¹⁰:

Այսպիսով, քննվող երևույթի բովանդակային ընկալումը դեռ սահմանափակ է՝ չնայած այն հանգամանքին, որ տարբեր դիսկուրսներում հայտնվել և օգտագործվում են նոր հասկացություններ, ինչպես, օրինակ՝ գենդերային անհավասարություն, խտրականություն և այլն: Դրանց կա-

¹⁰ Դաստիարակության փուլից սկսած՝ աղջիկ երեխաների սահմանափակումներն ավելի շատ են, իսկ դաստիարակության ձևերն՝ ավելի խիստ: Նման մոտեցմամբ, հասարակությունն աղջիկ երեխաներին նախապատրաստում է ապագայում իր սոցիալական դերին:

րևորությունը դեռ գնահատված չէ, որովհետև դրանք դեռ չեն վերածվել հաբիթուալ փորձի: Այս նոր արժեքները, եզրույթները և տեղեկությունները դեռ կարծրացած չեն, չեն դարձել գիտելիք և չեն ամրացել հաբիթուալ մակարդակում:

Գրականություն

- Թադևոսյան Գ. 2006, Որակական սոցիալական հետազոտություններ, Երևան, «ԵՊՀ հրատ.», 374 էջ:
- Լալայան Ե. 1903, Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Թիֆլիս, հրատ. նշված չէ, 368 էջ:
- Бергер П., Лукман Т. 1995, Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, Москва, "Медиум", 323 с.
- Симона де Бовуар 1949, Второй пол, Москва, "Азбука-Аттикус", 141 с.
- Шютц А. 2003, Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии, Москва, Институт фонда "Общественное мнение", 336 с.

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մելինե Թորոսյան

Հասարակությունն ունի իր հստակ դերային պատկերացումները կին-տղամարդ հարաբերությունների վերաբերյալ: Դրանից ելնելով՝ հասարակությունը որոշում է նաև կնոջ և տղամարդու ներգրավվածության աստիճանը ընտանեկան, քաղաքական-հասարակական հարցերի քննարկումների մակարդակում: 8-9 տարեկանից սկսած՝ երեխաների մեջ դրվում է սեռային-դերային բաժանումը. աղջիկ երեխաները ներգրավվում են կանանց համար նախատեսված աշխատանքների իրականացման մեջ, տղա երեխաները՝ տղամարդկանց: Այսինքն, այդ տարիքից երեխաները սկսում են յուրացնել հասարակության կողմից ձևավորված և թելադրվող նորմերը՝ ինչն է բնորոշ տղամարդուն, ինչը՝ կնոջը:

Բանալի բառեր՝ գենդեր, գենդերային տարբերություններ, առօրեականություն, որոշումների կայացում, տղամարդկային դաշտ, ընտանեկան հարաբերություններ, ներգրավվածություն դիտարկման գործընթացում:

ГЕНДЕРНЫЕ РАЗЛИЧИЯ В ПОВСЕДНЕВНОЙ ЖИЗНИ

Мелине Торосян

Общество имеет свои четкие ролевые представления о взаимоотношениях мужчин и женщин. Исходя из этого оно определяет также степень вовлеченности женщин и мужчин в обсуждение семейных, социально-политических вопросов. С 8-9 лет у детей начинается полоролевое разделение: девочки занимаются женской работой, мальчики – мужской, то есть с данного возраста дети начинают воспринимать те нормы, которые диктуются обществом и считаются типичными для мужчин и женщин.

Ключевые слова – гендер, гендерные различия, повседневная жизнь, принятие решения, мужское поле, семейные отношения, вовлеченность в процесс наблюдения.

GENDER DIFFERENCES IN DAILY LIFE

Meline Torosyan

Society has its clear role perceptions about male-female relationships. Accordingly, society also determines the degree of involvement of women and men in discussions of family, political and social issues. Children are subjected to sex-role separation starting at age 8-9. Girls are involved in women's work, boys are involved in men's work. Namely, from this age, children begin to learn the norms that are dictated by society: what is typical of a man and a woman.

Key words – gender, gender differences, daily life, decision making, men's field, family relationships, involving in the processs of observation.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

Յուրի Սուվարյան

«ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր
ք. Երևան 0019, Մարշալ Բաղրամյան 24
Էլ. հասցե՝ suvaryan@sci.am

Հոդվածը ներկայացվել է 12.09.2019, գրախոսվել է 29.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Սույն ուսումնասիրության շարժառիթը Դ. Աճեմօղլու և Զ. Ռոբինսոնի հեղինակած «Ինչու են որոշ երկրներ հարուստ, իսկ մյուսները՝ աղքատ»¹ աշխատությունն է: Այն հարուստ է աշխարհի տարբեր երկրների վերաբերյալ փաստական նյութերով ու հետաքրքիր ընդհանրացումներով, որոնք գերազանցապես վերաբերում են տնտեսական զարգացման և քաղաքական ինստիտուտների փոխառնչություններին: Հիմնավորվում է այն առանցքային գաղափարը, որ քանի դեռ քաղաքական ինստիտուտները գերակտիվ են, չի կարող ապահովվել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ, որովհետև նրանք կենտրոնացնում են իշխանությունը էլիտայի ձեռքում, ձևավորում համապատասխան տնտեսական ինստիտուտներ, որոնք իրագործում են իշխող էլիտային ձեռնտու տնտեսական քաղաքականություն²:

Հեղինակներն արդի աշխարհի որոշ երկրների տնտեսական ու քաղաքական կործանման դեմ պայքարի դեղատոմսը համարում են գերակտիվ քաղաքական ինստիտուտների վերափոխումը ներառականի (инклюзивные)³: Ներառական են այն քաղաքական ինստիտուտները, որոնց բնորոշ են միաժամանակ բավական բազմակարծությունը և կենտրոնացվածությունը⁴: Նման ինստիտուտները, ըստ հեղինակների, իշխանությունը վերապահում են անձանց լայն շրջանակի և կանխում գերակտիվ տնտեսական ինստիտուտների ստեղծումը՝ իրենց գործունեության վերը նշված բացասական դրսևորումներով: Անշուշտ, դիտարկվող համատեքստում իբրև սուբյեկտներ են ավտորիտար և ժողովրդավարական երկրները, որոնցից

¹ Տե՛ս Աджемоглу, Робинсон 2016, 114:
² Տե՛ս Աджемоглу, Робинсон 2016, 114:
³ Տե՛ս Աджемоглу, Робинсон 2016, 533:
⁴ Տե՛ս Աджемоглу, Робинсон 2016, 114:

առաջիններում իշխող է մեկ հզոր քաղաքական ինստիտուտ կամ էլիտա: Սակայն վերը նշված դրույթները, մեր համոզմամբ, լրացուցիչ մեկնաբանության կարիք ունեն՝ հաշվի առնելով տարբեր երկրներում քաղաքացիական հասարակության և քաղաքակրթական զարգացման աստիճանը, ստեղծված օրենսդրական դաշտը, մանավանդ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության փոխհարաբերությունների և զսպումների կառուցակարգերի մակարդակը, առկա ռեսուրսներն ու պետական կառավարման և ազգային ավանդույթները, կրթության, գիտության, տնտեսության զարգացման աստիճանը և ինտեգրման միտումները:

Արդյո՞ք որոշիչ է քաղաքական ինստիտուտների դերը տնտեսական զարգացման համար

Հայտնի է, որ տնտեսությունը մարդը ստեղծել է իրեն կենսամիջոցներով և անվտանգային առարկաներով ապահովելու համար, իսկ այնուհետև՝ ավելցուկը վաճառելու, ավելի ուշ՝ արտադրված ապրանքները իրացնելու և շահույթ ստանալու նպատակով, իսկ պետության ձևավորմանը զուգընթաց կայացել է յուրաքանչյուր երկրի տնտեսությունը: Այս ամենը կատարվել է առանց ժամանակակից քաղաքական ինստիտուտների համալիրի, որոնք ձևավորվել են քաղաքացիական հասարակության սկզբնավորման ու կայացման (XVIII-XIX դարեր) և այնուհետև զարգացման (XX դար) հետևանքով: Այստեղ հարկ է ընդգծել մի կարևոր բացառություն, այն, որ պետությունը՝ իբրև քաղաքական ինստիտուտ, ստեղծվել է մարդկային քաղաքակրթության կազմավորմանը զուգընթաց, սակայն հիմնականում կրել է ժառանգական միապետության բնույթ և, անշուշտ, այն ներառական չէր: Իսկ մինչ այդ համալիրի կայացումը 1776 թ. իր հանրահայտ «Ժողովուրդների հարստության պատճառների և բնույթի մասին հետազոտություններ» աշխատությունում Ադամ Սմիթը հռչակել է «անտեսանելի ձեռքի» սկզբունքը՝ հիմք դնելով ազատական տնտեսագիտական ուսմունքին, որտեղ տնտեսական զարգացման օբյեկտիվ շարժառիթներ են պահանջարկը, որին հետևում է առաջարկը, և, անշուշտ, բաղձալի շահույթը: Ի դեպ, մինչև Ա. Սմիթի գաղափարի հանրահռչակումը այսօր էլ, ապագայում նույնպես՝ դրանք անփոփոխ են: Առաջադրված հարցը լուսաբանելու համար կարևոր է հիշել պետության ստեղծման և դրա գործառույթների որոշ դրվագներ, մանավանդ այն գլխավոր քաղաքական ինստիտուտն է:

Հայտնի են պետության անհրաժեշտության և ծագման աստվածաբանական (Թ. Աքվինացի), բնական, իրավական, դաշինքային (Ջ. Լոկ, Ժ.ժ. Ռուսո, Պ. Հոլբաքս) մեկնաբանությունները⁵:

Պետության անհրաժեշտության և ծագման բնական-իրավական և դաշինքային տեսության կողմնակիցները այդ ինստիտուտի անհրաժեշտությունը բացատրում են նրանով, որ մարդիկ կնքում են հասարակական դաշինք, որով սահմանվում են բոլորի համար ընդհանուր կանոններ ու պայմաններ, պաշտպանվում են անձը և նրա սեփականությունը, միաժամանակ նախատեսվում են ընդհանուր կանոնները խախտելու համար պատասխանատվության եղանակներ: Ուշագրավ է, որ Թ. Հոբսը գտնում էր, որ մարդն իր էությանը չար էակ է, այդ պատճառով մարդկանց միջև ծավալվում է անվերջ պայքար «Բոլորի դեմ բոլորի պատերազմ»՝ սեփականության, ազդեցության ոլորտների համար, որը կանխելու նպատակով էլ ստեղծվել է պետությունը: Նա պետության բացարձակ իշխանությունը՝ դիտարկում էր որպես խաղաղության երաշխիք և բնական իրավունքների իրագործման միջոց:

Հայտնի է նաև պետության ծագման օլիգարխիական տեսությունը, ըստ որի՝ մարդիկ տարբերվում են մտավոր և ֆիզիկական կարողություններով, սեփականության չափերով, ուստի բնական անհավասարության հետևանքով տեղի է ունենում մարդկանց որոշակի աստիճանակարգում, առաջանում է էլիտար խավ, որը ղեկավարում է ամբողջ հասարակությունը: Այդպես ձևավորվել է օլիգարխիայի իշխանությունը որպես պետական իշխանություն: Վերջին մեկնաբանությանը համահունչ ձևավորվել են միապետությունները կամ ազնվականական պետությունները, որոնք մեծ մասամբ, ըստ քաղաքական ռեժիմի, որակվել են բռնակալական: Ի դեպ, ժամանակակից քաղաքագիտության մեջ քաղաքական ինստիտուտների ծագումը բացատրվում է նույն գործոններով, որոնք կարևորել է Թ. Հոբսը: Նա քաղաքական ինստիտուտներ համարում էր պետական իշխանության մարմինները և այն կազմակերպություններն ու կառույցները, որոնց գործունեությունը թույլատրվում էր պետության կողմից⁶: Քաղաքական ինստիտուտների բազում բնորոշումներից առավել ընդհանրականը և ճշգրիտը, մեր կարծիքով, բերվում է ստորև. քաղաքական ինստիտուտները մարդկանց խմբերի միջև ձևայնացված համաձայնություններն են, որոնց վարքը կարգավորվում է հստակ սահմանված կանոններով և որոշումների ընդունման գործընթացով, ինչն ապահովվում է առանձին անհատի կամ նրանց խմբի լիազորություններ

⁵ Տե՛ս Зерцало 2001, 51-98, Чиркин 2001, 23-24:

⁶ Տե՛ս Политология 2005, 235:

րով, այսինքն՝ ձևականորեն օժտված իշխանությամբ⁷: Ի լրումն Թ. Հոբսի տեսության՝ ներկայումս քաղաքական հնստիտուտներ են պետությունը, նրա գործունեության հետ առնչվող կառույցները, ինչպես նաև ոչ պետական կազմավորումները՝ կուսակցությունները, ընդհանուր շահերի հիմունքներով ստեղծված խմբերը, սոցիալական շարժումները: Իսկ կուսակցությունների կազմավորման սկիզբը ընդունված է համարել XVII-XVIII դարերը, երբ ձևավորվեցին այդպիսի քաղաքական կառույցներ Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում⁸: Այնուհետև քաղաքացիական հասարակության կայացմանը զուգընթաց՝ ձևավորվել են ժամանակակից ժողովրդավարական-իրավական պետությունները: Մասնավորապես Մեծ Բրիտանիան XVIII դարի սկզբից սահմանադրական միապետությունից դարձել է պառլամենտական միապետություն, որտեղ բարձրագույն գործադիր իշխանությունը փաստորեն պատկանում է կառավարությանը, իսկ այն կազմված է ընտրություններում հաղթանակ տարած կուսակցության անդամներից: Ֆրանսիայում միապետության փոխարեն առաջին անգամ հանրապետություն է հռչակվել 1792 թվականին, հինգերորդ անգամ՝ 1958-ին, ԱՄՆ-ում ստեղծվել է ֆեդերալ հանրապետություն 1787 թ.-ին: Ի հարկե, միապետությունների ժամանակաշրջանում, հատկապես եվրոպական երկրներում, տեղի է ունեցել տնտեսական զարգացում, սակայն արդյունաբերական երեք հեղափոխությունները՝ մեքենայացում, ստանդարտացում, հոսքային գծերի ստեղծում, իրագործվել են XIX-XX դարերում Անգլիայում և ԱՄՆ-ում, չորրորդ հեղափոխությունը նույնպես սկզբնավորվել է ԱՄՆ-ում: Նշված հեղափոխությունները, որոնք էականորեն նպաստել են աշխարհում տնտեսական և սոցիալական առաջընթացին, առաջին հերթին գիտակրթական համակարգի զարգացման, նաև քաղաքակրթական միջինից բարձր մակարդակի արդյունք էին, միաժամանակ տնտեսական ծավալվող մրցակցությունն ստեղծում էր նորամուծական արագ վերելքի անհրաժեշտություն, որի շնորհիվ գիտության, բարձր որակավորման մասնագետների հանդեպ պահանջարկն արագ թափով աճում էր: Այդ միտումները շարունակվեցին XX դարի ընթացքում, դրանք բնորոշ են նաև XXI դարին:

Բերենք այս դրույթը հաստատող որոշ տեղեկություններ համաշխարհային գիտության զարգացման պատմությունից, որոնց աղբյուրը «100 խոշոր գիտական հայտնագործություններ» կոլեկտիվ աշխատությունն է⁹: Սույն հետազոտության տրամաբանությամբ առաջնայինը գիտութե-

⁷ Տե՛ս Политология 2005, 238:

⁸ Տե՛ս Политология 2005, 265-266:

⁹ Տե՛ս “100 великих научных открытий” 2018: Որպես ճշգրտում նշենք, որ վերջին տվյալների համաձայն, պրինժն առաջին անգամ օգտագործվել է արդեն մ.թ.ա. VII-VI հազ.,

յան և հասարակական-տնտեսական կյանքում վիթխարի նշանակություն ունեցած հայտնագործությունների բովանդակության լուսաբանումը չէ, այլ այն, թե որտեղ և երբ են դրանք կատարվել: Ստորև բերվող աղյուսակում (տե՛ս աղյուսակ) նշված խոշոր հայտնագործությունները կատարվել են քաղաքակրթական համապատասխան մակարդակ ունեցող երկրներում թե՛ հին, թե՛ միջնադարյան և ժամանակակից աշխարհում:

Աղյուսակ

Մարդկային քաղաքակրթության որոշ ուղենիշային հայտնագործություններ

Հայտնագործությունը	Երկիրը	Տարեթիվը	Հեղինակը (ները)
2	3	4	5
Պղինձ, բրոնզ	Հին Հունաստան	Մ.թ.ա. III հազ.	
Երկաթ	Եգիպտոս, Շումեր	Մ.թ.ա. II հազ.	
Պյութագորաս թեորեմը	Հին Հունաստան	Մ.թ.ա. VI-V դդ.	Պյութագորաս
Հիդրոստատիկայի հիմնական օրենքները	ա) Հին Հունաստան բ) Ֆրանսիա	Մ.թ.ա. 287-212 թթ. XVII դ.	Արքիմեդ Բ. Պասկալ
Էլեկտրականություն	ա) Հին Հունաստան բ) ԱՄՆ	Մ.թ.ա. VII դ. XVIII դ.	Ֆ. Միլետսկի, Բ. Ֆրանկլին, Ռ. Սիմմեր
Շարժման օրենքները	Անգլիա	1667 թ.	Ի. Նյուտոն
Տիեզերական ձգողության օրենքը	Անգլիա	1666 թ.	Ի. Նյուտոն
Նյութի կառուցվածքի մոլեկուլյար տեսությունը	Իտալիա	1814 թ.	Ա. Ավոգադրո
Քիմիական էլեմենտների պարբերական օրենքը	Ռուսաստան	1869 թ.	Դ. Մենդելեև
Ռենտգենյան ճառագայթում	Գերմանիա	1896 թ.	Վ. Գ. Ռենտգեն
Քվանտային տեսություն	Գերմանիա	1896 թ.	Մ. Պլանկ
Հարաբերականության ընդհանուր և հատուկ տեսություն	Գերմանիա, ԱՄՆ	1915-1916 թթ.	Ա. Էյնշտեյն
Ինտսլին	Կանադա, Տորոնտոյի համալսարան	1921-1923 թթ.	Բանտինգ, Մակլետո
Պենիցիլին	Անգլիա	1928-1941 թթ.	Ա. Ֆլեմինգ, Է. Չեյն, Ու. Ֆլորի

Իսկ բրոնզը՝ մ.թ.ա. IV հազ. կեսերին Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններում. դրանք առանցքային դեր են խաղացել Հին աշխարհի քաղաքակրթական գործընթացներում: Երկաթի կիրառման առաջին փորձերն իրականացվել են Փոքր Ասիայում և Կովկասում մ.թ.ա. II հազ. ընթացքում, հատկապես՝ նույն հազարամյակի երկրորդ կեսին:

Տնտեսական և գիտատեխնիկական մրցակցության մեջ հաղթում էր և է մարդկային քաղաքակրթության գանձարանում ավելի շատ ավանդ ներդրած երկիրը: Տնտեսական զարգացումը, բացի վերը նշվածից, անշուշտ, ենթադրում է նաև հանքահումքային ռեսուրսներ, բնակլիմայական նպաստավոր պայմաններ, ապրանքների և ծառայությունների վաճառքի շուկաներ: Դրանով էր պայմանավորված հզորացող երկրների մրցավազքը XVII-XIX դարերում նոր տարածաշրջաններ, հատկապես ռեսուրսաշատ, գրավելու, ազդեցության գոտիները ընդլայնելու համար: Նման պայքար ծավալվել է XX դարում, այն շարունակվում է նաև XXI դարում, սակայն ազդեցության ոլորտներ ձեռք բերելու ուժային ձևերը լրացվում են «փափուկ ուժի» ներգործության եղանակներով: Ընդհանրացնելով այս հատվածը՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական ինստիտուտները, թեև կարևոր, սակայն միակ գործոնը չեն տնտեսական զարգացում ապահովելու համար: Մանավանդ, ինչպես ապացուցում է պատմությունը, ժողովրդավարությունը հաղթում է առավել քաղաքակիրթ երկրներում: Հիշենք Մ. Նալբանդյանի հանճարեղ դիտարկումը, որ միայն ներքին ազատությամբ օժտված քաղաքացիները կարող են ձևավորել ժողովրդավարական իշխանություն, եթե անհատի մեջ չկա «բռնության և անօրենության տարրը»¹⁰:

Ի թիվս նշված գործոնների՝ հարկ է կարևորել նաև անհատների դերը պատմության մեջ. մի օրինակ միայն՝ Սինգապուրյան հրաշքի հեղինակը այդ երկրի երկարամյա ղեկավար Լի Կուան Յուն է, որը ստեղծել է կառավարման արդյունավետ համակարգ և հրաշալի ավանդույթներ: «Պատմությունը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ սովորական և բարեմիտ հաշվարկները կարող են փոխել գերարտասովոր և կարկառուն անհատները», - գրել է Հ. Քիսինջերը Լ.Կ. Յուի գրքի առաջաբանում¹¹: Նման անհատները, բարեբախտաբար, եզակի չեն:

Չմոռանանք նաև, որ անգամ ինկյուզիվ քաղաքական ինստիտուտների պարագայում չի բացառվում ընտրախավի միջամտությունը քաղաքական ու տնտեսական գործընթացներին, մանավանդ որ եկամուտների անհավասարաչափ բաշխումը համաշխարհային երևույթ է, այն բնորոշ է նաև շատ զարգացած երկրների, անգամ ԱՄՆ-ին¹²:

Հարկ է նաև հիշել, որ քաղաքական ինստիտուտները, լինելով հասարակական գիտակցության զարգացման արդյունք՝ ածանցյալ, և թեև բազիսային չեն, սակայն, անշուշտ, հանրային կառավարման լծակներով

¹⁰ Տե՛ս Նալբանդյան 1985, 472-474:

¹¹ Յու. Լի Կուան 2016, 9:

¹² Տե՛ս Стиллиц 2019, 35-91:

ներագրում են երկրի զարգացման ընթացքի բոլոր դրսևորումների, այդ թվում՝ քաղաքակրթական գործոնի վրա:

Միառժամանակ օբյեկտիվորեն տեղի ունեցող ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացը հանգեցնում է հանրային կառավարման զարգացման առնվազն հետևյալ երկու ուղղություններով.

– էլեկտրոնային կառավարման սկզբունքների համատարած գործադրում, թվային տնտեսության գերակայության միտումների հաստատում,

– մասնակցային կառավարման արմատավորում հանրության գիտակրթական մակարդակի բարձրացման շնորհիվ՝ սահմանափակելով էլիտայի խուսավարելու հնարավորությունները: Ի դեպ, մասնակցային կառավարումը միայն խմբային կամ կոլեգիալ կառավարումը չէ, լայն առումով այն ընդգրկում է հանրային որոշումների ընդունման ամբողջ ներկայակերպ՝ հանրաքվեները, համապետական և տեղական կառավարման մարմինների ազատ ընտրությունները, ընդդիմությանը վերապահվող սահմանադրական իրավասությունները, խոսքի և մամուլի ազատությունը:

Իհարկե, հանրային կառավարման և գիտատեխնիկական առաջընթացի կապը երկկողմանի է, կառավարման համակարգը, հատկապես տրամադրվող ֆինանսական ռեսուրսները, գիտնականի դիրքը հասարակական կյանքում կարող են խթանել գիտակրթական համակարգի զարգացումը: Որոշ երկրներ աղքատ են, ոչ պատշաճ չափով զարգացած, որովհետև անհրաժեշտ չափով ռեսուրսներ չեն հատկացվում գիտակրթական համակարգի զարգացմանը, քանի որ տնտեսության թույլ զարգացման հետևանքով չկան այդ ռեսուրսները: Բարձր զարգացած երկրները ունեն դրանք, տրամադրվում են գիտության և կրթության վերելքին, որի շնորհիվ ապահովվում է տեխնոլոգիական վերընթաց զարգացում: Գիտության արդյունքները նման երկրներում պահանջարկված են, իսկ թույլ զարգացած երկրներում, որտեղ գերակշռում են տեխնոլոգիաների աճի հանդեպ ոչ զգայուն ճյուղերը՝ սննդի արտադրություն, հանքահումքային արդյունաբերություն և այլն, գիտության նվաճումներն ակտիվ պահանջարկ չունեն:

Թույլ զարգացած երկրները հայտնվում են կախարդական շրջանում. գիտատեխնիկական զարգացման համար չկան ռեսուրսներ, իսկ առանց տեխնոլոգիաների և բարձր որակավորման կադրերի տնտեսության մեջ բեկում չի ապահովվում: Այս շղթան ճեղքած որոշ երկրներ դարձել են զարգացող, անգամ՝ զարգացած (Սինգապուր, Հարավային Կորեա և այլն): Ուստի աղքատության հաղթահարման բանային գիտատեխնիկական առաջդիմությունն է, կրթության զարգացումը՝ դրա շնորհիվ է, որ բարձրանում է բնակչության քաղաքակրթական մակարդակը, աճում են քաղաքական ինստիտուտները, դառնում ինկյուզիվ, տիրապետող է դառնում մասնակցային կառավարումը: Այսպիսով, երկրի աղքատության հաղթա-

հարման ելակետը գիտակրթական համակարգի և տեխնոլոգիական անընդհատ առաջընթացն է:

Տնտեսական զարգացման տրամաբանությունը. ինչպես հաղթահարել աղքատությունը

Հարկ չկա անդրադառնալու դասագրքային ճշմարտություններին՝ մարդկային ռեսուրսների, կապիտալի անհրաժեշտությանը, դրանց ապահովմանը: Այստեղ կկարևորվեն արդի ժամանակաշրջանում տնտեսական զարգացման համար խիստ արդիական տեխնոլոգիական զարգացման խնդիրը և հանրային կառավարման կատարելագործումը, ընդ որում՝ երկրորդը, ինչպես նշվել է, առաջինի համար էական նախադրյալ է:

Արդի աշխարհում տիրապետող նոր հանրային կառավարման համատեքստում ավանդական սկզբունքները միախառնված են գործարար կառավարման բաղադրիչներին, և այս առումով կարևորվում են ռազմավարական կառավարումը, գործադիր իշխանության ձգտումը՝ լինելու նախաձեռնողական և խթանիչ միջավայր ստեղծող՝ միտված տեխնոլոգիական զարգացման ապահովմանը:

Ռազմավարական կառավարումը հնարավորություն է երկրի ներքին ու արտաքին միջավայրերի հանգամանալից վերլուծության ու գնահատման արդյունքում, հատկապես՝ հաշվի առնելով ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները, այսինքն՝ մանրակրկիտ SWOT վերլուծության հիման վրա որոշելու տեսլականը մինչև 10 տարվա կտրվածքով, այդպիսով ունենալու երկրի տնտեսական, սոցիալական, անվտանգային զարգացման հեռանկարային ծրագիր՝ հիմնավորված անհրաժեշտ ռեսուրսներով:

Մի անգամ էլ շեշտենք, որ ռազմավարության առանցքը գիտակրթական համակարգի և տեխնոլոգիական զարգացման ապահովումն է, քանի որ, ինչպես վերը նշվեց, դրանք, մանավանդ արհեստական ինտելեկտի և ռոբոտիզացիայի դարաշրջանում աղքատության հաղթահարման, երրորդ աշխարհից առաջինը փոխադրվելու կարևորագույն գործոններն են:

Ծրագրի մշակումից հետո անհրաժեշտ է սահմանել դրա իրագործման և մոնիտորինգի գործիքակազմը: Այս առումով գոյություն ունեն բոլոր երկրների համար ստանդարտ խաղի կանոններ, մասնավորապես՝ օրենսդրորեն կարգավորվող հարկաբյուջետային, դրամավարկային, գործարարության խթանման, նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորման, մաքսային և այլ քաղաքակրթությունների մշակման ու իրագործման, որոնք, սակայն, բավարար չեն տնտեսական զարգացում ապահովելու համար: Հիմնավոր ու խթանիչ օրենսդրական բազան չափազանց կարևոր է, բայց ոչ պակաս էական է նաև գործադիր իշխանության նա-

խաձեռնողականությունը՝ սահմանելու հեռանկարային և իրավիճակային կարևորագույն խնդիրներ և ձգտել լուծելու դրանք: Իսկ այդ խնդիրները յուրաքանչյուր երկրում յուրօրինակ են՝ պայմանավորված հանքահումքային, բնակլիմայական, մարդկային առկա ռեսուրսներով, ազգային ավանդույթներով, աշխարհաքաղաքական միջավայրով: Ուստի յուրաքանչյուր երկրի գլխավոր խնդիրն է գտնել աշխատանքի միջազգային բաժանման համակարգում իր հարաբերական, սակայն մրցունակ առավելությունը, այն դարձնել տնտեսական քաղաքակրթության առանցք և դրա շուրջ կառուցել ողջ սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման փոխկապակցված գերակայությունները, որոնց ամբողջությունը՝ լուծման ենթակա խնդիրների համալիրով, կկազմի տնտեսական ու սոցիալական զարգացման ռազմավարության որոշակիացված բովանդակությունը: Հայաստանի Հանրապետության համար այն խիստ ընդհանրացված սխեմատիկ տեսքով կարող է ներկայացվել գծանկարով (տե՛ս գծանկար):

Բերված գծանկարում յուրաքանչյուր բաղադրիչ՝ քառակուսու ներսում, թե դրսում, ունի կարևոր սիներգիկ նշանակություն ամբողջ համակարգի վերընթաց զարգացման համար, ուստի դրանց նախագծումը և գործարկումը հանրային կառավարման առումով չափազանց էական հիմնախնդիր են:


Ակնհայտորեն նշված հիմնախնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է քաղաքական ինստիտուտների հասունության աստիճանով, որը, ինչպես վերը լուսաբանվել է, քաղաքակրթական զարգացման արդյունք է, բայց նաև հետադարձ կապի սկզբունքով ներագրում է հանրային առաջընթացի բազային բաղադրիչների վրա: Իսկ հանրային կառավարումը, բացի գիտություն լինելուց, նաև արվեստ է, կառավարիչը՝ իբրև քաղաքական ինստիտուտի ներկայացուցիչ, տիրապետելով գիտելիքների որոշակի պաշարի, պետք է ունենա ներուժային հնարավորություններ՝ արագ հաշվի առնելու տնտեսական ու քաղաքական միջավայրի ստեղծած հնարավորությունները, իր կազմակերպության ունեցած հարաբերական առավելությունները և ընդունի հաջողության տանող կառավարչական որոշումներ: Դրանք վերաբերում են թե՛ ընտրությանը, թե՛ դրա իրագործման գործիքակազմի սահմանմանը:

Կարելի է պնդել, որ աշխարհում չկա երկիր, որը բացարձակապես զուրկ լինի ռեսուրսներից, բնակչությունը՝ ճակատագրով դատապարտված աղքատության, իսկ տնտեսական զարգացման ցածր մակարդակը և բնակչության աղքատությունը հետևանք են հավաքական կամ միջին քաղաքակրթական ոչ պատշաճ մակարդակի ու դրանով պայմանավորված՝ քաղաքական ինստիտուտների անհրաժեշտ չափով հասունության,

որը հնարավորություն չի ընձեռում արդյունավետորեն իրագործելու հանրա-
յին կառավարումը:

Գծանկար

«Տնտեսական զարգացման ռազմավարության տրամաբանությունը և կառուցվածքը



Գրականություն

- Նալբանդյան Մ. 1985, Երկեր, Երևան, "Սովետական գրող" հրատ., 632 էջ:
 Յու. Լի Կուան 2016, Երրորդից առաջին աշխարհ: Սինգապուրի 1965-2000 թթ. պատմությունը, Երևան, "Թարգմանչի հեղ. հրատ.", 1276 էջ:
 Аджемоглу Д., Робинсон Дм.А. 2016, Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты, Москва, изд. "АСТ", 693 с.
 Политология 2005, Москва, изд. "Перспект", 624 с.
 Стиглиц Дж. 2019, Нечестная экономика (В мире науки, Москва, № 1-2).
 Теория государства и права 2001, Москва, Зерцало-М, 304 с.
 Чиркин В.Е. 2001, Государственное управление, изд. "Юрист", 320 с.
 100 великих научных открытий 2018, Харьков, "Книжный клуб", 188 с.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

Յուրի Սուվարյան

Ժամանակակից տնտեսագիտության մեջ գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ արդի աշխարհի որոշ երկրների սոցիալ-տնտեսական անբարենպաստ զարգացման մակարդակը հաղթահարելու դեղատոմսը համարում են գերակտիվ քաղաքական ինստիտուտների վերափոխումը ներառականի, որոնց բնորոշ են բազմակարծությունը և կենտրոնացվածությունը, և որոնք իշխանությունը վերապահում են անձանց լայն շրջանակի ու կանխում գերակտիվ տնտեսական ինստիտուտների ստեղծումը՝ իրենց բնորոշ բացասական դրսևորումներով: Մինչդեռ պատմական փորձը և տնտեսական զարգացման միտումների տրամաբանական վերլուծությունը ապացուցում են, որ քաղաքական ինստիտուտները, թեև կարևոր, սակայն միակ գործոնը չեն տնտեսական զարգացում ապահովելու համար: Ժողովրդավարությունը հաղթում է առավել քաղաքակիրթ երկրներում, քանի որ քաղաքական ինստիտուտները հասարակական գիտակցության զարգացման արդյունք են: Գիտատեխնիկական առաջադիմության, կրթության զարգացման շնորհիվ բարձրանում է բնակչության քաղաքակրթական մակարդակը, աճում են քաղաքական ինստիտուտները, դառնում ինկլյուզիվ, տիրապետող է դառնում մասնակցային կառավարումը: Ուստի երկրի աղքատության հաղթահարման ելակետը գիտակրթական համակարգի և տեխնոլոգիական անընդհատ առաջընթացն է: Այս տրամաբանությամբ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության առանցքը կարող է լինել գիտության, կրթության և տեխնոլոգիական վերելքի ապահովումը: Դրա շնորհիվ կզարգանան հեռանկարային ոլորտներով մշակող արդյունաբերությունը, ինտենսիվ զարգացող գիտատար գյուղատնտեսությունը, հանքահումքային էկոլոգիապես անվտանգ

և ավարտուն ցիկլով արդյունաբերությունը, ծառայությունների մրցունակ և ժամանակակից ճյուղերը:

Բանալի բաներ՝ քաղաքական ինստիտուտներ, տնտեսական զարգացում, աղքատություն, գիտակրթական համակարգ, հանրային կառավարում, ավտորիտար և ժողովրդավարական երկրներ, պետություն:

ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ ИНСТИТУТЫ

Юрий Суварян

В современной экономической науке существует точка зрения, согласно которой для преодоления неблагоприятного уровня социально-экономического развития некоторых стран современного мира необходима трансформация экстрактивных политических институтов в инклюзивные, которые являются достаточно плюралистическими и централизованными. Они, распределяя власть среди широкого круга лиц, предотвращают создание сверхактивных экономических институтов с характерными для них отрицательными проявлениями.

Однако исторический опыт и логический анализ тенденций экономического развития доказывают, что политические институты не являются единственным фактором для обеспечения экономического развития. Демократия побеждает в более цивилизованных странах, так как политические институты являются результатом развития общественного сознания. Вследствие научно-технического прогресса, развития образования повышается цивилизационный уровень населения, возрастает число политических институтов, которые становятся инклюзивными, господствует партисипативное управление. Таким образом исходным пунктом преодоления бедности страны является непрерывный прогресс научно-образовательной системы и технологий. Исходя из этого стержнем стратегии социально-экономического развития РА должно быть обеспечение роста науки, образования и технологий, и на этой базе будут развиваться перспективные отрасли обрабатывающей промышленности, интенсивно растущее наукоемкое сельское хозяйство, экологически безопасная горнодобывающая промышленность, современные и конкурентные сферы услуг.

Ключевые слова – политические институты, экономическое развитие, бедность, научно-образовательная система, общественное управление, авторитарные и демократические страны, государство.

ECONOMIC DEVELOPMENT AND POLITICAL INSTITUTIONS

Yuri Suvaryan

- Джиованни дель Плано Карпини 1957, История монголов. Гильом де Рубрук, Путешествие в восточные страны, под ред. Н.П. Шастиной, пер. А.И. Малеина, Москва, "Гос. изд. географической литературы", 270 с.
- Замятин Д.Н. 2000, Образ страны: структура и динамика, Общественные науки и современность, Москва, № 1, с. 107-112.
- Потто В.А. 1888, Кавказская война, т. 3, Персидская война 1826-1828 г., вып. III (2-е изд.), т. 3, СПб., "Тип. Тренке и Фюсно", 748 с.
- Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг. 1902, пер. Е.В. Бахутовой и Д.П. Носовича, Скоропечатня М. Мартиросянца, Тифлис, 301 с.
- Сидорская И.В. 2015, Образ или имидж страны, Псковский государственный университет, с. 68-88.
- Хамдаллах Казвини 1983, Услада сердец, пер. Буниятова З.М., Петрушевского И.П., Баку, изд. "Элм", 83 с.
- Челеби, Эвлия 1983, Книга путешествия, вып. 3, Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана, Москва, "Наука", 26 с.
- Alexandre de Rhodes 1653, Divers voyages et missions du P. Alexandre de Rhodes en la Chine et autres royaumes de l'Orient, avec son retour en Europe par la Perse et l'Arménie..., Paris, Julien, Lanier et G^e, 448 p.
- Anthelmy, Charles-Léonce 1732, La vie de messire François Picquet..., Paris, Chez la Veuve Mergé, 551 p.
- Belanger, Charles 1838, Voyages aux Indes orientales par le nord de l'Europe, les provinces du Caucase, la Géorgie, l'Arménie et la Perse..., Paris, t. 2, Arthus Bertrand, 492 p.
- Dubois de Montpéreux, Frédéric 1840, Voyage autour du Caucase, Paris, t. IV, Librairie de Gide, 562 p.
- García de Silva y Figueroa 1667, L'Ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse, Paris, L. Billain, 505 p.

- Lucas, Paul, 1704, Voyage du Sieur Paul Lucas au Levant, t. 2, Paris, Guillaume Vandive, 264 p.
- Oustley, William 1823, Travels in Various Countries of the East, vol. 3, London, Rodwell and Martin, 600 p.
- Pfeiffer, Ida 2006, A Woman's Journey Round the World, by Ida Pfeiffer, Length, Echo Library, 497 p.
- Roger Bacon, Operis majoris, pars quarta, Mathematicae in divinis utilitas, Translation Copyright 1996 by Herbert M. Howep, p. 163-364.
- Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Cha Abbas... par le père P. Fr. Anthoine de de Gouvea, 1646, livre 3, Rouen..., Chez Nicolas Loyselet, 546 p.
- Sanson 1695, Voyage, ou rélation de l'état present du royaume de Perse, Paris, chez la Veuve Mabre Cramoisy, 259 p.
- Tavernier, Jean-Baptiste 1713, Les Six Voyages de Jean Baptiste Tavernier, t. 1, Paris, chez Ribou, 504 p.
- Tournefort, Pitton de 1718, Relation d'un voyage du Levant: fait par ordre du Roi par M. Pitton de Tournefort., Amsterdam, 208 p.
- Vincenzo degli Alessandri 1844, – in: Relazioni degli ambasciatori veneti al Senato, raccolte, annotate, ed edite da Eugenio Albèri, vol. II, Firenze, Tipografia all'insegna di clio, 470 p.
- Viaggio d'un Mercante 1559, –in: Secondo volume delle navigationi et viag-ginella, Venetia, Stamperia de Givnti, 255 p.
- Villotte, Jacques 1730, Voyage d'un missionnaire de la compagnie de Jésus en Turquie, en Perse, en Arménie, en Arabie en en Barbarie, Paris, chez Jacques Vincent, 647 p.
- Voyage d'Orient du R.P. Philippe de la Très Sainte Trinité, carme déchaussé 1652, Lyon, chez Antoine Ivllieron, 592 p.

ՆԱԽԻՋԵՎԱՆԸ XIII-XVII ԴԴ. ԵՎՐՈՊԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Գոհար Կարազյոզյան

Նախիջևանի կերպարի շարժընթացի և կառուցվածքի ուսումնասիրության նպատակով քննության ենք ենթարկել XIII-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների գրառումները, որոնք երկրի ու ժողովրդի մասին պատմական-գրական հարուստ նյութ են պարունակում և Հայաստանի վերաբերյալ տեղեկությունների կարևոր աղբյուր են: Եթե ժամանակագրական կարգով քննենք Նախիջևանի մարզի կերպարը՝ համաձայն եվրոպացիների ընկալումների, ապա յուրաքանչյուր դարաշրջան, պատմաաշխարհագրական և առասպելաբանական բնույթի խորհրդանիշների հետ միաժամանակ, ստեղծում էր իր որոշակի

երկրամշակութային կերպարները՝ Երնջակ անառիկ ամրոցը, Շահ Աբասի կառավարման շրջանում Նախիջևանի գրավված տարածքներն ու քաղաքները, հայ վտարված բնակչության ճակատագիրը, Ջուղան. անցյալը և ներկան, Ջուղայի գերեզմանոցը, Աստապատը և այլն: Այդ կերպարները, ամբողջության մեջ երկրամշակութային տարածք ստեղծելով, որպես Նախիջևան հայկական աշխարհի իմաստավորման ու կազմավորման արդյունք, տարբեր դարաշրջաններում անդրադարձ գտան եվրոպացիների մեկնաբանություններում: Սակայն պատմական տարբեր ժամանակաշրջաններում, դրանց հետ միասին, շրջանառվում էին կրկնվող կայուն մոտիվներ ու կերպարներ, որոնք իրենց մեջ ամփոփում էին կուտակված բազմաթիվ մշակութային իմաստներ. Նախիջևանը՝ որպես «առաջին բնակավայր», Նախիջևանի մարզի հայ կաթոլիկների գյուղերն ու եկեղեցիները, երկրամասի ավերածություններն ու վերականգնումը և այլն: Նախիջևանի նկատմամբ եվրոպացիների հայացքը թույլ է տալիս ոչ միայն լրացնել հայ և արևելյան պատմաաշխարհագրական գրականության մեջ ամփոփված տեղեկությունները, այլև նորովի իմաստավորել Նախիջևան աշխարհի որոշ իրականություններ:

Բանալի բառեր՝ Նախիջևան, ճանապարհորդների գրառումներ, կերպար, իրականություններ, երկրամշակութային տարածք, սրբազան տարածք, կերպարաբանություն:

НАХИЧЕВАН В ЗАПИСКАХ ЕВРОПЕЙСКИХ ПУТЕШЕСТВЕННИКОВ XIII-XVII ВВ.

Гоар Карагезян

С целью исследования динамики и структуры образа Нахичевана были рассмотрены записки европейских путешественников XIII–XVII веков, содержащие богатый историко-литературный материал по стране и народу и являющиеся важным источником сведений по Армении. Если рассматривать образ Нахичеванской области в восприятии европейцев в хронологическом порядке, то каждая эпоха, наряду с ключевыми символами историко-географического и мифологического характера, продуцировала свои определенные геокультурные образы: неприступная крепость Ернджак; завоеванные территории и города Нахичевана периода правления Шах-Аббаса; участь выдворенного армянского населения; Джульфа – прошлое и настоящее; джульфинское кладбище; Астапат и др. Эти образы, создающие в совокупности геокультурное пространство, были отражением интерпретации европейцами в разные эпохи Нахичеванского армянского мира, продуктом его осмысления и конструирования. Однако наряду с ними в разные исторические периоды циркулировали повторяющиеся ус-

тойчивые мотивы и образы, которые заключали в себе множество накопленных культурных смыслов: *Нахичеван* как "первое поселение", села и церкви армянских католиков Нахичеванской области, разрушение и обновление края и т.д. Европейский взгляд на Нахичеван позволяет не только дополнить сведения, заключенные в армянской и восточной историко-географической литературе, но и по-новому осмыслить некоторые реалии Нахичеванского мира.

Ключевые слова – Нахичеван, записки путешественников, образ, реалии, геокультурное пространство, сакральное пространство, имагология.

NAKHICHEVAN IN THE NOTES OF THE 13th-17th CENTURY EUROPEAN TRAVELLERS

Gohar Karagezyan

To study the structure and dynamics of the image of Nakhichevan, notes by European travellers of the 13th-17th centuries have been examined, which contain rich historical and literary material on the country and the people and are an important source of information on Armenia. If the image of the Nakhichevan region is examined as perceived by the Europeans in the chronological order, it can be stated that each epoch, along with the key symbols of historical, geographical and mythological nature, produced its specific geo-cultural images: *the impregnable fortress Yernjak; the conquered territories and cities of the Nakhichevan region under Shah Abbas; the fate of the expelled Armenian population; Julfa – the past and the present; the Julfa cemetery; Astapat and others. These images, which on the whole create a geo-cultural space, reflected the interpretations of the Europeans in different epochs of the Nakhichevan Armenian world and were a product of its understanding and constructing.* However, along with them, in different historical periods, recurring motives and images circulated, which incorporated a lot of accumulated cultural meanings of the text: *Nakhichevan*, as the "first settlement", villages and churches of the Armenian Catholics of the Nakhchivan region, destruction and renewal of the region, etc. The European view of Nakhichevan allows not only to supplement the information found in the Armenian and Eastern historical-geographical literature, but also to perceive some realities of the Nakhchivan in a new way.

Key words – Nakhichevan, notes by European travellers, image, realities, geo-cultural space, sacral space, imagology.

**ՀԱԿԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԾԱՆՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՆՈՒՅՆԱՐՄԱՏ ԵՎ ՏԱՐԱՐՄԱՏ ԲԱՌԵՐՈՒՄ
(ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի.
համաժամանակյա և տարաժամանակյա քննություն)**

Միեր Քումունց

Բանասիրական գիտությունների թեկնածու
Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՀՀ, ք. Գորիս, Սյունիքի 136/6
Էլ. հասցե՝ prof1972@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 07.02.2018, գրախոսվել է 10.03.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Հականշության արտահայտման միջոցները բարբառագիտական աշխատանքներում նույնքան կարևոր են, որքան ձևիմաստային մյուս խմբերինը, որովհետև ինչպես գեղարվեստական խոսքում, այնպես էլ կենդանի խոսակցական տարբերակներում հականվանական նշանակությամբ բառախմբերն ունեն ոճական կիրառություններ, բառհասկացությունների հակադրմամբ «կառուցվում են մի շարք դարձույթներ ու բանադրումներ»¹: Եթե հոմանիշները բարբառային բառապաշարում առանձնանում են իրերի և երևույթների իմաստային սերտության առումով, որ առանձնակի ընթացքով են ձևավորվում՝ մասնավորապես բառիմաստի պատմական զարգացմամբ և այլ գործոններով պայմանավորված, ապա հականիշները արտացոլում են արտաքին աշխարհի առարկաների, իրողությունների, եղելությունների միջև գոյություն ունեցող հակադրական կապերն ու հարաբերությունները², որ պատկերավորվում են մարդկային մտածողությամբ, համեմատության ու հակադրության եզրերով:

Հականիշ բառերի և հականշություն արտահայտող բառախմբերի իմաստաբանական հիմքը հակադրությունն է, որ արտահայտվում է ժխտմամբ, բացասմամբ, հակառակությամբ, համեմատությամբ՝ արտահայտված բառակազմական և իմաստաբանական գործոններով: Բառակազմական կաղապարավորմամբ հականշության համար սովորաբար առանձնացնում են հաստատում և ժխտում արտահայտող բառախմբերը, այսինքն՝ հակադրությունն ուղղակիորեն կախված է ձևույթային կաղապարավորումից, որ ինչպես գրական տարբերակներում, այնպես էլ Սյունիք-Արցախ

¹ Խլղայան 1976, 51:

² Մարգարյան 1993, 98:

բարբառային տարածքում ձևավորվում է նախածանցների և վերջածանցների միջոցով: Գրականի համեմատությամբ՝ **ան-**, **ապ-**, **դժ-**, **տ-**, **չ**³ նախածանցների դիմաց Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում հիմնականում տարածված են **ան-**, **բէ-||բէյ-||բէդ-**, **նա-||նը-**, **չ**⁴: Այս ածանցներից առավելապես գործուն է **ան-ը**⁵, որ առաջ է բերում ոչ միայն հասկացության ուղղակի ժխտում՝ **գրաբարից անցած՝ անառակ, անասուն, անաստված, բարբառում սրտեղծված՝ անբաշար, անգյուման, անհմասկ** և այլն, այլև ստեղծում է եզրեր՝ դրականի ու ժխտականի, ինչպես՝ **խէր-անխէր, անլուգու-լուգվանիկ, անկընօնք-կընքված, հըսկացող-անհասկ, անէփ-է/ի/փած** և այլն⁶: Բայց ինչպես նկատվում է, բառի դրական իմաստի ժխտումը կամ բացասումը հականիշ զույգ անդամներից մեկում կարող է ձևաբանական, իմաստաբանական և բառակազմական տեղաշարժեր առաջ բերել: Այսպես բառ-հասկացությունների ժխտման նպատակադրումից առաջացած տեղաշարժերն ազդում են բառիմաստին, և այդ հիմունքով էլ բառային բոլոր իմաստները չեն, որ հականիշ շարքեր են ունենում. **անկլծխ** բառի «1. գլուխ չունեցող, 2. չուղղորդվող, 3. փոխ. ամուսին չունեցող, 4. անիմաստ, 5. թափթփված» իմաստները նրա նույնարմատ դրական ձևում արտահայտվում են՝ **-ավ, -ավէր** ածանցներով, բայց այլ իմաստով՝ ձևավորված ձևաբանական տարրերից և բազմիմաստությամբ՝ **կըլխավ** «1. գլխի միջոցով, 2. խելացի», **կըլխավէր** «հիմնական, գլխավոր»: Եվ ստացվում է, որ նշված բոլոր հինգ իմաստներին զուգահեռ՝ ընդամենը երկուսն են, որ նույն հասկացության ժխտումն են արտահայտում: Դրական իմաստի՝ **ան-** նախածանցով հականիշ իմաստները նույնպես տարաբնույթ են, և բացարձակ չէ բառիմաստ ժխտումը, իսկ շատ դեպքերում դրանք ուղղակի հականիշ զույգեր չեն կազմում:

³ Հետաքրքրական է, որ բարբառախումբը ոչ մի բառ չունի պարսկերենից անցած **ապ-**, **դժ-** ածանցներով: Դա ևս խոսում է այն մասին, որ այդ ածանցները հայերենին անցել են հիմնականում գրավոր ճանապարհով, իսկ **ան-** ածանցի գործուն լինելը ևս վկայում է, որ այն փոխառություն չէ, ինչպես նկատում է Լ. Հովհաննիսյանը (այդ մասին տե՛ս Հովհաննիսյան 1989, 145-146):

⁴ Հականշություն կազմող մյուս նախածանցները, որ ոչ թե ժխտում, այլ հակադրություն են արտահայտում, գրեթե բացակայում են՝ **արտ-/ ներ-, համ-/հակ-, գեր-/ թեր-**: Դրանցով կազմված բառերը գրական ձևեր են բարբառախմբում և, ինչպես ասվեց, հակադրություն չեն կազմում՝ **համ**աձայն, **հակ**առակ և այլն:

⁵ Սյունիք-Արցախ բարբառախմբում **ան-** նախածանցը երբեմն հանդես է գալիս **ըն-** ձևով՝ **ընալի, ընդէրու, ընճանաչ, ընթօու, ընօրուտ** և այլն:

⁶ Դրանք բավականին շատ են՝ **անըզգամ, անթառամ, անխափան, անխէր, անկարք, անխըրատ, անծանօթ, անծըպուտ, անլը/ի/վա՛, անխըրատ, անկնօնք, անկօշտ/անկըշտըմնը, անկըտրէ, անկըրակ, անըրթէվութ, անկիր, անկուշտ, անկուտուր, անկօ** «գոյություն չունեցող» և այլն, որոնց մի մասը ենթակա է քննության:

Պատկերն այլ է տարբեր արմատներով ձևավորվող և հակառակ իմաստ նշող բառային զույգերում: Հակառակությունը ոչ թե ժխտմամբ, այլև հակադրական եզրերի զուգահեռությամբ է կառուցվում, ինչպես՝ **պընդօթուն-թուփօթուն, պըխըրակիլ-կ'ծվիլ, սամա՛ժուպիկ, քիշէր-ցիրէկ, ամառ-ծիմէռ, լամիլ-փիս, էրգան-կարճ, կուճի-մէժ, դօճ/չ/աղ-լառի, լաց-ծիծաղ, մօք-պաց:**

Քանի որ **ան-** ածանցը, փաստորեն, բառահիմաստաբանական միջոց է հականշության արտահայտման պլանում, որն ավելանում է մի դեպքում ուղղակիորեն հակադրվող բառին՝ արտահայտելով ժխտման նշանակություն, մի այլ դեպքում հակադրվող բառի արմատական ձևին՝ արտահայտելով մի բան չունենալու, մի բանից զուրկ լինելու նշանակություն⁷, ուստի կարող են առաջ գալ ձևաբանական երևույթներ, որ բնորոշ են միայն հականշություն արտահայտող բառերին:

Այսպես՝ գոյականներից **ան-** ածանցով կազմվում են ածականներ, որոնք, ինչպես նշվեց, մատնանշում են «բացասական նշանակություն»⁸, այլև մի բանից զուրկ, տվյալ հատկանիշից զրկված կամ առանց այդ բանի իմաստ՝ **աբուռ/զոյ./= անաբուռ/ած./**՝ «ամոթ չունեցող, ամոթից զուրկ», **Աստված /զոյ./=անաստված/ած./**՝ «խիղճ, կրոն, Աստված, հավատք չունեցող», **համութ/զոյ./= անհամութ/ած./**՝ «ամոթ չունեցող», **բախտ/զոյ./=անբախտ/ած./**՝ «ապաբախտ, երջանկություն չունեցող» և այլն:

Որպես ածականներ՝ այդ բառերը մեծ մասամբ պահպանում են գոյականի բառիմաստային հարաբերակցումը և ընդգրկվում հարաբերական ածականների շարքում, ինչպես՝ **տէր-անտեր, թէվ-անթէվ, թէփուռ-անթէ-փուռ:** Քիչ չեն **ան-** նախածանցով կազմված բառերը, որոնք անվանական նշանակությունը կորցնում են՝ դառնալով որակական ածականներ՝ առաջ բերելով ածականական նրբիմաստներ և ունենալով՝ **ա/ համեմատության եզրեր՝ իրէս-անիրէս «անամոթ», խէլք-անխէլք «հիմար», խիղճ-անխիղճ «զուր չունեցող, անզուր», խէն⁹-անխէն «անհամ», բ/չհամեմատվող եզրեր՝ ծամ-անծամ «անամոթ», համութ-անհամութ «անպատկառ, աներես», իրէս-անիրէս «անամոթ», լուզոն-անլուզոն «չխոսկան, խոսել չկարողացող», կ/զ/ին-անկ/զ/ին «թանկարժեք»:**

Ածականներ ձևավորող **ան-** նախածանցով բառերում առանձին խումբ են կազմում **-օթուն** վերջածանցով գոյականները: Բառակերտման այս եղանակով զգալիորեն հարստանում է Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի գոյականական կազմը: Բայց այս դեպքում առաջնային է ոչ թե գոյականական իմաստը, այլ ածականականը, որով-

⁷ Մարգարյան 1993, 100:

⁸ Մուրվալյան 1955, 254:

⁹ **խէն** բառը բարբառում ունի «կաթի յուղ» իմաստը:

հետև, ինչպես նկատում են¹⁰, գոյական ⇒ ածական ⇒ գոյական ածանցակերտմամբ խոսքիմասային անցման¹¹ միջոցով նոր գոյականներ են ձևավորվում այնպիսի բառերից, որոնք **-օթուն** ածանց չեն ստանում, ինչպես՝ **կապ⇒անկապ⇒անկապօթուն, կարք ⇒անկարք⇒անկարքօթուն, կօրծ⇒անկօրծ ⇒անկօրծօթուն, համուֆ ⇒ անհամուֆ ⇒անհամուֆօթուն: Կապօթուն, կարքօթուն, կօրծօթուն, համուֆօթուն** կազմությունների բացակայությանը փոխարինում են բացասական նշանակությամբ նոր հասկացություններ: Դրանց որոշ մասը կարող է առկայանալ բնիմաստով՝ որպես վերացարկված գոյականներ՝ առաջացած ածականներից՝ **անկարքօթուն** «անկարգ լինելը, չենթարկվելը» **անկօրծօթուն** «պարապ մնալը, լինելը», **անհամուֆօթուն** «ամոթ չունենալը», իսկ որոշները միանգամայն նոր՝ այլաբանական իմաստով են դրսևորվում, ինչպես՝ **անկապօթուն** «անտրամաբանական ինչ-որ մի երևույթ» և այլն:

Բայանուններից **ան-**ով ձևավորվող նոր բառեր բարբառախմբի բառապաշարում նույնպես կան, ինչպես՝ **կրդարէլ-անկադար, բըշարէլ-անբաշար**¹², **հըմանչէլ-անհամանչ, ըզգալ-անզգամ, թըթախէլ-անթաթախ, թաղէլ-անթաղ, թափէլ-անթափ, լիվանալ-անլվալ, իփէլ-անիփ, խօսալ-անխօս, կէզ-անկէզ**: Դրանք մեծ մասամբ ձևավորվում են այն արմատներից, որոնք ինքնուրույնաբար հանդես գալ չեն կարող՝ **բաշար, թաղ, ի/է/փ, կէզ, խօս, կադար**, կամ որպես բայանուն ունեն իրենց զուգահեռ բառաձևերը՝ **համանչ, թաթախ**, և՛ անուն են, և՛ բայանուն՝ **թափ**՝ «1. առաջին թափ՝ բերքի թափելը, 2. թափել, 3. ուժ», կամ մթագնած քերականական մասնիկներով են՝ **լվա, զգամ**:

Բարբառախմբում **ան-** ածանցով հականշային զույգերը կարող են կազմվել՝

ա) **գրաբարյան ձևերից**, կամ բառեր, որ **ան-** ածանցով անցել են **հին հայերենից՝ անհամբարք, անհաշտ, անհավատ, անհար, անհարմար/անյարմար/** և այլն: Իհարկե, **-ան** ածանցով հականշային զույգ կազմող այլ բառեր նույնպես կան, բայց սրանք և այսպիսիք առանձնացված են գրաբարից ավանդված բառերի շարքում, որովհետև՝ 1. որպես կազմություններ հանդիպում են գրաբարում, օրինակ՝ **անհօգի, անմասնը** բառերը կազ-

¹⁰ Մուրվալյան 1955, 254:

¹¹ Այն չպետք է շփոթել խոսքիմասային փոխանցման իրողության հետ, որովհետև, ինչպես նկատում է Լ. Խաչատրյանը, խոսքիմասային տարարժեք բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջնորդվում ենք դրանց շարահյուսական կիրառությամբ. ձևաբանական արժեքի բաշխումը (дистрибуция) տեղի է ունենում շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստագատիչ մյուս գործոնները տվյալ դեպքում չեզոքանում են (այս մասին տե՛ս Խաչատրյան 1985, 33):

¹² Նաև՝ **բեյբաշար||բեբաշար**:

մությանը և իմաստով գրաբարատիպ են՝ հին բառապաշարի գրական շերտից 2. որոշ մասը բարբառախմբին անցել է գրաբարում ձեռք բերված նոր իմաստներով, ինչպես՝ **անմարթ** «անբնակ, անպետքը «անօգուտ, անշահ», 3. կարելի է կարծել, որ որոշ բառեր հենց **ան-** նախածանցի համադրմամբ են անցել բարբառախմբին՝ **ան-պատան, ան-հար, ան-համբարք, ան-գէտ**.

բ) **փոխառություններից՝ բարիշ-ան/մ/բարիշ, բարիշտ-ան/մ/բարիշօթուն, գյուման** «անկասկած, անտարակույս»-**անգյուման** «անհույս», **վաղա-անվաղա** «անժամանակ», **վա/աի/լ-անվա/աի/լ** «տգեղ», **փայմ-ան-փայմ**¹³, **փուլ-անփուլ, դարար-անդարար** «անհանգիստ», **նամուս-աննամուս, թիքյա՛-անթքյա՛, դալու-անդալու, լա՛գաթ-անլա՛գաթ**¹⁴:

Հականշային այս շարքի ժխտման իմաստով եզրերը, չնայած կրել են հայերեն **ան-** ածանց՝ **ան/մ/բարիշ, ան/մ/բարրշօթուն** և այլն, այնուամենայնիվ մասամբ կամ ամբողջական, պահպանում են փոխառու լեզվի հնչողությունն ու իմաստը: Օրինակ՝ պոսկ. **pārašt**, որի նախնական իմաստներն են «երկրպագող, հավանող, պաշտող», թյուրքերենում և Սյունիք-Արցախ բարբառախմբում ձեռք է բերել **բարիշ/բարրշ, bariş** «խաղաղություն, համերաշխություն» իմաստները: Մենք այստեղ չենք քննի բառի ծագումնաբանությունը կամ նոստրատիկ հիմքերը¹⁵, հայերենի **բար** բառի հետ ունեցած առնչությունները, որովհետև բառը բարբառախմբի բառապաշարում փոխառյալ իմաստով և ձևով է գործածվում¹⁶.

գ/ **բարբառային բառերից՝ փօթ-անփօթ** «անբասիր». գրաբարում էլ գործածական է «ծալք, խորշոմություն, կնճիռ»¹⁷ իմաստներով: Բարբառախմբում այն երկու հիմնական իմաստով է հանդես գալիս՝ «1. **թնջուկ, զգեստի ծավված մաս, 2. փոխբ. արատ, թերություն**»: Գորիսի բարբառում այն ունի նաև «ավելորդ» իմաստը. «Հեզնանքով է լսում նաև իր

¹³ Բարբառախմբում արդեն տարածում է ունենում նաև **անֆայմ** ձևը:

¹⁴ Չնայած այսպիսիք նշվում են հականշային խմբում, բայց պարզ է, որ քերականական պլանում տարարժեք են:

¹⁵ Այս մասին կարելի է տեսնել՝ Համբարձումյան 2012, 47 (այստեղ հեղինակը ներկայացնում է հայերենի **բարի-ք** բառին վերաբերող ուսումնասիրությունները, տողատակում մանրամասն վերլուծում նոստրատիկ աղբյուրները), Ջահուկյան 1987, 72:

¹⁶ Չենք կարող ստույգ ասել, թե այն հայերենի՞ց է անցել թուրքերենին, ապա թուրքական ձևով նորից անցել հայերենին՝ **-iş** ածանցով, կամ որ այն պարսկերեն՝ բառ է՝ **-իշ /-iš, -išn/** ածանցով և **տ** հավելումով, չնայած որ Հ. Աճառյանը **բարի** բառահողվածի ներքո նշում է, որ հայերենից փոխառություն է գնչ. **parave**՝ «բարև, ողջույն», որ Ա. Պասպատին փորձել է նույնացնել հնդիրանական «**pranāma, prunam**» «պաշտել, ողջունել» բառերի հետ (այս մասին տե՛ս Աճառյան 1971-1979, հ. 1, 424):

¹⁷ Աւետիքեան, Սիրմէլեան, Աւգերեան 1979-1981, հ. I, 944:

երեքհարկանի փոթը՝ Հռաքել դայի-Տասը տարի»¹⁸, բայց հականշային շարքում հանդես է գալիս միայն գրք. «արատ, թերություն» իմաստներով:

Շառ-անշառ՝ «անվնաս, անփորձանք»: ՆՀԲ-ն նշում է «որպես արմատ բառիս շառագոյն՝ կարմրագոյն, բոսորագոյն (լծ. ոմկ. շիրայի գոյն)»: Հ. Աճառյանը նշում է արաբ. փոխառություն լինելը ԲԸՀՀšarr՝ «չարություն, չարիք, չար, խռովություն, կռիվ», իսկ հայերենի բարբառներում առկայանում է «փորձանք, աղետ, ամբաստանություն, զրպարտություն» իմաստներով¹⁹: Սյունիք-Արցախում հենց այս վերջին իմաստներով է գործածվում: Այդ են վկայում **շառ** արմատով կազմված բազմաթիվ հարադրություններն ու կապակցությունները՝ **շառ անէլ, շառավ տալ, շառը քաշել, շառ տինիլ, շառավ ինգէլ, խէր-շառ-Աստված**, Արց. **շառ սրհաթու ջիհիլ** «գործը ծախողվել, անհաջող լինել»: Հականշոթյան շարքում՝ **շառ** նշանակում է «փորձանք». «Ամեն անգամ վերադարձել էր ուրախ, սակայն հենց սանդուղքի գլխին մի կասկած փշի պես ծակել էր միտքը. չլինի՞ մի բան պատահի, հազար **շառ** ու դուշման, գան...»²⁰: Կան անվանական և կրկնավոր հարադրություններ՝ **շառ ու փոր-ձանք, շառ ու ցավ, շառ ու շուռ/շառու-շուռ** և այլն: Բարբառային հականշոթյան խմբի մեջ են ընդգրկվում նաև այնպիսի բառեր, որոնք կամ չեն հանդիպում հայերենի գրական տարբերակներում, կամ կազմված են այնպիսի արմատներից, որոնք բարբառում բառակազմական և իմաստաբանական տեղաշարժերի են ենթարկվել կամ մթազնել են իրենց նախնական տարբերակը, ինչպես՝ **քրստ/քէստանքը /է/ստ, բութա-անբութա «անհույս», անգէնգիշ «առանց իմանալ» - չգիդալակ, անկուճ, անկըռէք** և այլն:

Բարբառախմբի հականշային շարքերում **ան-** նախածանցով կազմությունները իմաստային առումով մի շարք առանձնահատկություններ ունեն: Լեզվաբանական գրականության մեջ բառային նոր իմաստ ձևավորվելու հատկանիշը մեծ մասամբ վերագրվում է բաղադրություններին՝ բարդություններին²¹ և ածանցավոր բառերին: Վերջիններս սովորաբար նրբիմաստներ են հավելում հիմնական ձևայիններին: Բայց կան ածանցներ, որոնք բոլորովին նոր իմաստ են հաղորդում բառին, և ճիշտ է նկատված, որ «քիչ ուշադրություն է նվիրվել նրա (խոսքը ածանցների մասին է՝

¹⁸ Խանգաղյան 1966, 121:

¹⁹ Աճառյան 1971-1979, 496:

²⁰ Բակունց 1986, 491:

²¹ Հատկապես նկատի ունենք իսկական բարդությունները (այս մասին կարելի է տեսնել՝ Առաքելյան, Խաչատրյան, Էդյան 1979, 302-351), որոնց «ամենաբնորոշ առանձնահատկությունը նոր իմաստ արտահայտելն է. այսինքն՝ բառը ստանում է մի այնպիսի նոր իմաստ, որ նրա բաղադրիչները չունեն առանձին-առանձին, և բարդության արտահայտած իմաստը չի ստացվում նրա բաղադրիչների իմաստի մեխանիկական գումարից» (այս մասին տե՛ս Մկրտչյան 1972, 101, Մկրտչյան 1977, 85):

Մ.Ք.) իմաստաբանական վերլուծությանը»²²: Այսպես՝ բարբառային բառերում **ան-** նախաձանցով ձևավորված հականշային զույգերի ժխտվող, բացասվող, հակադրվող իմաստային նրբերանգը, ինչպես նկատելի է, ազդում է բառի ամբողջական իմաստին, և հիմնական ձևույթի հետ մեկտեղ առաջ է բերում բոլորովին նոր իմաստ, իսկ ածանցի նշանակությունը մասամբ մթազնում է, ինչպես՝ **անլուզու** հականշային շարքում նշանակում է ոչ թե «լեզու չունեցող», այլ «չխոսող, լուռ, մունջ», **անըսելի** չի նշանակում «չասվող», այլ «1. չափազանց, 2. անպատճաշ», **անխեն**՝ ոչ թե «անյուղ», այլ «անհամ», **անփոխան** բառը ունի նաև «աղքատ» իմաստը, **անծօխ** բառը «ծխագուրկ» իմաստից բացի նշանակում է «համայնք չունեցող»²³, **անյեք/կ/** նշանակում է ոչ թե «չեկած», այլ «չթթված խմոր»²⁴ և այլն: **Անլուզու, անըսելի, անխեն, անփոխան, անծօխ, անյեք/կ/** բառերը, փաստորեն, մասամբ կամ ամբողջական չունեն նույնարմատ հականիշները: Օրինակ՝ **անլուզու** «չխոսող, լուռ, մունջ»-**լուզվանի** «խոսող, շատախոս», **յեկած** «թթված խմոր», բայց **անըսելի** «1. չափազանց, 2. Անպատշաճ» բառի իմաստներին հակադրվող **ըսելի**-ն չի նշանակում «ոչ չափազանց» կամ «ոչ անպատճաշ», այլ կրում է հակիմաստության երևույթ՝ հարցական երանգով՝ «Տա ըսե՞լի պաննա՛, վեր ասեմ»՝ որպես հոմանիշ **անըսելի** բառին: Այսպես նաև մյուս բառերը՝ **խեն** «կաթի յուղ», **փոխան** «հագուստ», **ծօխ** «1. քուլա, 2. ընտանիք»:

Բարբառախմբի բառապաշարում ժխտական իմաստից առաջացել են նաև անվանումներ, որոնցում ժխտման իմաստը կա՛մ բացասվում է, կա՛մ երկրորդ պլանում է, ըստ այդմ էլ՝ հականիշների զուգակցությամբ առաջ են գալիս նոր բառեր, որոնցից որոշները համալրում են բարբառախմբի բառապաշարի համանունների շարքը, ինչպես՝ **թառամ-անթառամ** «չթառամող», **անթառամ** «անթառամ ծաղիկ», **անկիր** «բանաստեղծություն», **անհէտ** «անհայտ, անդառնալի», **անճոռնի, անմահական, անդուրմ** «1. անխիղճ, 2. անճար» և այլն: Վերջին երեք օրինակներում անաձանց ձևերը բարբառախմբին հայտնի չեն՝ **-ճոռնի, -մահական, -դուրմ**:

Համարմատ հականիշներից Այունիք-Արցախ բարբառախմբում **ան** ժխտական նախաձանցով ձևերին քանակապես գիշում են չ-ով կազմությունները՝ **չխօս, չմէթկը, չըհաս, չըկէր, չըկամ, չըխօսկան, չըգիդալուք, չգի-դալալ, չըպէր, չըտէս, չունեվօր**, որոնք նոր բառեր են ստեղծում հիմնականում այնպիսի բայանուններից, որոնք ինքնուրույն չեն գործածվում՝

²² Ջահուկյան 1989, 82:

²³ Այս դեպքում թերևս գործ ունենք բառային համանունության հետ՝ **ծուխ** «կրակից արձակված օդը», և **ծուխ**՝ «բնակչություն, տուն»:

²⁴ Այստեղ գործածվում է փոխանունության հետ՝ գործողության անունը առարկայի և նրա հատկանիշի փոխարեն:

չրհաս, չրխօս, չրկամ, չրպէր, չրտէս: Այնուամենայնիվ, չ ածանցով կազմություններն ունեն իրենց նույնարմատ հականիշ զույգերը:

Տ ածանցով առկա է **տրհալ** «չհալած, անմարս», որ իմաստի մթագնամբ անցել է գրաբարից²⁵ «ղավորմա, յողի մեջ տապակած միս՝ պահուստի համար»:

Ինչպես հայերենի մյուս տարբերակներին, այնպես էլ Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարին անցել են նաև փոխառյալ ածանցներ: «Հայտնի է, որ լեզուները միմյանցից առանձին բառակազմական ձևեր՝ ածանցներ փոխ չեն առնում»²⁶: Սակայն ժողովուրդների փոխշփման հետևանքով փոխառվել են ոչ միայն բառեր, այլև ածանցներ: Ածանցների փոխանցման եղանակները տարբեր են, և դրանցից բարբառային տարածքում տարածված է այն, որ «երբ լեզուն փոխ է առնում միևնույն ածանցն ունեցող մի շարք բառեր, այդ ածանցն աստիճանաբար այնքան է հարազատանում նոր լեզվի համար, որ սկսում է նմանակության շնորհիվ տարածվել և ընդգրկել մի շարք այլ կազմություններ»²⁷: Այսպես՝ **բէ-/բէյ-** պոսկ. **bi-** ժխտական նախածանցով հականշային զույգեր կազմվում են ոչ միայն փոխառություններով՝ **աբուռավ-բի/է/աբուռ, քէփը տեղը-բէքէփ/Ֆ/, խաբար-բէխաբար**, այլև հայերեն բառերով՝ **հրւշը տեղը-բէհրւշ, աստղավ-բէասթըղ, շնօրհքավ-բէշնօրհք**: Այս ածանցը բավական տարածված է թյուրքերենում և պարսկերենում: Եվ եթե թյուրքերենում այն առավելապես տարածված է որպես նախդիր կրկնավոր կազմություններում²⁸, իսկ պարսկերենում ունի մակբայական նշանակությամբ բառակապակցություններ ձևավորելու գործառույթ՝ հայերենի տրական հոլովի դերով²⁹, ապա Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում զուտ հականշային միջոց է բառային զույգերում: Հայերենի ոչ բոլոր բարբառներում է, որ **բէ-** ածանցը գործածության լայն շրջանակներ է ընդգրկում: Օրինակ՝ եթե Սյունիք-Արցախ բարբառախմբում այն մասամբ տարածվում է հայերեն բառերի վրա, նրանով կան այլ տիպի կազմություններ, այդ թվում՝ հաստատական և ժխտական զուգահեռ ձևեր, ապա Արարատյան բարբառում, ինչպես նշում են ուսումնասիրողները, «**բէ** ժխտական նախածանցը արտահայտում է **ան-**ի իմա-

²⁵ Մարգարյան 1975, 260:

²⁶ Էլոյան 1959, 64:

²⁷ Էլոյան 1959, 65:

²⁸ Թյուրքերենում **be-** ածանցը գործածվում է նաև բայի դիմավոր ձևերի հետ, ուստի կարելի է կարծել, որ որպես բառաքերականական ձևույթ առավել գործածական է թյուրքերենում (այս մասին տե՛ս Аганин 1959, 30):

²⁹ Բախշինյան, Բիանջյան, Ղազարյան, Մելիքյան 2011, 198:

ստը, բայց համեմատաբար սահմանափակ կիրառություն ունի և... հանդիպում է փոխառյալ բառերի հետ, ...գիտակցվում է իբրև առանձին ածանց»³⁰:

Բառեր կան, որ առանց **բէ-** ժխտական ածանցի գործածություն չունեն, և կարելի է կարծել, որ այդպիսիք քարացած ձևով են անցել բարբառախմբին, ինչպես՝ **բէդամաղ** «նեղացած, վիրավորված, վշտացած»՝ **բեդամաղ անէլ, ինէլ, բէդնամ**՝ թյուրք.՝ **bednam** «վատահամբավ, անպատիվ, անանուն»՝ **բէդնամ անէլ** «խայտառակել, վարկաբեկել, անվանարկել»:

Կան բառեր, որոնցում ածանցը ոչ միայն տրոհվում է, այլև ունի **ան-** հայերեն ածանցով նույնարմատ հոմանիշները՝ **անբաշար-բեբաշար/բեյբաշար/ան/մ/բաշար/, բէբըըըըըը, աննամու-բէյնամու, անարու-բե/յ/արու** /առակ-պառակ/, **անբախտ-բէբախտ, անբախտություն-բէ-բախտություն, անաստղ-բէյաստղ** «անաստղ, անհրապուրիշ», **անլազաթ-բէլազաթ** «տհաճ, տհաճություն պատճառող, անհավես»:

Հականշային զույգ կազմող այդ բառերի մեծ մասը դուրս է մնում բառապաշարի կազմից, փոխարինելու են գալիս նոր տարբերակներ՝ անցած գրականից և խոսակցական մյուս տարբերակներից: Հականշային շարքերում այդպիսիք այլևս անհասկանալի են նոր սերնդին. այսպես՝ ըստ մեր հարցումների³¹ **բէ-** նախաձանցով բառերն ունեն այսպիսի պատկեր.

1. Բառեր, որ դուրս են մնացել, և սակավաթիվ մարդիկ են՝ կա՛մ շատ տարիքով, կա՛մ տարեցների հետ երկար ժամանակ ապրած, որ ճանաչում են՝ **բը/ի/հէշպ՝ բիհէշպ քիցէլ, ինէլ/ըղնէլ** «անկողին ընկնել, անկողին գցել», **բէյուղուբ** «տեսողությունից զուրկ, թույլ, անհետադարձ», **բէթխո**³² «վատ բնավորություն ունեցող»:

2. Բառեր, որ հասկանալի և գործածական են 40-ից բարձր տարիք ունեցող տեղացիների, մասամբ նաև 40-ից ցածր մարդկանց համար, որոնք չեն գործածում, բայց լսել են և գիտեն դրանց իմաստը՝ **բէթահրը** «անասելի, անելանելի», **բէյմահլում անէլ**³³ «թաքցնել, անտեսանելի դարձնել», **բէյմարիփաթ** «անշնորհք», **բէ/ը/թաիաի անէլ**³⁴ «ծեծել, տանջել», **բէդինջ** «1. ան-հանգիստ, 2. բարբառախմբում՝ բիրբիթուն/բուրբույթուն, բուրբուրթուն»: **Բէթահրը, բէյմահլում, բէթաիաի անէլ, բէդինջ** բառերը գործածական չեն, հասկանալի են, որովհետև ունեն դրական ձևերը՝ **թահրը, մահլում, թաիաի, դինջ**. Ժխտական կազմությունները այլևս փոխարինված են հոմանիշ բառերով, բառաքերականական կապակցություններով՝ **թահրը**

³⁰ Բաղդասարյան-Թափալցյան 1972, 84:

³¹ Բառերը հարցման ձևով շրջանառել ենք մոտ քառասուն մարդու շրջանում՝ տարբեր տարիքի (7 մարդ՝ 30-40 տարեկան, 18 մարդ՝ 18-30, 15՝ 40-ից բարձր):

³² Ծագումը մեզ անհայտ է:

³³ **Բէյմահլում** «անտեղյակ, չերևացող»

³⁴ **Բէթաիաի**՝ թյուրք. bitaraf «մեկուսի, չեզոք»:

չկա, մահլում չի տամ, թակել/չըրչարել, շարժուն, բուրբուրթուն և այլ բառերով: Եվ հենց նշվածներն են կազմում հականիշ զույգեր՝ **թահրը ինել, մահլում տալ, թարիփ անել, պա/ը/շպանել, թըմրած /բըլընգած** և այլն:

3. Բառեր, որ հասկանալի են, դուրս չեն մնացել բառապաշարից, բայց հազվադեպ են գործածվում 40 տարեկանից բարձր մարդկանց կողմից՝ **բէբըըըըը/բէբըըըըը** «շնորհագուրկ, ապաշնորհ», **բէդամաղ անել** «նեղացնել, վիրավորել, վշտացնել», **բէդովլաթ** «անպետք, փուչ, ծույլ», **բէ-հալ** «հիվանդ, ուժասպառ, հոգնած, ծանր վիճակում»:

4. Բառեր, որոնք հասկանալի են և հականշային շարքում կայուն են՝ նամուսավ-**բէյնամուս**՝ թյուրք. binamus «անամոթ, անպատկառ, անպատիվ», **ջուռա**³⁵-**բէջուռա** «տգեղ, այլանդակ», **խաբար-բէխաբար** պրսկ. bexabar/be-haber/ «անտեղյակ», **բէփավ-բէքէփ/բէքեֆ** «տխուր, անտրամադիր», **բէքէփ անել** «տրամադրությունը գցել», բէքէփանալ «տխրել, տրամադրությունը գցել», բէքյեփըցնել «վշտացնել», բէքյեփօթուն «անտրամադիր վիճակ»³⁶:

Այս փոխառությունները ուշ են անցնել բարբառախմբին և շուտ էլ դուրս են մնում՝ իրենց տեղը զիջելով հատկապես գրական տարբերակներին: Այդ երևույթը հաստատվում է նաև այլ տվյալներով. «Նկատի ունենալով, որ այդ բարբառների մեջ թուրք-թաթարերեն բառերն ընկել են անմիջական ճանապարհով, մենք կարող ենք որոշել, թե այդ բարբառների տեղաշարժի հատկությունը ո՞ր ժամանակվանից է սկսել կորչել: Թուրք-թաթարական հետևյալ բառերը, որոնք բառասկզբին ձայնեղ ունեն, այդ բարբառներում մնում են ձայնեղ»³⁷: Ինչպես **բէ-**, այնպես էլ քիչ հանդիպող **բէդ** ժխտական ձևույթներով բառերում ձայնեղների տեղաշարժեր չեն նկատվում՝ **բէդոանգ/բէդըոանգ** «անգույն»-գունավոր, **բէդվէսկեր** «ոչ ոսկրոտ, ոչ հաստ բազուկներով»-վըսկըրօտ և այլն:

Բէ- ածանց ունեցող բառերին թե՛ քանակապես և թե՛ գործածությամբ զիջում են թյուրք. **Սիզլլսըզ**՝ **-siz** վերջածանցով կազմությունները: Սրանք աստիճանաբար դուրս են մղվում բառապաշարից: Սյունիքում գրեթե բացակայում են **-սիզ** ածանցով բառերը, իսկ Արցախում՝ հատկապես գյուղական վայրերում, այդպիսիք տակավին ճանաչվում են: Պատճառը հավանաբար հենց նույն ածանցի առկայությունն է, որ գիտակցել է տալիս

³⁵ Գործածական է «բազմազան, բազմատեսակ, տարբեր» իմաստներով: Կարծում ենք, որ **բէջուռա** բառի իմաստները առաջացել են «մի տեսակ, բոլորից տարբերվող» իմաստ-հասկացություններից:

³⁶ **Բի-** ածանցով գործածական **բիքնած, բիքյնըվել** «փքվել», **բիքնածօթուն** «փքված, շատ ուտելուց փքվելը»՝ **բիքյնօց, բիքյնըցնել** բառաձևերը, սակայն, չունեն հականիշ եզրեր:

³⁷ Ղարիբյան 1958, 284:

ծագումը: **-Սիզ** արմատով փոխառությունների քննությունից պարզ է դառնում, որ սրանց մեծ մասը հայերենին անցել է բավական ուշ՝ թյուրքերենի միջնորդությամբ, չնայած որոշ արմատներ վկայված են միջին հայերենում՝ առանց ժխտական ածանցի: **-Սիզ** ածանցով բառերից ոչ բոլորն են, որ բարբառախմբում ունեն նույնարմատ հականշային զույգերը: Ահա քննենք դրանցից որոշները.

Դինսըզ. din «հավատք, կրոն, դավանանք, հնազանդություն» և այլն +**siz** «անհավատ» կազմությունն է: Թյուրք. «պատիժ, տուգանք» իմաստները մասնակիորեն դրսևորված են **դինսըզ** բառում՝ ոչ միայն «անհավատ», այլև «անպատիժ մնացած», իսկ դրական ձևում՝ **դին**, գործածվում է հիշոցներում «կրոն, հավատք» նշանակությամբ՝ դինտ...: **Դինսըզ** բառին՝ ժխտական ածանցի ճանաչմամբ հակադրվում են **քրիստոնյա, հավատացյալ, կարքին** բառերը:

Իմանսըզ. արաբ. փոխառություն է արևելյան լեզուներում՝ առաջացած **إيمان /imân/** «հավատք» բառից: Տարածված է արևելյան լեզուներում՝ օսմ. **إيمان /imân/**, թրք. **iman. imansiz** անցել է թյուրք.՝ «1. անհավատ, անհոգի, 2. փխբ. անզգամ, անպատկառ» իմաստներով: **Իման** առանձին ձևով գործածական է հիշոցներում **դին** բառին զուգահեռ՝ այլազգիների անօրինականությունների մասին խոսելիս: Մյուս ձևերն ու իմաստները դուրս են մղվում բարբառախմբից: Լինելով **դինսըզ** բառին նույնանիշ՝ հականշային զույգ են կազմում **հավատացյալ, օրինավոր** և այս իմաստով այլ բառերի հետ:

Արսըզ, առսըզ, արսըզօթուն «1. անամոթություն, անպատկառություն, 2. դիմացկուն»։ ծագում է արաբերենից՝ **عيا /âr/** «1. մերկ, տկլոր, 2. ամոթ» բառից, որ վկայվում է օսմ. **عيا /âr/**, թյուրք. **ar**՝ «ամոթ»: Առանձին գործածություն ունի **առ**՝ որպես անեծք՝ չանչ անելով՝ **առ է**: **Արսըզ/առսըզ** բազմիմաստ բառ է «1. անհոգ, 2. անամոթ, անպատկառ, 3. Դիմացկուն»: Կարծում ենք, որ **առ**-ը ավելի վաղ է անցել հայերենին, պարսկերենից կամ քրդերենից. վկայվում է միջին հայերենում, Ամս. Ար. Թբ. Խտջ. Հմշ. Մեղ. և այլուր «ամոթ, պատկառանք» իմաստներով: Կան այլ կազմություններ՝ Ջվ. **Առ-աբուռ**, Ար. **Առ/ը/անել**, Սյ.-Արց. **առ հըմարել**: **Արսըզ/առսըզ, արսըզօթուն** բառերի հականիշ եզրերն են **թուլ, թուլություն, իրէսին ճիրավ, համութավ**:

Սիզլլսըզ ժխտական իմաստով ածանց կրող բառերի մեծ մասը կազմում է հականուններ, ինչպես՝ **դոսըզ-օրինավոր, ճըշտավէր, թայսըզ** «զույգը կորցրած, առանց զույգի»-**զույգավ, թայավ, խոյսըզ**³⁸, **խօյսըզ, քոյսըզ, քոյսըզ** «անտաշ, կոպիտ, բռի»-**կըրթը տէղը, հինըրսըզ/հընըրսըզ**

³⁸ Հավանաբար **սըզ**-ը կցված է ոուսերեն բառին:

«անճարակ, անհմուտ, պարզամիտ»-աշպուտ, **ճարպիկ, մուրվաթսրզ/ մըր-վաթսրզ** «անխիղճ»-խըխճավ, **չըլմսրզ, ջանսրզ, ջանսը-գոթուն** «վտիտ, փոքրիկ, տկար» **ածղ/լ/ահա, յէքա, անտաշ քէրծ, սոն-գսրզ, սոնգսուզ** «չբեր»-խօխա **պիրօղ, վախսրզ, բէյվախտ** «անժամանակ»-սըհաթին, **ժամանակին, վախտին:**

Հականշային շարքերում պատահում են նաև **-նի||-նը||-նա** օտար ածանցով բառեր, որոնցում, սակայն, ածանցը մթագնած է՝ հավանաբար արմատի ինքնուրույն գործածության բացակայության պայմաններում, ուստի և նույնարմատ զուգահեռները գրեթե բացակայում են, ինչպես՝ **հանգիստ-նիգարան** «անհանգիստ», **նըհախ** «ապարոյուն»-տէղին, **նաչար, նըչըրօթուն** «անզոր, անզորություն»-**աշպուտ, նըքութօթուն** «թմրություն»-**ուրախ (տուրուր կյալը), նամարդ-մըրթըվարի** և այլն:

Այսքանով չեն սահմանափակվում ժխտական ածանցներով կազմված հականիշները: Կան այլ կազմություններ, որոնք յուրահատուկ հականշություն են ձևավորում բարբառային բառապաշարում՝ առաջ բերելով խոսակցական ոճին բնորոշ նոր հասկացություններ, ոճական գործառույթներ՝ ծանրաբեռնված հնչյունական, բառակազմական, իմաստաբանական, քերականական և շարահյուսական տարբեր հատկանիշներով:

Գրականություն

- Աճառյան Հր. 1971-1979, Հայերեն արմատական բառարան (4 հատորով, 2-րդ հրատարակություն), հ. 1, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.» (1-ին հրատարակությունը՝ 1926-1935, 7 հատորով), 700 էջ:
- Առաքելյան Վ.Դ., Խաչատրյան Ա.Հ., Էլոյան Ս.Ա. 1979, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1 (Հնչյունաբանություն և բառագիտություն), Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.», 488 էջ:
- Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1979-1981, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836-1837, 2-րդ հրատ. (2 հատորով), հ. 1, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.», 1142 էջ:
- Բախշինյան Մ., Բիանջյան Հ., Ղազարյան Լ., Մելիքյան Գ. 2011, Պարսկերենի դասագիրք, Երևան, «ԻԿԿ հրատ.», 286 էջ:
- Բակունց Ա. 1986, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 671 էջ:
- Բաղդասարյան-Թափալցյան Ս. 1972, Ածանցները և ածանցական օրինաչափությունները Արարատյան բարբառում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 10, Երևան, 84-95 էջ:
- Էլոյան Ս. 1959, Ժամանակակից հայերենի ածանցների առաջացման ուղիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, N 4, Երևան, 46-68 էջ:

- Խանգադյան Ս. 1966, Մատյան եղելությանց, Երևան, «Հայաստան» հրատ., 225 էջ:
- Խաչատրյան Լ. 1985, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, «Լույս», 138 էջ:
- Խլղաթյան Ֆ. 1976, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երևան, «Լույս», 110 էջ:
- Համբարձումյան Վ. 2012, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Երևան, «Գիտություն», 224 էջ:
- Հովհաննիսյան Լ. 1990, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, «Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.», 304 էջ:
- Ղարիբյան Ա. 1958, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, 240-266 էջ:
- Մարգարյան Ա. 1975, Գորիսի բարբառը, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.», 565 էջ:
- Մարգարյան Ա. 1993, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.», 232 էջ:
- Մկրտչյան Ռ. 1972, Բարդ բառերի դասակարգումը հայերենում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, 100-106 էջ:
- Մկրտչյան Ռ. 1977, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, N 4, Երևան, 77-158 էջ:
- Մուրվալյան Ա. 1955, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, «Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.», 435 էջ:
- Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.», 748 էջ:
- Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, «Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.», 319 էջ:
- Аганин Р. 1959, Повторы и однородные сочетания в современном турецком языке, Москва, "Изд. восточной литературы", 145 с.

**ՀԱՎԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԾԱՆՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՆՈՒՅՆԱՐՄԱՏ ԵՎ ՏԱՐԱՐՄԱՏ ԲԱՌԵՐՈՒՄ
(ըստ Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի. համաժամանակյա և
տարաժամանակյա քննություն)**

Մհեր Քումունց

Ինչպես գեղարվեստական խոսքում, այնպես էլ կենդանի խոսակցական լեզվում հականիշ բառախմբերն ունեն բառային, քերականական և ոճական տարբեր առանձնահատկություններ:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում հիմնականում տարածված են **ան, բէ||բէյ||բէդ, նա||նը, չ** ածանցները, որոնցից առավելապես գործուն է **ան**-ը:

Բարբառային խմբում **ան**- ածանցով հականիշներ կարող են կազմվել՝

ա) գրաբարյան ձևերից, բ) փոխառություններից, գ) բարբառային բառերից: Այս բարբառային տարածքի բառապաշարին անցել են նաև փոխառյալ ածանցներ **բէ-/բէյ-**՝ **աբուռավ-բի/է/աբուռ, քէփը տեղը-բէբէփ/Ֆ/, խաբար-բէխաբար, և սիզ||սըզ՝ -siz** վերջաձևացով կազմությունները՝ **հայսըզ, արսըզ, իմանսըզ** և այլն:

Այսպիսով՝ տարբեր ածանցների միջոցով հարստացել են ոչ միայն Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի հականշային շարքերը, այլև բառային կազմը:

Բանալի բառեր՝ Սյունիք-Արցախ, բարբառ, բառապաշար, ածանց, հականիշ, փոխառություն, գրաբար:

**СУФФИКСНЫЕ СРЕДСТВА ОБРАЗОВАНИЯ АНТОНИМОВ В
ОДНОКОРЕННЫХ И РАЗНОКОРЕННЫХ СЛОВАХ
(на основе Сюникско-арцахской диалектной лексики:
синхроническое и диахроническое исследование)**

Мгер Кумунц

Как в художественной речи, так и в разговорном языке антонимы имеют различные словарные, грамматические и стилистические оттенки.

В Сюникско-арцахском диалекте особо распространены суффиксы **ан-, бе-||бей-||бед-, на-||ны-, ч-** (**ան, բէ||բէյ||բէդ, նա||նը, չ**), однако наиболее активным является суффикс **ан-(ան-)**.

В данной диалектной группе антонимы с суффиксом **ан-(ան-)** могут быть образованы от **а. древнеармянских (грабар), б. заимствованных, в. диалектных слов.**

В Сюникско-арцахском диалекте используются также заимствованные суффиксы – **бе-||бей-(բէ-||բէյ-):** **абурав-би/е/абур** (**աբուռավբի/է/աբուռ**), **кеп/ф/ы техы-бекеп/ф/** (**քէփը տեղը-բէբէփ/ Ֆ/**), **хабар-бехабар** (**խաբար-բէխաբար**), **-сиз||-сыз (-սիզ||-սըզ):** **айасыз (հայսըզ), арсыз (արսըզ), имансыз (իմանսըզ)** и т.д.

Ключевые слова – Сюник-Арцах, диалект, лексика, производная, антоним, заимствование, грабар.

AFFIXAL MEANS OF FORMING ANTONYMS IN WORDS OF THE SAME AND DIFFERENT ROOTS

(according to Syunik-Artsakh dialectal vocabulary: synchronous and asynchronous examination)

Mher Kumunts

The same way as in artistic speech, also in spoken language antonymous word groups have vocabulary, grammatical and stylistic different peculiarities.

In vocabulary of dialectal area Syunik-Artsakh are mainly spread **an-**, **be-** ||**bei-**||**bed-**, **na-**||**ny-**, **ch-** (**ան-**, **բէ-**||**բէյ**||**բէդ-**, **նա-**||**նը-**, **չ-**) affixes, most of which the **an-** (**ան-**) is in use.

In dialectal group antonyms with affix **an-** can be formed **a/ from old Armenian forms (grabar)**, **b/ from loans**, **c/ from dialectal words**.

To vocabulary of Syunik-Artsakh dialectal area passed also loaned affixes **be-**||**bei-** (**բէ-**||**բէյ-**): **aburav-bi-/e-/abur** (**աբրուավ-բի/է/աբրու**), **qepy texy-beqep /f/** (**քէփը տեղը-բէքէփ/ֆ/**), **khavar-bekhabar** (**խաբար-բէխաբար**), and forms with **siz-**||**syz-** (**-սիզ**||**-սըզ**) suffix: **hayasyz** (**հայա-սըզ**), **arsyz** (**արսըզ**), **imansyz** (**իմանսըզ**), etc. So, through different affixes enriched not only anonymous ranges of Syunik-Artsakh area vocabulary, but also word forms.

Key words – Syunik-Artsakh, dialect, vocabulary, derivative, antecedent, loan words, Grabar.

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արևհատ Խաչատրյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
Տերյան 105, 0009 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ arevik.54@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 28.02.2019, գրախոսվել է 03.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Այսօր, երբ հիմնարար գիտությունների, տեխնիկական, տեխնոլոգիական առաջընթացն աննախադեպ տեմպեր ունի, երբ գիտնականների իսկ հավաստմամբ արհեստական ինտելեկտը համարյա կայացած փաստ է, մարդու և մարդկության առաջ բացվում են գոյության, ներանձնական, սոցիալական, բարոյական, բարոյագիտական (էթիկական) և գեղագիտական (էսթետիկական) խնդիրների ահռելի ծավալներ: Փոխվում են կյանքի, ինքնագիտակցության արագությունները, ժամանակի ու տարածության զգացողությունը, լեզուն՝ որպես մեր կարևորագույն արտահայտչամիջոց, անհատի (ինդիվիդի) ու հասարակության (սոցիումի) փոխհարաբերությունների սահմանները: Մի կողմից կարելի է ասել, որ այս ձևակերպումներն իրավացի են բոլոր ժամանակների համար, բայց մյուս կողմից՝ վերոհիշյալ խնդիրներն այսօր առանձնահատուկ ուժգնությամբ են առաջ գալիս: Մարդը, մարդկությունը, հասարակությունները ստանում են խաղի նոր կանոններ շատ ավելի արագ, քան հասցնում են գիտակցել ձևավորվող նոր իրականությունը:

Ո՞վ է XXI դարի մարդն իր գերկարող հնարավորություններով, ո՞վ և ի՞նչ սկզբունքներով է որոշելու սահմանը, որը մենք չենք կարող, չպիտի անցնենք: Չնայած այդ գերկարող հնարավորությունների՝ ինչպե՞ս են վերածնակերպում մարդկության հարաբերությունները շրջապատող աշխարհի, միջավայրի հետ: Սրանք հարցեր են, որոնց կոչված են պատասխանելու հումանիտար գիտությունները, պատահական չէ հումանիտար՝ *մարդկային* բառը գիտությունների այս խմբի անվանման մեջ: Ինչպես շատ ամփոփ ձևակերպում է հայտնի լեզվաբան, փիլիսոփա Միխայիլ Էպշտեյնը, հումանիտար գիտություններն ուսումնասիրում են հենց իրեն՝ ուսումնասիրողին, ձևակերպում են տալիս հենց իրեն՝ ձևակերպողին¹:

¹ Эпштейн 2016, 15.

Սակայն հումանիտար գիտություններն այսօր ապրում են ոչ այնքան լավ ժամանակներ: Միջազգային գիտական շրջանակներում ավելի ու ավելի հաճախ է խոսվում ոլորտի ճգնաժամի մասին: Այսպես՝ Մ. Էպշտեյնն իր «Գիտելիքից դեպի ստեղծագործություն: Ինչպես կարող են հումանիտար գիտությունները փոխել աշխարհը» գրքում անդրադառնում է այդ ճգնաժամին՝ նշելով, որ հումանիտար գիտությունները մեղադրվում են նրանում, որ դրանք իբրև չեն տալիս ոչ մի գործնական օգուտ, որ կտրվել են ժամանակակից կյանքից, տնտեսական ու տեխնոլոգիական առաջընթացից, չնայած նրան, որ հումանիտար կրթությունը շարունակում է մեծ դեր խաղալ հասարակական կյանքում: Հեղինակը բերում է դա հավաստող վիճակագրություն, այսպես՝ ամերիկյան խոշոր ընկերությունների ղեկավարների 60%-ը (652 հարցվածներից) ունի հումանիտար կրթություն, Մեծ Բրիտանիայում պառլամենտի 650 անդամների 65%-ը նույնպես ստացել է հումանիտար կրթություն: Կա նաև ոչ հուսադրող վիճակագրություն: ...2010 թ. ԱՄՆ-ում գիտական ուսումնասիրությունների համար նախատեսված ֆեդերալ միջոցների միայն 0,45%-ն է հատկացվել հումանիտար գիտություններին: 2007-2013 թթ. ընկած ժամանակահատվածում Եվրոպական հանձնաժողովի՝ գիտությունները ֆինանսավորելու համար նախատեսված միջոցների միայն 1,06%-ն է ծախսվել սոցիալական և հումանիտար գիտությունների վրա (55.6 միլիարդ ֆունտ ստեռլինգից): Այս բոլոր թվերը կարող են միայն անուղակիորեն արտահայտել այն ցավն ու հիասթափությունը, որ զգում են հումանիտար ոլորտի ներկայացուցիչները՝ իրենց մասնագիտությունների, իրենց կոչման հանդեպ աճող անտարբերության և նույնիսկ ամբարտավան վերաբերմունքի պայմաններում²:

Սխեմատիկ բևեռային այս տարանջատումը՝ կարևորի և ոչ այնքան, իր զուգահեռներն ունի *գիտություն և մշակույթ* հակադրության մեջ: Իբրև թե առաջինը, կենսական նշանակություն ունենալով, լուրջ խնդիրներ է լուծում, մինչդեռ երկրորդը զուտ գեղագիտական, նույնիսկ դեկորատիվ առաքելություն ունի: Սա, անշուշտ, խիստ մակերեսային հայացք է ոչ միայն մշակույթին, այլև մարդկային էությանն առհասարակ:

Արդարև, մշակույթն ու գիտությունը մարդու գոյության և կենսագործունեության լիարժեք կողմերն են, որոնք անփոխարինելիորեն լրացնում են միմյանց: Ալբերտ Էյնշտեյնը, որ իր ամբողջ կյանքում ջութակ էր նվագում և իր երկու կրքի՝ երաժշտության և ֆիզիկայի մասին ասում էր, թե դրանք սկիզբ են առնում մի աղբյուրից ու լրացնում են մեկմեկու, կարծում է, որ երևակայությունն առավել կարևոր է, քան գիտելիքը: Իգուր չէ կոզնիտիվ ոլորտի՝ աշխարհի առաջավոր գիտնականներից մեկը՝ Տաոյանա Չերնի-

² Эпштейн 2016, 17.

գովակայան, էյնշտեյնի հարաբերականության տեսությունն անվանում արվեստի ստեղծագործություն: Նա ասում է, որ արվեստը, ցավոք, հաճախ ընկալվում է որպես աղանդեր, որը կարելի է կամ ըմբռնել հիմնական ուսեստից՝ գիտությունից հետո, կամ՝ ոչ: Այնինչ, հիշեցնում է գիտնականը, արվեստն ու մշակույթը մարդու կենսագործունեության, աշխարհաճանաչման ուրիշ՝ գիտությունից տարբեր լիարժեք ձևեր են: Որպես օրինակ՝ S. Չերնիգովսկայան բերում է իմպրեսիոնիստներին, որոնք, ըստ նրա, մարդու տեսողության մասին այնպիսի բացահայտումներ տվեցին աշխարհին, որոնց գիտությունը պիտի հասներ երկար տասնամյակներ անց միայն³:

Գրականագետ, մշակութաբան Յուրի Լոտմանը շատ դիպուկ է ձևակերպում երկու ոլորտների նշանակությունն ու փոխկապակցվածությունը: «Մշակույթն ու գիտությունը մարդկային կուլտուրայի երկու աչքը լինեն կարծես: Հենց նրանց տարբերությունն ու իրավահավասարությունն են ապահովում մեր գիտելիքի ամբողջականությունը: Մշակույթը չի կարելի համարել զվարճանքի կամ բարոյական վերամբարձ մտքերի՝ համոզիչ պատկերազարդումների (իլյուստրացիաների) ոլորտ: Մշակույթը մտածելակերպ է, առանց որի մարդկային գիտակցությունը գոյություն չունի, ինչպես գոյություն չունի գիտակցություն մեկ կիսագնդով»⁴:

Եվ նրանք, ովքեր XXI դարում գիտատեխնիկական ու սոցիալական ոլորտներում հեղափոխական թռիչքների հեղինակներ են, իրենց գործով ու խոսքով գալիս են ապացուցելու մշակույթի ու հումանիտար գիտությունների հիմնարար և առանց նախապայմանների դերը: ««Միայն տեխնոլոգիան բավարար չէ», – «Apple» ընկերությունն առաջնորդվում է այս սկզբունքով: - Մեր տեխնոլոգիան ձուլված է ազատ արվեստներին, հումանիտար գիտություններին, այստեղից էլ արդյունքը, որ երգել է տալիս մեր սրտերը»⁵: Սրանք «Apple» ընկերության հիմնադիր Ստիվ Ջոբսի խոսքերն են, որը շրջադարձային կերպով փոխեց աշխարհի, ընդհուպ մեր կենցաղի տեխնիկական ու տեխնոլոգիական դեմքը:

XXI դարի, կարելի է ասել, խորհրդանշական մարդկանցից մեկը դարձած «Facebook» համաշխարհային սոցիալական ցանցի հիմնադիր Մարկ Յուկենբերգը, որը, ի դեպ, դպրոցական տարիներին հին հունարեն է ուսումնասիրել, իսկ համալսարանում՝ հոգեբանություն, հավաստում է,

³ Черниговская Т. Искусство и мозг, программа "Правила жизни", телеканал "Культура", эфир от 26.04.2016. http://tvkultura.ru/video/show/brand_id/57402/episode_id/1467542/.

⁴ Лотман 2005, 400.

⁵ Carmody Wired. Aug. 29, 2011.

որ «Facebook»-ը որչափ տեխնոլոգիա է, նույնչափ էլ հոգեբանություն է ու սոցիոլոգիա⁶:

Ցանկացած գործունեություն, անկախ նրանից, թե ինչ ոլորտում է իրականացվում և ինչ կոնկրետ խնդիրներ է կոչված լուծելու, պետք է ունենա մարդուն և մարդկային հասարակությանը ծառայելու հիմնարար նպատակ: Հումանիտար գիտություններն օգնում են գիտակցել, հասկանալ այդ նպատակի անխուսափելի կարևորությունը: Ահա ինչ է գրում արվեստագիտության թեկնածու Արսեն Ռ. Առաքելյանը. «Դեռևս միջուկային ռմբակոծությունից ուշքի չեկած Ճապոնիան պարտադրված էր 1945 թվականին վերականգնելու քայքայված տնտեսությունը: Ի թիվս այլ միջոցների՝ կառավարության որոշումով միջնակարգ դպրոցներում կատարվեց ծրագրային փոփոխություն. առարկաների ժամերը կտրուկ ավելացան (գրականություն, երաժշտություն և գեղանկարչություն): Տեղի ունեցավ «ճապոնական հրաշքը»՝ տեխնիկայի, նորագույն տեխնոլոգիաների զարգացման, տնտեսական վերելքի և առաջատար երկրների շարքում հայտնվելու իսկապես անհավատալի երևույթը»:

Եթե ցանկացած ուղղվածության գիտական կամ այլ ծանրակշիռ գործունեություն իրականացվում է առանց հումանիտար այդ լիցքի գիտակցության, ապա նման գործունեության հետևանքները մարդկության համար կարող են անկանխատեսելի լինել: Նման մտահոգությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ա. Սարգսյանը գրում է. «Գիտությունն ու տեխնիկան մարդկանց երջանիկ դարձնելու միջոցներ չեն: Ամենազարգացած գիտության ու տեխնիկայի պայմաններում նույնիսկ մարդկության մեծ մասը շարունակում է մնալ դժբախտ: Ավելին, գիտությունն ու տեխնիկան դառնում են ամենավճճական գործոնները մարդկության հնարավոր ոչնչացման գործում: Դրանք հանուն մարդու բարեկեցության փոխարեն (ինչին կոչված են) սկսում են պայքարել մարդու դեմ, հումանիզմի միջոցից փոխարկվում են հակահումանիզմի»⁷: Այդ համոզմունքն ունի նաև Մարքս Բորնը, որը գրում է, որ ...սովորական պատերազմներում իդեալական զինվորն աչքի էր ընկնում ուժով, խիզախությամբ, պարտվածի նկատմամբ մեծահոգությամբ, անպաշտպանի նկատմամբ կարեկցանքով: Այս ամենից ոչինչ չի մնացել: Զանգվածային ոչնչացման զենքերը տեղ չեն թողնում բարոյական սահմանափակումների համար, և զինվորն իջնում է մարդասպան-տեխնոլոգի աստիճանի: Հնացել են հերոս զինվորի այն պատկերացումները, թե նա մարտադաշտում կովում և զոհվում է հանուն հայրենիքի, կնոջ և երեխաների, որովհետև շատ հավանական է, որ նրա կինն

⁶ Chase L. Mark Zuckerberg Speaks at BYU, Desert News. March 25, 2011.

⁷ Ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները և փիլիսոփայությունը 2016, 10:

ու երեխաներն ավելի շուտ դառնան ատոմային ռումբի զոհեր, քան ինքը, իսկ նրա հայրենիքը նմանվի լուսնի լանդշաֆտի⁸: Մարդու պատասխանատվությունը ամենախորին կերպով և համապարփակ գիտակցելու կոչ է անում նաև Տ. Չերնիգովսկայան: Նա ասում է, որ որքան մենք ավելի ենք խորանում բարձր տեխնոլոգիաների ոլորտում, այնքան ավելի ակնհայտ է դառնում, որ զուտ ինստրումենտալ, տեխնիկական չափանիշներով մեքենաներին չենք կարողանալու գերազանցել: Բայց, ընդգծում է գիտնականը, մտքի ինտուիտիվ, բարդ զուգորդումները, մտքի թռիչքն առհասարակ, որ երբեմն տրամաբանությանն անհասանելի միջոցներով չգիտես որտեղից և ինչպես ծնում են հանճարեղ բաներ, այս ամենը մարդուն դարձնում է անփոխարինելի այսօր և առնվազն տեսանելի ապագայում: Ու եթե մենք չունենանք հումանիտար ոլորտի գիտնականներ բառիս բուն իմաստով, որոնք ի վիճակի են գիտակցել այն ամենը, ինչ տեղի է ունենում, և հաստատել նուրբ համակարգային կապեր աշխարհի հետ, ապա մեր վերջը կգա⁹: Ռուս գիտնական, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Վլադիսլավ Լեկտորսկին, որ գերմարդուն բնութագրելու համար օգտագործում է «հետմարդ» եզրույթը, նույնպես մեծ անհանգստությանը է խոսում հնարավոր «հետմարդկային» հասարակության մասին: «...Չկա վստահություն, որ նորահայտ «գերմարդը» հիմնովին չի ոչնչացնի մարդկային հնարավորությունների, հասանելիի ու անհասանելիի, իրավունքների ու պարտականությունների այն մշակութային համակարգը, որը մարդուն մարդ է դարձնում: Եթե առաջ մարդիկ երազում էին ավելի մարդկային հասարակության մասին, ապա «հետմարդկանց» հասարակությունը լինելու է հակամարդկային: Իսկ եթե հնարավոր լիներ ավելի հեռու գնալ ու դարձնել «հետմարդկանց» անմահ, դա կունենար մի շարք ճակատագրական հետևանքներ, կվերանար նոր մարդկանց ծնվելու անհրաժեշտությունը, քանի որ «հետմարդկանց» որոշակի քանակություն բավարար կլիներ լուծելու այն խնդիրները, որոնք դրված կլինեն հասարակության առաջ: Միևնույն էակների անվերջ կյանքը նվազագույնի կհասցներ հասարակական ու մշակութային առաջընթացը (չնայած հազիվ թե նման անմարդկային հասարակությունում գոյություն ունենար մշակույթ)¹⁰:

Դարի մտահոգություններն առկա են նաև մեր գիտակրթական շրջանակներում: Մաթեմատիկոս, մանկավարժական գիտությունների դոկտոր Մ. Մկրտչյանը, խիստ կարևորելով համամարդկային մշակույթի և ստեղծագործական բաղադրիչի դերը **հանրակրթության խնդիրները ազգային գաղափարախոսության համալրեքսրում**, գրում է. «...Նախ կրթու-

⁸ Բորն 1978, 46, 99:

⁹ Черниговская Т. Без гуманитариев нам крышка!, сайт rosbalt.ru (06.02.2009).

¹⁰ Лекторский 2010, 30-34.

թյան բովանդակության կարևորագույն բաղադրիչը պետք է դարձնել համամարդկային մշակույթը: Առանց յուրացնելու այն, անհնար է արժեք ներկայացնող որևէ նորարարություն: Հաջորդ կարևորագույն բաղադրիչները պետք է լինեն ստեղծագործական ունակություններն ու կարողությունները»¹¹:

Այսօրվա սովորողը ապրում է գիտության ու տեխնիկայի և էՏՏ-ի բուռն զարգացող ժամանակաշրջանում: Մենք դեռ մանկուց պետք է սերմանենք, որ մարդը իր գոյությամբ, տվածով պիտանի լինի մարդկությանը, կյանքի առաջընթացին: Նման մարդու առկայությամբ է պայմանավորված այսօրվա և ապագայի գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային ոլորտների առաջընթացը: Իզուր չէ, որ գիտնականներն իրար երկրորդում են՝ ապացուցելով հումանիզմի բացարձակ կարևորությունը: «Անչափ մեծ է ու կարևոր կրթության և դաստիարակության դերն անհատի մարդկային որակների, մարդու տեսակի (համարձակ, արի, նախաձեռնող, ազատ, պատասխանատու, անկախ, նպատակասլաց), նրա աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման գործում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ժամանակակից հումանիզմի կողմնակիցները մեծ հույսեր են կապում նոր կրթության ու դաստիարակության հետ»¹², - գրում է Ա. Սարգսյանը:

Գիտության հնարավորություններն ու դեմքը մեծապես փոխվում են, և, ինչպես արդեն ասել ենք, սրընթաց են փոխվում, և դա փաստ է: «Գիտատեխնիկական և սոցիալական առաջընթացները պետք է համընկնեն: Եթե գիտատեխնիկականն առաջ է ընկնում սոցիալականից և չի փոխում սոցիալականի բնույթը, ապա կարող է դառնալ չարիք: Սոցիալական առաջադիմության բարոյահումանիստական ուղենիշներն են փրկելու քաղաքակրթությունն ու մարդկանց»¹³, - համոզված է Ա. Սարգսյանը:

Եզրակացություն

Այսպիսով, ակնհայտ է, որ հողվածում վերհանված խնդիրները չեն սահմանափակվում զուտ գիտական շրջանակներով: Ինչպես արդեն նշեցինք՝ այսօր աննախադեպ փոխվում են ոչ միայն գիտությունների դեմքն ու դերը, այլև հիմքային փոփոխություն է ապրում մարդը, և որպես դրանց հետևանք՝ հասարակությունները, մշակույթն ու առհասարակ քաղաքակրթական համակարգը: Եվ, անշուշտ, ակնհայտ է, որ այդ փոփոխություններն անխուսափելի են, և մեզանից է կախված, թե ինչ ուղղությամբ կըն-

¹¹ Մկրտչյան 2017, 20:

¹² Ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները և փիլիսոփայությունը 2016, 10:

¹³ Ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները և փիլիսոփայությունը 2016, 30:

թանան այդ զարգացումները, թե ինչ նպատակների կծառայեցնենք նոր մեծակարող հնարավորությունները, և ինչպիսին կլինի նոր մարդը: Թե ինչպիսին կլինի այդ մարդը, բառիս ոչ միայն անուղղակի, այլև բուն իմաստով, կախված է մեր ապագան: Հուսով ենք, որ այսօր և հետագայում հումանիտար գիտությունների առաքելությունն արդարացիորեն կկարևորվի, և կիրականացվի այն առավելագույնս, ու գիտության, նրա ցանկացած ճյուղի լիցքը կլինի հումանիտարը, կնշանակի՝ մարդկայինը:

Գրականություն

- Բորն Մ. 1978, Իմ կյանքն ու հայացքները, Երևան, «Հայաստան» հրատ., 213 էջ:
- Ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները և փիլիսոփայությունը, Երևան, «Գր. Տաթևացի հրատ.», 2016, 170 էջ:
- Կրթության ժամանակակից հիմնախնդիրները 2016, Երևան, «Մանկավարժ» հրատ., 240 էջ:
- Մկրտչյան Մ. 2017, ՀՀ հանրակրթության զարգացման հեռանկարները, «Մանկավարժություն» գիտամեթոդական հանդես, N 2, էջ 18-27:
- Лекторский В.А. 2010, Философия, общество знания и перспективы человека, "Вопросы философии", Москва, N 8, с. 30-34:
- Лотман Ю.М. 2005, Об искусстве, Санкт-Петербург, изд. "Искусство", 702 с.
- Черниговская Т. Без гуманитариев нам крышка!, сайт rosbalt.ru (06.02.2009).
- Черниговская Т. Искусство и мозг, программа "Правила жизни", телеканал "Культура", эфир от 26.04.2016. [http://tvkultura.ru/video/show/brand_id/57402/episode_id/1293906/video_id/1467542/\(06.02.2009\)](http://tvkultura.ru/video/show/brand_id/57402/episode_id/1293906/video_id/1467542/(06.02.2009)).
- Эпштейн М.Н. От знания - к творчеству. Как гуманитарные науки могут изменять мир, Москва-Санкт-Петербург, изд. "Центр гуманитарных инициатив", 2016, 480 с.
- Carmody T. "Without Jobs as CEO, Who speaks for the Arts at Apple?" Wired. Aug. 29, 2011.
- Chase L. Mark Zuckerberg Speaks at BYU, Desert News. March 25, 2011.

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արևիստ Խաչատրյան

Հումանիտար գիտությունները գիտական, տեխնիկական, տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացի պայմաններում, նոր հիմնարար խնդիրներ է դնում մարդկության առաջ: Ո՞վ է XXI դարի մարդն իր գերկարող հնարավորություններով, ո՞վ և ի՞նչ սկզբունքներով է որոշելու այն սահմանը, որը մենք չենք կարող և չպիտի անցնենք, չնայած այդ գերկարող հնարավորու-

թյունների, ինչպես են վերածնակրվում մարդկության հարաբերությունները շրջապատող աշխարհի, միջավայրի հետ: Յուրաքանչյուր գործունեություն, անկախ նրանից, թե ինչ ոլորտում է իրականացվում և ինչ կոնկրետ խնդիրներ է կոչված լուծելու, պետք է ունենա մարդուն և մարդկային հասարակությանը ծառայելու հիմնարար նպատակ: Հումանիտար գիտություններն օգնում են գիտակցել, հասկանալ այդ նպատակի անխուսափելի կարևորությունը:

Բանալի բառեր՝ հումանիտար գիտություններ, տեխնիկական առաջընթաց, տեխնոլոգիական առաջընթաց, մշակույթ, մարդկություն, հասարակություն, հումանիտար առաքելություն:

ГУМАНИТАРНАЯ МИССИЯ ГУМАНИТАРНЫХ НАУК

Ареват Хачатрян

Гуманитарные науки в условиях беспрецедентного научного, технического и технологического прогресса выдвигают новые фундаментальные проблемы перед человечеством. Кем является человек XXI века с его сверхвозможностями, где проходит та грань, которую мы не должны переступать, невзирая на эти сверхвозможности? Как меняются взаимоотношения человека с окружающим миром? Любая деятельность, независимо от того, в какой области она реализовывается и какие конкретные задачи призвана решать, должна быть направлена на служение человеку и человеческому обществу.

Ключевые слова – гуманитарные науки, технический прогресс, технологический прогресс, культура, человечество, общество, гуманитарная миссия.

HUMANITARIAN MISSION OF HUMANITIES

Arevhat Khachatryan

Human Sciences, in the face of unprecedented scientific, technical and technological advances, are posing new fundamental challenges to humankind. Who is the human being in the XXI century with his supercapacities, where does the borderline lie that should be not crossed, in spite of these supercapacities? How is human attitude towards the world changing? Every human activity, regardless the area it is implemented and specific objectives it is expected to address, should be aimed at serving humankind.

Key words – Human Sciences, technical progress, technological progress, culture, humankind, society, humanitarian mission.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄԱԴՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ (ՌԵԺԻՍՈՒՐԱ) ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶՆԻՎ ՀՐԱՉՅԱՆ՝ ԲԵՄԱԴՐԻՉ

Նաիրա Շահվալադյան

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, հայցորդ
Մարշալ Բաղրամյան պ., 24գ, 0019 Երևան, Հայաստան
Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան
Արամի 1, 0010 Երևան, Հայաստան
Էլ հասցե՝ naira.shahvaladyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 14.03.2018, գրախոսվել է 20.04.2018, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Հայ թատրոնի պատմության մեջ բեմադրիչը ստեղծագործողի դեր և ինքնուրույնություն է ձեռք բերել XIX դ. 90-ական թվականներից սկսած՝ մոտավորապես նույն շրջանում, ինչ Արևմուտքում և ռուսական բեմում: «Ռեժիսոր» բառի գործածությանը հանդիպում ենք նույն դարի 60-70-ական թթ. դերասանի ու բեմական գործչի՝ Գևորգ Չմշկյանի հիշատակարանում: Սա բեմադրական արվեստի ինքնուրույնացման սկիզբն է, երբ բեմադրիչը փորձը ղեկավարողի դերից դառնում էր հեղինակային մտահղացումը քննող ու բացատրող¹: Չմշկյանն այդ դերն է կատարել, անկախ նրանից, թե որքանով է ճիշտ ըմբռնվել նրա՝ որպես փորձը ղեկավարողի պահվածքը: Ռեժիսուրան՝ որպես բեմադրության ամբողջական կառույցի ստեղծում և գեղարվեստական մտահղացում, ձևավորվել է նույն 60-70-ական թթ. Գերմանիայում: Դա կապվում է Մայնինգենի դուքսի թատրոնի և ռեժիսոր, դերասան Լյուդվիգ Քրոնեգլի անվան հետ: Այստեղից է սկսվում անհատապաշտական թատրոնի և դերասանական ինքնակենտրոն խաղի մերժումը, և «անսամբլ» բառը, որ առկա է նաև Չմշկյանի գրառումներում, ձեռք է բերում նոր իմաստ՝ համախմբային խաղ: Դա ամենից առաջ նշանակել է մարդաշատ տեսարանների անհատականացում, երբ բեմում հայտնվող ամբոխն անդամ չէ, այլ կազմված է կոնկրետ մարդկանցից՝ անհատական բնավորության ու ներքին խնդիրների ակնարկներով: Բեմադրական այս սկզբունքն է կիրառել նաև Անդրե Անտուանը Փարիզում բացված իր թատրոնում, որ կոչվել է «Ազատ թատրոն» (1887-1894 թթ.): Նա իր բեմադրություններով մերժել է ավանդական ռոմանտիկական թատրոն-

¹ Հմմտ. Չմշկյան 1953, 21:

նի բոլոր ձևերը: Բեմադրել է ժամանակակից հեղինակների պիեսներ սիրող դերասաններով, մանրամասնորեն մշակել զանգվածային տեսարանները, ձգտել բացարձակ հոգեբանական ճշմարտության, հասել նատուրալիզմի: Բայց կարևորն այդ չէ, այլ այն, որ ինքնակենտրոն խաղի փոխարեն ձևավորել է նոր տիպի՝ համախմբային (անսամբլային) թատրոն: Ֆրանսիական «Ազատ թատրոնի» օրինակով Բեռլինում Օտտո Բրահմը ստեղծել է «Ազատ բեմը» (1889-1892 թթ.)՝ պրոֆեսիոնալ դերասաններով: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները², հայ թատրոնն անմասն չի մնացել այս նորարարական շարժումից: Մայնինգենյան թատրոնը շրջագայել է եվրոպական բոլոր մայրաքաղաքներում, 1885 և 1890 թթ. եղել է Պետերբուրգում ու Մոսկվայում և իր որոշիչ ազդեցությունն է ունեցել ռուս թատրոնի գործիչների, մասնավորապես Կոնստանտին Ստանիսլավսկու վրա: Նրանց շարքում է եղել Մոսկվայի Կորշի թատրոնի դերասան Գևորգ Պետրոսյանը, որին հաջորդ տարի՝ 1891-ի սեպտեմբերին տեսնում ենք Թիֆլիսի Հայոց դրամատիկական ակումբի ժողովում, որտեղ հանդես է եկել ծրագրային ելույթով, այն է՝ համախմբել արևմտահայ և արևելահայ դերասանական ուժերը, կազմել նոր խաղացանկ դասական ու արդիական պիեսներից և հիմնովին նորոգել թատրոնի ստեղծագործական դիմագիծը³:

Ռեժիսուրայի ինքնուրույնացումը հայ թատրոնում և Ազնիվ Հրաչյան

1890-ականներից է սկսվում ռեժիսուրայի ինքնուրույնացումը նաև հայ թատրոնում: Նորագույն թատրոնի գաղափարակիրը դարձել է Գևորգ Պետրոսյանը: 1891 թ. Թիֆլիսի Արքունական թատրոնում Գևորգ Պետրոսյանը բեմադրել է Խորեն Գալֆայանի «Արշակ Երկրորդ» պիեսը: Բեմադրության մասին հոդվածներից երևում է, որ մեծ ուշադրություն է դարձվել մասսայական տեսարաններին: «Արձագանք» թերթը գրում է. «Բեմ կը դուրս գան աւելի քան 100 մարդ. խմբական երգերի վրայ ևս առանձին ուշադրութիւն է դարձրած»⁴: Կամ՝ «Հիանալի էին մի քանի տեսարաններ, մանավանդ առաջին և չորրորդ արարվածների մեջ, նույնպես գեղեցիկ էին կարգադրուած Շապուհի յաղթական մուտքը և Արշակի որսի տեսարանները»⁵: Մշակը գրում է. «...և զորք բեմի վրա, և քրմապետներ իրանց կրակներով, և խորական երգեցողութիւն, և օրկէստրի նուագածութիւն...»⁶: 1892 թ. Գևորգ Պետրոսյանը բեմադրել է Իբսենի «Դոկտոր Շտոկմանը», որտեղ ամբոխային տեսարանում աղմուկը կառավարել է խմբավարի

² Տե՛ս Հովհաննիսյան 2010, 662-667:

³ Հարությունյան 1980, 342:

⁴ Արձագանք 1891, N 38, 2:

⁵ Արձագանք 1891, N 39, 1-2:

⁶ Մշակ 1891, N 128, 2:

պես: Հովհաննես Հովհաննիսյանը այս ներկայացման մասին թատերախոսականում⁷ պատմում է, որ չորրորդ գործողության մեջ Շտոկմանի՝ ամբոխի հետ խոսելու տեսարանում Պետրոսյանը ռեպլիկներն այնպես է կարգավորել, որ աղմուկի մեջ լսելի են եղել: Այսինքն, մի պահ նա լռեցրել է բոլորին, հնչել է ռեպլիկը, այնուհետև աղմուկը շարունակվել է: Վայրկյանի ճշգրտությամբ է սա արվել, եղել տպավորիչ և ժամանակին բարձր է գնահատվել՝ իբրև ռեժիսորական մտածողություն:

Գևորգ Պետրոսյանը ծանոթ էր և՛ ռուսական թատերական արվեստին, և՛ լավ է իմացել ազգայինը: Նա Ազնիվ Հրաչյային տեսել է բեմում, խաղացել նրա բեմադրություններում (Բաբկեն Հարությունյանի «19-20-րդ դարերի հայ թատրոնի տարեգրության» մեջ կա նշում, որ 1897 թ. Գ. Պետրոսյանը և Ա. Հրաչյան նույն ժամանակամիջոցում աշխատել են Բաքվի թատերախմբում՝ որպես ռեժիսորներ): Դժվար է խոսել անմիջական ազդեցության մասին, բայց նկատում ենք, որ դերասանուհու ստեղծագործական սկզբունքները Պետրոսյանը զարգացրել է իր բեմադրական արվեստում: Հրաչյան հետևել է փարիզյան թատերական քննադատությանը և ծանոթ է եղել Անտուանի գաղափարներին ու բեմադրական սկզբունքներին: Նա դեմ է եղել անհատապաշտական թատրոնին, արտաքին խաղին և իր հուշերում գրում է. «Ժամանակն է «էֆեկտներու» դպրոցը կործանելու»⁸:

Որպես դերասանուհի և թատերական գործիչ՝ Ազնիվ Հրաչյան առանձնահատուկ տեղ ունի XIX դ. հայ պրոֆեսիոնալ թատրոնի պատմության մեջ: Դերասանուհին, որ նաև բեմադրություններ է իրականացրել, եղել դերուսույց, մշտապես անհանգստացել է հայ թատրոնի ապագայով: Ժամանակ առ ժամանակ թատերախմբեր կազմելու և ղեկավարելու ձիրքը, հասարակության սպասելիքները, թատերական ասպարեզից նրա դուրս չմնալու ցանկությունը Հրաչյային մղել են ստեղծագործական նոր ասպարեզ: Նա եղել է այն դերասանուհիներից, որոնք, հեռանալով բեմից, չեն լքել թատրոնը:

Անցնելով մասնագիտությանը հատուկ դժվարությունների միջով՝ ճանաչված և հարգանք վայելող դերասանուհին, ստեղծագործական կյանքի հատուն շրջանում, երբ արդեն առողջական խնդիրներ է ունեցել (ձայնալարերի բորբոքում) և ստիպված է եղել բեմ չբարձրանալ, իրեն թատերական աշխարհից դուրս չի պատկերացրել: Եվ երբ առողջությունը թույլ է տվել, թեկուզ և փոքր դերով հանդես գալու, առիթը բաց չի թողել: Մամուլում կարդում ենք, որ արտիստուհին իր բեմադրած ներկայացման մեջ՝ 1902 թ., հանդես է եկել անխոս դերով⁹: Նրա խաղը բարձր է գնահատ-

⁷ Հովհաննիսյան 1965, 268: Հմմտ. նաև Հովհաննիսյան 2010, 664:

⁸ Ազնիվ Հրաչյա 1909, 119:

⁹ Մասիս 1902, N 26, 1:

վել, «...նավթահորերու երկրի մեջ, թատերական կյանքի վերջին նորությունը» համարվել: Հասկանալի է, որ նա անխոս դերի է դիմել ձայնի պատճառով: Բայց այն, որ ներշնչել է հանդիսատեսին անխոս և փոքր դերով, խոսում է ոչ միայն դերասանական վարպետության, այլև առանց խոսքի խաղային իրադրություն ստեղծելու Հրաչյայի ռեժիսորական հմտության մասին: Գլխավոր դերերի դերասանուհու՝ փոքր դերով հանդես գալն արտասովոր է եղել: Նորություն էր նաև փոքր դերը ամբողջական և մշակված ներկայացնելը: «Փոքր դերը» նույնքան մեծ է, որքան «մեծը», նրա կյանքը դրսում է, նա գալիս է մեծ կյանքից¹⁰:

Արմեն Արմենյանն իր հուշերում գրում է. «Պատահում էր երբեմն նույնիսկ, որ չնայած անկողնում հիվանդ պառկած լինելուն, ոգևորության մեջ, կարծես ուզենալով գործնականորեն ապացուցել իր ասածը, վեր էր ցատկում անկողնուց և գիշերային շապիկով, առանց ուշք դարձնելու իր կիսամերկությունը և տկարությունը, կանգնում էր սենյակի մեջտեղը ու մի ամբողջ տեսարան ներկայացնում այնպիսի հուզմունքով, որ ես նույնպես ամեն ինչ մոռացած, տեսնում էի ուղղակի նրան «բեմի վրա»: Ավա՜ղ, սակայն, խրոնիկական հեղձուցիչ հազը չէր թողնում նրան երկար շարունակել, և նա, գրեթե ուժասպառ, կրկին ընկնում էր անկողին: Քիչ հանդարտվելուց հետո կիսաձայն ասում էր. - Հիմա, ըստ տեսնեմ քու կարծիքը»¹¹:

Արուս Ոսկանյանը պատմում է. «Երբեմն էլ պատահում էր, որ բեմ դուրս գալու կարոտը այրում էր նրան, բայց ի զուր, ձայնը, կոկորդը արգելք էին... և նյարդայնանում էր, դառնում դյուրաբորբոք, քմահաճ...»¹²:

Դերասանների հետ աշխատելու ունակությունն ու թատերական միջավայրի կարոտն են դերասանուհուն ռեժիսորության մղել: Արուս Ոսկանյանի մայրը՝ Ա. Դարբասյանը, գրում է, որ Հրաչյան «աչքի ընկնող դեր է կատարում ժամանակի կուլտուրական կյանքում»¹³: «Բաքվում բարեգործական նպատակով կազմակերպված ոչ մի ներկայացում կամ երեկոյթ առանց տիկին Հրաչյայի ակտիվ մասնակցության կամ ղեկավարության տեղի չէր ունենում... Հիվանդության պատճառով թեև թողել էր բեմը, բայց անդադար զբաղվում էր նրա գործերով ու հոգսերով, հետևում էր երիտասարդ դերասանների աճին, խորհուրդներ տալիս և եթե կարիք էր զգացվում՝ պարապում նրանց հետ»¹⁴:

Ազնիվ Հրաչյայի դերը հայ թատրոնում կարևորել է Արմեն Արմենյանը: «60 տարի հայ բեմի վրա» իր գրքի ծանոթագրություններում, Հրաչյա-

¹⁰ Հմտ. Հովհաննիսյան 2002, 144-145:

¹¹ Արմենյան 1954, 79:

¹² Ոսկանյան 1935, թիվ 11:

¹³ Դարբասյան 1955, 113:

¹⁴ Դարբասյան 1955, 105:

յի անվան դիմաց, նա գրում է. «հռչակավոր դերասանուհի և ռեժիսոր, Արուս Ոսկանյանի նման շատ տաղանդավոր երիտասարդ դերասանների ուսուցչուհի»: Այս փաստն ուշագրավ է նրանով, որ իբրև բեմադրիչ, հստակ պատկերացնելով ռեժիսորի աշխատանքի բնույթը, Արմենյանը Հրաչյային համարել է նաև ռեժիսոր, ոչ թե դերուսույց կամ ներկայացումները ղեկավարող:

Դերասանուհու ռեժիսորական ունակությունների մասին գրում է Արուս Ոսկանյանը. «Հրաչյան ուներ ռեժիսորական մեծ տաղանդ: Իր ժամանակի թատրոնը հովանավորող հարուստները չգնահատեցին նրա այդ կարողությունը: Նա ուներ լուրջ թատրոնի կազմակերպության խոշոր հասկացողություն, միժատունները չլսեցին նրա խոսքը ծրագրային աշխատանքի, թատրոնական ուժեր հասցնելու մասին...»¹⁵:

Թվենք նրա բեմադրությունները ժամանակագրական կարգով՝ 1897 թ. Թաղիկի թատրոնում՝ «200000», «Հոգով աղքատներ», «Դոն Գրիգորիո», «Մկնիկ», «Կամելիազարդ կինը», 1903 թ. Բաքվի ժողովարանում՝ «Ճշմարտության պահապանը կամ գաղափարի մարդը», Թաղիկի թատրոնում՝ «Զոքանջ», 1906 թ. Թաղիկի թատրոնում՝ «Ժայռ», Բաքվի ժողովարանում՝ «Մարդկության բարերարներ», 1907 թ. Բաքվի ժողովարանում՝ «Եսի մարդը», «Տաղտկալի աշխարհ», Նիկիտինների կրկես-թատրոնում՝ «Ախտավորներ», «Շուշանիկ», «Թանկագին համբույր», 1911 թ. Բաքվի հայոց մարդասիրական ընկերության դահլիճում՝ «Անուշ» (հատվածներ), Բաքվի ժողովարանում՝ «Փունջ», 1913 թ. Մայիլյանների թատրոնում՝ «Լեբլեբիջի», 1915 թ. «Կործանվածը», «Նամուս»:

1897 թ. Բաքվում հաջողություն չունեցած մի ներկայացման մեջ («Պատիվ») խաղում էին Հովհաննես Աբեյանը, Արամ Վրոյրը և Գևորգ Պետրոսյանը, դերասաններ, որոնք նույնպես զբաղվել են ռեժիսորությամբ: Ներկայացման մասին պատմող հոդվածի հեղինակը՝ Շմ. Խաչնարածյանը, Ազնիվ Հրաչյային մեղադրում է այդ երեկո ղեկավարի պաշտոնը չստանձնելու համար. «Մի ներկայացում, որ տեղի ունեցաւ առանց կարգ ու կանոնի, առանց կարգապահութեան և ղեկավարի, այդ ներկայացումը միշտ անհաճոյ տպատրուրթին կըթողնի: Արդեօք ի՞նչն էր պատճառը, որ յարգելի տիկին Հրաչեան այդ երեկոյեան չէր յանձն առել ղեկավարի պաշտոնը, անհասկանալի մնաց»¹⁶: Բաբկեն Հարությունյանի տարեգրության մեջ, որպես «Պատիվ» ներկայացման ռեժիսոր, նշված է Ազնիվ Հրաչյան, սակայն այստեղ թյուրիմացություն կա: Միալ փաստը, հավանաբար, շրջանառության մեջ է դրվել ազդագրերից: Դրանք տպագրվել են Հրաչյայի անունով: «Իմ Հիշողություններս» գրքում Հրաչյան անդրադառնում է

¹⁵ Ոսկանյան 1935, թիվ 11:

¹⁶ Խաչնարածեան 1897, 3:

այս ներկայացմանը: Դերասանուհին հրաժարվել է բեմադրությունից, քանի որ շատ կարճ ժամանակ են տվել բեմադրական աշխատանքների համար: «Ես անձնուիրաբար կը կատարեմ դերացույցի պաշտօնը, և մինչև անգամ գրպանէս կը ծախսեմ: Բայց եթե դուք նոյն իսկ խոշոր ամսական մը վճարէք, ես դարձեալ այսպիսի պայմաններու մէջ կը հրաժարէի դերացուցութենէ»¹⁷:

Ազնիվ Հրաչյային ժամանակ է պետք եղել ուսումնասիրելու գրական նյութը, պիեսում կատարվող իրադարձությունների ժամանակաշրջանը, կերպարները: Սովորաբար, դերասանների հետ աշխատելիս, նրանց կերպարները բացահայտելու նպատակով, նա մի քանի անգամ քննել ու վերլուծել է պիեսը, գրական համատեքստից դուրս բերել խաղային իրադրությունները: Դրամատուրգիական երկը ռեժիսոր Հրաչյայի համար գեղարվեստական հույզի, ներշնչման աղբյուր է եղել: Այս մասին են փաստում Գրիգոր Ավետյանի հուշերը դերասանուհու մասին: 1897 թ. Գր. Ավետյանը խաղացել է Ազնիվ Հրաչյայի ղեկավարած թատերախմբում: Նա պատմում է. «Անդրանիկ ներկայացման համար բեմադրվեց ռուս գրող Պոտեխինի «Օրվան չարիք» դրաման, զուտ ռուսական կյանքից վերցրած պիեսը, որի մեջ կատարեցի Սիվադուշինի աչքի ընկնող կոմիկական դերը (Գր. Ավետյանը, հավանաբար, շփոթում է երկի անունը, քանի որ Սիվադուշինի կերպարը ոչ թե «Օրվա չարիք», այլ «Հոգով աղքատներ» պիեսից է - Ն.Շ.): Բեմադրողը Հրաչյան էր, որ բոլորովին ծանոթ չլինելով ռուսական կյանքին, նիստ ու կացին, չտիրապետելով նաև ռուս լեզվին, մի այնպիսի սիրուն բեմադրություն տվեց, որ ամենքս էլ հիացել և ամենագլխավորը՝ ապշել էինք: Նա ամբողջովին մտել էր գրվածքի ներքին էության մեջ: Չանցած մի փոքրիկ, ռուսական խումբն էլ խաղաց այդ պիեսը, և մենք, բոլոր դերակատարներս, մեզ հետ առած Սիրանույշին, պիեսի հերոսուհուն, գնացինք նայելու: Նայեցինք, համեմատեցինք և ավելի համոզվեցինք, որ մեր ռեժիսոր Հրաչյան իսկապես որ տաղանդավոր ռեժիսոր է»¹⁸: Թվում է՝ ռուսական խմբի բեմադրությունը ստվերելու էր Հրաչյայի հաջողությունը: Մանավանդ որ նա «ծանոթ չէր ռուսական կյանքին», «չգիտեր լեզուն», միջավայրը: Բայց և այնպես, դերասանուհին լավ է ըմբռնել «գրվածքի ներքին էությունը», դրամատուրգիական երկի ներքին կառուցվածքը, գործողության տրամաբանությունը, գործող անձանց շարժառիթները, հեղինակի գաղափարը: Հրաչյան պիեսից դուրս է բերել տվյալ դաշաշրջանը, բարքերը, գուցե և կյանքը նկարագրող ավելի փոքր ակնարկ-

¹⁷ Ազնիվ Հրաչյա 1909, 164:

¹⁸ Ավետյան 1945, 45:

ներ կամ մանրամասներ, որոնք գեղարվեստորեն դարձել են տպավորիչ, ավելի հատկանշական ու բնութագրող, քան բուն կյանքը:

Բաքու տեղափոխվելուց երկու ամիս հետո Հրաչյան մեկնել է Մաշտաղա՝ ամառանոց: Նրան այցելության է գնացել Եղիսաբեթ Սարգսյան անունով մի կին, որը Բաքվի թատերական կյանքը կազմակերպելու վերաբերյալ խորհուրդ է խնդրել: Ազնիվ Հրաչյան կատարում է նրա խնդրանքը՝ ընդգծելով դերուսույցի և ռեժիսորի պարտականությունները: Նա իր հիշողություններում գրում է. «Պէտք է անմիջապես ընկերություն կազմեք, յետոյ հրափրեք մէկ լաւ դերացոյց, թող ըլլայ ռուս, իտալացի կամ՝ գաղղիացի, միևնոյնն է, արուեստը լեզու չունի: Ինքնուրոյն խաղերու համար ռեժիսոր հարկաւոր չէ, իսկ երոպական, ռուսական խաղերը անոնց ծանօթ են: Մենք չունինք ուսումնարաններ դերասաններու համար: Մեր ուսումնարանը, գործնական դպրոցը՝ պիտի ըլլայ թատրոնը: Եթէ դուք պիտի տաք ներկայացումներ այնպէս ինչպէս կուտան դերասանները այս կամ այն կողմ, չարժեր ատոր համար հովանաւորութիւն, չարժեր դրամ ծախսել: Երբ ընկերութեամբ պատրաստ կըլլայ, նոյնպէս և ռեժիսորը, այն ատեն է որ ըստ ընկերութեամբ կը կազմուի խումբը: Ընկերութեամբ պիտի հասկընանք թէ ո՞վ պէտք է հրափրենք: Ամէն պարագայի մէջ, տիկին, այս տարի կը ներկայացնէք ամիսը 4 կամ 5 անգամ, իսկ գալ տարի կունենաք կանոնաւոր ընկերութեամբ: Եթէ կարողանաք այս ամառ երկու ամսուան համար վճարելով դերասաններուն կէս կէս ամսական, փորձեր ընել տալ, այն ատեն կարելի է մինչև վեց անգամ ներկայացնել»¹⁹:

Հրաչյան առաջնային նշանակություն է տվել բեմադրական մտահղացումներին: Իր հուշերում գրում է, որ «դերացուցութեան պաշտօնը առաջին դերակատարներու պաշտօնէն շատ ծանր է»²⁰: Նա լուրջ չի համարել այն թատերախմբերը, որոնք չեն ունեցել ռեժիսոր (դերուսույց): Համոզված է եղել, որ եթե Կ. Պոլսի «Արևելյան թատրոնում» չլիներ Պետրոս Մաղաքյանը, հայ բեմում չէին լինելու Ադամյանը, Աստղիկը, Սիրանույշը, Գարագաշյանը, Թրյանցը և ինքը նույնպես:

Գրիգոր Ավետյանի հուշերից պարզ է դառնում, որ Հրաչյան համախմբային խաղի պահանջներով լուրջ տարածայնություններ է ունեցել ինքնակենտրոն խաղի հակված Սիրանույշի հետ. «Ընդհարման առիթ էին տալիս միզանցեցների առթիվ ծագած վեճերը, որ պատճառ էին դառնում փորձն ընդհատելուն և խանգարում էին աշխատանքի նորմալ ընթացքը»²¹: Սիրանույշը չի զիջել առաջնուի իր դիրքը: Նա հետամուտ է եղել անհատական-դերասանական խնդիրների: Բոլոր ռեժիսորներն ընդհանրապես են

¹⁹ Ազնիվ Հրաչյա 1909, 157-158:

²⁰ Ազնիվ Հրաչյա 1909, 141:

²¹ Ավետյան 1945, 43:

նրան՝ միզանսցենները կառուցելով այնպես, որ դերասանուհին մշտապես եղել է կենտրոնում: Ազնիվ Հրաչյայի բեմադրական սկզբունքները հակառակ էին ոչ միայն Սիրանույշի, այլև առհասարակ անհատապաշտական թատրոնին:

Հենց առաջին ներկայացումներից քննադատները նկատել են համախումբ կառուցելու Հրաչյայի հմտությունը: Հոգվածներից մեկում կարդում ենք. «Ընդհանրապես վերցրած, նկատվում է դերասաններին ղեկավարող հմուտ ձեռք, որից առաջացած ելեքտրական հոսանքը անցնում է դերասանների նեարդերով, միացնում է նրանց տարբեր տարբեր ոյժերը և ստեղծում է թեկուզ ոչնչից մի ամբողջություն»²²: Ներկայացման ներդաշնակ ամբողջության մասին գրվել է նաև «Հոգով աղքատներ» ներկայացման առիթով. «Շնորհակալություն պետք ենք յայտնել տիկ. Հրաչյայի, որ անձնուիրաբար յանձն է առել կառավարել խումբը և վերածել բեմը մի ներդաշնակ ամբողջութան»²³:

Դերասանները խաղում էին տարբեր քաղաքների թատերախմբերում, երբեմն նույնիսկ օտար լեզուներով, տարբեր ազդեցություններով: Վերը նշված հոգվածներից կարելի է ենթադրել, որ Հրաչյան դերասանների խոսքը իմաստային և տոնային համաձայնության է բերել, միասնական կանոնի ենթարկել, դրանով իսկ ստեղծել ամբողջական, ներդաշնակ ներկայացում: Հրաչյայի՝ դերերն ուսումնասիրելու մասին գրել են ժամանակի մամուլում: Նույն սկզբունքով է աշխատել նաև բեմադրությունների մեջ: Նա երբեք իր աշխատանքը չի սկսել, եթե պիեսում իր համար անհասկանալի դրվագներ են եղել: Փորձը կիսատ է թողել կամ ընդհատել, մինչև որ հստակեցրել է թե՛ իր, թե՛ դերասանի անելիքը:

Նա օգնում էր դերասանին ճիշտ գործել՝ ըստ ենթադրվող իրադրությունների ու հանգամանքների: Հրաչյան ձգտել է, որ բեմադրության մեջ բոլորն հավասարապես հաջող հանդես գան. «-Պարոններ, հավատացե՛ք, ես երբեք յանձնառու չեմ ըլլար որ ամենափոքրիկ դերասանն իսկ խայտառակուի: Ես պիտի աշխատիմ որ ամենքդ ալ ստանաք պսակներ: Ես ձեր պսակներէն թափած ծաղիկները հավաքելով՝ պիտի կազմեմ պսակ, ան ալ բեմին ետելը»²⁴: Գր. Ավետյանն էլ հուշերում գրում է, որ Հրաչյան «աննման», «արտասովոր» ռեժիսոր է եղել, «բարդ և սքանչելի», «լի գույների առատությամբ», նա օգնել է իրեն բեմում լինել հետաքրքիր, մի քանի անգամ խաղացած դերը հարստացնել նոր գույներով, արժանի խաղընկեր լինել Դավիթ Թրյանցին. «Հռչակավոր դերասան Դավիթ Թուրյանի առաջին բեմելի համար, բեմադրվեց Գոլդոնիի «Դոն Գրիգորիոն», որի մեջ

²² Արշարունի 1897, 3:

²³ Մ.Շ. 1897, 3-4:

²⁴ Ազնիվ Հրաչյա 1909, 161:

Փիփերթոյի, ապուշ տղայի, մեծ դերն էի կատարելու: Այդ դերը ես խաղացել էի մի քանի անգամ, բայց ռեժիսոր Հրաչյան իմ՝ արդեն քանիցս անգամ խաղացած, ծանոթ դերը դարձրեց մի ուրիշ բան, մի շեղևր, գունավոր ու հետաքրքրական: Ես շատ մեծ հաջողություն գտա և ամեն մի արարվածից հետո, շարունակ բեմ էի կանչվում Թուրյանի պես դերասանի հետ հավասար, և այդ շնորհիվ Հրաչյա ռեժիսորի»²⁵:

Նա հստակ պատկերացրել է դերասանների կարողությունները՝ գնահատելով համեստ և աշխատասեր մարդկանց: Այն դերասանները, որոնք երեք-չորս փորձով պատասխանատու դեր են ստանձնել, նրանցից ոչինչ չի սպասել. «անկարելի խոստացող են ոչինչ կարելի է սպասել»: Ճիշտ չի համարել սկսնակ դերասանին միանգամից վեր բարձրացնելը՝ համոզված լինելով, որ նա կտապալվի: Անընդհատ աշխատանքը, գործնական դպրոցը համարել է հաջողության երաշխիք: Ազնիվ Հրաչյան դեմ է եղել «ամպլուա» հասկացությանը և սեփական փորձով բացատրել է, թե ինչպես կարող է դերասանը դերից դեր զարգացնել իր ընդունակությունները և հմտանալ մասնագիտության մեջ. ««Ամփլուա» չկայ, կարգեր կան, պետք է այդ կարգերէն անցնիլ. ես այդ կերպով ալ անցայ այդ կարգերէն: Առաջ կատարեցի փոքրիկ աղջկան, հրեշտակի դեր, ևն. յետոյ «սուպրէթ», յետոյ «կրիզէթ», «էնժէնի», «էնժէնի-տրամաթիք». ամենէն վերջը՝ բացարձակ առաջին դեր»²⁶: Մեկ ուրիշ տեղում պատմելով Նիկողայոս Հովհաննիսյանի ծախողման մասին՝ գրում է. «Պ. Յովհաննիսյան ուղիղ ճանապարհի վրայ էր, բայց մենք զայն ետ քաշեցինք: Անոր ուսուցիչը ամենալաւ ուսուցիչն է եղեր, բնական դպրոցի մարդը և ատիկա յայտնի էր նոյն իսկ իր աշակերտի խաղուացքէն: Այո, ան ճիշտ սորված էր տեսականը, լաւ էր ըմբռնած բնական դպրոցը, այդ պատճառաւ ստացեր էր ոսկի «շիֆր»ը, բայց այդ ուսուցիչը այժմ՝ պետք էր որ անոր հետ ըլլար գործնական դպրոցին մէջ գէթ մէկ «սէզօն», որպէս զի իր աշակերտին իւրացնել տար բնականը: Անիկա «էֆեկտներու» չէր կարող դիմել, իսկ իր ունեցածը տհաս էր: Եթե մենք ունենայինք ուսուցիչ մեր բեմի վրայ, թոյլ պիտի չտար անոր «Քին»ով սկսիլ, իրեն ուժին համեմատ բեռ տալով՝ պիտի չձգէր որ անկման ենթարկուի: Մէկ «սեզօն» բաւական էր որ ան մեծնար և ըլլար իրապէս «Քին»»²⁷:

Հրաչյայի բեմադրական աշխատանքների մասին պատմող հոդվածներում, ժամանակակիցների հուշերում գրեթե չկան տեսարանների նկարագրություններ՝ բացառությամբ վաստակավոր ուսուցիչ և թատերական գործիչ Հմայակ Միքայանի հուշերի: Գրականության և արվեստի թանգարա-

²⁵ Ավետյան 1945, 45, 46:

²⁶ Ազնիվ Հրաչյա 1909, 87:

²⁷ Ազնիվ Հրաչյա 1909, 170-171:

նի Հ. Միքյանի ֆոնդում պահպանվում են հեղինակի հուշերը դերասանուհու մասին, որտեղ կա ուշագրավ մի նկարագրություն: Նա 1912 թ. հունվարի վերջերին Բաքվում հանդիպել է Ազնիվ Հրաչյային: Նրանք միասին աշխատել են: «Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության օգտին երաժշտական-դրամատիկական երեկո էր նախատեսվում, - գրում է Հմայակ Միքյանը, - տիկ. Հրաչյայի բարեհաճ մասնակցությամբ: Նրա առաջարկով որոշվեց Հ. Թումանյանի «Անուշ» պոեմայից պատկերներ դնել: Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան դեռևս հրապարակում չկար: Երգեցիկ խմբի կազմակերպումը հանձնարարվեց ինձ: Ես պատրաստեցի երեք երգ՝ Անտոն Մայիլյանի «Ջուր ա գալի», Կոմիտասի «Կուժն առա», Կարա-Մուրզայի «Ջանգյուլում»: Տիկ. Հրաչյան հավանեց ընտրությունը, միայն առաջարկեց, որ տղամարդիկ բեմի վրա չլինեն, իսկ կանայք ազգային տարագով, կժերն ուսին, քայլեն դեպի բեմ:

- Այնպես երգեն, որ իրևա, թե հեռվից կուզան, - կարգադրեց տիկ. Հրաչյան: «Ջուր ա գալի» երգեցին բեմի հետևից, շատ մեղմ սկսելով հետզհետե ուժեղացրին, որ հեռվից գալու տպավորություն էր թողնում: Մնացած երկու երգը երգելիս տղամարդիկ բեմի երկու կողմերում թագնված էին, իսկ կանայք (սուպրանո և ալտ) բեմի վրա»²⁸:

Բեմի տարածությունը երկրաչափորեն միշտ սահմանափակ է: Հանդիսատեսի համար ստեղծված պայմանական իրականության (բեմական կյանքի) սահմաններն այս դեպքում ստեղծագործողի ձեռքում են: Տպավորությունն ու պատրանքը կարող են տարածություն գրավել: Հոգեբան, կինոգետ Ռուդոլֆ Արնհայմը գրում է. «Տարածական ուղղությունները, որ ստեղծվում են դերասանի հայացքով, հայտնի են որպես «տեսանելի գծեր» բեմում»²⁹: Ձայնը նույնպես ստեղծում է տարածություն. «Տեսանելի կշռի պատրանքը ստեղծվում է խոսքով, ի դեպ, այն տեղում, որտեղից լսվում է»³⁰:

Ազնիվ Հրաչյան տարածությունը, տարածության պատրանքը ստեղծել է ժամանակային, ձայնային նյութով: Այսինքն՝ ստեղծում է ձայնային տարածություն բեմում:

Թատրոնի պատմությունն ունի օրինակներ, երբ աշխարհի ամենամեծ բեմն էլ կարող է փոքր լինել, կամ, հակառակը, փոքրը՝ մեծ³¹: Հանդիսատեսը, որն ի սկզբանե պայմանականությունը ընդունում է գեղարվեստորեն, զգայական ընկալման մեջ, տրվում է երևակայությանը, թույլ է տալիս, որ բեմական տարածքում պատրանքները իրական դառնան:

²⁸ Միքյան 1907, N 4, 9:

²⁹ Арнхейм 1974, 39.

³⁰ Арнхейм 1974, 41.

³¹ Հմմտ. Հովհաննիսյան 2002, 60:

Դերասանուհին իր հուշերի վերջին գլխում հարցեր է բարձրացնում, որոնք հատուկ են մասնագիտական ու խաղացանկային թատրոն ղեկավարող ռեժիսորին: Պարզ երևում է, որ Բաքվի թատրոնը այդպիսին չէր, սակայն նրա ձգտումներն ու պատկերացումները տանում են դեպի այն թատրոնը, որ ստեղծվելու էր խորհրդային շրջանում: Դերասանուհին այն կարծիքին էր, որ թատրոնն իր խաղացանկում պետք է ունենա մոտ քսան բեմադրություն: Խաղաշրջանից մի քանի ամիս առաջ պետք է պատրաստվել, որպեսզի դերասանները սովորեն և ուսումնասիրեն իրենց դերերը, հասկանան դերերի բնավորությունները: Բեմը, ըստ Հրաչյայի, պետք է ունենա իր ներքին «կանոնագրությունը»: Նա կոչ է անում միջոցներ ձեռնարկել արդեն ստեղծված թատերական դպրոցը պահպանելու և շարունակելու համար:

Եզրակացություն

XIX դ. 90-ական թվականները ռեժիսուրայի՝ որպես ինքնուրույն արվեստի սկզբնավորման շրջանն է Եվրոպայում և Ռուսաստանում, և Ազնիվ Հրաչյան ներկայանում է որպես հայ ռեժիսորական արվեստի սկզբնավորողներից մեկը, Գևորգ Պետրոսյանի կողքին: Քննելով Ազնիվ Հրաչյայի բեմադրությունների մասին պատմող ժամանակակիցների հուշերն ու մամուլը՝ գալիս ենք այն համոզման, որ նոր ձևավորվող հայ ռեժիսորական արվեստում արտիստուհին իր տեղն ու դերն է ունեցել: Նրա սկզբունքներն ու պահանջները համահունչ են եղել ժամանակի եվրոպական բեմական արվեստում սկզբնավորվող եղանակներին: Ամեն գնով փորձել է խաղացանկային և պարբերականորեն գործող թատրոն ստեղծել:

Գրականություն

- Ազնիվ Հրաչյա 1909, Իմ հիշողություններս, Փարիզ, հրատ. նշված չէ, 178 էջ:
Արձագանք, 1891, 31 հոկտ., N 38, 4:
Արձագանք, 1891, 3 նոյեմբ., N 39, 4:
Արձագանք, 24 հոկտ., N 123, 4:
Արմենյան Ա. 1954, 60 տարի հայ բեմի վրա, Երևան, «Հայպետհրատ», 332 էջ:
Արշարունի 1897, Հայկական խմբի ներկայացումները Բազվում, Արձագանք, 24 հոկտեմբերի, N 123, 4:
Ոսկանյան Ա. 1935, ԳԱԹ, Արուս Ոսկանյանի ֆոնդ, Ուրվագծային հուշեր Ազնիվ Հրաչյայի կյանքից, ինքնագիր, N 11:
Ավետյան Գր. 1945, ԳԱԹ, Գր. Ավետյանի ֆոնդ, Թատրոնի մարդիկ, ձեռագիր, N 2 (I), 213 էջ:

- Միքայան Հ. 1907, ԳԱԹ, Հ. Միքայանի ֆոնդ, Հանդիպումներ դերասանուհիներ տիկ. Հրաչյայի, Մելիքյանի և դերասաններ Հովհաննիսյանի, Սևումյանի հետ, մեքենագիր, N 4, 10 էջ:
- Դարբասյան Ա. 1955, Իմ Արուսը, Երևան, «Հայպետհրատ», 215 էջ:
- Հարությունյան Բ. 1980, XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն (1801-1922), հ. 1, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 611 էջ:
- Հովհաննիսյան Հն. 2002, Դերասանի արվեստի բնույթը, Երևան, «Սարգիս Խաչենց», 366 էջ:
- Հովհաննիսյան Հն. 2010, Հայ թատրոնի պատմություն XIX դ., Երևան, «Նաիրի», 756 էջ:
- Հովհաննիսյան Հով. 1965, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 592 էջ:
- Իսաշնարածեան Շմ. 1897, Պատիվ, 200000, Նոր-Դար, 30 հոկտ., N 185, 4:
- Մ.Շ. 1897, Հայոց թատրոնը Բազում, Արծազանք, 19 հոկտ., N 121, 4:
- Մշակ, 1891, 12 նոյեմբ., N 128, 4:
- Չմշկյան Գ. 1953, Իմ հիշատակարանը, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ հրատ.», 227 էջ:
- Օրվան կյանքեն, Մասիս, 1902, N 26, 405-420:
- Архейм Р. 1974, Искусство и визуальное восприятие, пер. с англ., Москва, "Прогресс", 392 с.

ԲԵՄԱԴՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ (ՌԵԺԻՍՈՒՐԱ) ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶՆԻՎ ՀՐԱԶՅԱՆ՝ ԲԵՄԱԴՐԻՉ

Նաիրա Շահվալադյան

Հայ թատրոնի պատմության մեջ բեմադրիչը ստեղծագործողի դեր և ինքնուրույնություն է ձեռք բերել XIX դ. 90-ական թվականներից սկսած՝ մոտավորապես նույն շրջանում, ինչ Արևմուտքում և ոռուսական բեմում: Ազնիվ Հրաչյայի սկզբունքներն ու պահանջները համահունչ են եղել ժամանակի եվրոպական բեմական արվեստում սկզբնավորվող եղանակներին: Հրաչյան առաջնային նշանակություն է տվել բեմադրական մտահղացումներին: Սովորաբար, դերասանների հետ աշխատելիս, նրանց կերպարները բացահայտելու նպատակով, նա մի քանի անգամ քննել ու վերլուծել է պիեսը, գրական համատեքստից դուրս բերել խաղային իրադրությունները: Դրամատուրգիական երկը ռեժիսոր Հրաչյայի համար գեղարվեստական հույզի, ներշնչման աղբյուր է եղել: Հենց առաջին ներկայացումներից քննադատները նկատել են համախումբ կառուցելու Հրաչյայի հմտությունը:

Բանալի բառեր՝ հայ թատրոն, Ազնիվ Հրաչյա, Գևորգ Պետրոսյան, բեմադրական արվեստ, բեմադրիչ, համախմբային խաղ, գրական ենթատեքստ:

АВТОНОМИЗАЦИЯ ПОСТАНОВОЧНОГО ИСКУССТВА (РЕЖИССУРА) И АЗНИВ РАЧИЯ КАК РЕЖИССЁР

Наира Шахваладян

Актриса и театральный деятель Азнив Рачия была в центре внимания театральной критики начала 90-ых годов XIX в. Творческие принципы артистки были созвучны новейшим веяниям европейского театра того времени. Постановки Азнив Рачия отличались целостностью художественного замысла. В своем режиссерском творчестве Азнив Рачия апеллировала прежде всего к контексту произведения и индивидуальности актёра. Будучи приверженцем психологического реализма, Азнив Рачия в то же время тяготела к ансамблевому театру.

Ключевые слова – армянский театр, Азнив Рачия, Геворг Петросян, постановочное искусство, режиссер, ансамблевая игра, литературный контекст.

THE AUTONOMY OF STAGING ART (DIRECTORING): AZNIV HRACHYA AS THEATRE DIRECTOR

Naira Shahvaladyan

In the history of Armenian theatre, theatre director gained autonomy and was endorsed with a creative role from 1890s, approximately in the same time as in Russian and Western theatres. As an actress and theatre practitioner, Azniv Hrachia holds a distinct place in the history of Armenian professional theatre. Analysing the productions of Azniv Hrachia, the archives of her contemporaries and press reviews of the period, we conclude that her artistic principles and viewpoints correlated with contemporary theatrical movements across Europe. Her theatre productions were artistically and aesthetically interconnected. Meanwhile her stage portrayals were extracted from painstaking examination of literary texts. Hrachia developed ensemble playing of the troupe, made huge efforts to establish repertory theatre. While introducing innovative reforms of current theatrical movements, simultaneously she valued and effectively maintained Armenian theatrical traditions.

Key words – Armenian theatre, Azniv Hrachya, Gevorg Petrosyan, staging art, director, ensemble game, literary context.

ՄԵՂՐԻԻ ԱՆԱՊԱՏԱՆԱՑ ՎԱՆՔԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

Ավետիս Ավետիսյան

Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոն
Հանրապետության 32, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ Avetisyan1918@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 08.04.2019, գրախոսվել է 12.06.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Մեղրիի Մեծ թաղի հյուսիսարևմտյան հատվածում է գտնվում դեռևս XIII դարից հիշատակված Անապաստանաց վանքը (Մեղրիի վանք)¹, որից մնացել են միայն XVII դարում կառուցված Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և կիսաքանդ նախասրահ-գավիթը (նկ. 1):

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին Սյունիքում XVII դարում կառուցված հատուկենտ գմբեթավոր եկեղեցիներից է: Հորինվածքով այն գմբեթավոր բազիլիկ տիպի կառույց է՝ աղյուսաշեն գմբեթով, չորս գմբեթակիր մույթերով և ավագ խորանին կից երկու ավանդատներով²: Ճարտարապետության տեսանկյունից լուսաբանման կարիք չունեցող այս եկեղեցում առկա են բավականին ուշագրավ որմնանկարներ, որոնցից մի քանիսը երբևէ գիտական ուսումնասիրման առարկա չեն հանդիսացել:

Եկեղեցու ներսը որմնանկարվել է ամենաքիչը երկու անգամ՝ 1745 և 1793 թվականներին: 1745 թ. շերտից պահպանվել են անհայտ սրբի պատկերն ու ծաղկատերևային զարդամոտիվները ավագ խորանում, երկու սուրբ ձիավորների պատկերները հարավարևելյան մույթի հյուսիսային և հյուսիսարևելյան մույթի հարավային երեսներին, 1793 թ. շերտից՝ Միքայել հրեշտակապետի երկու պատկերները ավագ խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերի արևմտյան երեսներին:

Մույթերին պատկերված սուրբ ձիավորների երկու պատկերներն էլ բավական մաշված վիճակում են: Հյուսիսարևելյան մույթի ձիավորը (նկ. 2-Ա) շագանակագույն ձիով է, աջ ձեռքով բռնել է գավազան, ձախով՝ ձիու սանձը: Հագին մոխրաշագանակագույն զգեստ է: Պատկերի հետնախորքը երկնագույն է, շրջանակված է կապտավուն և շագանակագույն ծաղիկնե-

¹ XIII դ. վերջին Մեղրիի վանքը 20 միավորով հարկատու է եղել Տաթևի վանքին (Ստեփաննոս Օրբելեան 1859, 271): Վանքի մասին համառոտ հիշատակում են նաև Աբրահամ Կրետացին և Ղևոնդ Ալիշանը (Աբրահամ կաթողիկոս Կրետացի 1870, 77, Հ. Ղևոնդ Մ. Ալիշան 1893, 303):

² Վանքի ճարտարապետության մասին տե՛ս Հասրաթյան 1973, 83-86, Հասրաթյան 1987, 9-11, Հարությունյան 1992, 396:

րով և տերևներով եզրագոտիով: Ստորին հատվածի սևաներկ արձանագրությունից կարդացվում են միայն «ՅՇ» տառերը («ՅԻՇԱՏԱԿԷ» բառից): Հարավարևելյան մույթի ձիավորի (նկ. 2-Բ) հագին նշմարվում է կարմրավուն թիկնոցը: Հեծել է մոխրագույն ձի, ձեռքին երկար նիզակ է: Նույնպիսի երկնագույն հետնախորք ու եզրագոտի առկա են նաև այստեղ:

Ավագ խորանի հյուսիսային կողմում դարձյալ խիստ մաշված վիճակում պահպանվել է ամբողջ հասակով պատկերված մի սրբի պատկեր (նկ. 2-Գ): Այն երկար մոխրագույն մորուքով է, հագին՝ եպիսկոպոսական հանդերձներ՝ կարմրավուն խույր (թագ), շուրջառ, կապույտ եմփորոն և մոխրագույն շապիկ: Որմնանկարը շրջանակված է կապույտ և շագանակագույն ծաղիկներ պարունակող նույն եզրագոտիով, որն առկա է սուրբ ձիավորների որմնանկարներում: Ստորին մասում պահպանվել են սևաներկ արձանագրության մնացորդները (հրապարակվում է առաջին անգամ)³.



Վերծանությունը.

**ՃԻՇԱՏԱԿԷ ԴՊԱՏԿԵՐՍ ՏԼԷՐ ՄԿՐՏԻՉՂ ԱԲԵ/
ԴԱՅԻՆ ԴՌՃՂԴ (1745 - Ա.Ա.) ԹՎԻՆ ՄԱՅԻՍԻ ...**

Արձանագրությունից ներքև տեղ գտած պատկերը ներկայացնում է մի ծաղկեփունջ, որից էլ ներքև, արդեն բեմի հատակին կից, մակերեսը ծածկված է շախմատաձև դասավորված սև և սպիտակ վանդակներով: Նույնպիսի ծաղկեփնջային պատկեր և վանդակներով հատված էլ պատկերված է ավագ խորանի հանդիպակաց՝ հարավային կողմում:

Ավագ խորանում, որմնախորշերի երկու շարքերը բաժանող քիվի վրա պահպանվել են նաև զարդագոտու որոշ հատվածներ. կարմրավուն հետնախորքի վրա տեսնում ենք իրար հաջորդող մեծ երկնագույն լուտոս ծաղիկներ և դեպի վերջիններս թեքված երկարավուն, մանգաղաձև, սղոցաեզր տերևներ, որոնց կցված են ավելի փոքր չափսի երկնագույն ծաղիկներ: Այս զարդամոտիվների կիրառումը արվեստաբանության մեջ հայտնի է պայմանական «սազային ոճ» անվանումով⁴ և հայ որմնանկարչության

³ Հոդվածում ներկայացված բոլոր արձանագրությունների լուսանկարները, գրչանկարներն ու վերծանությունները հեղինակինն են:

⁴ «Սազային ոճին» բնորոշ է երկարավուն, սղոցաեզր տերևների (կոչվում են սազ-տերևներ) առատ կիրառումը՝ որպես զարդարվեստի գերիշխող և հիմնական մոտիվ:

մեջ բնորոշ է հիմնականում Հովնաթանյան նկարիչներին: Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան ավանդատների կամարների (նկ. 3-Ա) և Էջմիածնի Մայր տաճարի «Տրդատ, Աշխեն և Խոսրովդուխտ» խմբանկարի (նկ. 3-Բ) զարդագոտիներում, որոնք վերագրվում են Նաղաշ Հովնաթանին, արդեն իսկ հանդիպում են սազ-տերևներն ու նրանց կցված ծաղիկները⁵: Հետագա տասնամյակներում Նաղաշի որդիների՝ Հակոբի և Հարությունի որմնանկարներում այս զարդամոտիվը որոշակի փոփոխություններ է կրում. որոշ դեպքերում տերևին կցված փոքր ծաղիկն առանձնանում է, ինչպես, օրինակ, Աբրակունիսի Ս. Կարապետ եկեղեցում (նկ. 3-Գ), որոշ դեպքերում էլ տերևը «բաժակի» միջից է դուրս գալիս, ինչպես տեսնում ենք Էջմիածնի հին վեհարանում (նկ. 3, Դ-2): Վերջին ձևին են պատկանում նաև Անապաստանաց վանքի վերոնշյալ որմնանկարի զարդամոտիվները, որտեղ հստակ երևում են սազ-տերևների «բաժակները» (նկ. 3-Է): Ժամանակային առումով ևս 1745 թվականը համապատասխանում է Հակոբ և Հարություն Հովնաթանյանների ստեղծագործության ակտիվ շրջանին, այնպես որ կարելի է ենթադրել, որ Անապաստանաց վանքի հին շերտի որմնանկարները ևս ստեղծել են նրանք⁶:

Ծագել է XVI դարի առաջին կեսին Թավրիզում և հետագայում լայն տարածում ստացել պարսկական և օսմանյան արվեստում (Abdullahi, Embi 2015, 43):

⁵ Մաղարդավանքի որմնանկարները (1697 թ., տե՛ս Հ. Ղետնդ. Մ. Ալիշան 1893, 515-516): Նաղաշի վրձինն է վերագրել Արզամ Այվազյանը (Այվազյան 1998, 31): Էջմիածնի Մայր տաճարի խմբանկարը առաջինը հիշատակել է Սահակ Աստվածատրյանը՝ նշելով, որ «Կը թուի՝ թէ ի վեր անդ յիշուած Ստեփաննոս և Յովնաթան նկարիչներից առաջ արդէն նկարուած էր» (Սահակ վարդապետ Աստուածատրեան 1910, 11): Այն Նաղաշին են վերագրել Գարեգին Լևոնյանը, Մանյա Ղազարյանը և Ռուբեն Դրամբյանը (Լևոնյան 1938, № 2, 27, Ղազարյան 1974, 158-159, Драмбян 2016, 117): Արշակ Չոպանյանը, ինչպես Մայր տաճարի բոլոր որմնանկարները, նույնպես և այն վերագրում է Նաղաշի թոռանը՝ Հովնաթան Հովնաթանյանին (Չոպանեան 1910, 28): Ներսես Ակինյանը տաճարի «արեւելեան խմբի» որմնանկարները, ներառյալ հիշյալ պատկերը, վերագրում է Հովնաթան Հովնաթանյանին (Ակինեան 1911, 109, 111), նույնպես և Գարեգին Հովսեփյանը (հոդվածում «Նաղաշ Յովնաթան» ասելով մշտապես նկատի ունի Հովնաթան Հովնաթանյանին, տե՛ս Գարեգին Ա. կաթողիկոս 1951, 43): Եղիշե Մարտիկյանը խմբանկարը վերագրում է Նաղաշի որդուն՝ Հակոբ Հովնաթանյանին (Մարտիկյան 1971, 82-84):

⁶ Հակոբ և Հարություն Հովնաթանյանների որմնանկարչական գործունեության մասին քիչ բան է հայտնի: Փաստացի տեղեկությունները վերաբերում են միայն Աբրակունիսի Ս. Կարապետ եկեղեցու (Մեսրոպը արքեպիսկոպոս Սմբատեանց 1904, 6, 15, Լևոնյան 1938, № 4, 51, Մարտիկյան 1971, 93-94, Ղազարյան 1974, 172-173, Այվազյան 1998, 37-38, 58, 63-65, 67), Էջմիածնի Ղազարապատ հյուրատան և «ամարաթների» (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 13, 4, 50, Լևոնյան 1938, № 4, 52, Ղազարյան 1974, 170-172) նկարագործումներին: Նրանց են վերագրվում նաև Էջմիածնի Մայր տաճարի բեմառաջի պատկերաշարը (Միմէօս կաթողիկոս Երեւան-

Անկախ 1745 թ. որմնանկարների հեղինակի ով լինելուց, կարող ենք փաստել, որ նույն հեղինակը նույն թվականին աշխատել է նաև Մեղրիի Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցում, մասնավորապես նրա վրձնին է պատկանում ավագ խորանի հարավակողմյան որմնամույթի Պետրոս առաքյալի պատկերը: Այստեղ քիվին տեսնում ենք լուսոսներով և սագ-ծաղիկներով նույն զարդագոտին, որը Անապաստանաց վանքի ավագ խորանում է, իսկ Պողոս առաքյալի պատկերը շրջանակված է նույն զարդագոտիով, ինչ Անապաստանաց վանքի սուրբ ձիավորների դեպքում:

Պատկերի ստորին հատվածում պահպանվել է մաշված սևաներկ արձանագրությունը. «ԹԻՂԱՍԼԱԿԷ ՊԱՏԿԵՐՍ ...ՈՐԴԻ ՕՎԱՆԷՍԻՆ/ ...ԻՆ ԹՎԻՆՆ՝ ՌՃՂԴ (1745 - Ա.Ա.) ԻՆ...»:


Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարներից երկուսը (նկ. 4), ինչպես նշեցինք, 1793 թ. գործեր են: Երկուսի հեղինակն էլ աստապատցի Աստվածատուր քահանան է, որի որմնանկարներն առկա են նաև Մեղրիի Մեծ թաղի Ս. Աստվածածին, Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ և Կարճևան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցիներում⁷: Նկարչի անունը պահպանվել է միայն Կարճևանի եկեղեցում, սակայն պատկերների ոճը, գույների հարազատությունը, արձանագրությունների ձեռագիրը և թվագրությունն աներկբա փաստում են հեղինակի նույնության մասին:

Ավագ խորանի հյուսիսակողմյան որմնամույթին Միքայել հրեշտակապետը պատկերված է հանգուցյալի վրա կանգնած, վերջինիս հոգին

ցի 1873, 28, Ղազարյան 1974, 161-163, Մարտիկյան 1971, 90-93, Дрампян 2016, 120-121), հին վեհարանի նկարազարդումները (Айвазян, Глonti, Степанян (отв. ред.) 1979, 108, Գարեգին Ա. կաթողիկոս 1951, 41, Дрампян 2016, 152), նաև Զնաբերդի Ս. Գրիգոր (Ղազարյան 1974, 172-173, Այվազյան 1998, 67, 74, 83-84) և Աստապատի Ս. Ստեփանոս (Այվազյան 1998, 42, 48) եկեղեցիների որոշ որմնանկարներ: Մեր կարծիքով, Հակոբին ու Հարությունին են պատկանում նաև ձևով և ոճով միմյանց գրեթե կրկնող ծաղկատերևային զարդամոտիվներով Ռամիսի (Գողթն գավառ) Ս. Աստվածածին եկեղեցու (նկ. 3-Ը), Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցու (նկ. 3, Թ-ԺԱ) և Էջմիածնի Մայր տաճարի կաթողիկոսական նոր գահի (նկ. 3, ԺԲ-ԺԳ) նկարազարդումները:

⁷ Աստվածատուրի գործերից Կարճևանի եկեղեցու ավագ խորանում պահպանվել են Ս. Սարգսի և Ս. Գևորգի, ավագ խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերին՝ Միքայել հրեշտակապետի երկու պատկերները (մեկի թվականը եղծված է, մյուսը՝ 1793 թ.), Մեղրիի Փոքր թաղի եկեղեցու ավագ խորանում՝ Ս. Հովհաննես Մկրտչի և Ս. Ստեփանոսի պատկերները (երկուսն էլ 1793 թ.), ավագ խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերին՝ Պետրոս (1793 թ.) և Պողոս (անթվ.) առաքյալների պատկերները, Մեղրիի Մեծ թաղի եկեղեցու ավագ խորանում՝ Միքայել հրեշտակապետի (անթվ.), հյուսիս-արևելյան մույթին՝ Ս. Գևորգի (թվականը եղծված) և հարավ-արևելյան մույթին՝ Ս. Մինասի պատկերները (վերջինը ենթադրաբար ենք վերագրել Աստվածատուրին): Հիշյալ որմնանկարների մասին մանրամասն տեսն Ավետիսյան 2019, 78-90:

խորհրդանշող փոքրիկ մարդկային ֆիգուրը աջ ձեռքում պահած⁸: Միքայելի զգեստն այստեղ կարմրավուն է, թևերը՝ մոխրագույն՝ ի հակադրություն հարավակողմյան որմնամույթի որմնանկարի: Վերին հատվածում պահպանվել է մաշված արձանագրությունը⁹:



Վերձանությունը.

**ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱՏՄԿԵՐՍ ՓՈ /ՔՐ ԹԱՂՅԻ. ՏԼԷՐ ՅՕՀԱ /
ՆՆԵՍԻ ՈՐԴԻՊՅՕՀԱՆՆԵՍ/ՎԱՐԴԱՊԷՏ ԹՈՒՆՆՈՒՄԻԲ (1793 -Ա.Ա.)**

Ավագ խորանի հարավակողմյան որմնամույթին Միքայել հրեշտակապետը պատկերված է որպես մարդկանց հոգիները կշռող հրեշտակ, ձեռքին՝ երկարավուն լծակով կշեռք: Որմնանկարի հետնախորքը սպիտակ է, ստորին հատվածում՝ շախմատաձև սև և կարմիր վանդակներով: Միքայելի թևերը կարմիր են, լուսապսակն ու զգեստը՝ մոխրականաչավուն: Ծաղկատերևային նախշազարդերով եզրագոտին վերին հատվածում պսակվում է ձևավորված կամարով: Որմնանկարի ստորին հատվածում (հրեշտակի պատկերի և վանդակավոր հատվածի միջև) պահպանվել է մաշված սևաներկ արձանագրությունը¹⁰:



⁸ Միջնադարյան արվեստում Միքայել հրեշտակապետը պատկերվել է երկու հիմնական տարբերակներով՝ սրով և (կամ) նիզակով զինված, չար ուժերի դեմ պայքարող և հաղթող ռազմիկ (հիմքը՝ Յտ. 12:7-9) և կշեռքով հանգուցյալների հոգիները կշռող ու նրանց իրական վաստակը որոշող հրեշտակ (Hall 1974, 208): Հոգիների կշռումը կամ «Պսիխոստագիսը» հանդիսանում է «Ահեղ դատաստան» տեսարանի հիմնական դրվագներից մեկը, պատկերվել է նաև որպես առանձին տեսարան: Կարելի է ասել, որ «Պսիխոստագիսից» էլ արդեն հետքյուզանդական շրջանում ծագել և XVII-XVIII դդ. տարածում է ստացել Միքայելի՝ հանգուցյալի հոգին հանող տարբերակը:

⁹ Ավետիսյան 2019, 84:

¹⁰ Ավետիսյան 2019, 84:

Վերծանությունը.

.... / [ՅԻՇԱՄՏԻԱԿԷՂՊԱՏԿԵՐՍ ՓՈՔՐԻ ԹԱՂՏԻ /
[ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ՏԼԷՐ ՅՕՀԱՆՆԵՍԻ ՈՐԴԻ ՅՈՀԱՆՆԵՄԻՆ] /
ԹԻՒՆ] ՌՄԽԲ (1793 - Ա.Ա.)

Աստապատցու երկու որմնանկարներում էլ որպես շրջանակ՝ ծառայում է մոխրաերկնագույն զանգակի (°), կարմրավուն վարդի և կարմրավուն կակաչի հաջորդական մոտիվներից կազմված եզրագուտին (նկ. 5), որին հանդիպում ենք նաև Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Պողոս և Պետրոս առաքյալների որմնանկարներում:

Ինչ վերաբերում է որմնանկարչական հիմնաշերտերին կամ հիմնասվաղներին, ապա եկեղեցու բոլոր որմնանկարներն արված են երկշերտ հիմքի վրա: Ստորին շերտը հողադարմանային հաստ հիմնաշերտ է, որը որոշ տեղերում հասնում է մինչև մի քանի սմ հաստության: Տեղական հողի և հարդի խառնուրդ այս շաղախը բավական հաճախ է պատահում նաև Մեղրիի հին բնակելի տներում: Վերին շերտը, որի վրա և արված է որմնանկարը, 1-2 մմ հաստության գիպսի և (կամ) կավի սպիտակավուն խառնուրդ է:

Անապաստանաց վանքի որմնանկարները ուշագրավ պատկեր են ներկայացնում XVIII դարի հայ որմնանկարչության համատեքստում: Արվեստի բարձրարժեք նմուշներ չլինելով հանդերձ՝ դրանք, այնուամենայնիվ, որոշակիորեն լույս են սփռում ուսումնասիրության կարոտ XVIII դարի հայ որմնանկարչության վրա: Արժանահիշատակ է, որ եկեղեցու՝ 2017-2019 թթ. վերականգնման աշխատանքների ընթացքում (վերականգնող ճարտարապետ՝ Ստեփան Նալբանդյան) մաքրվեցին և ամրակայվեցին նաև որմնանկարները (խմբի ղեկավար՝ Մելինե Մկրտիչյան), ինչով, կարելի է ասել՝ կանխվեց դրանց հետագա քայքայումը:

Գրականություն

- Աբրահամ կաթողիկոս Կրետացի. 1870, Պատմագրություն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, Դ+129 էջ:
- Ակինեան Ն. 1911, Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վիեննա, Մխիթարեան տպարան, 67 էջ:
- Այվազյան Ա. 1998, Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 112 էջ:
- Ավետիսյան Ա. 2019, Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում, Պատմաբանասիրական հանդես, № 2, էջ 78-92:

- Գարեգին Ա. կաթողիկոս 1951, Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում/Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան», պրակ Ե, Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 63 էջ:
- Լևոնյան Գ. 1938, Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», Երևան, № 2, էջ 24-29, № 4, էջ 51-55:
- Հարությունյան Վ. 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս» հրատ., 631 էջ:
- Հասրաթյան Մ. 1987, Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, «Հայաստան», 72 էջ:
- Հասրաթյան Մ. 1973, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 190 էջ:
- Ղազարյան Մ. 1974, Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 284 էջ:
- Հ. Ղետնդ Մ. Ալիշան 1893, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Թ, հրատ. նշված չէ, 563 էջ:
- Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 13:
- Մարտիկյան Ե. 1971, Հայկական կերպարվեստի պատմություն, XVII-XIX դդ., գիրք Ա, Երևան, «Հայաստան» հրատ., 220 էջ:
- Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց 1904, Նկարագիր սուրբ Կարապետի Վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփլիս, տպարան Մովսէս Վարդանեանցի, Լ+608 էջ:
- Չօպանեան Ա. 1910, Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանյան նկարիչը, Փարիզ, հրատ. նշված չէ, 129 էջ:
- Սահակ վարդապետ Աստուածատրեան 1910, Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր աթոռոյ Ս. Էջմիածնի եւ շրջակայից, պրակ Ա, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 52 էջ:
- Միմէօն կաթողիկոս Երեանցի 1873, Ջամբո, Վաղարշապատ, տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, Դ+299 էջ:
- Ստեփաննոս Օրբէլեան 1859, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, Փարիզ, Գործատուն Կ. Վ. Շահնազարեանց, 371 էջ:
- Дрампян Р. 2016, Из истории армянского искусства. Сборник статей, Ереван, "Национальная галерея Армении", XXVIII+468 с.
- Очерки по истории армянского изобразительного искусства, отв. ред. М. Айвазян, К. Глonti, Н. Степанян, Ереван, изд. АН Арм. ССР, 1979, 216 с.
- Abdullahi Y., Embi M.R. 2015, Evolution of abstract vegetal ornaments in Islamic architecture /ArchNet-IJAR. International Journal of Architectural Research, Vol. 9, Issue 1, pp. 31-40.
- Hall J. 1974, Dictionary of Subjects and Symbols in Art, New York, Harper & Row Publishers, XXIX+346 p.

ՄԵՂՐԻԻ ԱՆԱՊԱՍՏԱՆԱՑ ՎԱՆՔԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

Ավետիս Ավետիսյան

Անապաստանաց վանքը գտնվում է Մեղրի քաղաքի Մեծ թաղում: Վանական համալիրից ներկայումս մնացել են միայն Ս. Հովհաննես Մկրտիչ գմբեթավոր բազիլիկ եկեղեցին (XVII դ.) և կիսաքանդ նախասրահ-գավիթը: Եկեղեցին ներքուստ նկարազարդված է ուշագրավ որմնանկարներով, որոնցից մի քանիսը մինչ օրս գիտական ուսումնասիրման առարկա չեն հանդիսացել:

Որմնանկարների մի խումբը թվագրվում է 1745 թվականով և, մեր ենթադրությամբ, պատկանում է հայ մեծ նկարիչ և բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի որդիների՝ Հակոբ և Հարություն Հովնաթանյանների վրձնին: Այս խմբի որմնանկարներից մնացել են հարավարևելյան և հյուսիսարևելյան մույթերի երկու սուրբ ձիավորների որմնանկարները, նաև անհայտ սրբի պատկերն ու ծաղկատերևային զարդանախշերի պատառիկները ավագ խորանում: Որմնանկարների մյուս խումբը 1793 թ. կատարել է նկարիչ Աստվածատուր Աստապատցին: Նա ավագ խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերին նկարել է Միքայել հրեշտակապետի երկու պատկերները:

Թե եկեղեցին և թե որմնանկարները մինչև վերջերս գտնվում էին բավականին վատթար վիճակում: Եկեղեցու՝ 2017-2019 թթ. վերականգնման աշխատանքների ընթացքում մաքրվեցին և ամրակայվեցին նաև որմնանկարները:

Բանալի բառեր՝ հայ որմնանկարչություն, Մեղրի, Մեծ թաղ, Անապաստանաց վանք, Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ, Աստվածատուր Աստապատցի, սազային ոճ:

РОСПИСИ МОНАСТЫРЯ АНАПАСТАНАЦ Г. МЕГРИ

Аветис Аветисян

Монастырь Анапастанац находится в Большом квартале г. Мегри (Сюникская область). От комплекса ныне остались только купольная базилика Св. Иоанна Крестителя (XVII в.) и полуразрушенный притвор. Церковь украшена росписями, часть которых по сей день не стала предметом изучения специалистов.

Первая группа росписей датируется 1745 годом и выполнена, как мы полагаем, Акопом и Арутюном Овнатанянами, сыновьями великого армянского художника и поэта Нагаша Овнатана. От этой группы росписей до нас дошли изображения двух святых всадников на юго-восточном и северо-

ро-восточном пилонах, одного неизвестного святого и фрагменты растительных орнаментов в главной апсиде. Другая группа росписей датируется 1793 годом и выполнена Аствацатуром Астапатци. Его кисти принадлежат два изображения архангела Михаила на северной и южной пилястрах главной апсиды.

Росписи эти, как и сама церковь, нуждались в реставрации. В рамках восстановительных работ церкви (2017-2019) была проведена очистка и консервация росписей.

Ключевые слова – армянская настенная живопись, Мегри, Большой квартал, монастырь Анапастанац, Акоп и Арутюн Овнатаняны, Аствацатур Астапатци, сазовый стиль.

THE MURAL PAINTING OF THE ANAPASTANAC MONASTERY IN MEGHRI TOWN

Avetis Avetisyan

Anapastanac monastery is in the Big quarter of Meghri town (Syunik province). Only the dome basilica of St. John the Baptist (XVII c.) and the half-ruined narthex of the complex have survived. The church is decorated with murals which to this day haven't been studied by experts.

The first group of murals date back to 1745 and supposedly were painted by Hakob and Harutyun Hovnatanyan, sons of the great Armenian artist and poet Naghash Hovnatan. Of this group of murals the images of only two saints on horseback on the south-east and north-east pillars, and an unknown saint and pieces of floral and leaf ornaments in the main apse have survived.

Another group of murals date back to 1793 and were painted by Astvatsatur Astapatsi. He painted two images of the Archangel Michael on the north-side and south-side pilasters of the main apse.

These murals, as well as the church itself have been in a very poor condition until recently. During church restoration (2017-2019) measures were also taken to clean and conserve the murals.

Key words – Armenian mural painting, Meghri, Big quarter, Anapastanac monastery, Hakob and Harutyun Hovnatanyan, Astvatsatur Astapatsi, saz style.



Նկ. 1. Մեղրիի Անապաստանաց վանքը հարավից (Նկ.՝ հեղինակի, 2017 թ.)



Նկ. 2. Ա. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 1745 թ. որմնանկարները (Նկ.՝ հեղինակի, 2016 թ.). Ա - հյուսիսարևելյան մույթի հարավային երեսի սուրբ ձիավորի պատկերը, Բ - հարավարևելյան մույթի հյուսիսային երեսի սուրբ ձիավորի պատկերը, Գ - ավագ խորանի անհայտ սրբի պատկերը



Նկ. 3. «Սազային ոճի» դրսևորումները Հովնաթանյան նկարիչների կամ նրանց վերագրվող զարդարվեստում¹¹. Ա - Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցի (1697 թ., ենթ. Նաղաշ Հովնաթան), Բ - Էջմիածնի Մայր տաճար (այժմ՝ ՀԱՊ, ենթ. XVIII դ. I քառորդ, Նաղաշ Հովնաթան), Գ - Աբրակունիսի Ս. Կարապետ եկեղեցի (1740 թ., Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ), Դ-Զ - Էջմիածնի հին վեհարան (1730-1740-ական թթ., ենթ. Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ), Է - Մեղրիի Անապաստանաց վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի (1745 թ., ենթ. Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ), Ը - Ռամիսի Ս. Աստվածածին եկեղեցի (XVIII դ., ենթ. Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ), Թ-ԺԱ - Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցի (XVIII դ., ենթ. Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ), ԺԲ-ԺԳ - Էջմիածնի Մայր տաճարի կաթողիկոսական նոր զահ (XVIII դ., ենթ. Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ), ԺԴ - Էջմիածնի Մայր տաճար (այժմ՝ ՀԱՊ, ենթ. 1780-ական թթ., Հովնաթան Հովնաթանյան):

¹¹ Գ և Ը լուսանկարները վերցրել ենք Ա. Այվազյանի վերոնշյալ աշխատությունից (էջ 57, 80): Մնացյալ լուսանկարները հեղինակին են:



Նկ. 4. Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Միքայել հրեշտակապետի երկու որմնանկարները, 1793 թ. (նկ.՝ հեղինակի, 2016 թ.)



Նկ. 5. Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 1745 թ. (ծախից) և 1793 թ. (աջից) որմնանկարների զարդագոտիների նմուշներ (նկ.՝ հեղինակի, 2017 թ.)

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԶԱՏԻԿ ԵՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏՈՆԵՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ.

Սամվել Մկրտչյան

Պատմական գիտությունների դոկտոր
ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ
Խ. Աբովյան 52, 0025, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ sam1959dok@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 04.03.2019, գրախոսվել է 16.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ. հայոց ավանդական տոները մեծ հալածանքի ենթարկվեցին պետության կողմից: Այդ մերժողականությունը կապված էր բոլշևիկյան հակակրոնական և ապագային գաղափարախոսության հետ: Դրա հետևանքով, աստիճանաբար դուրս մղվեցին եկեղեցական տոնաձիսական գրեթե բոլոր բաղադրիչները: Միայն ընտանեկան և ազգակցական միջավայրը կարողացավ մասամբ պահպանել հնամենի ավանդույթները, որը պայմանավորված էր միջսերնդային ժառանգորդությամբ:

Աթեիստական գաղափարախոսության պայմաններում, երբ գործում էին հատուկենտ եկեղեցիներ, Հայոց եկեղեցին հնարավորինս կարողացավ պահպանել զուտ կրոնական արարողությունները: Ճիշտ է, ընտանիքն ու ազգակցական միջավայրը միշտ էլ կարևոր դերակատարություն են ունեցել ավանդույթների պահպանման գործում, սակայն այս ոլորտում ևս նկատվում էին տոների անկման և ձևափոխման միտումներ:

Սույն հոդվածում խորհրդային մերժողականության համատեքստում փորձել ենք անդրադառնալ հայոց քրիստոնեական Տերունի երկու տոներին՝ Զատիկին և Համբարձմանը, որոնք հատուկ հալածանքի ենթարկվեցին իշխանությունների կողմից, քանի որ վերջիններս նրանցում տեսնում էին կրոնական գաղափարախոսություն քարոզելու վտանգներ:

Թեման կարևորվում է ոչ միայն զուտ ճանաչողական նշանակությամբ, այլև կրոնական-համակարգային փոփոխությունների գործընթացում մերժողականության դրսևորումների տեսանկյունից (այն է՝ հոգևորականների հալածանք, սրբազան կառույցների վերացում, դավանանքի ձևով պայմանավորված՝ տոնաձիսական նոր գաղափարախոսության մշակում և այլն): Խոսքը վերաբերում է ոչ միայն կրոնական (օրինակ՝ հեթանոսությունից քրիստոնեության անցումը), այլև քաղաքական գաղափարական

համակարգերի (օրինակ՝ Հայոց Ազգային պետությունից անցումը խորհրդային) փոփոխություններին: Ուշագրավ է այն հանգամանքը, որ եթե առաջին դեպքում գործ ունենք զուտ դավանաբանական ձևերի փոփոխման հետ, ապա երկրորդում կրոնը մերժվում էր ընդհանրապես և նույնիսկ՝ իր հեթանոսական հիմքերով, որը շատ հստակ երևում է նշված տոների օրինակով:

Մեթոդ

Այս հետազոտության մեթոդաբանության հիմքում պատմահամեմատական վերլուծություններն են:

Հանգամանալից վերլուծվել են թեմային առնչվող նյութերը և եղած սակավաթիվ ուսումնասիրությունները: Սակայն այս համատեքստում կարևորվում են տվյալ ժամանակի մամուլի տվյալները, որոնք չնայած հակակրոնական ուղղվածությանը, ունեն բավական կարևոր սկզբնաղբյուրների արժեք: Բացի այդ, նույնիսկ դրանց մերժողականության ենթատեքստում առավել ընկալելի են ավանդույթների պահպանվածության արեալները և դրսևորման ձևերը:

Ուշագրավ են հատկապես 1980-ականներին Հայաստանի տարբեր բնակավայրերում իրականացված դաշտային ազգագրական հետազոտությունների ընթացքում բանասացներից գրանցված արժեքավոր և եզակի տվյալները, որոնցով էլ ավելի է հիմնավորվում մեր ուսումնասիրությունը:

Զատիկ

Զատիկ կամ Քրիստոսի Հարություն տոնի կապակցությամբ իշխանությունները կազմակերպում էին հակակրոնական միջոցառումներ՝ միտինգներ, երթեր, դասախոսություններ, թատերականացված ներկայացումներ, դիմակահանդեսներ, ցուցահանդեսներ և այլն¹: Դրանց կազմակերպիչները հիմնականում «գավխորհուրդի կողմից ստեղծված բջիջներն էին»²:

Ակումբային, թատերական և գործարանային զեկուցումներից ու դասախոսություններից բացի, բոլշևիկյան մամուլում հաճախ հրատարակվում էին հողվածներ, որոնց հեղինակներն, անդրադառնալով տոնի նախաքրիստոնեական արմատներին, զուգահեռներ էին անցկացնում նաև

¹ Անաստված 1929, № 5-6, 24-25, Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 7, 1-2, Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 7, 2, Անաստված 1929, № 3, 13:

² «Քրիստոսի ծննդյան» և «հարության» առթիվ տարածված հակակրոնական կամ պանիայի ընթացքում Ա.Մ. գավխորհուրդի կողմից կազմակերպված են 20 նոր բջիջներ և 4 խմբակներ: Ներկայումս Ա.Մ. գավառային կազմակերպությունն ունի 63 բջիջ և 4 խմբակ, որոնք ընդգրկում են 5225 անդամներ» (Անաստված 1929, № 5-6, 24):

այլազգիների շրջանում տարածված նմանատիպ տոների հետ³:

Բոլշևիկները *պատրմականորեն ուսումնասիրում և վերագնահատում էին* Չատիկը՝ այն ամբողջությամբ ժխտելու նկատառումներով. «ԱՄ⁴ Կենտրոնի տվյալների համաձայն հակազատկական կամպանիան շատ ավելի աշխույժ է ընթացել, քան հակաձնդյանը: Այդ տվյալները վկայում են, որ շատ տեղական ԱՄ խորհուրդներ ժամանակին չեն պատրաստվել կամպանիայի համար: Կրոնականներն իրենց ելույթներում տեղ-տեղ հասել են մինչև խորհրդային կառավարության դեմ ուղղված հակահեղափոխական կոչերի: Մոսկվայում, ընկ. Ֆրունզեի անվան ֆաբրիկայում բաբտիստները (աղանդավորներ) նախազատկական կամպանիայի ժամանակ շրջում էին բանվորական կազարմաներում և ագիտացիա էին մղում, որ բանվորները չմասնակցեն ֆաբկոմի ընտրության և Չատիկ տոնին»⁵:

Այս ավանդական տոնի նկատմամբ հրապարակումների մերժողական, անհանդուրժողական վերաբերմունքը պայմանավորված էր քաղաքական իրավիճակով, քանի որ նորելուկ գաղափարախոսների համար թշնամիներ էին ոչ միայն քրիստոնեական Չատիկը և այն նշող եկեղեցին՝ իր հոգևոր ծառայողներով, այլև Չատիկի հեթանոսական նախատիպը՝ իր քրմական դասով, որոնք դարձյալ «շահագործել են աշխատավորներին»: Շատ հաստատություններում իշխանությունների հովանավորությամբ որոշումներ էին ընդունվում այդ օրերին պարտադիր աշխատելու վերաբերյալ, և դրանով իսկ անտեսում իրենց իսկ հաստատած պետական դեկրետներն ու օրենքները⁶:

Քրիստոնեականը մերժելու նպատակով իշխանությունները կազմակերպում էին «կոմերիտական զատիկներ», որոնց միջոցով փորձում էին *բացահայտել և քարոզել կրոնական այդ և մյուս տոների հեղափոխական իմաստը*⁷:

Եկեղեցիները փակելու և ավերելու հետևանքով աստիճանաբար անկում էին ապրում Չատիկի կրոնական գլխավոր արարողությունները (ճրագալույց-խթում, պատարագ, ժամերգություն, ուխտ, մատաղ և այլն):

Չնայած հալածանքներին, տոնի ավանդական շատ բաղադրիչներ շարունակում էին գոյատևել՝ սկսած զատկական ծիսական ուտեստից (ծու,

³ Նիմանդ, Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 7, 2, Նիմանդ, Անաստված 1930, № 4, 6-8, Նիմանդ, Անաստված 1931, № 3, 4-6, Նիմանդ 1931, 79-81:

⁴ ԱՄ - Անաստվածների միություն:

⁵ Անաստված 1929, № 5-6, 24-25:

⁶ Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 5-6, 4, Մաճկալ, 1924, ապրիլի 25, Պետրոսյան, Անաստված 1930, № 4, 3-5:

⁷ Խորհրդային Հայաստան, 1923, ապրիլի 7, 2, Ավանգարդ 1924, ապրիլի 17, 1, Արծրունի 1982, 35-40:

փլավ, գաթա և այլն), ձվախաղերից, վեգախաղերից մինչև ավստո-մատաղը (զոհաբերում էին գառ, երինջ, եգ և այլն), շնորհավորական փոխայցելությունները, մեռելոցները և ուխտերը: Պահպանվում էին նաև գատկական ժողովրդական երգերի որոշակի տարրեր, որտեղ արտացոլված էին աշխատավորների հույսերն ու սպասելիքները՝ կապված սպասվելիք բերքի հետ⁸:

Ընդհանուր էին դեպքեր, երբ ակտիվիստների նախաձեռնությամբ, գյուղացիները նույնիսկ հրաժարվում էին ընդունել ծխական քահանային. «Ողջաբերդում գյուղացիների մեծ մասը Քրիստոսի Զատիկը չտոնեց: Առավոտյան տերտերն ու տիրացուն եկան գյուղ, տեսան՝ գյուղացիները չարացել են և նրանց չեն ընդունում: Նրանց վրա մեծ ազդեցություն է գործել շրջկոմի կազմած դասախոսությունը: Տերտերն ու տիրացուն հուսահատ գնացին Շոր-բուլախ գյուղը: Բայց այնտեղ էլ ընդունելություն չգտան: Շոր-Բուլախցիք այդ օրը մինչև անգամ կերակուր չէփեցին, որպեսզի երդիկներից ծովս չբարձրանար և գատկվա տպավորություն չառաջացներ»⁹:

Իշխանությունների ճնշմամբ, խթամի երեկոյան ոչ թե եկեղեցի էին գնում, այլ՝ թատրոն՝ հակազատկական ներկայացումներ դիտելու նպատակով¹⁰:

Ընդհանուր առմամբ, տոնն առավել կենսունակ էր գյուղական շրջաններում¹¹: Քաղաքային միջավայրում նկատվում էր անկման միտում, որը պայմանավորված էր հալածանքների ուժգնությամբ (քանի որ հիմնականում քաղաքներում էին կենտրոնացած խորհրդային գաղափարախոսական կառույցները):

Ինչ վերաբերում է Զատիկի մասնակիցների սոցիալական կազմին, ապա այն մեծ մասամբ բաղկացած էր տարեցներից (մասնավորապես՝ կանանցից)¹²: Իսկ «Կոմերիտական Զատիկ» մասնակիցները հիմնականում հասարակական-քաղաքական կազմակերպություններին անդամագրված երիտասարդությունն էր:

Զատիկ նկատմամբ պետական վերաբերմունքն արտացոլվեց նաև

⁸ ԴԱՆ 1986, Ապարանի շրջան, գ. Վարդենուտ, 6-7, ԴԱՆ 1986, Ապարանի շրջան, գ. Քուչակ, 19, ԴԱՆ 1986, Արագածի շրջան, գ. Ծաղկահովիտ, 31-35, ԴԱՆ 1986, Արագածի շրջան, գ. Նորաշեն, 42, ԴԱՆ 1986, Արագածի շրջան, գ. Գեղաձոր, 78-79, ԴԱՆ 1987, Հրազդանի շրջան, գ. Արզական, 16, ԴԱՆ 1987, Ախուրյանի շրջան, գ. Վահրամաբերդ, 32-33, ԴԱՆ 1987, Ախուրյանի շրջան, գ. Կապս, 13, ԴԱՆ 1987, Հրազդանի շրջան, գ. Քաղսի, 15-23, 65-67, ԴԱՆ 1987, Ախուրյանի շրջան, գ. Լեռնուտ, 48, Մկրտչյան 2016, 171-172, Նիմանդ 1931, 80-81, 122, Անաստված, 1928, № 5-6, 12:

⁹ Նահապետյան, Անաստված 1929, № 4, 17:

¹⁰ Լազար 1929, Անաստված, № 4, 17:

¹¹ Անաստված 1932, № 5-6, 3-5:

¹² Լազար 1929, Անաստված, № 4, 17:

խորհրդային պոեզիայում, ինչպես, օրինակ՝

Տերտերի ողբը (1929 թ.)

- Քեզ սպասող չմնաց
 ուր ես գալի այ Ջատիկ,
 դանելի ասող չմնաց
 զուր ես գալի, այ Ջատիկ:
 Ցավ ու վիշտը մեզ պատեց,
 նոր սերունդը մեզ ատեց.
 մենք դառել ենք կեղտ ու մուր,
 մեզ չեն տալիս խեչամբուր:
 Դաշնակները հեռացան,
 էլ հայրենիք չդարձան.
 մեր թալան ու քեփերը
 ախ, ախ, նրանք մոռացան:

Էս անաստված նորերը
 սև արին մեր օրերը
 կրթեցին փոքր ու մեծին
 ախ, մեզ «փառք»-ից զրկեցին:
 Քեզնով խնդող չմնաց
 ո՞ւր ես գալի, այ գատիկ
 էլ աղոթող չմնաց
 զուր ես գալի սեվ Ջատիկ¹³:

Համբարձում

Համբարձումը 1920-1930-ական թթ. կենցաղում դեռևս շարունակում էր ընկալվել որպես երիտասարդության և հատկապես երիտասարդ կանանց ու չամուսնացած աղջիկների տոն¹⁴: Այդ շրջանում պահպանվել էին այս տոնի ավանդական ծիսաշարի գլխավոր բաղադրիչները, մասնավորապես «Վիճակ-Ջանգյուլումը»՝ իր նախապատրաստական, ծիսահմայական բնույթի արարողությունների և խաղիկների գրեթե ողջ համալիրով¹⁵:

Մասամբ պահպանվել էին նաև «Լեյլի և Մեջլում» սիրահար զույգի մասին ավանդագրույցները: Հավատալով, որ Համբարձման գիշերը ջրերը բուժիչ զորություն են ստանում՝ շատերը լողանում էին՝ ցավերից ազատվելու հույսով ու հավատով:

Աղջիկները տոնի նախորդ օրը դաշտերից հավաքում էին երեք-նուկ, ինչպես նաև քարեր ու զցում խնոցու մեջ՝ հավատալով դրանց առատություն պարգևող զորությանը:

Գիշերը դաշտերում արածելու էին հանում կթան կովերին՝ նրանց չար աչքից պաշտպանելու հավատով: Տղաները «համբարձման սիրելի եզների» վրա փալասներ էին զցում և շրջում բնակավայրում՝ բնամթերք (յուղ, գաթա և այլն) հավաքելու նպատակով:

¹³ Ներսիսյան, Անաստված 1929, № 6, 12:

¹⁴ Նիմանդ 1931, 85, Անաստված 1929, № 4, 8-9:

¹⁵ ԴԱՆ, Վարդենուտ, 8-9, ԴԱՆ, Ծաղկահովիտ, 35-36, ԴԱՆ, Գեղադիր, 21, ԴԱՆ, Մելիք գյուղ, 92, ԴԱՆ, Վահրամաբերդ, 37-38, ԴԱՆ, Քաղսի, 25-27, 68-70, ԴԱՆ, Արգական, 8:

Տոնի ավանդական հիմնական ուսեստը կաթնապուրն էր¹⁶:

Տարածված էին շնորհավորական փոխայցելությունները (հատկապես՝ նորահարս ունեցողների շրջանում), առավել ևս, որ այդ տոնը դեռևս առնչվում էր նորահարսների դարձի սովորության ժամկետին (Չատկից մինչև Համբարձում)¹⁷: Դաշտերում և կալերում կազմակերպվում էին խնջույքներ, խաղեր, որոնք ուղեկցվում էին երգ ու երաժշտությամբ:

Տարածված էին նաև ուխտագնացությունները. Արագածի շրջակա գյուղերի համար Համբարձման գլխավոր ուխտավայրը շարունակում էր մնալ Արայի լեռան Ծաղկավանքը¹⁸:

Այդուհանդերձ, Քրիստոսի Համբարձման տոնի նկատմամբ պետության դիրքորոշումը դարձյալ բացասական էր: Այդ վերաբերմունքն իր արտահայտությունը գտավ խորհրդային բանահյուսության մեջ, որն ուներ որոշակի առանձնահատկություն: Բոլշևիկյան բանահյուսությունը ոչ միայն ծաղրական-ժխտողական վերաբերմունքի արտահայտություն էր այդ տոնի և նրա մասնակիցների նկատմամբ, այլև ավանդական ջանգլուումի ձևերով նոր հասարակարգ կառուցող երիտասարդության յուրօրինակ գովք էր.

Ջան Գիւլում (1931 թ.)

Մե յար ունեմ բաշլիկ,
Ջան գուլում, ջան, ջան,
Ըմմեն տեղ էլ հիշելիք,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Ինք կաշխատի, զինք կուտի,
Ջան գուլում, ջան, ջան:
Մե յար ունեմ կոմսոմոլ,
Ջան գուլում, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Մե յար ունեմ կոմունիստ,
Ջան գուլում, ջան, ջան,
Չունի դադար ու հանգիստ
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Օրը գրի խայիր լիստ,
Ջան գուլում, ջան, ջան,
Գեղի մեջ շատ ի խիստ,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Մե յար ունեմ պարտիզան,
Ջան գուլում, ջան, ջան,
Գործեր ունի զանազան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Ընձմեն շատ սիրալի,
Ջան գուլում, ջան, ջան,
Կոլխոզնիկ է ժրաջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Մե յար ունեմ կոլխոզնիկ,
Ջան գուլում, ջան, ջան,
Բանվոր, խելոք, գեղեցիկ,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Ըսկի բանս պակաս չի,
Ջան գուլում, ջան, ջան,
Դուռը տունըս բոլ ու լինք,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Մեր յար ունեմ հարվածային,
Ջան գուլում, ջան, ջան,
Վոնչ անկիրթ ի, վոնչ խային,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Օգգա մարթի չի լսի,
Ջան գուլում, ջան, ջան,
Բոլշևիկ ի շատ կային,
Ջան ծաղիկ, ջան, ջան¹⁹:

¹⁶ ԴԱՆ, Քաղսի, 68, ԴԱՆ, Վարդենուտ, 8, ԴԱՆ, Քուչակ, 19-20, ԴԱՆ, Գեղաձոր, 81, Նիմանդ 1931, 85-88, Նիմանդ, Անաստված, 1929, № 4, 9:

¹⁷ ԴԱՆ, Ծաղկահովիտ, 35:

¹⁸ ԴԱՆ, Նորաջեն, 43:

¹⁹ Հայկական խորհրդային ֆոլկլորը 1938, 118-119:

Համբարձում-Վիճակի ավանդական երգերով գովերգվում և մեծարվում էին ոչ թե սիրո զգացումներով լեցուն աղջիկներն ու տղաները, այլ նոր հասարակարգ կառուցող երիտասարդ բոլշևիկը, կոմսոմոլը, կոլխոզնիկը և որևէ այլ կուսակցական-պաշտոնյա²⁰:

Եզրակացություններ

Այսպիսով՝

- Խորհրդային պետությունն ավանդական տոները մերժելու նպատակով մշակել էր որոշակի ծրագրեր, որոնք հիմնականում ունեին միտինգային, երթային և թատերականացված բնույթ:

- Պետության գլխավոր թիրախն այդ տոների եկեղեցական բաղադրիչներն էին:

- Ընտանիքն էր այն միակ սոցիալ-ազգակցական միջավայրը, որտեղ գոյատևեցին ավանդական տոները, որոնք այս դեպքում նույնպես զերծ չմնացին հալածանքներից:

- Ավանդականը մերժելու մեթոդներից էր նոր արարողությունների մշակումը հեղափոխական որոշակի անվանափոխումներով՝ մեծ մասամբ պահպանելով եկեղեցական տոների ժամկետները:

- Մերժվում էին ոչ միայն քրիստոնեական Զատիկը և Համբարձումը, այլև դրանց նախաքրիստոնեական կամ հեթանոսական հիմքերը:

- Ավանդական տոների նկատմամբ պետական ժխտողական վերաբերմունքն արտացոլվեց խորհրդային պոեզիայում և բանասիրության մեջ. դրանք, սակայն, դիպվածային էին և ունեին գաղափարախոսական բնույթ:

- Այդ տոներն առավել կենսունակ էին գյուղերում, որոնք ավանդույթների պահպանման և սնուցման հիմնական բնօրրանն են: Իսկ քաղաքներում, ավանդական տոնակատարությունների անկմանը զուգընթաց, նկատվում էր խորհրդային տոների տարածման միտում, որը պայմանավորված էր այդտեղ կենտրոնացված պետական-գաղափարախոսական կառույցների առկայությամբ:

- Այս տոներն ունեն արդիական նշանակություն, քանի որ, ձևափոխումներով հանդերձ, կենցաղավարում են նաև մեր օրերում: Ներկայիս տոնածիսական համակարգի որոշ դրսևորումների ակունքները պետք է դիտարկել հենց 1920-1930-ական թթ. խորհրդային քաղաքականության համատեքստում:

Գրականություն

Անաստված 1928, Հակազատկական կամպանիայի արդյունքները, Երևան, № 5-6, 24-25:

Անաստված 1928, Մատաղ, Երևան, № 5-6, 12:

Անաստված 1929, Երևան, № 3, 13:

²⁰ Մկրտչյան 2016, 173:

- Անաստված 1929, «Անաստված»-ների նոր բջիջներ, Երևան, № 5-6, 24:
- Անաստված 1932, Զատիկը և մեր պայքարը կրոնի դեմ, Երևան, № 5-6, 3-5:
- Ավանգարդ 1924, Կոմերիտական Զատիկ, Երևան, ապրիլի 17, 1:
- Արծրունի Գ. 1982, Մասսայական աթեիզմի զարգացումը Հայաստանում (1920-1930 թթ.), «ԵՊՀ հրատ.», Երևան, 46 էջ:
- Լազար 1929, Մեր գյուղում տերտերը հաջողություն չունի, Անաստված, Երևան, № 4, 17:
- Խորհրդային Հայաստան 1923, Հակակրոնական պրոպագանդայի խնդիրը, Երևան, ապրիլի 7, 1-2:
- Խորհրդային Հայաստան 1923, Զատիկ, Երևան, ապրիլի 7, 2:
- Խորհրդային Հայաստան 1923, Պաշտոնական որոշում Անդրկովկասյան աշխտողկոմատի Հայաստանի Լիազորի Զատկական տոների մասին, Երևան, ապրիլի 5-6, 4:
- Մաճկալ 1924, Զատիկի փոխարեն մայիս, Երևան, ապրիլի 25, 1:
- Մկրտչյան Ս. 2016, Հայոց տոնածիսական մշակույթը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 400 էջ:
- Մկրտչյան Ս. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ) 1986, Ապարանի շրջան, գ. Վարդենուտ, Քուչակ, Գեղադիր, Ծաղկահովիտ, Նորաշեն, Գեղաձոր, Մելիք գյուղ, ԴԱՆ 1987, Հրազդանի շրջան, գ. Արզական, Քաղսի, Ախուրյանի շրջան, գ. Վահրամաբերդ, Կապս, Լեռնուտ:
- Նահապետյան Կ. 1929, Մեռնում է հին կենցաղը Ողջաբերդում, Անաստված, Երևան, № 4, 17:
- Ներսիսյան Հ. 1929, Տերտերի ողբը (Պարողիա), Անաստված, Երևան, № 6, 12:
- Նիմանդ 1929, Քրիստոսի Համբարձումը, Անաստված, Երևան, № 4, 8-9:
- Նիմանդ 1931, Եկեղեցական տոներ, Երևան, 124 էջ:
- Նիմանդ 1930, Ինչ տոն է Զատիկը, Անաստված, Երևան, № 4, 6-8:
- Նիմանդ 1931, Քրիստոսի հարությունը, Անաստված, Երևան, № 3, 4-6:
- Նիմանդ 1926, Հարության տոնը և նրա ծագումը, Խորհրդային Հայաստան, Երևան, ապրիլի 7, 2:
- Պետրոսյան Հ. 1930, Կորչի Զատիկը, Կեցցե հնգամյակը չորս տարում, Անաստված, Երևան, № 4, 3-5:
- Ջանգյուլում, Հայկական խորհրդային ֆոլկլորը, Երևան (1931 թ. ասել է Ղամարլուի շրջանի Զոհրապյու գյուղի 16 տարեկան կոմերիտուիի Փառո Շահբազյանը):

ԶԱՏԻԿ ԵՎ ՀԱՄԲԱՐԹՈՒՄ ՏՈՆԵՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ.

Սամվել Մկրտչյան

Քրիստոնեական Չատիկ և Համբարձում տոների կապակցությամբ խորհրդային իշխանությունները կազմակերպում էին հակակրոնական լայնամասշտաբ միջոցառումներ: Դրանք էթնիկ և կրոնական ավանդույթները ժխտող միտինգներ, երթեր, դասախոսություններ, ներկայացումներ և ցուցահանդեսներ էին:

Մամուլը ևս ծանրաբեռնված էր հակակրոնական հոդվածներով, որոնցում մերժվում էին նույնիսկ քրիստոնեական այդ տոների այլէթնիկ և հեթանոսական զուգահեռները: Անհանդուրժողական այդ վերաբերմունքը պայմանավորված էր այն բանով, որ նոր գաղափարախոսների համար թշնամի էին ոչ միայն Չատիկը և Համբարձումը՝ իրենց սպասարկող եկեղեցականներով, այլև այդ տոների հեթանոսական նախատիպերը՝ իրենց քրմական դասով, որոնք դարձյալ «աշխատավորների շահագործողներն էին»:

Այդ մերժողականությունը հատկապես ակնառու էր Չատիկի կապակցությամբ, որը փորձում էին փոխարինել «կոմերիտական կամ կարմիր գատիկներով»: Եկեղեցիները փակելու և քանդելու հետևանքով աստիճանաբար անկում էին ապրում այդ տոների կրոնական գլխավոր արարողությունները (պատարագ, ժամերգություն, ուխտ, մատաղ և այլն): Լինում էին դեպքեր, երբ իշխանությունների ճնշմամբ տոնական այդ օրերին գյուղացիները «հրաժարվում էին ընդունել ծխական քահանաներին»:

Այդուհանդերձ, Չատիկի և Համբարձման շատ բաղադրիչներ մասամբ շարունակում էին գոյատևել՝ սկսած ծխական ուտեստից, խաղերից մինչև հավատալիքները, մատաղը, ուխտերը և մեռելոցները:

Այդ տոների նկատմամբ պետական մերժողական և ծաղրական վերաբերմունքն արտացոլվեց նաև խորհրդային պոեզիայում և բանահյուսության մեջ: Եթե Չատիկի հանդեպ առկա էր ակնհայտ մերժողականություն, ապա Համբարձման դեպքում ավանդական երգ-խաղիկները դեռահասների նվիրագործման ծեսից երբեմն վերածվում էին նոր հասարակարգ կառուցող երիտասարդ բոլշևիկի, կոմսոմոլի կամ կոլխոզնիկի գովերգության:

Բանալի բռներ՝ Քրիստոսի Հարություն, Չատիկ, Համբարձում, վիճակ, ջան-գյուլում, խորհրդային, հավատալիք:

ПРАЗДНИКИ ПАСХИ И ВОЗНЕСЕНИЯ ГОСПОДНЯ В 1920-1930-ЫЕ ГГ.

Самвел Мкртчян

В связи с христианскими праздниками Пасхи и Вознесения Господня советские власти проводили широкомасштабные антирелигиозные мероприятия: митинги, шествия, лекции, представления и выставки, направленные против этнических и религиозных традиций. Подобная негативная настроенность была обусловлена тем, что для новой идеологической концепции были неприемлемы не только Пасха и Вознесение, включая церковных служителей, проводивших эти религиозные мероприятия, но и языческие прообразы этих праздников вместе со жрецами, которые расценивались в качестве “эксплуататоров рабочих”.

Эта нетерпимость особенно проявлялась в отношении Пасхи, которую пытались заменить “комсомольскими или красными божьими коровками”.

В результате значительно сократилось число главных религиозных ритуалов (литургия, богослужение, паломничество, матах и др.). Нередко в такие праздничные дни под давлением властей крестьяне “отказывались принять приходских священников”.

Тем не менее многие элементы Пасхи и Вознесения Господня частично продолжали бытовать, начиная с ритуальных блюд, игр, кончая матахом, паломничествами и днями поминовения усопших.

Отрицательное отношение властей к этим праздникам нашло отражение и в советской поэзии и фольклоре. Если Пасха открыто отрицалась, то песни-игры, связанные с обрядом посвящения подростков в праздник Вознесения Господня, превращались в хвалебную песню о молодом большевике, комсомольце или колхознике, которые активно содействовали становлению нового общественного строя.

Ключевые слова – Воскресение Христово, Пасха, Вознесение Господня, гадание, джан-гюлум, советский, поверье.

THE FESTIVALS OF EASTER AND ASCENSION IN 1920S AND 1930-S

Samvel Mkrtchyan

The Soviet governments organized large-scale anti-religious actions against Christian festivals: Easter and Ascension of Jesus Christ. Demonstrations, marches, lectures, performances and exhibitions were conducted against ethnic and religious traditions.

The press was filled with anti-religious articles which even denied other ethnic and pagan parallels with Christian holidays. This attitude of intolerance was conditioned by the fact, that for the new ideologists not only Easter and Ascension with its clergymen were considered as enemies, but also the pagan models of these festivals with their pagan priests, who were also considered as "exploiters of working class".

The certain disregard was particularly emphasized on Easter, which they tried to replace with Komsomol and Red Easters. As a result of the closure and demolition of churches, the main religious ceremonies of these festivals were gradually diminished (liturgy, sacrament, pilgrimage, sacrifice and etc.). There were some cases, when under the pressure of the government the villagers refused the services of the clergymen during these days.

However, some traditional components of Easter and Ascension still continued their existence, from ritual meals, games to beliefs, immolation, the remembrance day of the dead.

This rejection and mocking of these festivals are also reflected in Soviet poetry and folklore. If the disregard for Easter was very obvious, in the case of Ascension, traditional songs were sometimes transformed from the rituals of youth into praise of young Bolsheviks, Komsomol members or collective farmers.

Key words – Revelation of Jesus Christ, Easter, Ascension, allotment, jangyulum, soviets, beliefs.

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Կարեն Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ք. Երևան 0025, Չարենցի փ. 15
Էլ հասցե՝ karenhovhov@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 05.12.2018, գրախոսվել է 31.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Ժողովրդական սրբավայրերի մեջ իրենց ուրույն տեղն են գրավում Սուրբ գրքերի պաշտամունքի հետ կապված սրբավայրերը, որոնք ստեղծված են այդ գրքերի պահպանման և պաշտամունքի նպատակով: Հայոց մեջ Սուրբ գրքերը հիմնականում ձեռագիր ու տպագիր ավետարաններ են, ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» գիրքը (Նարեկ) և հմայիլներ: Բոլոր Սուրբ գրքերը մտնում են «տան սրբերի» ընդհանուր համալիրի մեջ:

Սույն հոդվածում դիտարկվում են Թուխ Մանուկ ավետարանները, դրանց կապը նույնանուն սրբավայրերի հետ: Փորձ է արվում հիմնավորելու Թուխ Մանուկ և Ս. Մանուկ ավետարանների և սրբավայրերի, նաև Տղամանուկ սրբավայրերի ընդգրկումը միևնույն համալիրի մեջ:

Ընդհանուր դրույթներ

Սուրբ գրքերի և մասնավորապես ավետարանների պաշտամունքը լայնորեն տարածված էր և է Հայաստանի բազմաթիվ շրջաններում: «Տան սրբերի» և մասնավորապես ավետարանների պաշտամունքի տարածվածության մասին կարելի է կարծիք կազմել ինչպես ազգագրական սկզբնաղբյուրներից, այնպես էլ դրանց ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներից, ինչպես, օրինակ, Գ. Հովսեփյանի¹, Ն. Քոթանջյանի², Բ. Չուգասզյանի³, Հ. Մարությանի⁴, Թ. Գևորգյանի⁵, Ս. Վարդանյանի⁶, Հ. Գալստյա-

¹ Հովսեփյան 1983, 20-28:

² Քոթանջյան 2006:

³ Չուգասզյան 1985, 136-144:

⁴ Մարության 2001, 337-346:

⁵ Գևորգյան 2001, 411-413:

⁶ Վարդանյան 2007, 311-316:

նի⁷, Անուշավան եպս. Ժամկոչյանի⁸, Գ. Ստեփանյանի⁹ և այլոց հետազոտություններից: Թեև ավետարանների հանդեպ հատուկ վերաբերմունքը մտնում է առհասարակ «տան սրբերի» երևույթի տակ, սակայն, մեր կարծիքով, այն առանձնանում է, քանի որ դրանց մեջ գրվում էին նաև աղոթքներ, ուխտերի մասին հիշատակարաններ, մաղթանքներ, ներկայացվում էին հավատքին, զանազան դեպքերին առնչվող այլ տեղեկություններ:

Պաշտամունքի առարկա դարձած ավետարանները հաճախ ունենում են իրենց հատուկ անունները՝ ըստ կազմի գույնի, տոհմանվան, հրաշալի հատկության, գտնվելու վայրի և այլնի: Սրբավայրի և դրա ստեղծման առիթը հանդիսացող Սուրբ Գրքի անունները սովորաբար նույնն են. գիրքն իր անունն է տալիս սրբավայրին, և դա վերաբերում է ոչ միայն փոքր մատուռներին, այլև եկեղեցիներին: Մասնավորապես, Երևանի Ս. Զորավոր Աստվածածին եկեղեցուն իր անունն է տվել այդտեղ տեղափոխված Զորավոր Ավետարանը¹⁰: Որոշ դեպքերում, սակայն, երկու Սուրբ գրքերի անունները կարող են համադրվել, օրինակ՝ Գրիգոր Նարեկացի Ավետարան¹¹ կամ Նարեկ Ավետարան: Քիչ չեն դեպքերը, երբ ավետարանը սրբավայրում չի գտնվում. առավել ցավալի դեպքերում դրանք առևանգվում են, կամ վաճառվում են խնամողների ժառանգների կողմից, երբեմն դրանք հանձնված են լինում Մաշտոցի անվ. Մատենադարանին կամ Էջմիածնի ձեռագրատուն, սակայն սրբավայրը չի կորցնում իր անունն ու ուխտավորին:

Թուխ Մանուկ Ավետարանները

Ինչպես հայտնի է, **Թուխ Մանուկ** անունը բնորոշ է ժողովրդական սրբավայրերին: Սակայն այդ անունը կրել են նաև որոշ հրաշագործ ավետարաններ: Այսպես, Առբերանի Գործոթ գյուղում հատուկ սնդուկի մեջ գյուղացիները պահում էին **Թուխ Մանուկ** անվամբ մի ձեռագիր Ավետարան, որին չէր կարող դիպչել աշխարհականի ձեռքը: Միայն երբեմն, երբ կարիք էր առաջանում բուժելու հիվանդություններ կամ մաշկային վերքեր, գյուղի քահանան այն դուրս էր հանում և ընթերցում էր: Այս Ավետարանն

⁷ Գալստյան 2007, 28-37:

⁸ Ժամկոչյան 2012, 28-35:

⁹ Ստեփանյան 2014, 249-257:

¹⁰ Շահագիր 2003, 227:

¹¹ Սիմոնյան, Հովհաննիսյան 2016, ԴԱՆ:

ընթերցվում էր քահանայի կողմից նաև աստվածային պատիժ համարվող աղետների դեպքում՝ երաշտ, կարկուտ, ցրտահարում և այլն¹²:

Խնուսի Պուռնագ գյուղն ուներ երկու Թուխ Մանուկ սրբավայր և մեկ Թուխ Մանուկ Ավետարան, որի մասին Ե. Մելիքյանը ոչինչ չի հայտնում¹³:

Ներքին Բասենի Գիլանտափ գյուղի տերտերանց Սաքոյի մագաղաթյա Թուխ Մանուկ Ավետարանը շատ հայտնի ուխտատեղի էր ներքին-բասենցիների համար: Ամեն շաբաթ երեկոյան տերտերանց Սաքոյի տուն էին այցելում բազմաթիվ հայ և թուրք կանայք: Յուրաքանչյուրն Ավետարանի առաջ մոմ էր վառում, կավե փոքրիկ խնկամանների մեջ խունկ էր ծխում, ծունր դնում և աղոթում: Այդ Թուխ Մանուկ Ավետարանը զորավոր էր և մուրազատու¹⁴:

Ամենայն հավանականությամբ, այդ նույն Թուխ Մանուկ Ավետարանի մասին է գրել նաև Աղ. Մխիթարյանցը, քանի որ երկուսի դեպքում էլ տիրոջ անունը Սարգիս է, երկու ավետարաններն էլ Բասենից են: Մխիթարյանցը այս Ավետարանը ներկայացնում է անձնավորված, ըստ որի, Սատանա Սարգսենց Թուխ Մանուկը պատանի, բարձրահասակ, գեղակազմ, նորաբուս մորուքով, շատ գեղեցիկ տղա է ու ամեն օր գնում է Բասեն¹⁵: Առհասարակ, ժողովրդի մեջ շատ տարածված է պաշտվող սրբավայրերը և ավետարաններն անձնավորելը¹⁶:

Թուխ Մանուկ Ավետարաններից միայն մեկի մասին ունենք հստակ «կենսագրական» տվյալներ, և այն իր անվամբ հասել է մինչև մեր օրերը: Այն այժմ գտնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանում, բերվել է Փերիայի Գովգ գյուղից, միառժամանակ պահպանվել է Աբովյան քաղաքում և հետո՝ 1979 թ. մարտին, Ավետարանի տիրոջ ուխտի համաձայն, հանձնվել է Ս. Էջմիածնին¹⁷: Այդ Ավետարանը պատկանում էր Դավիթ Մելիքյանին (Մելիքսեթյան), որի պատմելով՝ այն Հայաստանից իրենց հետ Սպահան են տարել նրա պապերը՝ Շահ Աբասի ժամանակ, իսկ 1979 թ.

¹² Միրախորեան 1885, Գ., 22-23:

¹³ Մելիքեան 1964, 105:

¹⁴ Հակոբյան 1974, 25-26:

¹⁵ Մխիթարեանց 1901, 164:

¹⁶ Մարության 2001, 339-341: Գալստյան 2007, 29, 30, 35: Ստեփանյան 2014, 251-255:

¹⁷ Չուգասյան 1985, 52-53: Տուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1980, 54. Հովհաննիսյան 2014, ԴԱՆ:

նա հետ է բերել հայրենիք: Թուփա Մանուկ Ավետարանը, պատմողի խոսքերով՝ «եղել է իրենց հայության վկայականը Պարսկաստանում»¹⁸:

Ըստ հնագրական տվյալների, Բ. Չուգասզյանը այն թվագրում է մոտավորապես XVI-XVII դդ.-ով¹⁹, իսկ Ս. Էջմիածնի ձեռագրերի Մայր ցուցակի կազմողները՝ XV-XVI դդ.-ով²⁰: Այն ունի կարմիր, թավջապատ տախտակե կազմ՝ խաչելության քանդակով՝ մեխված արծաթե հիմքի վրա, ձեռագիրը պատկերագարող է: Գրիչն ու ծաղկողն անհայտ են, իսկ պատվիրատուն է Խոջա Դավութը²¹:

Այս Ավետարանի վերջում կան նրա տերերի և ուխտավորների կողմից գրված մի քանի ընդարձակ հիշատակագրություններ, որոնք ամբողջապես հրատարակված են²²: Ինչպես պատմել է Ասողիկ քահ. Կարապետյանը, ամեն տարի, օգոստոսի վերջերին Ավետարանը Ս. Էջմիածնին հանձնողների սերունդները գալիս են Մայր Աթոռ այդ Ավետարանի ուխտին²³:

Մի քանի Թուփա Մանուկ ավետարաններ հայտնի են Իրանի Փերիայի գավառից: Այսպես, Փերիայի Հին Մնկերտ գյուղում (այժմ գոյություն չունի) եղել են երկու ձեռագիր ավետարաններ՝ Ս. Մկրտիչ և Թուփա Մանուկ: Գյուղի վրա հերթական հարձակումներից մեկի ժամանակ՝ 1780-ական թվերին գյուղի հոգևոր հովիվը՝ Միքայել վարդապետը, Ավետարանը փախցնում է Նոր Զուղա: Հետագայում այն վաճառվում է Նոր Զուղայի Դավրեժ թաղամասի Մանուկ Բարսեղենց ընտանիքին: Այն սկզբում պահվում է տանը, իսկ հետո, Մաղաքիա եպիսկոպոս Տերունյանի ժամանակ, դրվում է նույն թաղի Ս. Մինաս եկեղեցում: Գոնե մինչև 1960-ական թվականները այս Թուփա Մանուկը գտնվում էր Նոր Զուղայի Ս. Մինաս եկեղեցում: Տարին մեկ անգամ, Մեծ պասի ընթացքում 40 Մանկանց տոնին այն դուրս է բերվում ի տես հավատացյալների: Ավետարանը գրվել է Տեր Հովհաննես քահանայի ձեռքով, Քաջբերունիքի Արճեշ քաղաքում, ՋԻԸ (1579) թվականին²⁴:

¹⁸ Չուգասզյան 1985, 52-53:

¹⁹ Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1980, 54:

²⁰ Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1980, 53:

²¹ Չուգասզյան 1985, 53:

²² Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1980, 54-59: Հովհաննիսյան 2016, 87-89: Մեսրոպ արք. Աշխանն այդ հիշատակագրությունները հրատարակել է մասամբ՝ Աշխան 2001, 11-13:

²³ Հովհաննիսյան 2014, ԴԱՆ:

²⁴ Մինասեան 1971, 246-247:

Մեկ այլ Թուխ Մանուկ հայտնի է Միլակերտ գյուղում: Այս Ավետարանը գրվել է Խաչատուր սարկավագի ձեռքով, գրության թվականն անհայտ է, իսկ վայրը՝ անհասկանալի²⁵: Շուրիշկան գյուղում, բացի հոչակավոր Շուրիշկանի Ս. Բարսեղ Ավետարանից, հայտնի էր նաև Թուխ Մանուկ Ավետարանը: Այն գրվել է ՌԼԶ (1587) թվականին, տեղն ու գրիչը անհայտ են²⁶:

Մուշի Արտոնք գյուղում եղել է **Թուխ** անվանումով Ավետարան²⁷, որի մասին ոչինչ չկարողացանք գտնել, հնարավոր է, որ **Թուխ** անվանումը եղել է կազմի գույնի կամ, գուցե, այրված լինելու պատճառով:

Հ. Մարությանն իր հոդվածում դիտարկում է Հայաստանում բավականին տարածված «տան սուրբ» երևույթը: Ինչպես նշում է հեղինակը, «տան սրբերը» հաճախ լինում են Սուրբ գրքերը, մասնավորապես ավետարանները, որոնց հաճախ կցվում են տերերի տոհմանունները²⁸: Մարությանի ենթադրությամբ՝ քանի որ տան սրբերի մեջ շատ են սուրբ ավետարանները, որոնցից որոշները կոչվում են **Թուխ Մանուկ**, ապա հնարավոր է, որ տան սրբերը կապված են Թուխ Մանուկների հետ²⁹: Ամենևին չժխտելով, որ որոշ **Թուխ Մանուկ** կոչվող սրբավայրեր ժամանակին եղել են տան սրբեր, որոնց շնորհիվ հետագայում վերածվել են գյուղական սրբավայրերի, նշենք, որ բազմաթիվ Թուխ Մանուկներ ի սկզբանե եղել են հենց համայնքային սրբավայրեր: Մեզ այդպես էլ չհաջողվեց հայտնաբերել որևէ Թուխ Մանուկ սրբավայր, որն առաջացել է Թուխ Մանուկ Ավետարանի հիման վրա:

Շիրակի մարզի Քեթի գյուղում, որտեղ կա Թուխ Մանուկ մատուռ, ըստ գյուղացիների պատմածի, մի ժամանակ եղել է նաև Կոստիկենց Թուխ Մանուկ Ավետարանը. մատուռն ու Ավետարանը իրար հետ կապված չեն եղել: Այս Ավետարանը բուժիչ զորություն է ունեցել, այժմ գտնվելու վայրը հայտնի չէ³⁰:

²⁵ Մինասեան 1971, 301:

²⁶ Մինասեան 1971, 311-312:

²⁷ Լումայ 1899, Ա, 108:

²⁸ Մարության 2001, 341:

²⁹ Մարության 2001, 344:

³⁰ Սիմոնյան, Հովհաննիսյան, Ավետիսյան 2017, ԴԱԼ: Այժմ այդ տոհմից մարդ չի ապրում գյուղում, միայն թոռները երբեմն գալիս են գյուղ: Նրանց տվյալները գյուղացիները չգիտեին:

Ս. Մանուկ Ավետարանները

Հայաստանում հայտնի են մի քանի սրբավայրեր, որոնք կրում են **Ս. Մանուկ** անվանումը, քանի որ այդտեղ պահվել կամ հիմա էլ պահվում են **Ս. Մանուկ** անունով ավետարաններ:

Ս. Մանուկ ավետարան սրբավայր կա Սառնաղբյուր գյուղում: Այն բուժիչ է և խափանում է վատ երազները: Չկարողացանք պարզել՝ Ավետարանը տերերի մոտ է թե՞ ոչ, քանի որ մատուռի տերերը գյուղում չէին³¹: Նշենք, որ վատ երազ խափանելու զորություն են ունեցել Ախպարայի³² և Արճակի Թուփա Մանուկ սրբավայրերը³³:

Մեկ այլ Ս. Մանուկ Ավետարան սրբավայր հայտնի է Լեռնագյուղում: Այդ գյուղն այսօր գրեթե լքված է, սակայն մատուռը լավ խնամվում է տիրոջ կողմից: Ս. Մանուկ Ավետարանը և մնացած գրքերը գողացել են երկրաշարժից առաջ, որոնք մինչ այժմ էլ չեն գտել: Այս Ավետարանը բերվել է Բասենից: Ավետարանի սուրբը տեսիլքների մեջ երևում է սպիտակ հագնված, սպիտակամորուս ծերունու տեսքով³⁴:

Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի Ս. Մանուկ Ավետարան սրբավայրը հայտնի է իր զավակատու գործառույթով: Այդ սրբավայրում պահվում է հնատիպ Նոր Կտակարան, որն էլ համարվում է զորավոր զավակատու, և իր այդ զորության համար էլ կոչվում է **Ս. Մանուկ**: Սա, թերևս, առաջին դեպքն է, երբ հստակ բացատրվում է, թե ինչու է Սուրբ Գիրքը կոչվում **Ս. Մանուկ**. քանի որ մանուկներ է շնորհում: Լեռնակերտում կա երկու Թուփա Մանուկ սրբավայր. մեկը գտնվում է գյուղի դաշտերում, մյուսը՝ գյուղի վերին հատվածում և կոչվում է **Ներսոյենց Թուփա Մանուկ**: Ներսոյենց տոհմի ժառանգներից մեկը ապրում է գյուղում, և իրենց տանը պահվում է ձեռագիր մի Ավետարան: Թեև Թուփա Մանուկը կառուցել է Ավետարանի տեր Ներսոն, սակայն նրա Ավետարանը կոչվում է **Շեկ** և կապ չունի Թուփա Մանուկի հետ: Այժմ Շեկ Ավետարանը գտնվում է բնակելի տնից առանձնացված սրբավայրում³⁵:

Հայտնի սրբավայր է Վարդենիսի Մխոյի տան Մանուկ Ավետարանը: Այն հնատիպ Նոր Կտակարան է, որ բերվել է 1826-1828 թթ. Խոյից: Մանուկ

³¹ Սիմոնյան, Հովհաննիսյան 2016, ԴԱՆ:

³² Սիմոնյան, Հովհաննիսյան, Գրիգորյան 2017, ԴԱՆ:

³³ Ավագյան 1978, 87:

³⁴ Սիմոնյան, Հովհաննիսյան, Ավետիսյան 2017, ԴԱՆ:

³⁵ Սիմոնյան, Հովհաննիսյան, Ավետիսյան 2017, ԴԱՆ:

Ավետդրանը պահվում է հացատանը՝ իր հին տեղում: Սուրբը երբեմն տեսիլքներում հայտնվում է սպիտակամորուս, սպիտակազգեստ ծերունու տեսքով: Մարդիկ ուխտի են գալիս Ավետարանին և բժշկվում³⁶:

Մեզ հայտնի ևս երկու Ս. Մանուկ սրբավայր կապված չեն եղել Ս. Մանուկ ավետարանների հետ: Մեկը գտնվում է Վարդենիկում³⁷, մյուսը՝ Երևանում³⁸:

Թուխ Մանուկ Ավետարանների և Հիսուս Քրիստոսի կապը

Յուրահատուկ մի սրբավայր է հայտնի Շիրակի մարզի Մեծ Սեպասար գյուղում: Այն կոչվում է **Ս. Մանուկ Խաչ** և պատկանում է կաթոլիկ հայերին՝ «Ֆրանկներին»: Սրբավայրում պահվում է Հիսուսի խաչափայտի մասնիկը, որն, ըստ ավանդության, Մեծ Սեպասար է բերել Վատիկանում սովորած մի քահանա, որին այն տվել է եղեռնից փրկված մի կին: Գյուղացիների պատմելով՝ եկեղեցիներից դուրս (իմա՝ ժողովրդական սրբավայրում) աշխարհում կա միայն երկու այսպիսի մասունք, որոնցից մեկն իրենց գյուղինն է: Սրբավայրը կոչվում է **Ս. Մանուկ Խաչ**, քանի որ այդտեղ է գտնվում խաչափայտի մասնիկը, իսկ Քրիստոս նաև Մանուկ է³⁹:

Քաջբերունիքի Նվնդի Նորշինա գյուղի մերձակայքում եղել է Մանուկ Սուրբ Նշան անապատը, որը բավական հայտնի գրչական կենտրոն էր, որտեղ մասնավորապես սկսել են գրել 1390 թ. մի Աստվածաշունչ, իսկ 1392 թ. մի Ավետարան⁴⁰: Նշենք, որ հայտնի են երկու Թուխ Մանուկ Սուրբ Նշան սրբավայրեր, մեկը Կապադակի գավառում՝ Ճալեթա Թուխ Մանուկ Սուրբ Նշանը⁴¹, մյուսը Վանում՝ Վանի Թուխ Մանուկ Սուրբ Նշանը⁴², իսկ Տիգրանակերտում՝ Սադուգեղի Թուխ Մանուկ Սուրբ Խաչը⁴³: Քանի որ Սուրբ Նշանը վերաբերում է միայն Քրիստոսին, ապա **Մանուկ** անվան տակ պետք է հասկանալ հենց Հիսուս Քրիստոսին:

³⁶ Գալստյան 2010, ԴԱՆ: Տեղեկության համար խորին շնորհակալություն են հայտնում Հասմիկ Գալստյանին:

³⁷ Սիմոնյան, Հովհաննիսյան 2013, ԴԱՆ:

³⁸ Սիմոնյան, Հովհաննիսյան, Հակոբյան 2017, ԴԱՆ:

³⁹ Սիմոնյան, Հովհաննիսյան, Ավետիսյան 2017, ԴԱՆ:

⁴⁰ Ավետիսյան 2012, 227: Тер-Мовсесянъ 1902, 128.

⁴¹ Ուրբաթագիրք և Տաղարան 1975, Մաղթանք առ սքանչելագործ ս(ուր)բ նշանս... Կարապետյան 1982, 161:

⁴² Լալայեան 1916, 198:

⁴³ Ինճիճեան 1806, 211:

Որոշ բանահյուսական նյութերում Հիսուս Քրիստոս անվանվում է **Մանուկ Տղա**: Մոքոս վեպում մի քանի անգամ հանդիպում է Մանուկ Տղան: Մի դեպքում Մանուկ Տղան դատելու է Ահեղ դատաստանի ժամանակ⁴⁴: Մյուս դեպքում քարայրում Քրիստոսի ծննդյան մասին պատմության մեջ նա կրկին անվանվում է **Մանուկ Տղա**⁴⁵: Նշենք նաև, որ Քյոռ օղլիի մասին պատումների մի տարբերակում նրա ամենահզոր օգնականն է Իսա Բալան (բառացի՝ Հիսուս Մանուկ)⁴⁶:

«Մանուկ Տղա» ասելով՝ պետք է հասկանալ «տղա» - երեխա⁴⁷ և «մանուկ» - պատանի, երիտասարդ⁴⁸: Քրիստոս, որպես Մանուկ, ունի հատուկ պատկերագրություն բյուզանդական և կաթոլիկ արվեստում՝ Հիսուս Էմանուել⁴⁹: Էմանուելի ամենավաղ պատկերագրությունը Հայաստանում Ս. Ծնունդ մանրանկարն է (Քրիստոս Մանուկը՝ մանդրոլայի մեջ, Ս. Աստվածածնի գրկում), որ կարված է եղել Էջմիածնի Ավետարանի վերջում և թվագրվում է VI դ.-ով⁵⁰:

Տղա Մանուկն արտահայտված է ոչ միայն բանահյուսության մեջ: Այսպես, Սասունի Դալիոր գյուղում եղել է **Սբ. Տղամանուկ** անվանումով եկեղեցի⁵¹:

Մեր դիտարկած՝ Ս. Թուխ Մանուկ կամ Ս. Մանուկ ավետարանների անվանումները, ամենայն հավանականությամբ, ինչպես նշեցինք կապված են այն փաստի հետ, որ Քրիստոս նույնպես անվանվում է «Մանուկ»: Քանի որ ավետարանները հիմնականում պատմում են Քրիստոսի մասին, ապա մի խումբ պաշտվող ավետարաններ կարող էին ստանալ Ս. Մանուկ կամ **Ս. Թուխ Մանուկ** անունը:

Որոշ **Ս. Թուխ Մանուկ** և **Ս. Մանուկ** կոչվող սրբավայրերը (որոնցում չի եղել պաշտվող ավետարան) նույնպես, հնարավոր է, որ նվիրված են Հիսուս Քրիստոսին: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ մեր կողմից գրանցված մի քանի դեպքերում ժողովուրդը պատմում է, որ

⁴⁴ Մօքոս 1896, 27-28:

⁴⁵ Մօքոս 1896, 36:

⁴⁶ Քաուի, Հովհաննիսյան 2017, ԴԱՆ:

⁴⁷ Աճառյան 1979, IV, 412:

⁴⁸ Աճառյան 1977, III, 255:

⁴⁹ Лидов 2014, 54-60.

⁵⁰ Дурново 1979, 171. Mathews 1982, 199-215. Лидов 2014, 60.

⁵¹ Պետոյան 2014, 14:

Թուխ Մանուկը Քրիստոսն է (Ալափարսի, Արևշատի, Մաստարայի, Նիգավանի Թուխ Մանուկ սրբավայրերը և այլն)⁵²: Ինչպես տեսանք վերևում, Քրիստոսը՝ որպես Մանուկ արտացոլված է Մեծ Սեպասարի Ս. Մանուկ Խաչ սրբավայրի դեպքում ևս:

Եզրակացություններ

Ինչպես Թուխ Մանուկ սրբավայրերը, այնպես էլ Թուխ Մանուկ Ավետարան ուխտատեղիները, անվանումից բացի, չեն տարբերվում ժողովրդական մյուս սրբավայրերից իրենց տեսքով, կառույցով, ծեսերով, գործառույթներով, ուխտագնացություններով:

Բացի Պուռնագի և Գովգի Թուխ Մանուկ ավետարաններից (երկուսի դեպքում էլ հայտնի չէ՝ որտեղ են պահվել) և Վարդենիկի ու Երևանի Ս. Մանուկ սրբավայրերից (երկուսի դեպքում էլ ավետարան լինելու մասին խոսք չկա), մյուս դեպքերում սրբավայրը կոչվել է ավետարանի անունով: Այսինքն՝ **Թուխ Մանուկ** և **Ս. Մանուկ** սկզբում կոչվել է ավետարանը, հետո միայն՝ այդ հիմքով կառուցված սրբավայրը:

Ավետարանը կոչվել է «Թուխ Մանուկ» կամ «Ս. Մանուկ», քանի որ ավետարանները հիմնականում պատմում են Քրիստոսի երկրային կյանքի մասին, իսկ **Մանուկը** Քրիստոսի կայուն փոխանուններից է:

Ինչպես ցույց են տալիս որոշ տվյալներ, ժողովրդի մեջ եղել են սրբավայրեր, որոնք նվիրված են եղել Քրիստոսին: Դրանք հիմնականում կոչվել են **Տղամանուկ**, իսկ Ս. Մանուկ և Թուխ Մանուկ որոշ սրբավայրեր ևս պետք է դիտարկել որպես Քրիստոսին նվիրված սրբավայրեր: Այս առումով էլ Ս. Մանուկը և Տղամանուկը, մեր կարծիքով, կարող են ընդգրկվել Թուխ Մանուկ սրբավայրերի համալիրի մեջ:

Գրականություն

Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, III, Երևան, «ԵՊՀ հրատ.», 635 էջ:

Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, IV, Երևան, «ԵՊՀ հրատ.», 675 էջ:

⁵² Հովհաննիսյան 2016, 71-72:

- Աշճյան Մ. արք. 2001, Թուփա Մանուկ, Թուփա Մանուկ (Նստաշրջանի նյութեր), Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան (խմբ.), Երևան, «Հայաստան» հրատ., էջ 7-20:
- Ավագյան Ս. 1978, Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 188 էջ:
- Ավետիսյան Ա. 2012, Մանրանկարիչ Հովհաննես Խիզանցին, Բանբեր Մատենադարանի, պր. 19, Երևան, էջ 221-245:
- Գալստյան Հ. 2007, Սնահավատական գրույցներ (ըստ Վահրամաբերդ գյուղի սուրբ գրքերի վերաբերյալ պատմությունների), Հայ ժողովրդական մշակույթ XIV, Ս. Հարությունյան, Ս. Հոբոսյան (խմբ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 28-37:
- Գալստյան Հ. 2010, Դաշտային ազգագրական նյութ (ԴԱՆ), Գեղարքունիք, Վարդենիս:
- Գևորգյան Թ. 2001, Շուրիշկանի ավետարանի գործառությունը պարսկահայերի ավանդական կենցաղում, Հայոց սրբերը և սրբավայրերը, Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան (խմբ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 411-413:
- Ժամկոչյան Ա. եպս. 2012, Աստվածաշունչը և հայ բանավոր ավանդույթը, Երևան, «ԵՊՀ հրատ.», 280 էջ:
- Ինճիճեան Ղ. 1806, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամրիկոյ. Մասն առաջին. Ասիա, հ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 424+38 էջ:
- Լալայեան Ե. 1916, Վասպուրական. Հավատք, Ազգագրական հանդես, XXVI, Թիֆլիս, էջ 195-210:
- «Լումայ» 1899, Մշոյ աշխարհ, գիրք Ա, Թիֆլիս, էջ 107-149:
- Կարապետյան Հ. 1982, «Ճաղագ», «Ճալա» բառերը և նրանց տեղանվանական գործածությունը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 153-161:
- Հակոբյան Գ. 1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 460 էջ:
- Հովհաննիսյան Կ. 2014, ԴԱՆ, Վաղարշապատ:
- Հովհաննիսյան Կ. 2016, Թուփա Մանուկը բանահյուսական սկզբնաղբյուրներում, «Էջմիածին», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Փետրուար, էջ 69-95:
- Հովսեփյան Գ. 1983, Ծղրութի ավետարանը, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», էջ 20-28:

- Մարության Հ. 2001, «Տան սուրբ» երկույթը, ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները, Հայոց սրբերը և սրբավայրերը, Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան (խմբ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 337-346:
- Մելիքեան Ե. 1964, Հարք-Խնուս, Անթիլիաս, 584 էջ:
- Մինասեան Լ. 1971, Պատմութիւն Փերիայի հայերի (1606-1959), Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1971, 486 էջ:
- Միրախորեան Մ. 1885, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Գ, Կ. Պոլիս, 224 էջ:
- Մխիթարեանց Աղ. 1901, Փշրանքներ Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու, գ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 302 էջ:
- Մօքոս 1896, ժողովրդական վէպ Չարսանճագի բարբառով, պատմեց Մինաս բարբար, գրի առաւ Ս. Հայկունի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 88 էջ:
- Շահագիզ Ե. 2003, Հին Երևանը, Երևան, «Մուղնի», «Գասպրինտ», 271 էջ:
- Չուգասզյան Բ. 1985, Ձեռագրերի աշխարհում, Երևան, «Սովետական գրող հրատ.», 144 էջ:
- Պետոյան Վ. 2014, Սասունի ազգագրությունը, Երևան, «Լուսակն» հրատ., 493 էջ:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ. 2016, ԴԱՆ, Արագածոտն, Արագած:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ. 2017, ԴԱՆ, Շիրակ, Քեթի:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ. 2016, ԴԱՆ, Շիրակ, Սառնաղբյուր:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Գրիգորյան Ա. 2017, ԴԱՆ, Կոտայք, Հրագրան-Աղբյուրակն:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ. 2017, ԴԱՆ, Շիրակ, Լեռնագյուղ:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ. 2017, ԴԱՆ, Շիրակ, Լեռնակերտ:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ. 2013, ԴԱՆ, Գեղարքունիք, Վարդենիկ:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Հակոբյան Հ. 2017, ԴԱՆ, Երևան:
- Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ. 2017, ԴԱՆ, Շիրակ, Մեծ Սեպասար:
- Ստեփանյան Գ. 2014, Իրականի և անիրականի սահմանագծին. տան սրբերի հայտնվելու ձևերը, Ավանդականը և արդիականը հայ մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XVI, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 249-257:
- Վարդանյան Ս. 2007, «Տան սուրբ» երկույթի արցախյան դրսևորումները, Հայ ժողովրդական մշակույթ XIV, Ս. Հարությունյան, Ս. Հոբոսյան (խմբ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 311-316:
- Յուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 1980, «Էջմիածին», Ս. Էջմիածին, ԺԲ, էջ 51-55:

- Ուրբաթագիրք և Տաղարան 1975, նմանահանութիւն հայերէն առաջին տպագիր գրքերի, Վենետիկ, Ս. Ղազար – Երևան, Մատենադարան, Մաղթանք առ սքանչելագործ ս(ուր)բ նշանասան ք(րիստոս)ի ա(ստծո)յ մերոյ:
- Քաուի Փ., Հովհաննիսյան Կ. 2017, ԴԱՆ, Արագածոտն, Ապարան-Լուսազյուղ: Բանասաց՝ Արարատ Պարոյրյան, 1949 թ.:
- Քոթանջյան Ն. 2006, Ծղրութի Ավետարանը 974 թ., Երևան, «Անահիտ» հրատ., 126 էջ:
- Дурново Л. 1979, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, "Искусство", 332 с.
- Лидов А.М. 2014, Росписи монастыря Ахтала: история, иконография, мастера, Москва, "Университет Дмитрия Пожарского", 528 с.
- Тер-Мовсесян М. 1902, История перевода Библии на армянский языкъ, С.-Петербургъ, "Пушкинская Скоропечатня", 303 с.
- Mathews T.P. 1982, The Early Armenian Iconographic Program of the Echmiacin Gospel, East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period, Washington, p. 199-215.

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Կարեն Հովհաննիսյան

Ինչպէս հայտնի է, Հայաստանում գոյություն ունեն «Թուխ Մանուկ» անվամբ բազմաթիվ սրբավայրեր: Այդ անվամբ հայտնի են նաև մի քանի հրաշագործ ավետարաններ: Թուխ Մանուկ սրբավայրերից բացի, կան նաև մի քանի Ս. Մանուկ (Ավետարան) անվամբ սրբավայրեր, որոնցում պահվել կամ այժմ էլ պահվում են Ս. Մանուկ ավետարանները: Բացառիկ սրբավայր է Ս. Մանուկ Խաչը, որը գտնվում է Շիրակի մարզի Մեծ Սեպասար գյուղում և պատկանում է կաթոլիկ հայերին՝ «Ֆրանկներին»: Այդ սրբավայրում պահպանվում է Ս. Նշանի մասնիկը:

Քաջբերունիք գավառի Նվնդի Նորշինա գյուղի մերձակայքում էր գտնվում Ս. Նշան Մանուկ անապատը: Հայտնի են երկու Թուխ Մանուկ Ս. Նշան, որոնցից մեկը՝ Կապաղակի գավառի Ճալեթա Թուխ Մանուկ Ս. Նշանը, մյուսը՝ Վանի Թուխ Մանուկ Ս. Նշանը, իսկ Դիարբեքիում հայտնի էր Սադուգեղի Թուխ մանուկ Ս. Խաչ սրբավայրը: Քանի որ Ս. Նշան – Ս. Խաչը վերաբերում է միայն Քրիստոսին, ապա Մանուկ անվան ներքո պետք է հասկանալ հենց **Հիսուս Քրիստոսին**:

Բանահյուսական որոշ նյութերում **Քրիստոս** կոչվում է **Մանուկ Տղա**: Դիտարկված Թուխ Մանուկ կամ Ս. Մանուկ ավետարանները կոչվում էին **Մանուկ**, քանզի խորհրդաբանորեն կապվում են մանուկ Քրիստոսի հետ: Քանի որ ավետարանները հիմնականում պատմում են Քրիստոսի մասին, ապա ավետարանների տվյալ խումբը կարող էր անվանվել **Ս. Մանուկ** կամ **Ս. Թուխ Մանուկ**: Ժողովրդի մեջ եղել են սրբավայրեր, որոնք նվիրված են եղել Քրիստոսին: Դրանք հիմնականում կոչվել են «Տղամանուկ»: «Ս. Մանուկ» և «Թուխ Մանուկ» կոչվող որոշ սրբավայրեր ևս պետք է դիտարկել որպես Քրիստոսին նվիրված սրբավայրեր:

Բանալի բառեր՝ Քրիստոս, Թուխ Մանուկ, Ս. Մանուկ, Ս. Նշան, Ավետարան, սրբավայր, պաշտամունք:

ЕВАНГЕЛИЯ "ТУХ МАНУК"

Карен Оганнисян

Как известно, в Армении существует множество святилищ под названием Тух Манук. Но под этим названием известны также несколько чудодейственных евангелий. В Армении есть также святилища Св. Манук (евангелие), поскольку в этих святилищах хранились или по сей день хранятся евангелия Св. Манук. Особо следует выделить святилище Крест Св. Манук, который находится в селе Большой Сепасар и принадлежит "франкам" – армянам-католикам. В этом святилище хранится частица Святого Креста.

В районе села Нвнди Норшина гавара Каджберуник существовал скит Сурб Ншан (Святой Крест) Манук. Известны два святилища Тух Манук Сурб Ншан, один – в гаваре Капалак – Тух Манук Сурб Ншан Чалета, другой – в городе Ване – Тух Манук Сурб Ншан Вана, а в Диарбекире был известен Тух Манук Сурб Хач (Святой Крест) Садугеха. Поскольку Святой Крест относится только к Христу, то под Мануком следует иметь в виду Иисуса Христа. В некоторых фольклорных материалах Христос именуется Манук Тга (ребенок). Рассмотренные нами евангелия Тух Манук или Св. Манук назывались Манук, поскольку они символически связаны с младенцем Христом. Так как евангелия в основном рассказывают о Христе, то данная группа святых евангелий могла называться Св. Манук или Св. Тух Манук.

Согласно некоторым данным, имелись святилища, посвященные Христу. Эти святилища в основном именовались Тгаманук, ряд святилищ Св. Манук и Тух Манук также следует рассматривать в качестве святилищ, посвященных Христу, ибо Манук – это атрибутивное имя Христа.

Ключевые слова – Христос, Тух Манук, Св. Манук, Св. Крест, евангелие, святилище, культ.

"TUKH MANOOK" GOSPELS

Karen Hovhannisyan

It is a well-known fact that Tukh Manook is a name for many folk sanctuaries. However some miraculous gospels also carry that name. There are several sanctuaries in Armenia called St. Manook Avetaran (gospel), because gospels carrying the name St. Manook are held or formerly were stored there. A special sanctuary was investigated in Mets Sepasar, Shirak. It is called St. Manook Khach (cross) and belongs to the so-called franks – Catholic Armenians. A particle of Jesus' cross is stored in the chapel.

A monastery named Manook Surb Nshan (St. Sign) existed in Kajberunik province, Western Armenia, not far from the village Nevndi Norshina. Two sanctuaries Tukh Manook Surb Nshan are witnessed in the historical Armenia, one of them in the province of Kapaghak, the other – in Van city. There also was the St. Cross of Tukh Manuk in Sadugegh near Tigranakert. As far as the St. Sign relates exclusively to Christ, consequently just Jesus Christ must be connoted by the name Manook. In some folklore materials Jesus Christ is called Manook Tgha (child). The gospels we investigate have such names because they symbolically are connected with Jesus the Child. As far as gospels generally tell on the worldly life of Christ, a group of worshipped gospels could be called St. Manook or St. Tukh Manook. As some data indicate, there were folk worship places devoted to Christ. Mostly they were called Tghamanook, and thus at least some Tukh Manook chapels should be considered as dedicated to Christ as well, because Manook is a stable attribute-name of Christ.

Key words – Christ, Tukh Manook, St. Manook, St. Cross, gospel, sanctuary.

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԿԵՆՏՐՈՆ ԼՈՒՌԻՆԻՄ

Սուրեն Հորոսյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Չարենցի 15, 0025, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ suren.hobosyan@mail.ru

Անի Սարատիկյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Չարենցի 15, 0025, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ anisaratikyaniae@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 25.09.2019, գրախոսվել է 05.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

2018 թ. սեպտեմբերին՝ Վանաձոր-Ալավերդի խճուղու լայնացման աշխատանքների ժամանակ, Իգահատ միջնադարյան գյուղից հյուսիս-արևելք, Քոբայրի մերձակա երկաթուղային թունելից շուրջ 300 մ հյուսիս-արևմուտք նկատվել էին ինչ-որ շինության հետքեր, և այդ տեղամասում աշխատանքները դադարեցվել էին¹:

Իգահատ գյուղատեղի ավերակները տարածված են Քոբայրավանքից շուրջ երկու կիլոմետր հյուսիս, պահպանվել են առանձին շինությունների հետքեր, Գողգոթավանք եկեղեցին և մի քանի խաչքար: Հնագույն վիճակի արձանագրությունը գրվել է 1211 թվականին, իսկ վերջինը՝ 1579-ին²: Տեղազնությունից և պեղումներից հետո պարզ դարձավ, որ այն եղել է Հայաստանի հյուսիսարևելյան խաղողագործական գոտու մի կարևոր մասը:

Տեղանվան բնույթը

Այգեհատ (Իգահատ, Իկըհատ) գյուղը «զայս անուն ընկալաւ սա ի դրից տեղւոյն, զի այգիք ցայս վայր գան, և ասդէն դադարին, ուստի ասացաւ այգեհատ...»³:

¹ Հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության պետական կոմիտեի «Խաղողագործության մշակույթը Հայաստանում. ավանդույթ և արդիականություն» (18T-6A221) թեմայի շրջանակներում:

² Դիվան հայ վիճագրության 2012, 339:

³ Զալալեանց 1842, 102:

Քանի որ Իգահատին հարող այգիները վերջինն էին, դրանցից դեպի հարավ խաղող չէր աճում, հետևաբար ստացել է նման անվանում՝ իգի (այգի) և հատնել (վերջանալ) բառաբարդումից⁴:

Նույն «իգի» արմատով տեղավայր կա նաև Իգահատից ոչ հեռու՝ Դեբեդի աջ ափին, Մարց գյուղի Իգատակ գյուղատեղը, որը հիշատակվում է նաև «Ագադակ» ձևով մի խաչքարի⁵ և Դսեղի Ս. Գրիգոր վանքի գավթի արձանագրություններում⁶: Ագադակը ուշ շրջանում դառնում է Իգատակ, տեղի բարբառում՝ Իքատակ⁷:

«Այգի» բառի նախնական իմաստը որոշակիորեն նշանակել է միայն խաղողի այգի, խաղողի տունկ, որթ, վազ⁸: Որ «այգի» բառը վերաբերել է միայն խաղողի որթին, հստակորեն ապացուցում են միջնադարյան հայերեն բազմաթիվ վիմական արձանագրություններ: Մի արձանագրությունում, որ գտնվում է Դեբեդ գետի աջ ափին՝ Խոջակաձոր վայրում, հստակորեն տարբերակվում են խաղողի և այլ մրգերի այգիները. «ՇԼԵ թ. (1086), ես տէր Սարգիս, առաջնորդ սբ. ուխտիս Հաղբատայ... արկի եւ զայգիս, տնկեցի եւ դրախտս զանազան մրգաբերօք, ի փառս սրբոյ Նշանին...»⁹:

«Այգի» և այդ բառի բարբառային արմատներով բազմաթիվ տեղանուններ կան պատմական Հայաստանի տարբեր վայրերում:

Զարգացած միջնադարում տնտեսական այս ճյուղի կարևոր նշանակության մասին են վկայում նաև բազմաթիվ վիմագիր արձանագրությունները: Իգահատ գյուղատեղում գտնվող Գողգոթավանքի հյուսիսային պատին փորագրված է. «Ես Ավէժս եւ Գոհարն, սովաք զմեր գնած էգո ջրի ներքեւ եկեղեցոյս...»¹⁰:

Քոբեր. Թիին:ՈԼԵ: (1186) ես Խաչգունդս...գնեցի զբրտիս այգին եւ ետու ի սբ Կաթողիկես...¹¹:

Նույն բովանդակությամբ արձանագրություն կա նաև Քոբերի Կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքից աջ, որտեղ հիշատակվում է, որ Արևշահն ու ամուսինը Բղաբթի Սբ. Կաթողիկեին են նվիրաբերել իրենց տնկած այգին¹²: Ակնհայտ է, որ այգին եղել է Իգահատում, որտեղ այժմ էլ նշմարվում են դրանց հետքերը՝ դարավանդների ու դրանց միջև գտնվող շինությունների ավերակների ձևով:

⁴ Հոբոսյան 2004, 84:

⁵ Դիվան հայ վիմագրության 2012, 414:

⁶ Դիվան հայ վիմագրության 2012, 373:

⁷ Քալանթարյան 1975, 98:

⁸ Աճառյան 1971, 166:

⁹ Ղաֆադարյան 1963, 262-263:

¹⁰ Դիվան հայ վիմագրության 2012, 342:

¹¹ Դիվան հայ վիմագրության 2012, 353:

¹² Դիվան հայ վիմագրության 2012, 345, 354:

XII-XIII դդ. խաղողագործությունն ու գինեգործությունն ունեցել են կարևոր տնտեսական նշանակություն: Հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ ակնհայտ է, որ դրանք փաստագրվել են Արարատյան դաշտում, Արագածոտնում, Լոռիում, Վայոց ձորում և այլ վայրերում:

Երևանը հին ժամանակներից շրջապատված է եղել բազմաթիվ այգիներով՝ Շահարի, Կոնդի, Դամիրբուլաղի, Դալմայի և այլն¹³: Մեծ համբավ ունեին Դալմայի, Սարդարի, Նորքի և Նորագավիթի այգիները, որոնք եղել են այժմյան քաղաքի արևմտյան և հարավային մասերում¹⁴:

Արագածոտնում ուսումնասիրվել են երկու խոշոր այգեգործական կենտրոններ՝ Թալինի Աշնակ գյուղի տարածքում և Աշտարակի Խոջաբաղերում: Աշնակ գյուղից հյուսիս կան քարե ցանկապատերով բաժանված հողակտորներ, որոնց եզրերի մոտ պահպանվել են հարյուրավոր հնձանների ավերակներ¹⁵: Մի քանի հարյուր հա խաղողի այգիների և հնձանների խիտ ցանցով է պատված Աշտարակի Խոջաբաղեր տարածքը, որը զարգացած միջնադարում եղել է խաղողագործական խոշոր կենտրոն¹⁶: Խոջաբաղերում հայտնաբերված հնձանները թվագրվում են III-XIV դդ.¹⁷:

XII-XIII դդ. հնձան է հայտնաբերվել նաև Տավուշի մարզի Կոթի գյուղի «Բաբանց» գերեզմանոցի տարածքում միջնադարյան եկեղեցու պեղումների ժամանակ¹⁸: Այգիների տարածքի մի անկյունում, առավելապես ցածրադիր մասերում, առկա են հզոր շարվածքով շինություններ՝ բազալտի տարբեր չափերի անմշակ քարերի շարվածքով: Այս երևույթը բնորոշ է Հայաստանի գրեթե բոլոր այգեգործական գոտիներին¹⁹:

Այգիներում կառուցված շինություններն ունեցել են մեկ մուտք և նախատեսված են եղել որպես ժամանակավոր կացարան, որտեղ ապրել է այգետիրոջ ընտանիքի մի մասը ամռանն ու աշնանը, և գինու ստացման արտադրական համալիր՝ հնձան: Որոշ դեպքերում կացարանն ու հնձանը կառուցվել են առանձին: Նման կացարաններն ունեցել են պատերում արված 1-2 խորշ, օջախ, ավելի սակավ՝ բովսարի:

Իգահատին ավելի բնորոշ են այգիներում կառուցված շինությունները, որոնք ունեն երկու բաժանմունք՝ բնակելի և արտադրական: Բնակելի մասում՝ հավանաբար մուտքի մոտ, գիշերը կապել են գրաստը, որի մասին վկայում են տարածքում եղած անցքերով քարերը:

¹³ Երվանդ Շահագիզ 2003, 180:

¹⁴ Հովհաննիսյան 2017, 71:

¹⁵ Ասատրյան 2004, 47:

¹⁶ Հարությունյան 2005, 23:

¹⁷ Թումանյան 1993, 145:

¹⁸ Հոբոսյան 2014, 193:

¹⁹ Թումանյան 2008, 44:

Պեղումների արդյունքները

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատը 2018 թ. նոյեմբերին փրկարարական պեղումներ կատարեց Իգահատում: Ճանապարհի եզրին՝ դարավանդի ամենաբարձր մասում, պահպանվել է շուրջ 10 մետր երկարության և 1,7 մ բարձր պատ: Այն շարված է աղեղի ձևով՝ հավանաբար լանջի ճնշմանը դիմակայելու համար:

Պատի առջև պեղումներով բացվեց հնձանի առագաստ-ավազանը (4,20x1,15x0,95 մ), որի պատերը շարված են բազալտի միջին մեծության քարերով, ուղղված է արևելք-արևմուտք, հատակն ու պատերը սվաղված են կրաշաղախով: Պատերի և հատակի որոշ մասերում նկատելի են կրաշաղախի մոտ երկու սանտիմետր հաստության առանձին շերտեր: Դավկայում է այն մասին, որ պարբերաբար հնձանի առագաստի ջրաթափանցելիությունը կանխելու համար կրաշաղախի նոր շերտ է արվել՝ հինը թողնելով տեղում: Առագաստ-ավազանի հատակը թույլ թեքություն ունի դեպի հյուսիսարևելյան երկայնակի պատը, կենտրոնական մասում՝ հատակի տակ դրված կավե խողովակով խաղողի քաղցուն հոսել է տաքարի և կարասների մեջ:

Ավազանի հարավարևելյան երկայնակի պատի դիմաց՝ նրանից 0,9 մ հյուսիս-արևելք տեղադրված է կրաշաղախ պատերով տաքարը: Այն ունի 1,70 մ խորություն, բերանի տրամագիծը՝ 0,50, հատակի մասում՝ 1,27, իսկ իրանի կենտրոնում՝ 1,25 մ է: Տաքարի հատակին 0,33 մ տրամագծով փոսրակ էր արված՝ գինու հասունացման ընթացքում առաջացող նստվածքի համար:

Հողային աշխատանքների ժամանակ տաքարը մասնակիորեն խաթարվել էր, բարեբախտաբար նրա բազալտե կափարիչը չէր վնասվել: Նման կափարիչ հանդիպում է առաջին անգամ, կերտված է գեղարվեստական բարձր ճաշակով, ունի հարթ մակերես: Քարի կենտրոնական մասում՝ եզրին մոտ, ունի 0,27 մ երկարության ակոս, որով քաղցուն հոսել է տաքարի մեջ: Քարի կենտրոնում արված է 0,50 մ տրամագծով անցք, որ քարե կլոր կափարիչով փակվում էր:

Տաքարը կամ հատակի տակի հորը գինու հայկական արտադրական կառույցների՝ հնձանների կարևոր բաղադրիչն էր, հայտնաբերվել են Երևանում, Գառնիում, Հավուց թառում, Երվանդաշատում, Սաղմոսավանքում, Քանաքեռում, Երևանում, Զրվեժում, Արուճում և այլ վայրերում, լայն տարածում են ունեցել միջնադարյան Հայաստանում²⁰: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արագածոտնի որոշ գյուղերի խոսվածքում հայտնի էին շիրատուն ձևով, չնայած երբեմն այդպես անվանել են նաև հնձանի գուրը²¹:

²⁰ Առաքելյան 1964, 157-158:

²¹ Խալիփախյան 1961, 15:


Տաքարի դիմաց՝ հարավային կողմում, եղել է երկու կարաս, որոնցից պահպանվել էր միայն մեկի հատակի մասը: Տաքարից 1,60 մ հյուսիս-արևմուտք պահպանվել է մեկ ամբողջական կարաս, որի բերանի տրամագիծը 0,40 մ է, խորությունը՝ 1,40, շուրթի լայնությունը 0,08 մ: Այն ամբողջովին պատված է շուրջ 10 սմ հաստության կրաշաղախի շերտով: Պահպանվել է նաև կարասի քարե կափարիչը, որն ունի 0,47 սմ տրամագիծ:

Առագաստ-ավազանի պատին կից՝ տաքարից 0,75 մ հարավ, տեղադրված է կավե օջախը, իսկ դրանց դիմաց՝ տարբեր չափերի հինգ կարաս՝ ծածկված քարե կափարիչներով: Նման չափերի ավազանն ակնհայտորեն ծառայել է խաղողը տրորելու և նույն ավազանում քաղցուն տրորված զանգվածի մեջ խմորելու համար: Հավանաբար այս հնձանում վերամշակվել է սև խաղողի ինչ-որ տեսակ, քանի որ խաղողի սպիտակ տեսակներից նման եղանակով հնարավոր չէ գինի պատրաստել²²:

Խաղողի սև տեսակի ենթադրությունը հիմնավորվում է նաև հնձանի ավազանի ու տաքարի մոտ կառուցված բաց օջախի առկայությամբ: Ավազանից դուրս եկող խողովակի դիմաց կառուցված է կրաշաղախ հարթակ, որի մեջ ակոսներ են արված: Դրանցից մեկը՝ կենտրոնականը, ուղիղ գծով միացել է տաքարի վրա դրված բազալտե հարթակի ակոսին, որով էլ քաղցուն հոսել է: Հարթակին արված ակոսը ճյուղավորվում է դեպի ձախ ու աջ կողմերում դրված կարասները:

Տաքարից հինգ մետր արևելք բացվեց ևս երկու կարաս, որոնցից մեկի տրամագիծը ամենալայն մասում 0,80 մետր էր, հատակին անցք էր արված, հավանաբար հեռացրել են կարասը լվացած ջրերը, որից հետո փակել են փայտե խցանով: Այդ կարասի պատերի հաստությունն ընդամենը մեկ սանտիմետր էր: Դրանք կարծես թե տաքարի անմիջական մաս չեն, ավելի շատ մառան են հիշեցնում, սակայն ակնհայտորեն կից են հնձանին: Ուշագրավ է շինությունների ճարտարապետական հորինվածքը. դրանց զգալի մասը ընդգծված անկյուններ չունի: Լանջերին կից վերին պատերը նման լուծման շնորհիվ հավանաբար ավելի ամուր են և դիմագրավել են ճնշմանը: Նմանատիպ շինությունները, չնայած միջնորմներ չունեն, բայց ենթադրելի է, որ ունեցել են բնակելի և արտադրական բաժանմունքներ: Դրանք կարող էին գտնվել նույն սրահում կամ բաժանվել քարե կամ փայտե միջնորմով: Կիսավեր որոշ շինությունների պատերի ստորին մասերում դեռևս նշմարվում են հնձանների առագաստի կրաշաղախ հետքերը:

²² Հոբոսյան 2011, 202:



Նկ. 1. Իգահատ, Այգիներ. Հնձան 1-ի չափագրությունը

Արտաքինից կլորավուն պատեր են ունեցել նաև Աշնակում պեղված հնձանները, որոնք միջնորմով բաժանվել են երկու կամ չորս մասի²³:

Ճանապարհի կտրվածքում պեղված հնձանից շուրջ 100 մ հարավ-արևմուտք պահպանվել է կիսավեր մի շինություն, որը քարաշար միջնորմով բաժանվում է երկու մասի: Կառույցը գտնվում է թույլ թեքության լանջի վրա, ուղղված է հյուսիս-հարավ, շարված է ճեղքված բազալտի խոշոր և միջին չափի քարերով: Շինության մուտքը հարավային կողմից է: Առաջին բաժանմունքը հնձանն է, բարձրադիր, արևմտյան պատի տակ կառուցված է առագաստ-ավազանը: Այն ունի 2,1x1,2x1,05 չափեր, պատերը շարված են բազալտի փոքր չափի քարերով: Հատակն ու պատերը կրաշաղախով սվաղված են: Շինությունը հավանաբար վերաբերում է XVI-XVII դարերին: Հետագայում, հավանաբար XX դ. երեսնական թվականներին՝ կոլեկտիվացումից հետո, այս հնձանի ավազանի ծավալը մեծացվել է՝ բարձրացվելով 0,3 մ բետոնե պատով, իսկ քաղցուն հոսելու համար հատակին դրված խողովակի ելքը փակվել է: Այն վերածվել է պղնձարջասպի բուժական լուծույթ պատրաստելու ավազանի, որի պատերին դեռևս նկատելի են դրանց հետքերը: Ավազանի դիմաց՝ դրանից դուրս եկող խողովակից աջ, 0,97 մ արևելք, կառուցված է կրաշաղախ պատերով տաքարը, որի բերանի տրամագիծը 0,48 մ է: Խողովակից ձախ՝ 1,38 մ հյուսիս, տեղադրված է փոքր չափերի կարաս, որը կարող էր կատարել նաև գուրի դեր: Դրա մոտ՝ տաքարից 1,55 մ հյուսիս, կա ևս մեկ կարաս:

Հնձան թիվ 3. գտնվում է առաջին հնձանից 32 մ հյուսիս-արևմուտք, ունի բավական յուրահատուկ ճարտարապետական հորինվածք: Շինությունն ունի գրեթե շրջանաձև հատակագիծ, մուտքը՝ հյուսիսարևելյան կողմից: Պատերը շարված են խոշոր և միջին չափի քարերով, աչքի է ընկնում այն բանով, որ ոչ մի անկյուն չունի: Պատերի հաստությունը մուտքի մասում 1,3 մետր է, իսկ մուտքի լայնությունը՝ 1,10 մ:

Շինության հարավարևելյան մասում կառուցված է կրաշաղախ առագաստը (2,3x1,4x0,42 մ): Առագաստի հյուսիսարևելյան կողմում 0,35 մ բարձր պատով առագաստը բաժանվում է սրահից: Պատի կենտրոնական մասում՝ հատակին դրված խողովակով քաղցուն հոսել է դիմացը թաղված կարասի մեջ, որի խորությունը 1,15 մ է, բերանի տրամագիծը՝ 0,30 մ: Այս կարասից դեպի արևմուտք, արևմտյան պատի գոգավորությանը համապատասխան, աղեղնաձև շարած են տարբեր տարողության վեց կարասներ՝ ծածկված քարե կափարիչներով:

Լոռու մարզի Շնող գյուղի շրջակա մի քանի հնավայրերում 2009-14 թթ. պեղվել է հինգ նմանատիպ հնձան²⁴:

²³ Ասատրյան 1989, 93:

²⁴ Հոբոսյան 2011, 201-203:

Իգահատ գյուղատեղից դեպի հյուսիս՝ Դեբեդի ձախափնյա լանջին, որոշ ընդհատումներով, այգիները շարունակվել են մինչև Սանահին կայարան: Դրանք պատկանել են Օձուն գյուղի բնակչությանն ու վանական համալիրներին, որոնք վկայվում են նաև վիմագիր արձանագրություններով:

Օձուն, Ս. Նշան եկեղեցի. «Թվին :ՈԼԵ: (1186) ես՝ Աշոտ, գնեցի զՏերունի այգին...եւ ետու ի Սբ. Նշանս...»: ²⁵

Օձունի Հռոռմայր հուշարձանախմբի «Սարգսի» եկեղեցի. «...Ես՝ Սասնէս... եւ ամուսին իմ Մամքան, միայբանեցաք սբ. Նշանիս եւ տվաք զՈւծնայ այգին... ի թվի :ՉԻԳ: (1274)»: ²⁶ Ուշագրավ է, որ վիմագրում հիշատակված այգին գտնվել է հենց Օձունում:

Նույն հուշարձանի խաչքարերից մեկի պատվանդանին գրված է. «Ես՝ Առաքելս...ետու ի հայրենի գանձագին այգոյն, որ է Գունդանց, զիմ բաժինն՝ ի սբ. Նշանս...արկի եւ զմատնարկն, շինեցի տակոպետոց...»: ²⁷ «Տակոպետոց» բառը կարող է ունենալ հնձան իմաստ և հավանաբար առաջացել է տաքար իմաստից: ²⁸

Հողային տարաբնույթ աշխատանքների ժամանակ Օձունի այգիների տարածքում հայտնաբերվում են շինությունների հետքեր և հողում թաղված առանձին կարասներ, վկայություն այն բանի, որ գինին պահեստավորել են նաև այգիներում: ²⁹

Եզրակացություն

Այսպիսով, այս պեղումներով բացահայտվեց մի կարևոր իրողություն, որ Լուռու մարզի այս տարածքում՝ Դեբեդի ձախափնյա բարձրադիր լանջին, XIII-XIV դարերում խաղողագործությունն ու գինեգործությունը տնտեսական կարևոր նշանակություն են ունեցել: Տեղազննությամբ պարզվեց, որ Իգահատի միջնադարյան այգիների ընդհանուր տարածքը (միջին բարձրությունը՝ 850 մ) 20-25 հեկտար է՝ փոխված Դեբեդի ձախափնյա արևելահայաց լանջին: Նման դիրքը խաղողի այգու համար ամենից նախընտրելին է: Լանջի երկարությամբ այսօր էլ պահպանվել են չոր շարվածքով բազմաթիվ բազալտի անմշակ բեկորներով շարված պատեր: Դրանց բարձրությունը որոշ հատվածներում հասնում է մինչև երեք մետրի: Ըստ տեղանքի թեքության՝ դրանց հեռավորությունը միմյանցից հասնում է 5-20 մետրի: Լանջն ի վեր ձգվում են միջինը մեկ մետր հաստությամբ այգեմիջյան ցանկապատեր, որոնք շարված են երկարությամբ կան-

²⁵ Դիվան հայ վիմագրության 2012, 299:

²⁶ Դիվան հայ վիմագրության 2012, 304:

²⁷ Դիվան հայ վիմագրության 2012, 300-301:

²⁸ Ավագյան 311-313:

²⁹ Վավերագրեր 2 2001, 61:

գուն դիրքով բազալտե խոշոր քարերով, իսկ դրանց միջև՝ մանր քարերի լիցքով: Առանձին այգիների միջև եղած սահմանային ցանկապատերն ունեցել են նաև տարածքից հավաքած քարերը տեղավորելու նշանակություն: Դիտարկումները ցույց են տալիս, որ այդ տարածքը կարող էր հասնել 4-5 հազ. քմ-ի:

Այն եղել է Հայաստանի հյուսիսարևելյան խաղողագործական գոտու մի կարևոր մասը, որն ընդգրկում է Թումանյանի, Նոյեմբերյանի, Իջևանի և Բերդի 500-1000 մ բարձր տարածաշրջանները:

Փաստագրվեց ևս մեկ անգամ, որ IX-XIII դդ. Բագրատունյաց թագավորության տարիներին Հայաստանում տնտեսական կյանքը, այդ թվում՝ խաղողագործությունն ու գինեգործությունը, ծաղկում ապրեց³⁰:

Գրականություն

- Աճառյան Հր. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 698 էջ:
- Առաքելյան Բ. 1964, Խաղողի վերամշակությունը միջնադարյան Հայաստանում, Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, Միրիմանյան Խ.Պ. (խմբ.), հ. 1, Երևան, ՀՍՄԻ ԳԱ հրատ., էջ 147-170:
- Ասատրյան Ե. 2004, Թալինի շրջանի հուշարձանները, Երևան, «Հուշարձան» հրատ., 84 էջ:
- Ասատրյան Ե. 1989, Պեղումներ Աշնակ գյուղում (1988 թ.), Հայկական ՍՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան (զեկուցումների թեզիսներ, Տիրացյան Գ. (խմբ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 92-94:
- Ավագյան Ս. 1978, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, «Համալսարանի հրատ.», 360 էջ:
- Բարխուդարյան Ս.Գ., Ղաֆադարյան Կ.Գ., Սաղումյան Ա.Տ (կազմ.) 2012, Դիվան հայ վիմագրության, պր. IX, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 611 էջ:
- Թումանյան Գ. 2008, Հնձանային մշակույթը Հայաստանում, Երևան, «Ձանգակ-97», 99 էջ:
- Թումանյան Գ.Ս. 1993, Աշտարակի նորահայտ հնձանները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները), Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., էջ 140-148:
- Խալիփախյան Խ. 1961, Հայաստանի արտադրական կառուցվածքները, Երևան, ԳԱ հրատ., 92 էջ:
- Հարությունյան Ա., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հոբոսյան Ս., Ավետիսյան Պ. 2005, Գինին հայոց ավանդական

³⁰ Арутюнян 2005, 59:

- մշակույթում, Քալանթարյան Ա. (խմբ.), Երևան, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն», 306 էջ:
- Հոբոսյան Ս. 2004, «Այգին» միջնադարյան հայերեն վիմագրերում, Հայ ժողովրդական մշակույթ, Հարությունյան Ս.Բ., Վարդումյան Դ.Ս. (խմբ.), հ. 12, Երևան, «Մուղնի» հրատ., էջ 80-85:
- Հոբոսյան Ս. 2014, Գինեգործության ժողովրդական հմտությունները Լոռու և Տավուշի մարզերում, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները գիտական նստաշրջան (գեկուցումների թեզիսներ), Սուվարյան Յու. (խմբ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 193-196:
- Հոբոսյան Ս. 2011, Թեղուտի 2009-2010 թթ. հնագիտական պեղումների նախնական արդյունքները, Պատմաքանասիրական հանդես, 2, Երևան, էջ 199-211:
- Հովհաննիսյան Ն., Եսայան Ա., Բոբոխյան Ա., Դալլաքյան Մ., Հոբոսյան Ս., Գասպարյան Բ. 2017, Հայկական խաղող և գինի, Գասպարյան Բ., Դանիելյան Ա., Հոբոսյան Ս., Հովհաննիսյան Ն. (խմբ.), Երևան, «Անտառես» հրատ., 431 էջ:
- Ղաֆադարյան Կ. 1963, Հաղբատ. Ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 293 էջ:
- Շահագիզ Երվանդ 2003, Հին Երևանը, Երևան, «Մուղնի» հրատ., 271 էջ:
- Սարգիս Ջալալեանց 1842, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ Սարգիս վարդապետի Ջալալեանց, միաբանի վանաց Սանահնի, ի 1841 ամի, մասն Ա, Տփխիս, 235 էջ:
- Քալանթարյան Ա. 1975, Նոր նյութեր Թումանյանի շրջանի պատմական հուշարձանների վերաբերյալ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 9, Երևան, էջ 93-99:
- Քաջբերունի 2001, «Բազմամիլիոն ժառանգություն» ձեռագիր, Վավերագրեր 2, Ա. Ղազիյան, Ա. Քալանթարյան (կազմ.), Երևան, «Մուղնի» հրատ., էջ 47-115:
- Арзуманян П.Р. 1973, Плодоводство и виноградарство Армянской ССР, Ереван, "Айастан", 346 с.
- Арутюнян А. 2005, Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Ереван, "Принтинфо", 120 с.

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԿԵՆՏՐՈՆ ԼՈՐԻՈՒՄ

Սուրեն Հոբոսյան, Անի Սարատիկյան

Միջնադարյան Իգահատ գյուղի ավերակները գտնվում են Լոռու մարզի Քոբայրի վանական համալիրից շուրջ մեկ կիլոմետր հյուսիս: Բնակավայրի հարող թեք լանջին՝ շուրջ 20-25 հա տարածքում, նկատելի են լանջի երկա-

րությանը ձգվող այգիների դարավանդներ և առանձին շինություններ, որոնք եղել են ժամանակավոր կացարաններ ու գինու արտադրական համալիրներ՝ հնձաններ: Վանաձոր-Ալավերդի խճուղու լայնացման աշխատանքների ժամանակ (2018 թ.) այդ տարածքում նկատվել էին շինության հետքեր: Հնագիտական պեղումներով պարզվեց, որ թեք լանջին գտնվող շինությունը XIII-XIV դդ. հնձան է, որը ժամանակին կառուցվել է այգու ցածրադիր մասում: Հնձանի առագաստ-ավազանի պատերը շարված են բազալտի միջին մեծության քարերով՝ ուղղված արևելք-արևմուտք, հատակն ու պատերը սվաղված են կրաշաղախով: Ավազանից 0,9 մ հյուսիս-արևելք տեղադրված է կրաշաղախ պատերով տաքարը, որի հատակին 0,33 մ տրամագծով փոսրակ էր արված՝ գինու հասունացման ընթացքում առաջացող նստվածքի համար: Խաղողի քաղցուի հորը՝ տաքարը, ուներ գեղարվեստական բարձր ճաշակով կերտված բազալտե կափարիչ, որը հնագիտական պեղումներում հանդիպում է առաջին անգամ: Այն ունի հարթ մակերես, կենտրոնում արված 0,50 մ տրամագծով անցք և եզրին մոտ ունի 0,27 մ երկար ակոս, որով քաղցուն հոսել է տաքարի մեջ: Պեղումներով հայտնաբերվեց XIII-XIV դդ. գինու արտադրության կենտրոն, որով հաստատվում է վիմագիր արձանագրությունների վկայություններն այն մասին, որ խաղողագործությունն ու գինեգործությունը այս տարածքում միջնադարում ունեցել են տնտեսական կարևոր նշանակություն:

Բանալի բառեր՝ խաղող, կարաս, հնձան, վիմագիր արձանագրություններ, հուշարձան, բնակավայր, եկեղեցի:

НОВОВЫЯВЛЕННЫЙ ЦЕНТР ВИНОДЕЛИЯ В ЛОРИ

Сурен Обосян, Ани Саратикян

Развалины села Игаат Лорийского марза находятся примерно в одном километре к северу от монастырского комплекса Кобайр. На крутом склоне, вплотную к поселению, на площади около 20-25 гектаров сохранились остатки построек и террас – виноградников, временных жилищ и винодавлен. Согласно эпиграфическим надписям, виноградарство в указанном регионе имело огромное значение. В результате раскопок 2018 г. на территории средневекового селища Игаат, около монастырского комплекса Кобайр, на левом берегу реки Дебед была найдена давяльня XIII-XIV вв. Напротив юго-восточной стены бассейна давяльни (4,2x1,15x0,95м) находится резервуар для виноградного суслу (такар) со стенами с известковой обмазкой и глиняный очаг. Здесь же были найдены пять глиняных

сосудов-карасов разных размеров. Базальтовая плоская крышка такара (0,98x0,88x0,21м) с отверстием в центре (0,50м) имеет канавку длиной 0,27м для стока жидкости в такар и глиняные емкости.

Таким образом, в XIII-XIV вв. в Лорийском марзе виноградарство и виноделие имели важное экономическое значение. Впервые подобный хозяйственный центр был обнаружен в 2009-2013 гг. на территории сел Шнох и Техут.

Ключевые слова – виноград, карас (сосуд), яма-давиляня, эпитафические надписи, памятник, поселение, церковь.

A NEW WINERY CENTER IN LORI

Suren Hobosyan, Ani Saratikyan

The village of Igahat in Lori Marz is located about one km north of the cathedral complex of Kobayr. In a nearby settlement of 20-25 hectares on a steep hillside one can find ruined buildings and structures that have been preserved to some degree. In these temporary settlements one can find wine presses for the production of wine. In the Middle Ages viticulture played very important role in the overall economy. In 2018, rescue excavations were carried out in Igahat, as a result of which a foundry of the XIII-XIV centuries was found. In front of the south-eastern wall of the press (4.2x1.15x0.95 m) there was the press-pit with walls made of limestone mortar, a clay hearth and five clay vessels of various sizes. The pit-press had a flat cover made of basalt (0.98x 0.88x0.21 m). This type of stone cover was discovered for the first time. In the central part of the stone, closer to the edge, a groove of 0.27 m long was hollowed out, along which the crashed grape juice flowed down into a pitcher.

As a result of these excavations on the high mountain slope of the Debed River in Lori the important economic role of viticulture and winemaking in XIII-XIV centuries was revealed.

Key words – grapes, pit-press, wine pitcher, epigraphic inscriptions, monument, settlement, church.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1919-1920 ԹԹ.)**

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը վերականգնեց իր անկախությունը: Հիմնվեց Հայաստանի Հանրապետությունը: Հիմնադրման առաջին իսկ օրից հայկական պետությունը հայտնվեց ծանր դրության մեջ: Նորաստեղծ իշխանության առջև հայտնվեցին բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից էր ներքին կարգուկանոնի հաստատումը: Այս հիմնահարցը լուծելու նպատակով Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը¹ 1918 թ. սեպտեմբերի 16-ին կառավարությանն է ներկայացնում միլիցիայի մասին օրենքի նախագիծը, որն արժանանում է հավանության²: Առաջնահերթ հիմնախնդիրներից էր միլիցիան արհեստավարժ կադրերով ապահովելը, սակայն այն հանդիպում է լուրջ խոչընդոտների: Նորաստեղծ իրավապահ մարմնում ընդգրկվում են նախկին զինվորականներ ու քաղաքացիական անձինք, որոնց զգալի մասը որևէ գաղափար չուներ իր իրավունքներից ու պարտականություններից: Այդ ամենի հետևանքով առաջանում է կադրերի զգալի հոսունությունը: Միլիցիայի աշխատակիցները կարող էին առանց վերադասին տեղյակ պահելու, ինքնագլուխ լքել ծառայության վայրը³: Բանը հասավ նրան, որ Երևանի կենտրոնական բանտի արտաքին հսկողությունը ուժեղացնելու նպատակով ուղարկված 6 միլիցիոներներից 4-ը ինքնակամ լքեցին իրենց հանձնարարված պահակակետը: Իրավապահներից ոմանք կատարում էին հանցագործություններ: Կարելի փաստել, որ միլիցիայում ծառայել ցանկացողներին այնքան էլ խիստ չէին ստուգում, ուստի այնտեղ հայտնվում էին պատահական, երբեմն էլ բարոյապես անկայուն տարրեր⁴: 1920 թ. հունվարի 28-ին ՆԳ նախարարությունը կառավարության քննարկմանն է ներկայացնում 100 հոգուց բաղկացած հրամկազմ ունեցող

¹ ՀՀ ՆԳ մարմինների գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Վիրաբյան Վ.Հ., Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918-1920 թթ.), Երևան, 2003:

² Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ.: Գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2014, էջ 28:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 106, թ. 8, 20, 21, 27 շրջ.:

⁴ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները: 1918-1920 թթ.: Գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2010, էջ 213:

սահմանապահ միլիցիա կազմակերպելու առաջարկությունը⁵, սակայն չի պարզաբանվում, թե նրանք ինչպիսի իրավունքներ ու պարտականություններ պետք է ունենան, և արդյո՞ք նրանց համար կազմակերպվելու են դասընթացներ:

Նորակազմ միլիցիան կարիք ուներ հմուտ և գաղափարապես նախապատրաստված աշխատակիցների: Օրինակ կարող էր ծառայել Նախիջևանի միլիցիայի պետ Գարեգին Նժդեհը, որի մասին դրվատանքով է խոսում Հայկական դիվիզիայի պետ, գեներալ Մ. Սիլիկյանը⁶:

ՆԳ ղեկավարությունը քաջ գիտակցում էր, որ միլիցիայի աշխատակիցների համար անհրաժեշտ էր կազմել ուղեցույց կամ կանոնադրություն⁷, որով նրանք կկարողանային առաջնորդվել ծառայության ընթացքում: Հիմնահարցը որոշ չափով լուծելու համար ծառայության են ընդունում ցարական իշխանության տարիներին ոստիկանությունում ծառայած անձանց⁸: Նման հնարավորություն ստեղծվում է միայն Քառյակ միության երկրների պարտությունից հետո՝ 1919-1920 թթ.: Առաջին քայլը կատարվում է 1919 թ. մայիսի 5-ին, երբ ՀՀ ՆԳ նախարար Ռ. Տեր-Մինասյանի հրամանով մայրաքաղաքի միլիցիան Երևանի ինքնավարության ենթակայությունից անցնում է ՆԳ նախարարության ենթակայության տակ⁹, որից անմիջապես հետո ՆԳ նախարարի կողմից ուղարկվում է քաղաքային միլիցիայի գործունեությունը կարգավորող՝ 27 հոդվածից կազմված կանոնադրություն¹⁰: Նախատեսվում էր այն հրատարակել առանձին գրքուկով, որը լինելու էր յուրաքանչյուր միլիցիոների մոտ: Գրքուկի վրա փակցված էր լինելու իրավապահի լուսանկարը, նրա ազգանունը և բնակության հասցեն¹¹:

⁵ Վիրաբյան Վ.Հ., Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը (1918-1920 թթ.), Երևան, 2006, էջ 206:

⁶ Տե՛ս Սահակյան Ռ., Սարգսյան Ռ., Անօրինական զենքի և զինամթերքի շրջանառության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.). Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2019, № 2, էջ 106:

⁷ Ոստիկանության գործունեությունը կարգավորող առաջին ժամանակավոր կանոնադրությունը կազմվել է Վանի հայկական նահանգապետությունում. տե՛ս Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թվականի մայիսի 8-հուլիսի 17). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ.Օ. Սահակյանի, Երևան, 2008:

⁸ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 201, ց. 2, գ. 103, թ. 31:

⁹ Հայաստանի աշխատաւոր, Երևան, 13 յունիսի 1919, № 70:

¹⁰ Հայաստանի աշխատաւոր, Երևան, 13 յունիսի 1919, № 70:

¹¹ Հայաստանի աշխատաւոր, Երևան, 13 յունիսի 1919, № 70:

հնքնին, վերը նշված կանոնադրությունը բավարար չէր իրավապահ մարմնի աշխատակիցների առօրյա գործունեության համար, ուստի 1919 թ. հունիսի 8-ին ՀՀ արդարադատության նախարարությունը կառավարությանը ներկայացնում է «Դատա-ոստիկանական դասընթացքների» կանոնադրությունը¹², որի պարապմունքները տեղի էին ունենալու 1919 թ. հուլիսի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը:

Դասընթացների նպատակն էր կրթել միլիցիայի աշխատակիցներին, որոնք իրենց գործունեությամբ կառաջնորդվեն քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների համաձայն¹³ և կձանոթանան իրենց իրավունքներին ու պարտականություններին: Դասընթացների հսկողությունն իրականացնելու էր Երևանի շրջանային դատախազի օգնականը (տեղակալը):

Դասընթացներում ուսանելու համար միլիցիայի պետի կողմից ընտրվելու էին 20 միլիցիոներ, որոնք պետք է լինեին «անբիժ վարքի տեր»¹⁴, բացի հայերենից, տիրապետեին ռուսերենի և թուրքերենի: Ուսման տևողությունը լինելու էր երեք ամիս: Դասընթացի ժամանակ նախատեսվում էր ունկնդիրներին նախնական տեղեկություններ տալ պետական ու քրեական իրավունքից, քրեական դատավարության կանոնագրքի 250-261-րդ հոդվածներից¹⁵, ուսուցանել

¹² ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 370, 372-373: Տե՛ս նաև Սահակյան Ռ., Սարգսյան Ռ., Հայաստանի Առաջին Հանրապետության իրավապահ համակարգի կադրերի պատրաստման պատմությունից (1919 թ.). Բանբեր հայագիտության, Երևան, 2019, № 1, էջ 221-224:

¹³ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն դեռևս չէր ընդունել սահմանադրություն՝ խորհրդարանը 1918 թ. դեկտեմբերի 6-ին ընդունում է «Նախկին ռուսական կայսրության օրէնքների գործադրման մասին Հայաստանի տերրիտորիայի վրայ» օրենքը, համաձայն որի, Հայաստանի տարածքում ժամանակավորապես գործում են նաև նախկին կայսրության օրենքները. տե՛ս Հայաստանի խորհրդարանի հաստատած օրէնքները: 1918-1919 թթ., մաս I, Երևան, 1919, էջ 27:

¹⁴ Սահակյան Ռ., Սարգսյան Ռ., Հայաստանի Առաջին Հանրապետության իրավապահ համակարգի կադրերի պատրաստման պատմությունից (1919 թ.). Բանբեր հայագիտության, Երևան, 2019, № 1, էջ 222:

¹⁵ Ցավոք, փաստաթղթում չի ասվում, թե նշված հոդվածները որ՞ կանոնագրքից են, որոնք թվով 5-ն են. տե՛ս Судебные уставы. 20 ноября 1864 года. С изложением рассуждений, на коих они основаны. Часть первая, СПб., 1866, Судебные уставы. 20 ноября 1864 года. С изложением рассуждений, на коих они основаны. Часть вторая, СПб., 1866, Судебные уставы. 20 ноября 1864 года. С изложением рассуждений, на коих они основаны. Часть третья, СПб., 1867, Судебные уставы. 20 ноября 1864 года. С изложением рассуждений, на коих они основаны. Часть четвертая, СПб., 1867, Судебные уставы. 20 ноября 1864 года. С изложением рассуждений, на коих они основаны. Часть пятая, СПб., 1867 http://civil.consultant.ru/sudeb_ustav/ (16.08.2019):

Անդրկովկասի պահակային (պարեկապահակային) ծառայության կանոնադրությունը, Երևանի դատախազի հրահանգները և ՀՀ կառավարության ընդունած օրենքների համապատասխան հատվածները¹⁶:

Դասընթացն ավարտած միլիցիոներին շնորհվելու էր «I կարգի միլիցիականի կոչում»¹⁷: Այն դեպքում, եթե ունկնդիրը չէր կարողանում հանձնել քննությունները, համապատասխան թույլտվության դեպքում, նրան հնարավորություն էր տրվելու դրանք վերահանձնել քննությունները: Միաժամանակ նախատեսվում էր Հայաստանի 14 գավառներում կազմակերպել միլիցիոներական 6-ամսյա դասընթացներ¹⁸: Սակայն, դասընթացները չկայացան ո՛չ Երևանում և ո՛չ էլ գավառներում. թե որո՞նք էին դրա պատճառները, այդպես էլ մնաց անհայտ:

1919 թ. սեպտեմբերի 2-ին ֆրանսիական բանակի ռազմական ոստիկանության՝ ժանդարմերիայի լեյտենանտ Ռուբեն Պապիկյանը¹⁹ ներկայացնում է Երևան քաղաքի ոստիկանության համար նախատեսված ժամանակավոր կա-

¹⁶ Սահակյան Ռ., Սարգսյան Ռ., Հայաստանի Առաջին Հանրապետության իրավապահ համակարգի կադրերի պատրաստման պատմությունից (1919 թ.). Բանբեր հայագիտության, Երևան, 2019, № 1, էջ 222:

¹⁷ Սահակյան Ռ., Սարգսյան Ռ., Հայաստանի Առաջին Հանրապետության իրավապահ համակարգի կադրերի պատրաստման պատմությունից (1919 թ.). Բանբեր հայագիտության, Երևան, 2019, № 1, էջ 222: Փետրվարյան հեղափոխությունից հետո վերացվեցին զինվորական և ոստիկանական բոլոր աստիճանները: Միլիցիայի աշխատակիցների համար սահմանվել էին հետևյալ կոչումները՝ միլիցիայի պետ, օգնականներ, տեղամասային միլիցիայի պետեր, ավագ միլիցիոներներ և միլիցիոներներ, տե՛ս Сборник указов и постановлений Временного правительства, вып. № 1, с. 186: Նույն համակարգը հաստատվեց նաև ՀՀ-ում. տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 123, թ. 6-10: Հավանաբար, հասկանալով, որ կոչումների նախկին համակարգը որոշակի խթան էր ոստիկանների համար, որքան հնարավոր է, բարեխիղճ կատարելու պարտականությունները և բարձրանալու ծառայողական աստիճաններով, ուստի որոշվեց սահմանել «I-ին կարգի միլիցիական» կոչումը, որով դասընթացը ավարտած իրավապահները ինչ-որ կերպ կտարբերվեին իրեն ծառայակիցներից: Հարկ ենք համարում նշել, որ միլիցիայի հեծյալ ստորաբաժանումներում պահպանվում է ժանդարմերիայի ավագ ենթասպայական՝ **վախմիստր** զինվորական կոչումը. տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 105, թ. 54:

¹⁸ Հ.Հ.Գ., Կառավարութեան որոշումներ. Կառավարութեան յուլիս 17-ի նիստը, Աշխատանք, 24 յուլիսի 1919, № 48:

¹⁹ Ռ. Պապիկյանը 1919 թ. մայիսին ղեկավարել է Ադանայի ոստիկանական տեղամասերից մեկը. տե՛ս Կիլիկիա, Ատանա, 18 մայիսի 1919, № 35:

նոնադրություն²⁰: Նույն թվականի սեպտեմբերի 11-ին էլ նա նշանակվում է Երևանի միլիցիայի պետ²¹:

Ռ. Պապիկյանի ներկայացրած կանոնադրության համաձայն, մայրաքաղաքում ծառայություն պետք է կատարեն շուրջ 200 միլիցիոներ: Ծառայության կարող էին ընդունվել 20-25 տարեկանները, որոնք ֆիզիկապես առողջ էին և առնվազն գրել-կարդալ գիտեին: Նախատեսվում էին ուսումնական դասընթացներ, որոնց տևողությունը կարող էր լինել 3-ից 5 ամիս: Նրանց դասավանդվելու էին հետևյալ առարկաները՝ «պետության կառուցվածքը», «օրենսդրություն» և «իրավապահ մարմինների (դատարան, դատախազություն) փոխհարաբերությունները և իրավունքները»:

Սակայն Ռ. Պապիկյանի առաջարկած կանոնադրությունը այդպես էլ մնաց թղթի վրա, որևէ գործնական քայլ չկատարվեց իրավապահներին իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելու և մասնագիտական հմտություններ ուսուցանելու համար: Ինքնին հասկանալի է, որ նման դեպքերում հանցավորությունը ավելի հանդուգն ու լկտի ձևով է դրսևորվում. նույնիսկ զինված հարձակումներ էին կատարվում անգամ զինված ուժերի թիկունքային ստորաբաժանումների վրա, և զոհվում էին ոչ միայն շարքայիներ, այլև՝ սպաներ, ինչպես, օրինակ, փոխգնդապետ Կոնդրիկովսկին, գեներալ Չումարովը²²:

1919 թ. դեկտեմբերի 4-ին ՆԳ նախարարի պաշտոնակատար Սարգիս Մանասյանի հրամանով միլիցիայի դպրոցի ղեկավար ու դասատու է նշանակվում Ջոհրապ Բազրևանդյանը²³: Նրան հանձնարարվում է իրականացնել համապատասխան կազմակերպչական աշխատանքները, կատարել ունկնդիրների և դասատուների ընտրությունը, կազմել դասավանդման ծրագիրն ու ժամաքանակը: Միաժամանակ, նրան տեղեկացնում են, որ հրահանգվել է Երևանի միլիցիայի պետ Ռ. Պապիկյանին և պաշտոնատար այլ անձանց աջակցել վերը նշված խնդիրների լուծման համար²⁴:

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 123, թ. 6-10:

²¹ Ժողովուրդ, 24 սեպտեմբերի, 1919, Երևան, № 104: Այդ պաշտոնը նա վարում է մինչև 1920 թ. ապրիլի վերջերը. տե՛ս Ժողովուրդ, 29 ապրիլի 1920, № 69:

²² ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 26, թ. 81 և շրջ.: Տե՛ս նաև Ժողովուրդ, 1 փետրվարի, 1920, № 20:

²³ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 236, թ. 6:

²⁴ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 236, թ. 1-2:

Ձ. Բագրևանդյանը կազմում է հաստիքացուցակ և դասավանդվող առարկաների ցանկը, ընտրում է դասատուների²⁵: Չնայած վերջինիս կատարած զգալի աշխատանքներին, ցավոք, դպրոցը այդպես էլ չի գործում:

Ստորև ներկայացնում ենք Ձ. Բագրևանդյանի կողմից գրված փաստաթուղթը, որտեղ նա բացատրում է, թե ինչու է հրաժարվում միլիցիայի դպրոցի ղեկավարի պաշտոնից, և թե ինչ պատճառներով այդպես էլ իրականություն չդարձավ ուսումնական հաստատության կայացումը: Փաստաթուղթը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում, տպագրվում է առաջին անգամ՝ ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, սակայն ոճը պահպանելով: Փաստաթղթի վերնագիրը մերն է: Մեր միջամտությունները կատարվել են ուղղագրի փակագծերով:

N 1

ԵՐԵՎԱՆԻ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐ Ձ. ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻ
ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՆԳ ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ
ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ԵՎ ԻՐ ՊԱՇՏՈՆԻՑ ՀՐԱԺԱՐԿԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԻ ՄԱՍԻՆ

N 24

26 փետրվարի 1920 թ.
[Երևան]

4.XII.[19]19 ինձի առաջարկուած միլից[իայի] դպրոցի մը կազմութիւնը անկարելի եղավ գործնականացնել պաշտօնական մարմիններու յայտնի կամ քողարկուած չկամութեամբ:

Համարատութիւն չպիտի ընիմ, ոչ ալ պատմութիւն: Բայց կուզիմ քանի մը կէտեր բնօրոշել միտքս հիմնատրելու համար:

Աշխատութեանս սկզբի օրերուն կարելի եղած էր Բ. քաղաքամասի մէջ սենեակ մը գտնել դպրոցական անհրաժեշտ առարկաներով, ուր պիտի տեղատրուէին 70-80 աշակերտներ:

²⁵ Ավելի մանրամասն տե՛ս Սահակյան Ռ., Սարգսյան Ռ., Հայաստանի Առաջին Հանրապետության իրավապահ համակարգի կադրերի պատրաստման պատմությունից (1919 թ.). Բանբեր հայագիտության, Երևան, 2019, № 1, էջ 224-228:

1-20-ին դասաանդուսինը հազի սկսած՝ թելադրութեամբ՝ ադմինիստրացիայի Պլարոն] Տեսչէն²⁶ անցեալ և ատնեի* կարգադրութիւններու մասին զեկուցում տալ իրեն: Ես իրաւասու մարմնի այս հետաքրքրութիւնէն աւելի քան խրախուսեցայ այն պատրանքով, թէ դժարութիւնները պիտի բաժնւին և դպրոցական կազմը լրացնելու համար պիտի տրուէր կարևոր դիտողութիւններ:

Բայց անակնկալ Պլարոն] Տեսուչը նախ իմ գտած իրաւագետի մասին Ձեր անունով առարկելէ վերջ յետագայ շաբաթներու ընթացքին չկարողացաւ յաջորդ մը նշանակել, նմանապէս աշակերտներու 50-էն 30-ի, 30-էն 50-ի, 50-էն 100-ի փոխելու կարգադրութիւնները վարչական դժարութիւնները աւելի միլիցիական կազմերու հետ անհամաձայնութիւններու դուռ բացաւ, կարծէս տրուած հրամանները իրականութիւնը կանտեսէին կամ միայն ատեն բոլոր շահագրգռող կողմերուն էին տրուէր!

Եւ աւելին, Երևանի խճողուած դրութիւնը անկարելի դարձուց իմ անհատական ջանքերովս 100 աշակերտի համար դիւրութիւններ ունեցող շէնք մը ապահովել, կարծիմ վարչական և օրենսդրական աջակցութիւնէ զրկուած Բագրևանդեանի մը համար եղածը եթէ ոչ նախատեսուած, առնուազն բնական էր: Ես անյաջողութեանս բոլոր պատասխանատուութիւնը անապաման աւելի իրաւասու և բարձր մարմիններու, բայց մանաւանդ ադմինիստրացիայի պ. Տեսչին կը վերագրէի, եթէ այժմ համոզուած լինէր, թէ անոնք դպրոցի դերը գնահատած և կազմութեանը անկեղծօրէն համամը գտնուած լինէին:

Պլարոն] Նախարար, ենթադրութիւն չէ, որ կընիմ, դէպքերը իրաւունք կուտան ինձի շեշտելու այս ուղղութեանը մէջ այսպէս շաբաթներ ամբողջ որպէս հասարակ միջնորդ փողոցներ թափառելէ վերջ, երբ կարողացայ գտնել դպրոցի համար յարմար քանի մը շէնք և ընտանիքներ տեղափոխելու համար անհրաժեշտ սենեակներ, անկարելի եղաւ օգտագործել, որովհետև պլարոն] Տեսուչը կամ հեռատրութիւնը կամ մեծութիւնը կառարկէր:

Եւ, սակայն, ադմինիստրացիայի ներքին միտքը, իմ ջանքերուս մասին՝ ընդհանուր անտարբերութիւնը այն ատեն միայն որոշակի պարզեցաւ, երբ շարունակական դիմումներէս ալ ևս նեղացած կըսէր. «...Ես սկզբունքով դէմ եմ դպրոցի այս ձև կազմութեան, կուզեմ հիմնական բան մը ընել...», «...²⁷ Խնդիրը ձգձգելու բուն պատճառը պիտե՞ի չգոյութիւնն է, որով պատասխանատուութիւնս իմս է և ես չուզիր որ կու՞՞՞՞ գլխուս կոտորի», թէ վերջապէս ես ոչ մէկ միջոց ունիմ դպրոցի հարցը լուծելու և բան մը չեմ կարող ընել:

²⁶ Նկատի ունի ՆԳ նախարարութեան Ադմինիստրացիայի և միլիցիայի բաժնի տեսուչ Տրդատ Տրդատյանին, որն այդ պաշտոնում է նշանակվել 1919 թ. սեպտեմբերի 18-ին. տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 450, թ. 5: 1920 թ. մայիսի 6-ին Տ. Տրդատյանը ներկայացրել է իր հրաժարականը. տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 450, թ. 16:

* Փաստաթղթում բառն այսպէս է գրված. գուցէ՛ ատնեի:

²⁷ Կախման բոլոր կետերը փաստաթղթին են՝ Ռ.Ս., Ռ.Ս.:

Պ[ա]ր[ոն] Նախարա՛ր, բացատրությունները անելորդ են: Պ[ա]ր[ոն] Տեսչին այս անվերապահ յայտարարությունները ինձի համար, դպրոցի կազմության և այդ ուղղությամբ իմ ջանքերուս դեմ ծառայած պատահական կամ կողմնակի նկատուող բոլոր դժարությունները, մտածած և սխտեմաթիք գործունեության մը հետևանքներ լինելու պաշտօնական խոստովանությունն են:

Հանգամանքներու այս դասատրությանը մէջ կը մնայ 15 օր կեանք ունեցող դպրոցին վերաբացումը անկարելի համարելով ինքզինքս նկատ[ելով] հրաժարած և ցաւ կը յայտնեմ, որ պաշտօնական մարմնի մը հանդէպ իմ վստահությանը մէջ այնքան միամտօրէն շահագործուէր եմ:

Իտրին հարգանքներով՝

Զօհրայ Բագրևանդեան [ստորագրություն]

Մակագրություններ՝ «[շտամպ] 27[փետրվարի] 1920, N 2249», «Խոսել Լևոնեանի հետ նոր տեսչի մասին, 27/2 [1920]», «Կցել Բագրևանդեանի գործին», «К делу 2/III [1920]»:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 236, թ. 12 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ


Պատմական գիտությունների դոկտոր

ՌՈՍՏՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

ԳՐԱԿՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏ ԱԳԱՏՅԱՆ, Потери армянского изобразительного и прикладного искусства на территории Османской империи (от гамидовских погромов до наших дней), Ереван, "Гитутюн", 2018, 94 с. (на арм. яз.)



В сознании каждого армянина геноцид 1915 года, как и предшествующие ему притеснения, погромы и массовые убийства армян в эпоху правления Абдул-Гамида, ассоциируются, в первую очередь, с общенациональной трагедией истребления армянского народа и потерей исторической родины. Уничтожение культурного наследия оставалось в тени этих двух глобальных трагических исторических событий, поставивших под угрозу исчезновения само понятие армянский народ. Между тем именно культурное наследие было на протяжении веков той единственной действенной силой, которая объединяла армян, живущих на территории Западной Армении, Киликии и других армянонаселенных областей Османской империи – в "теле" другого народа и другой религии – и помогала им чувствовать себя и оставаться единым народом.

Значение монографии Арарата Агасяна заключается в том, что в ней разрозненные, хотя и многочисленные, свидетельства о трагических судьбах национальных духовных святынь армянского народа на территории Османской империи на рубеже XIX и XX веков обобщены и представлены в контексте конкретных исторических событий. Собранные воедино, они убедительно доказывают, что уничтожение культурного наследия армян не носило случайный, стихийный и грабительский характер. Это был целенаправленный стратегический план по ликвидации всех следов пребывания армянского народа на своей исторической родине.

А. Агасян последовательно разворачивает целостную картину уничтожения памятников культуры армян: религиозных центров с их архитектурными сооружениями, библиотеками, скрипториями, сокровищницами, особо и неоднократно подчеркивая значение монастырских комплексов как универсальных культовых, образовательных, научных, художественных и музейных, а также своего рода издательских и типографских центров; древних иллюстрированных рукописей и книг, хранящихся в духовных центрах, библиотеках национальных школ и частных собраниях; предметов декоративно-прикладного искусства – церковной утвари из золота и серебра, ковров и ковров, вышивки, резных деревянных изделий, драгоценностей, имеющих огромную историческую и художественную ценность; могильных памятников, надгробий и хачкаров.

Автор не позволяет себе голословных высказываний, оценок и заключений. Книга изобилует именами, названиями, статистическими данными, выдержками из разнохарактерных исследований, воспоминаний, дневников, журнальных и газетных статей, устных рассказов и свидетельств. Сдержанный и страстный авторский голос перемежается с головами жертв и палачей, свидетелей и соучастников, пастырей и паствы, образованных людей и маленького бесправного, беззащитного человека.

Особого упоминания заслуживает то высокое чувство глубочайшего уважения к национальной истории, культуре и человеческой жизни, с которым Арарат Агасян нанизывает на канву повествования названия населенных армянами областей, губерний, городов, сел, деревень и местечек, названия разрушенных, разграбленных, сожженных и поруганных армянских монастырских комплексов, церквей, часовень, молельных мест и хачкаров, растерзанных книг и рукописей – сохраняя их, тем самым, для благодарной и скорбной памяти потомков. Автор поименно называет представителей армянского духовенства, ученых, писателей, педагогов и общественных деятелей, словом и делом пытавшихся противостоять напору государственной машины Османской империи, и лаконичным очерком их деятельности, выдержками из их воспоминаний и писем наполняет текст монографии живым дыханием времени.

С особым интересом, как рассказ об уникальной человеческой судьбе, читаются страницы, посвященные истории спасения отдельных рукописей.

Безусловным достоинством книги является поднятая автором и глубоко изученная им чрезвычайно важная проблема, остающаяся обычно в тени глобальной трагедии геноцида: потери светского искусства западных армян. Определяя роль, которую сыграли армянские художники и скульпторы в турецком искусстве нового времени, Арарат Агасян справедливо полагает, что потери западноармянского искусства конца XIX – начала XX века исчисляются не только погубленными жизнями, но и нерожденным или утерянным творчеством. Многие из армянских художников погибли, спасшиеся стали странниками в поисках убежища, и только единицы смогли вернуться к полноценному творчеству. Время сохранило для потомков в лучшем случае отдельные разрозненные произведения, а часто – лишь имена. Автор останавливается на драматических судьбах творцов, выживших в горниле геноцида. Огромное впечатление производят следующие одно за другим предложения, в которых названия стран и городов отмечают вехи скитальческого пути творческого человека, жизнь которого пришлась на время слома национальной истории.


Именами западноармянских писателей, поэтов, артистов, музыкантов, художников и скульпторов открывает Арарат Агасян первые страницы монографии. "Вспомним их имена", – призывает он читателей, завершая свой труд этим же своеобразным посвящением.

Каждым словом своей книги Арарат Агасян транслирует читателю мысль о том, что память о потерях национального изобразительного и прикладного искусства на территории Османской империи должна войти в сознание и сердце каждого современного армянина и что каждый из нас должен знать и помнить имена талантливых представителей своего народа вне зависимости от того, насколько полно состоялась их человеческая и творческая жизнь.

АЛИС НЕРСИСЯН

Кандидат искусствоведения

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վան-Վասպուրականի կրոնամշակութային կյանքը և պետականության ստեղծման փորձը (1908-1918), Սուրբ Էջմիածին, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ.», 2018, 308+8 էջ:



Հայոց աշխարհի նշանավոր ու տարածքով ամենամեծ նահանգը՝ Վան-Վասպուրականը, բնորոշվում է իր կերտած պատմությամբ, մշակույթով և, մասնավորապես, մշակութային եզակի արժեքներ ունեցող կրթական հզոր կենտրոններով, կրթական-մշակութային ակադեմիայի գործիչներով:

XIX դարավերջին և XX դարի սկզբին Վան-Վասպուրականը իր պատմաաշխարհագրական դիրքով ու պատմական հուզախոով իրադարձություններով առանձնանում էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգների մեջ: Այդ ժամանակաշրջանի Վան-Վասպուրականի վերաբերյալ ուշագրավ աշխատություն

է հրատարակել պատմական գիտությունների թեկնածու Ավետիս Հարությունյանը: Գիրքը տպագրվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածական խոսքից, երկու ծավալուն գլուխներից: Առաջին՝ «Մշակութային կյանքը, հոգևոր-եկեղեցական և կրոնական հարաբերությունները Վան-Վասպուրականում (1908-1917 թթ.)» գլխում քննության են առնվում և համակողմանիորեն մեկնաբանվում բազմաշերտ բնույթի հարցեր, որոնք վերաբերում են մշակութային և կրթական կյանքի աշխուժացմանը, Վանում «նորսերնդական շարժմանը», հոգևոր-կրոնական հարաբերություններին, ընդհանուր եկեղեցական կյանքին, Աղթամարի կաթողիկոսությունը կողոպտելու խնդրին, Վանում ծավալված կաթոլիկական և բողոքական քարոզչությանը, ինչպես նաև Վասպուրականի ձեռագրական անգին հարստություններին և Մեծ եղեռնի տարիներին այդ ձեռագրերի փրկության գործին:

Հեղինակը փաստառատ և վավերագիր տվյալներով ներկայացնում է Վան-Վասպուրականի պարբերական մամուլը, կրթական գործի դրվածքը,

դպրոցական բազմապիսի հաստատությունների, մանկապարտեզների, ազգային ընկերությունների գործունեությունը, որբանոցներում տիրող իրավիճակը:

Ըստ առկա տվյալների, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Վանի նահանգում կար 56 դպրոց. Վան քաղաքում և շրջաններում՝ 22, Լիմ-Կտուցում՝ 3, Աղթամարի ենթակայության տակ՝ 31 դպրոց: Սակայն, այլ աղբյուրների տեղեկությունների համաձայն, Վանի կրթօջախների քանակը ավելի շատ է եղել: Ընդհանուր առմամբ, ժողովրդական կրթության համար Վասպուրականում ծախսվում էր տարեկան 8.045 օսմանյան լիրա, որից 300-ը նվիրում էր ամերիկյան միսիոներությունը, 377 լիրան վճարում էր կառավարությունը, մնացած գումարը հատկացնում էր ինքը՝ հայ ազգաբնակչությունը: Բարձրագույն կրթությունը Վանի վիլայեթում իրագործում էին երկու վարժարաններ՝ աղջիկների՝ Սանդուխտյան և տղաների՝ Հայկազյան կեդրոնականը:

Ըստ գրքում ներկայացված տվյալների, եթե 1860 թ. Վան քաղաքում կար ընդամենը 1000 դպրոցական աշակերտ, ապա 1908-1914 թթ. աշակերտության թիվը հասնում էր 5000-ի: Իսկ Վանի նահանգի աշակերտության թիվը Առաջին աշխարհամարտի նախօրյակին հասնում էր 6200-ի, 5500-ը՝ տղա, 700-ը աղջիկ (էջ 42-43):

Հեղինակը հայության կրթական գործի դրվածքը համեմատում է Վանի վիլայեթում ապրող այլազգիների կրթական վիճակի հետ (թուրքեր, ասորիներ, քրդեր, չերքեզներ, հրեաներ, գնչուներ) և նշում, որ նրանցից դպրոցներ ունեին միայն թուրքերը, ասորիները և հրեաները, այն էլ՝ խիստ սահմանափակ քանակով: Ճշմարտությունն այն է, որ մահմեդական բնակչության շուրջ 95%-ը անգրագետ էր: Չնայած ժողովրդի սոցիալական ծանր վիճակին, այնուամենայնիվ, Վանի հասարակության բոլոր խավերի մեջ սևեռուն ուշադրություն կար ուսուցիչների նկատմամբ: Վ. Մալեզյանին ուղղված նամակներից մեկում հետևյալն է շեշտադրվում. «Երկարատև ստրկությունը որուն ենթարկվեցան հայրենիքը, մասնավորապես Վանը... շատ ու շատ այլասերված է հայուն նկարագիրը, մեր ժողովուրդը այժմ պետք ունի առողջ գիտակցությամբ և անաղարտ բարոյական հեղինակությամբ օժտված առաջնորդներու՝ շուտով կազմակերպելու համար... Այս անհրաժեշտ պետքը գոհացնել... կարելի է միայն վարժարաններու և ուսուցչության միջոցով մասնավորապես: Ուսուցչի գործիքը, երբ կրնա հաշտեցնել կրթականին հետ հասարակային աշխատությունը, ազգին համար մեծագույն բարիքն է» (էջ 50-51):

Աշխատության կարևոր ու շահեկան բաժիններից մեկը նվիրված է Վանի նահանգում պատմահնագիտական, ազգագրական և բանասիրական հետազոտություններին: Այնտեղ գտնվող մեծ քանակի պատմական, հնագի-

տական հուշարձանները ուսումնասիրելու նպատակով XX դարասկզբին Վան-Վասպուրական են գնացել մի շարք փորձառու, անվանի ազգագրագետներ ու հնագետներ, ինչպես, օրինակ, շվեյցարացի Լեոպոլդ Ֆավրը, Երվանդ Լալայանը, Հովսեփ Օրբելին, գերմանացի Վալտեր Բախմանը, Նիկողայոս Մառը, Աշխարհաբեկ Քալանթարը, Նիկողայոս Ադոնցը և ուրիշներ, որոնց գործունեության արդյունքները Ավ. Հարությունյանի ուսումնասիրության մեջ արտացոլվում են փաստական տվյալներով:

Աշխատության երկրորդ գլխում («Պետականության վերականգման փորձը Վանում (1917-1918 թթ.)») քննության են առնվում շատ կարևոր հիմնահարցեր: «1917 թ. ռուսական Փետրվարյան հեղափոխության արձագանքները Վան-Վասպուրականում և Վանի շրջանային վարչության գործունեությունը (1917 թ. մարտ-նոյեմբեր)», «Կովկասյան ռազմաճակատի քայքայումը և Վան-Վասպուրականի պաշտպանության հարցը (1917 թ. հոկտեմբեր-1918 թ. հունվար)», «Վանի նահանգային ինքնավար Կոմիսարության՝ հայկական նորանկախ կառավարության հռչակումը և գործունեությունը», «Ինքնապաշտպանական մարտերը Վան-Վասպուրականում (1918 թ. փետրվար-մարտ)», «Վան-Վասպուրականի ազգաբնակչության վերջին՝ 1918 թ. մարտյան գաղթը, պետականության անկումը և նահանգի դատարկումը», «Վասպուրականի գնդերի մասնակցությունը Սարդարապատի 1918 թ. հերոսամարտին» - ահա սույն ենթաբաժիններում որոշակիորեն գնահատվում և նորովի իմաստավորվում են հայ հանրությանն այնքան հուզող այդ դարաշրջանի ճակատագրական իրադարձություններին առնչվող հարցերն ու հարցականները:

Հեղինակը շրջանառության մեջ է դրել նոր փաստեր, կարևորել նոր իրողություններ: Շարադրանքից հստակ երևում են Վանի հայության առջև ծառայած խնդիրների ու տագնապների վիթխարիությունն ու գրեթե անհաղթահարելիությունը, որոնք առաջացել էին ռուսական Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական զորքերի զանգվածային դասալքության պատճառով կազմալուծվեց ու դատարկվեց Կովկասյան ռազմաճակատը: Արևմտահայ և արևելահայ գործիչները Վանի հայության հետ միասին աներևակայելի ճիգերի, ջանքերի, նաև կորուստների գնով կարողացան որոշ ժամանակով կայունացնել իրավիճակը և կազմակերպել Վան-Վասպուրականի ինքնապաշտպանության գործը: Նման պայմաններում հերոսական քայլ էր Վանի նահանգային ինքնավար Կոմիսարության՝ հայկական նորանկախ կառավարության հռչակումը և գործունեությունը՝ թեկուզ և կարճաժամկետ: Ուժերի տենդագին կազմակերպումից հետո կանոնավորվեցին Վասպուրականի զինական ուժերն ու վարչական մեքենան: Սակայն իրադարձությունների հետագա զարգացումը խիստ աննպաստ էր: Էրզրումի անկումով ծանր ի-

րավիճակ ստեղծվեց նաև Վան-Վասպուրականի համար. նա փաստորեն կտրվում էր արտաքին աշխարհից: Վանի հայության նահանջը դառնում էր անխուսափելի անհրաժեշտություն: Թշնամու ուժերը մի քանի անգամ գերազանցում էին հայկական զինյալ ուժերին: Սակայն միայն թվաքանակի մեջ չէր խնդիրը, և այդ առումով տեղին է Վանի շրջանային վարչության անդամ Հ. Մանուկյանի դիպուկ բնութագրումը. «Հայութիւնը չի կրնար կազմակերպւիլ, և այդ է իր միակ դժբախտութիւնը: Ահա ղեկավար շրջան մը Վանի մէջ. ո՛չ մէկ քանք, միջոց մը, ո՛չ մէկ, ո՛չ ձեռնամխութիւն, թէլէֆոն տալ և առնել՝ ահա բոլորը. Դժբախտ ենք և պիտի կոտորւինք...» (էջ 282):

Ավ. Հարությունյանը, քաջատեղյակ լինելով այդ ժամանակահատվածում ընթացող դեպքերի ու իրադարձությունների ողջ ընթացքին ու մանրամասնություններին, իր շարադրանքի մեջ հավատարիմ է մնում պատճառահետևանքային կապերի գիտականության սկզբունքներին և ներկայացնում տեղի ունեցած ողբերգության մեխանիկան՝ դետալ առ դետալ, փաստ առ փաստ, մեծ առ մանրուք: Պատմական դաժան իրողությունները չեն քողարկվում և չեն թաքցվում ընթերցողից, որքան էլ դրանք դառն ու դժնի լինեն:

Այդպիսով, անաչառ պատմաբանը ընթերցողի առջև բացում է Վան-Վասպուրականի հայության 1918 թվականի մարտյան աղետաբեր նահանջի ողիսականը, նահանջ, որը վերջինը եղավ:

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի դժբախտ ու մութ էջերը լուսաբանող և բացահայտող այս արժեքավոր աշխատությունը հույժ ուսանելի է և արդիական հարցեր ու հարցադրումներ է առաջադրում ոչ միայն հիմնահարցին գիտակ մասնագետներին, այլև ընթերցող լայն հանրությանը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

«ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ

Սույն թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ «Կոմիտաս» ամենամյա միջազգային գիտաժողով-փառատոնը, որը նվիրված էր Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակին: Վերջինիս անունը ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ «Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2018-2019 թվականների օրացույցում»:

Հորեյանական՝ «Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատոնի գիտական նստաշրջաններն անցկացվեցին ս.թ. հոկտեմբերի 8-10-ին, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Գիտաժողովի կազմակերպիչներն էին՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը (ԿԹԻ), Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Բեռլինի Հումբոլդտի համալսարանը և Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանը: Գիտաժողովին մասնակցեցին գիտնականներ, ընդհանուր առմամբ, յոթ երկրներից՝ Հայաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ուկրաինա, Կանադա, Ռուսաստան:

Հոկտեմբերի 8-ին «Կոմիտասը և իր ժառանգությունը» միջազգային գիտաժողովի բացման առիթով Հումբոլդտի համալսարանի Երաժշտագիտության և մեդիա հետազոտությունների ինստիտուտի մասնաշենքում Կոմիտասի հուշատախտակի առջև ծաղիկներ խոնարհեցին:

Գիտաժողովի նիստերը գումարվեցին նույն համալսարանի հանդիսությունների դահլիճում: Բացման խոսքով հանդես եկան Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պետքարտուղար *Անյոյե Լեենդերթսեն*, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան *Աշոտ Սմբարյանը*, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, պատմական գիտությունների թեկնածու (պ.գ.թ.) *Արայիկ Հարությունյանը*, Բեռլինի Հումբոլդտի համալսարանի Երաժշտագիտության և մեդիա հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, դոկտոր, պրոֆ. *Սեբաստիան Քլոթցը*, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության թեկնածու (ա.գ.թ.) *Նիկոլայ Կոստանդյանը*: Բեռլինի Հումբոլդտի համալսարանի նախագահ, դոկտոր, պրոֆ. *Սաբինե Քունսթի* ուղերձը փոխանցեց նույն համալսարանի Ֆինանսների և մարդկային ռե-

սուրսների գծով փոխնախագահ, դոկտոր *Լյուդվիգ Քրոնթալերը*: Իրենց խոսքում նրանք ընդգծեցին, մասնավորապես, Կոմիտասի առաքելության և նրա՝ գերմանական ակադեմիական միջավայրի հետ ունեցած կապը և ողջունեցին գիտաժողովի մասնակիցներին:

Գիտաժողովի բացմանը հաջորդեց լիագումար նիստը, որի ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի (ԱԻ) ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի նախագահ, «Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատոնի գեղարվեստական ղեկավար, ա.գ. դոկտոր, պրոֆ. *Մհեր Նավոյանը* ներկայացրեց Կոմիտասի դերն ու նշանակությունը հայ մշակույթի պատմության մեջ, գերմանացի կոմպոզիտոր, պրոֆ. *Թոմաս Բուխհոլցն* անդրադարձավ եվրոպական երաժշտամտածողության կարևոր տարրերին Կոմիտասի որոշ ստեղծագործություններում: Համբուրգի համալսարանի պրոֆ., օսմանագետ, դոկտոր *Էլկե Հարտմանն* իր զեկուցման մեջ լուսաբանեց հայերի և, մասնավորապես, Կոմիտաս Վարդապետի դերը Օսմանյան կայսրության զարգացման գործում:

Լիագումար նիստին հաջորդեց առաջին նիստը՝ «**Կոմիտասը և Գերմանիան**» խորագրով, որի նախագահողն էր գերմանացի երաժշտագետ, դոկտոր *Օլիվեր Գերլախը*: Նիստին Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանի Քրիստոնյա Արևելքի ամբիոնի պրոֆեսոր, նույն համալսարանին առընթեր «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի ղեկավար, դոկտոր *Արմենուհի Դրոսպ-Աբգարյանը* ներկայացրեց Կոմիտասին՝ որպես հայ-գերմանական հարաբերություններում առանցքային դեր ունեցող կերպարի, ԿԹԻ գիտական բաժնի վարիչ, ԱԻ ավագ գիտաշխատող, ա.գ.թ. *Տաթևիկ Շախկույանն* ուշագրավ օրինակներ բերեց Կոմիտասի բեռլինյան շրջանի ստեղծագործություններից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, ա.գ.թ. *Լուսինե Սահակյանն* անդրադարձավ Ռիխարդ Վագների և Կոմիտաս Վարդապետի միջև եղած առնչություններին:

Երկրորդ՝ «**Կոմիտասը և ժողովրդական երաժշտությունը**» խորագրով նիստի նախագահողն էր *Տաթևիկ Շախկույանը*: Նիստի առաջին զեկուցողը՝ վաստակաշատ բանագետ, ա.գ.թ., պրոֆ. *Ալինա Փահլևանյանը* ներկայացրեց Կոմիտասին՝ որպես հայ երաժշտական ֆոլկլորագիտության հիմնադրի և լուսաբանեց նրա՝ բանագիտական մեթոդի սկզբունքները: ԱԻ առաջատար գիտաշխատող, ա.գ.դ., պրոֆ. *Լիլիթ Երնջակյանը* քննության առավ երաժշտական ինքնության և հայկականության՝ կոմիտասյան ըմբռնումները հայկականի և արևելյանի հակադրամիասնության լույսի ներքո: ԱԻ առաջատար գիտաշխատող, ա.գ.դ., պրոֆ. *Աննա Արևշապյանի զեկուցումը* նվիրված էր Ման-

րուաման արվեստին և գրքերին՝ Կոմիտասի ուսումնասիրությունների համատեքստում: Օդեսայի Ա.Վ. Նեժդանովայի անվան երաժշտական ակադեմիայի դոցենտ, ա.գ.թ. *Տադյանա Կապլունն* անդրադարձավ կույս-ռազմիկների արքետիպին՝ արևելասլավոնական և գերմանական երաժշտական ավանդույթներում:

Գիտաժողովի շարունակությունը տեղի ունեցավ հոկտեմբերի 9-ին և 10-ին Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանում: Հոկտեմբերի 9-ին գիտաժողովի երրորդ նիստից առաջ ողջույնի խոսքով հանդես եկան Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանի էթնոերաժշտագիտության ամբիոնի պրոֆ., դոկտոր *Քլաուս Նոյմանը*, դոկտոր, պրոֆ. *Արմենուհի Դրոսյ-Աբգարյանն* ընթերցեց Գերմանիայի Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Տնտեսության, գիտության և թվայնացման նախարար, դոկտոր, պրոֆ. *Արմին Վիլլինգմանի*, ինչպես նաև Ժնևի համալսարանի հայագիտության ամբիոնի պրոֆ., Հայագիտության միջազգային ընկերակցության նախագահ, դոկտոր *Վալենտինա Կալցոլարիի* ուղերձները՝ գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին:

Գիտաժողովի երրորդ նիստը կրում էր «**Կոմիտասը միջգիտակարգային կապերի համատեքստում (Ա)**» խորագիրը, նախագահողն էր Երևանի պետական համալսարանի Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, ա.գ.դ., պրոֆ. *Լևոն Չուգասզյանը*: Նիստի առաջին զեկուցողը դոկտոր, պրոֆ. *Քլաուս Նոյմանն* էր, որը դիտարկեց Կոմիտաս Վարդապետին իր ժամանակի այլազգի երաժիշտ-ազգագրագետների շարքում, այնուհետև պրոֆ. *Մհեր Նավոյանը* ներկայացրեց ազգային կոմիտասյան հայեցակարգը և վերջինիս ձևավորման գործընթացն ու աղբյուրները: Լայպցիգի Սաքսոնական արխիվի բաժնի ղեկավար, դոկտոր *Թեբլա Քլուբիզը* և ԿԹԻ գիտաշխատող, ա.գ.թ. *Լիլիթ Հարությունյանը* համատեղ զեկուցմամբ ներկայացրեցին Կոմիտասին առնչվող նորահայտ նամակներ և փաստաթղթեր՝ հայտնաբերված Սաքսոնական արխիվում՝ գերմանական *Breitkopf & Härtel* հրատարակչության ֆոնդում: Նիստը եզրափակեց Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանը ներկայացնող բժիշկ-ախտաբան, կովկասագետ, հայագետ *Հելմուտ Ջանդեքը*, որն իր զեկուցման ընթացքում անդրադարձավ Օսկար Ֆլայշերի ազդեցությանը Կոմիտաս Վարդապետի խազագիտական և բանագիտական գործունեության վրա:

Գիտաժողովի չորրորդ նիստը՝ «**Կոմիտասը միջգիտակարգային կապերի համատեքստում (Բ)**», նախագահում էր *Լիլիթ Երնջակյանը*: Նիստի ընթացքում Պալերմոյի համալսարանի դոցենտ *Մարիա Լուչիա Ալիֆֆին* անդրադարձավ Կոմիտասի դաշնամուրային երկերում առկա իտալերեն երաժշտական

եզրույթների կիրառման առանձնահատկություններին, այդ թվում՝ թարգմանության խնդիրներին: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. *Արսեն Բորոխյան* իր զեկուցման մեջ քննեց Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ենթաշերտային խորհրդաբանությունը և առաջադրեց դրա թվագրության խնդրի լուծման որոշ տարբերակներ: Նիստի ավարտին *Լևոն Չուգասզյանը* ներկայացրեց Կոմիտաս Վարդապետի և հայ գեղանկարչության, արվեստի ականավոր գործիչների փոխառնչությունների պատմությունը:

Հոկտեմբերի 10-ին մեկնարկեց գիտաժողովի հինգերորդ նիստը՝ «**Կոմիտասը և միջնադարյան երաժշտությունը**»։ Նախագահողն էր *Աննա Արևշատյանը*: Նիստի ընթացքում Սանկտ Պետերբուրգի Ն. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի Հին ռուսական երգչական արվեստի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու *Մարինա Եգորովան* ներկայացրեց երաժշտական մշակույթում Ունյվլայի կարգի համեմատական հետազոտությունների հեռանկարները, այնուհետև Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. *Աստղիկ Մուշեղյան* անդրադարձավ Կոմիտաս Վարդապետի գրառած տաղերին, դրանց հեղինակային պատկանելությանը, ժամանակաշրջանին, երաժշտական բաղադրիչի առանձնահատկություններին և համանուն այլ գրառումների հետ ունեցած աղերսներին: ԿԹԻ գիտաշխատող *Նանե Միսաքյանի* դիտարկման առանցքում հայկական Ութալայի համակարգի ԲՁ ձայնեղանակի և միջնադարյան *Dies Irae* սեկվենցիայի առնչություններն էին: Խազագրությանն առնչվող կոմիտասյան ուսումնասիրություններին անդրադարձ կատարեց Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. *Արուսյակ Թամրազյանը*: Միջնադարագիտությանը նվիրված նիստն ամփոփեց ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, ԿԹԻ գիտական բաժնի աշխատակից, պ.գ.թ. *Գայանե Ամիրադյանը*, որի զեկուցումը նվիրված էր հայ հոգևոր երաժշտության ձայնեղանակների վերլուծության կոմիտասյան մեթոդի դրույթներից մեկին՝ հայ հոգևոր երգարվեստի՝ էջմիածնական և Նոր Զուղայի երգվածքներին պատկանող շարականների օրինակով:

Գիտաժողովի վեցերորդ՝ «**Արվեստը ռեպրեսիաների ժամանակաշրջանում**» խորագրով նիստը նախագահում էին պրոֆ. *Արմենուհի Դրոսյ-Աբգարյանը* և Բեռլինի պետական գրադարանի Արևելագիտության բաժնի փոխտնօրեն *Մելինե Փեհլիվանյանը*: Այս նիստի ընթացքում կանադահայ հոգեբույժ, դոկտոր *Ռիդա Սուլաիյան Գույումճյան* իր զեկուցման մեջ բարձրացրեց Կոմիտաս Վարդապետի հոգեկան աշխարհի ուսումնասիրության մի շարք կարևոր

խնդիրներ: Թեման շարունակելով՝ ելույթ ունեցավ նաև ֆրանսահայ պատմաբան, հայագետ, դոկտոր *Կլոդ Մութաֆյանը*:

Վեցերորդ նիստին հաջորդեց կլոր սեղանը, որի ընթացքում գիտաժողովի մասնակիցները քննարկեցին, մասնավորապես, այս նիստի և առհասարակ գիտաժողովի ընթացքում արծարծված թեմաներին առնչվող մի շարք հարցեր:

Գիտաժողովի շնորհիվ բազմաթիվ կապեր հաստատվեցին հայ գիտնականների և միջազգային գործընկերների միջև՝ փոխադարձ բեղուն համագործակցության և արդյունավետ միասնական աշխատանքի ակնկալիքով:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ-90» ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Լրացան ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր, դիրիժոր Հովհաննես Հարությունի Չեքիջյանի ծննդյան 90-ամյա և կատարողական գործունեության 75-ամյա հոբելյանները:

Այդ կապակցությամբ 2019 թ. հուլիսի 12-ին և 13-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ գումարվեց «Հովհաննես Չեքիջյան-90» գիտական նստաշրջանը, որի բացումն ու լիազումար նիստը տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական):

Գիտական նստաշրջանի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Հ. Չեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Արարատ Աղասյանն** անդրադարձավ ՀՀ ԳԱ ակադեմիայի, մասնավորապես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հ. Չեքիջյանի միջև համագործակցությանը, որն առավել բազմաբնույթ ու բազմակողմանի է դարձել վերջին տարիներին, և թերթեց այդ համագործակցության էջերը, որոնցից մեկն էլ այս նստաշրջանն է:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը**: Նա մասնավորապես նշեց. «Հարգարժան պրոֆեսոր, մեր հին և նոր բարեկամ (ես նկատի ունեմ գիտությունների ակադեմիան):

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ:

Թույլ տվեք ձեզ ողջունել գիտությունների ազգային ակադեմիայում և ցանկանալ գիտաժողովին հետաքրքիր քննարկումներ: Հսկայական է այն ներդրումը, որ Մաեստրոն բերել է մեր մշակույթի զարգացման, այնուհետև՝ նրա տարածման, աշխարհին ներկայացման ասպարեզում: Ես մի սիմվոլիկ բանի մասին եմ ուզում ասել: Մենք ունենք երկու մտավորական, որոնք մեր հայությանը, նրա կարողությունները ներկայացրել են աշխարհին: Առաջինը Վիկտոր Համբարձումյանն է, որն ամբողջ աշխարհին ներկայացրեց մեր գիտությունը, մեր գիտության նվաճումները: Որոշ դեպքերում Հայաստանը՝ որպես երկիր, պետություն, ճանաչում են որպես Վիկտոր Համբարձումյանի հայրենիք:

Մյուս մտավորականը, որը, փաստորեն, նույն խնդիրն է լուծել և մինչև հիմա շարունակում է լուծել, մեր Մաեստրոն է՝ պրոֆեսոր Չեքիջյանը, որը մեր հայ մշակույթի կոթողները, մեր երգերը, մեր երաժշտության նվաճումները,

մեր կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները ներկայացրել է աշխարհի ժողովուրդներին: Դժվար է պատկերացնել աշխարհի որևէ երկիր, որտեղ Մաեստրոն իր երգչախմբով ելույթներ ունեցած չլինի»:

Ռ. Մարտիրոսյանը նկատեց, որ Մաեստրոյին «ԿԱԱ պատվավոր դոկտորի կոչում շնորհելը ոչ միայն հարգանքի նշան է եղել, այլև հաշվի է առնվել նրա կատարած հսկայական աշխատանքը: Հավարտ խոսքի՝ «ԿԱԱ նախագահը ևս մեկ անգամ շնորհավորելով հորեյարին՝ ասաց. «Ձեր 95-ամյակը չգիտեմ, բայց 100-ամյակը անպայման պետք է նշենք: Ես, ինչպես նաև այստեղ բոլոր նստածները, համոզված եմք, որ Դուք լինելու եք, մենք էլ կողքից կգանք: Ով հասցրեց՝ կգա: Ով չի հասցնի՝ թող մտածի իր մասին»:

«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի և նախարարության ամբողջ անձնակազմի անունից նստաշրջանի մասնակիցներին ողջունեց փոխնախարար, արվեստագիտության թեկնածու **Արա Խզմայանը**: Նա նկատեց, որ առանց Հ. Չեքիջյանի անձի անպատկերացնելի է երգչախմբային արվեստը և ընդգծեց նրա հսկայական դերն առհասարակ մշակույթի տիրույթում՝ երգչախմբային արվեստի դիրքավորման առումով: Ա. Խզմայանը կարևորեց Մաեստրոյի դերը որպես հասարակության համար կողմնորոշիչ և չափանիշ, որ զգաստացնում և սթափեցնում է մասնագիտական հանրությանը:

«ԿԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի անունից ողջույնի խոսք ասաց և գիտաժողովին հաջողություն մաղթեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը**: Նա գիտաժողովը բնորոշեց որպես առանձնահատուկ, քանի որ զեկուցողները փորձելու են ընդհանրացնել և արժևորել մի մարդու ստեղծագործական գործունեություն, որը դարձել է կենդանի լեգենդ, դասական:

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր **Արամ Սաթյանն** ընդգծեց, որ կոմպոզիտորական արվեստն առանց կատարողական արվեստի չի կարող զարգանալ: Երգչախմբային երաժշտության մեջ եթե չլինեին Չեքիջյանի հմտությունները, ապա շատ ստեղծագործություններ չէին ստեղծվի: Երբ դիրիժորական վահանակի մոտ է Չեքիջյանը, նա գտնում է որոշ նրբերանգներ, որոնք շատ անգամ նույնիսկ ստեղծագործող մարդկանց անհասկանալի ու անհասանելի են: Եթե հավանեց Չեքիջյանը՝ ուրեմն այդ երգչախմբային ստեղծագործությունը հաջողված է:

Այնուհետև Հ. Չեքիջյանն իր երախտագիտությունը հայտնեց՝ այս էլ երկրորդ անգամ նման պատվի արժանանալու՝ իրեն նվիրված ակադեմիական գիտաժողով կազմակերպելու համար:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտնականներն ու դասախոսները:

Լիագումար նիստում տողերիս հեղինակը ներկայացրեց Հովհաննես Չեքիջյանի ներդրումը հայ երաժշտարվեստում: Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյանը** հանդես եկավ «Հոգևոր երաժշտությունը Հովհաննես Չեքիջյանի կատարողական արվեստում» բանախոսությամբ: Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր **Մարգարիտա Ռուխկյանը** ներկայացրեց «Մշակութային ավանդույթների զարգացումը՝ ազգային ինքնության պատվար» թեմայով բանախոսությունը:

Իր կատարողական ողջ գործունեության ընթացքում Մաեստրոն հավատարիմ է կոմիտասյան պատգամներին: Եվ պատահական չէ, որ հիմնադրման օրվանից՝ 2015 թ. հունվարի 29-ից, Մաեստրոն Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է: Ավելին՝ կանգնած լինելով այդ թանգարանի գաղափարի և ստեղծման ակունքներում՝ մեծապես կարևորել է թանգարանի ստեղծումը Երևանում: Իսկ մինչ այդ՝ 2011 թվականին, եղել է Կոմիտասի անվան առաջին միջազգային փառատոնի պատվավոր հյուրը և ընտրվել մրցանակային ժյուրիի պատվո նախագահ, փառատոնի «գեղարվեստական մասի ձևավորման գործին աջակցելու և վերջինիս նկատմամբ նվիրվածություն ցուցաբերելու համար» 2011 թ. օգոստոսի 7-ին պարգևատրվել է պատվոգրով: Լիագումար նիստը եզրափակեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, Արվեստի ինստիտուտի դոկտորանտ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Լուսինե Սահակյանի** «Կոմիտասի խմբերգերը չեքիջյանական մեկնաբանությամբ» զեկուցումը: Այնուհետև գիտական նստաշրջանի նիստերը շարունակվեցին Արզականում՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը:

Առաջին նիստում Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր **Նազենիկ Սարգսյանն** անդրադարձավ Հ. Չեքիջյանի գործունեությանը Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում: 1982-ին Հ. Չեքիջյանը համատեղությամբ նշանակվեց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրեկտոր՝ այդ պաշտոնում պաշտոնավարելով մինչև 1987-ը և ծավալելով արդյունաշատ գործունեությունը օպերային երաժշտության բնագավառում և՛ մեծապես նպաստելով թատրոնի խաղացանկի հարստացմանը:

Խմբավար և սիմֆոնիկ դիրիժոր Հ. Չեքիջյանը հանդես է գալիս նաև որպես օպերային դիրիժոր: Բանախոսն իր զեկուցման վերջում նկատեց, որ եթե ժամանակին Չեքիջյանը չհետանար օպերային թատրոնից, ապա այսօր մենք կունենայինք այլ մակարդակի ու որակի օպերային թատրոն:

2019 թ. մայիսի 14-ին Ա. Խաչատրյան համերգասրահում Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ Հ. Չեքիջյանի փայլուն ղեկավարությամբ հնչեց Կառլ Օրֆի “Carmina burana” կանտատը, որի չեքիջյանական մեկնաբանության առանձնահատկությունների մասին էր Արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր և երգեհոնահար **Հովհաննես Մանուկյանի** զեկուցումը:

55 տարի առաջ՝ 1964-ի նոյեմբերի 24-29-ին տեղի ունեցավ Հ. Չեքիջյանի դեբյուտը ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում: Մոսկվյան դեբյուտից անցած 55 տարիների ընթացքում Մոսկվայում Մաեստրոն ունեցել է 90 համերգ: Հենց Մոսկվայում տեղի ունեցան վոկալ-սիմֆոնիկ մի շարք ստեղծագործությունների, այդ թվում՝ Բեռլիոզի “Requiem”-ի, Գաբրիել Ֆորեի “Requiem”-ի, Գունդի «Մահ և կյանք» օրատորիայի, Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկական սիմֆոնիայի համամիութենական պրեմիերաները: Չեքիջյանի մոսկվյան հյուրախաղերին էր նվիրված Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանի** զեկուցումը, որը եզրափակեց առաջին նիստը:

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը՝ Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ, համերգներով շրջագայել է Հայաստանի սահմաններից դուրս 184 քաղաքներում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, Լիբանանում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում, Արգենտինայում, Ավստրալիայում... 869 համերգների ընթացքում հանդես է եկել աշխարհի 69 առաջնակարգ նվագախմբերի հետ:

Նստաշրջանի վերջին նիստում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, Արվեստի ինստիտուտի դոկտորանտ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Աննա Հարությունյանը** ներկայացրեց Մաեստրոյի արտասահմանյան համերգային շրջագայությունների լեհական էջը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն, արվեստագիտության թեկնածու **Սարգիս Բալթաբյանի** զեկուցումը նվիրված է Հովհաննես Չեքիջյանի և նվագախմբի բեղմնավոր համագործակցությանը: Բանախո-

սը քննության առավ երգչախմբային արվեստին վերաբերող որոշ տեխնիկական և գեղարվեստական հարցեր, որոնցով առանձնանում է Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը, ինչպես նաև ներկայացրեց երգչախմբի և նվագախմբի համագործակցության առաջիկա նախագծերը:

Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու, արվեստաբան **Մարգարիտա Քամայանը** «Հովհաննես Չեքիջյանը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» զեկուցման մեջ մասնագիտական քննության ենթարկեց նկարիչներ Ռուդոլֆ Խաչատրյանի, Մարկոս Արզումանյանի, Արամ Սարիբեկյանի, Լիլիա Կարճիկյանի և Միքայել Հարությունյանի, ռեժիսոր, ծաղրանկարիչ Վարդան Աճեմյանի և քանդակագործներ Լևոն Թոքմաջյանի, Ալիս Մելիքյանի ու Էդուարդ Շախիկյանի՝ մեծանուն դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի վառ անհատականությունը հավերժացնող ստեղծագործությունները: Բանախոսը ներկայացրեց նաև Մաեստրոյի տաղանդով հիացած անվանի կերպարվեստագետներ Երվանդ Քոչարի, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Հակոբյանի, Գրիգոր Խանջյանի բարձր գնահատանքի խոսքերը:

Նստաշրջանը եզրափակեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, Արվեստի ինստիտուտի հայցորդ **Նաիրա Մադոյանի** «Հովհաննես Չեքիջյանի և հայկական կապելայի լենինգրադյան հյուրախաղերը. Լենինգրադում Մաեստրոյի առաջին հյուրախաղերի 55-ամյակի առթիվ» զեկուցումը: 1964 թ. հոկտեմբերի 29-31-ին և նոյեմբերի 1-ին կապելան Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ նվաճեց Լենինգրադը: 1964-ին սկիզբ առած բարեկամությունը Լենինգրադի ունկնդրի հետ շարունակվեց հետագայում. Մաեստրոյի ղեկավարությամբ երգչախումբը 97 համերգ է ունեցել Լենինգրադում: Բանախոսն անդրադարձավ լենինգրադյան այն համերգներին, որոնցում Մաեստրո Չեքիջյանն ու նրա ղեկավարած կապելան իրականացրել են տարբեր ստեղծագործությունների համամիութենական պրեմիերաները:

Վերջում տողերիս հեղինակն ամփոփեց նստաշրջանի արդյունքները, որից հետո Մաեստրոն մատուցեց իր անակնկալը. գիտական նստաշրջանի ունկնդիր՝ կապելայի արտիստների փոքրաթիվ խմբի կատարմամբ հնչեց Մակար Եկմայանի «Ով հայոց աշխարհ» խմբերգը, որից հետո իր երախտագիտության խոսքն ասաց Մաեստրոն:

Նշենք նաև, որ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել նստաշրջանի զեկուցումների ժողովածուն:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՁԱՆՁԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՐԸ (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)



Երիտասարդական ավյունով, առույգ ու սթափ մտքերով է դիմավորում իր հորեյանը վաստակաշատ գիտնականը, հայ մամուլի պատմության երախտավոր հետազոտող Ալբերտ Արմենակի Խառատյանը: Նա ծնվել է 1939 թ. օգոստոսի 24-ին ամենայն հայոց մայրաքաղաքում, սովորել տեղի թիվ 14 դպրոցում, յուրացրել ոսկեդինիկ մայրենին, ապա հին հայերենը (գրաբարը), ռուսերենը, անգլերենը և թուրքերենը, որը կարդում և թարգմա-

նում է բառարանի օգնությամբ:

Ա. Խառատյանը միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1959 թ. ընդունվում և 1964-ին ավարտում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը՝ «Հայ գրականություն և լեզու», «Հայ մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմություն» մասնագիտացումներով, որոնք էլ նախանշում են նրա հետագա գիտական հետազոտությունների ոլորտը: Ուսումնառության շրջանը անցնելով՝ երիտասարդ մասնագետը մուտք է գործում մանկավարժության բնագավառ ու հայոց լեզու և գրականություն է դասավանդում ՀՀ տարբեր շրջանների դպրոցներում: Այնուհետև նա տեղափոխվում է Հայկական սովետական հանրագիտարանի գիտավոր խմբագրություն՝ ստանձնելով այդ կոթողային հրատարակության համակարգում մամուլի պատմության սրբագրիչի, ապա խմբագրի պաշտոնը:

Ուսումնասիրության թեմա ընտրելով Հայ պարբերական մամուլի պատմությունը՝ գիտության ուղին նոր ոտք դրած երիտասարդը 1972 թ. հաջողությամբ պաշտպանում է «Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը 19-րդ դարի 50-60-ական թվականներին» խորագրով ատենախոսությունը, ստանում բա-

նասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և իրեն ամբողջապես նվիրում գիտական ու գիտամանկավարժական աշխատանքներին:

1973 թ. Ա. Խառատյանը նշանակվում է ՀՀ ԳԱԱ հասարակագիտական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնի բաժնի վարիչ: 1985 թ. նա Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող էր, 1988-2017 թթ.՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի գլխավոր խմբագիրը, 1993 թ. մինչ օրս հիշյալ ինստիտուտի Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի վարիչն է, իսկ 2017 թ. առ այսօր՝ «Բանբեր հայագիտության» հայկական միջազգային հանդեսի գլխավոր խմբագիրը:

Չբավարարվելով ձեռք բերածով՝ պրպտուն հետազոտողը 1986 թ. գիտական հասարակայնության դատին է հանձնում առավել ընդգրկուն՝ «Հասարակական միտքը գմյունահայ մամուլում 1840-1890 թթ.» վերնագրով ու նորույթներով հարուստ աշխատությունը, որի համար նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2009 թ. Ա. Խառատյանը պրոֆեսոր է, 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Լայն է պատմաբանի հետաքրքրությունների շրջանակը, բազմազան՝ ստեղծագործական գործունեության ոլորտը: Բազմիցս մասնակցել է միջազգային գիտաժողովների (Երևան՝ 1996, 2000, Ճենովա՝ 1997, Լոս-Անջելես՝ 2002, 2004, Եղեգնաձոր՝ 2005 և այլն) ու հանդես եկել զեկուցումներով:

Ա. Խառատյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդների անդամ է, «Գիտության աշխարհում» հանդեսի աշխատակից:

Լինելով Կանադայի՝ Ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի, ինչպես նաև Պատմաբանների միջազգային միության անդամ՝ Ա. Խառատյանը նպաստում է այդ միությունների գործունեության իրականացմանը: Հասարակական հիմունքներով տարվող այս աշխատանքներին զուգահեռ, Ա. Խառատյանը «Օսմանյան Թուրքիայի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմություն» և «Հայ գաղթօջախների պատմություն» թեմաներով 1986-2000 թթ. դասախոսություն է կարդացել նախ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում, ապա, մինչ օրս՝ Արևելագիտության ֆակուլտետում, և ԵՊՄՀ հայոց պատմության բաժիններում՝ իր հարուստ փորձն ու գիտելիքները հաղորդելով ապագա թուրքագետներին և մանկավարժներին: Նրա ղեկավարությամբ գիտական ատենախոսություններ են պաշտպանել և իրենց ինքնուրույն գիտական գործունեությունը ծավալել շուրջ մեկ ու կես տասնյակ ասպիրանտներ:

Որքան էլ զբաղված այդ աշխատանքներով, այնուամենայնիվ, հոբելյարը մնացել է գիտության իր նախասիրած տարածքներում և շարունակել ստեղծագործել՝ գիտական հասարակայնությանը հաճախ ներկայացնելով նոր ու բովանդակալից աշխատություններ: Նրա որոնող գրչի արգասիք

տպագիր աշխատությունների քանակը չափվում է եռանիշ թվով. 6 մենագրություն, 140 գիտական հոդվածներ ու գրախոսականներ, երկու տասնյակի հասնող խմբագրած գրքեր, ծանոթագրություններով ու ցանկերով ուղեկցվող «Արևելյան մամուլ» ու «Մեղու» մատենագիտություններ: Իսկ եթե թվարկվածներին ավելացնենք նաև նրա անդամակցությունը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ հրատարակվող «Հայոց պատմություն» նոր բազմահատորյակի երկուական գրքերից բաղկացած՝ II, III և IV հատորների խմբագրական խորհուրդներին, ապա առավել առարկայորեն կհառնի աշխատանքների այն ծավալը, որ իրականացնում է Ա. Խառատյանը հայագիտության ոլորտում ընդհանրապես և հայ մամուլի պատմության ուսումնասիրության բնագավառում մասնավորապես:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանի աշխատություններն առանձնանում են իրենց նորոյթներով ու գիտական խորությամբ: Նրանցում լուսաբանվում են հայ մամուլի ավելի քան հարյուրքսանամյա պատմությունը՝ արևմտահայ մամուլի սկզբնավորումից մինչև ժամանակակից լրատվական միջոցները, արտացոլվում արծարծած խնդիրները, ներկայացվում ուսումնասիրվող պարբերականների գործունեությունը ժամանակի տարբեր հատվածներում, և վեր է հառնում հայ մամուլի դերը մեր ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի ու մտքի, գիտության և մշակույթի զարգացման գործում: Կենտրոնանալով արևմտահայ մամուլի ուսումնասիրության վրա՝ Ա. Խառատյանը մանրախոյզ քննությամբ բացահայտում է դրա համազգային բնույթը, վերաբերմունքը հայրենիքում և գաղթօջախներում տեղի ունեցող իրադարձություններին, ազգային ինքնության պահպանմանը միտված ջանքերը: Նրա տեսադաշտից դուրս չեն մնացել և ամենայն ճշգրտությամբ պատկերվել են այն պայմանները, որոնցում հարկադրված էին ապրել և ստեղծագործել հայ մամուլի երախտավորներն արտերկրում:

Անխոնջ գիտնականի աշխատությունները վավերագրական նյութերի յուրովի ժողովածուներ են, որոնց լույսի ներքո անսքող թափանցիկությամբ ուրվագծվում է արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքն իր համակողմանիությամբ:

Ա. Խառատյանի ուսումնասիրությունների գլխավոր բովանդակությունը հանգուցային շատ հարցերի նորովի լուսաբանումն է: Առաջնորդվելով իրական գիտության շահերով՝ սկզբունքային գիտնականը, նշված ժամանակաշրջանում գործող օսմանյան ծանր գրաքննությանն առնչվող հարցերը ներկայացնում է համաձայն իրենց ծագման պատճառների ու նպատակաուղղվածության ու, ըստ այդմ, արժևորում: Հայ մամուլի պատմագրության մեջ առաջին անգամ համակողմանի քննության են առնվում օսմանյան գրաքննության

քաղաքական նկարագիրը և հատկապես՝ այդ գրաքննության վայրագ վերաբերմունքը հայ մամուլի և նրա գործիչների նկատմամբ («Արևմտահայ մամուլը և օսմանյան գրաքննությունը», Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 1989): Նրա աշխատության մեջ բնորոշվում և գնահատվում են նաև տասնյակ պարբերականներ, ինչպես և արևմտահայերի լուսավորական շարժումները, հասարակական-քաղաքական հոսանքները և այլն:

Տարողունակ են հայ գաղթավայրերի, մասնավորապես, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի պատմությանը նվիրված մի ամբողջ շարք հոդվածները և մենագրությունը [(«Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր)», Ե., 2007], որոնցում Ա. Խառատյանը որակական նոր փոփոխություններով վեր է հանում արտերկրի հայության ստեղծարար ուժը դպրոցների կառուցման, գրականության և արվեստի տարբեր ճյուղերի, հայոց եկեղեցու իրավունքների պահպանման ու ընդլայնման և հայ ժողովրդի հարատևությանը միտված այլ բնագավառներում: Այս ամենի կողքին նա չի անտեսել նաև արևմտահայ երգիծական մամուլը և իրեն հատուկ խորությամբ անդրադարձել է նաև դրան: Կցանկանայինք առանձնացնել Ա. Խառատյանի «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922)» (Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2015) աշխատությունը, մեզանում մինչ այդ չուսումնասիրված՝ արևմտահայ մամուլի և հրապարակախոսության եզրափակիչ փուլի բազմակողմանի և շատ կողմերով խորապես դրամատիկ դրվագների հետազոտությամբ: Գիրքը տպագրվել է հայերի ցեղասպանության 100-ամյա տարելիցին, և այս առթիվ կուզենայի մեջբերել հեղինակի սրտառու ընծայականը՝ «Ի հիշատակ ցեղասպանությանը զոհ գնացած հայ սերունդների, ովքեր եղել են այս գրքում ներկայացված մամուլի ընթերցողներն ու հեղինակները»: Այդպիսին է մամուլը՝ մեր ժողովրդի պատմական ճակատագրի հավաստի անդրադարձը, որ հնարավոր չէ աղարտել, և որից միայն դասեր պետք է քաղել, կարծում է հոբեյարը:

Գիտության բավիղներում հմտացած հետազոտողը նաև ուսումնամեթոդական ձեռնարկների և մամուլի պատմության դասընթացների ծրագրերի հեղինակ է, որոնցում ուսանելի ցուցումներ է տալիս հայ մամուլի պատմությամբ զբաղվելու ցանկություն ունեցողներին և նրանց ուղղորդում իրենց ապագա մասնագիտություններում: Նա նաև դպրոցական դասագրքերի համահեղինակ է:

Մեծ է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանի ներդրումը հայ մամուլի պատմության ուսումնասիրության մեջ: Նա իր կարևոր ներդրումն ունի նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հիմնարար հետազոտությունների շարքում: Նկատի ունենք «Հայ պարբերական մամուլի պատմություն» երկհատորը (հ. 1,

XVIII-XIX դարեր, Կահիրե, 2006, հ. 2, 1900-1922, Ե., 2017)՝ «ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակությամբ: Իր ընդգրկած ժամանակաշրջանով և մամուլի ծավալային չափերով այս երկհատորյակը աննախադեպ երևույթ է հայ պարբերական մամուլի պատմությանը վերաբերող բազմաթիվ աշխատությունների մեջ: Երկու հատորն էլ խմբագրել են Ա. Խառատյանը և պատմական գիտությունների դոկտոր Լ. Գևորգյանը: Եվ իր անբասիր գործունեության համար Ա. Խառատյանը բազմիցս պարգևատրվել է տարբեր կազմակերպությունների պատվոգրերով, գովեստագրերով ու վաստակագրերով, դարձել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և «ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի դափնեկիր, արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

Արգասաբեր գիտնականին շնորհավորելով իր 80-ամյա հոբելյանի առթիվ՝ նրան մաղթում ենք կորովի առողջություն, երիտասարդական խանդավառություն, հաջողություններ անձնական կյանքում և նորանոր բացահայտումներ հայագիտության մեջ և հայ մամուլի պատմության անդաստանում:

ՍՎԱԶՅԱՆ ՀԵՆՐԻԿ

Պատմական գիտությունների դոկտոր

Խմբագրության աշխատակազմը ևս ջերմորեն շնորհավորում է Ալբերտ Խառատյանին՝ «Լրաբեր» հանդեսի երկարամյա վաստակաշատ գլխավոր խմբագրին, նրան մաղթելով անխոնջ ընթացք գիտության բավիղներով, ամուր առողջություն և մտքի անսպառ եռանդ:

**«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի
խմբագրություն**

ՅՈՒՐԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(ծննդյան 80-ամյակի առթիվ)



Ազգագրագետ Յուրի Իսրայելի Մկրտում-յանը ծնվել է 1939 թ. հունվարի 1-ին Թբիլիսիում: 1957 թ. ոսկե մեդալով ավարտելով Թբիլիսիի թիվ 86 տասնմեկամյա միջնակարգ դպրոցը՝ ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որը գերազանցության դիպլոմով ավարտում է 1962 թ.՝ պատմաբան-ազգագրագետի որակավորմամբ: Թեև Մոսկվայում նրան սպասվում էր աշխատանքային խոստումնալից հեռանկար, սակայն նախընտրում է համեստ աշխատանք հայրենիքում՝ լաբորանտի, ապա կրտսեր գիտաշխատողի պաշտոն ՀՀ ԳԱ ՀԱԻ ազգագրու-

թյան սեկտորում: 1968 թ. Մոսկվայում պաշտպանում է թեկնածուական թեզ, իսկ 1974 թ. ստանում է դոցենտի կոչում:

1970 թվականից Յու. Մկրտումյանը «Ազգագրություն» է դասավանդում ԵՊՀ պատմության ֆակուլտետում (ինագիտության և աղբյուրագիտության ամբիոն): Կարճ ժամանակ անց նրա անմիջական ջանքերով ուսումնական ծրագրում տեղ գտան ազգագրական մի շարք առարկաներ, և ամբիոնը վերանվանվեց «Հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության»: Յու. Մկրտումյանն ստանձնեց «ազգագրության ցիկլի» ղեկավարությունը՝ աստիճանաբար այն վերածելով ազգագրական կադրերի պատրաստման հիմնական «դարբնոցի»:

Ելնելով ազգագրագետ գիտնականի և մանկավարժի հայեցակետից՝ Յու. Մկրտումյանը գիտական լուրջ մոտեցում էր ցուցաբերում ուսումնական գործի կազմակերպմանը՝ համատեղելով և՛ ՄՊՀ-ում ստացած գիտելիքները, և՛ աշխարհի տարբեր համալսարաններում ընդունված մեթոդներն ու սկզբունքները, և՛ հայ ավագ գործընկերների բազմամյա փորձն ու հմտությունները:

Տարիների նպատակասլաց աշխատանքը հանգեցրեց այն բանի, որ հանրապետությունում բարձրացավ ազգագրագետների պահանջարկը, և 1989 թ. իրականացավ Յու. Մկրտումյանի նվիրական երազանքներից մեկը՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետում բացվեց ազգագրության ամբիոն: Որպես վաստակի

գնահատական, նաև հետագա հաջողությունների ակնկալիքով՝ ԵՊՀ ղեկավարությունն ու գործընկերներն ամբիոնի ղեկավարությունը վստահեցին հիմնադրին՝ Յու. Մկրտումյանին: Ուսումնական ծրագրում ընդգրկվեցին նոր դասընթացներ, օրինակ՝ «Հայերի էթնոգենեզը և էթնիկ պատմության հիմնական փուլերը», «Հայ Սփյուռքի ազգագրություն», «Էթնիկ կոնֆլիկտները Կովկասում» և այլն:

Հայագիտական և կովկասագիտական գիտելիքը Յու. Մկրտումյանը հանրայնացնում էր ոչ միայն հայ ուսանողության և գիտական շրջանակում, այլև աշխարհի տարբեր համալսարաններում դասավանդելով: 1993 թ. հունվար-մայիս ամիսներին «Ֆուբրայթ» ծրագրի շրջանակում դասավանդել է Ֆիլադելֆիայի Թեմփլ համալսարանում: Հպարտությամբ նշում էր, որ Մոսկվայի պետական համալսարանում երկու կարգավիճակ է ունեցել՝ և՛ ուսանողի, և՛ դասախոսի:

Տևական աշխատանքային փորձի և գիտամանկավարժական պրպտումների շնորհիվ նա հանգել էր այն եզրակացության, որ ամբիոնում դասավանդվող առարկաների գերակշիռ մասը պետք է լինի կայուն, իսկ մեկ երրորդը կարող է փոփոխվել՝ կապված գիտության, քաղաքական ու տնտեսական իրավիճակների, այսինքն՝ ժամանակի պահանջների հետ:

Ուսումնական գործընթացի հիմնական ուղղություններն արտացոլվում էին ոչ միայն դասավանդվող առարկաների ընտրության մեջ, այլև կուրսային ու դիպլոմային աշխատանքների թեմաներում, որոնց զգալի մասը հետագայում շարունակվեց որպես ատենախոսական աշխատանք: Դեռևս 1980-ական թվականներից՝ ազգագրագետ շրջանավարտների մի սովոր խումբ նրա անմիջական ղեկավարությամբ ու գիտական աջակցությամբ պաշտպանեց թեկնածուական ատենախոսություններ: Նշենք, որ այդ տարիներին համալսարանում միայն ազգագրության ամբիոնի ուսանողների համար էր դասավանդվում «Գիտական աշխատանքի մեթոդները» առարկան:

Դեռևս Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին նրա ձեռնարկով ստեղծվեց ուսումնական գործին նպաստող մասնագիտական գրականության մի եզակի գրադարան, որը մինչ օրս հասանելի է և՛ դասախոսներին, և՛ ուսանողներին: Ուսումնական գործընթացում Յու. Մկրտումյանը կարևորում էր մայրենի լեզվով դասագրքերի առկայությունը: «Ազգագրության հիմունքներ» հայերեն դասագրքի հրատարակությունը, որը նրա հերթական նվիրական երազանքն էր, անկատար մնաց: Ռուսերենից թարգմանեց Յ. Բրոմլեյի խմբագրությամբ դասագիրքը, որը, սակայն, ինչ-ինչ պատճառով չհանձնեց տպագրության: Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, նաև հայոց մշակույթի տարբեր բնագավառների հանրահռչակման նպատակով ազգագրագետ ուսանողները նրա անմիջական ղեկավարությամբ միջոցառումներ էին կազմակերպում՝ նվիրված ժողովրդական տոներին, ուտեստին, տարագին և այլն:

Ժողովրդի հետ անմիջական շփման, դաշտային նյութերի գրառման հմտություններն ուսանողները ձեռք էին բերում համալսարանի ազգագրական գիտարշավներում (ՀԱԳ): Յու. Մկրտումյանի եռանդուն և արդյունավետ գործունեության այս ասպարեզը առանձին ուսումնասիրության է արժանի: Նկատենք միայն, որ եղել են դեպքեր, երբ ուսանողները հրաժարվել են Մոսկվա-Լենինգրադ թանգարանային պրակտիկայից՝ գերադասելով մասնակցությունը ՀԱԳ-ին: ՀԱԳ-ը մի ուրույն մոդել էր հայկական գերդաստանական ընտանիքի, որտեղ կար նահապետ, և յուրաքանչյուր անդամ ուներ իր պարտականություններն ու իրավունքները: Որպես արշավախմբի պետ՝ մեծագույն պատասխանատվություն ուներ գիտարշավի յուրաքանչյուր անդամի նկատմամբ, միաժամանակ չափազանց խիստ էր ընդունված կարգուկանոնը խախտելու դեպքում: Ամենախիստ պատիժը, անկախ կարգավիճակից, կարգազանցին տուն ուղարկելն էր, որի մասին անբեկանելի որոշումը հայտնում էր նախորդ երեկոյան, ընթրիքի ժամանակ, իրեն հատուկ կիրթ տոնով: Հայաստանի համար նույնիսկ ամենաճանր տարիներին համալսարանի ազգագրական գիտարշավները չդադարեցին, որովհետև, շնորհիվ իր անբասիր համբավի, միշտ հնարավորություն էր գտնում միջոցներ հայթայթելու: ՀԱԳ-ի բարձր կազմակերպվածության գործում կարևոր դեր են ունեցել իր ուսանողական գիտարշավների ընթացքում նկատած թերություններից քաղած դասերը: Հաճախ էր պատմում իր առաջին ազգագրական գիտարշավի մասին, որ կայացել էր Դաղստանում 1958 թ. ամռանը՝ առաջին կուրսն ավարտելուց հետո:

Յու. Մկրտումյանը կարևորում էր նաև տարբեր սերունդների գիտական շփումը: Հաճախ էր ՀԱԳ-երին, նաև ազգագրական սեմինարներին հրավիրում ազգագրական հիմնարկների ներկայացուցիչներին: Դրանք կազմակերպվում էին և՛ Սարդարապատում՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, և՛ ազգագրության ամբիոնում՝ դրանով իսկ նաև պահպանելով ազգագրական թանգարան-ամբիոն սերտ կապը:

Ամենափոքր առիթն անգամ բաց չէր թողնում կազմակերպելու ԽՍՀՄ տարբեր համալսարանների ազգագրագետ ուսանողների հանդիպումներ, հայ ուսանողներին ծանոթացնելու անվանի ազգագրագետների հետ. այսպես՝ 1987 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից հրավիրված հայտնի գիտնականների մասնակցությամբ Թբիլիսիում նշվում էր վրացի անվանի ազգագրագետ Ա.Ի. Ռոբակիձեի 80-ամյակը: Նա ուսանողներին հնարավորություն ընձեռեց հարստացնելու «Կովկասի ժողովուրդների ազգագրություն» առարկայի շրջանակում ստացած գիտելիքը՝ ապահովելով անմիջական շփում Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչների, նրանց մշակույթների հետ:

Յու. Մկրտումյանը յուրաքանչյուր ուսանողի վերաբերվում էր որպես հավասարի, որպես ապագա գիտնականի: Անչափ հիասթափվում էր նրանց անհաջողություններից և ոգևորվում հատկապես գերազանցիկներով: Ուշագրավ է, որ ժամանակին նրա անունը Մոսկվայի պետական համալսարանի թերթում նշվել էր «Լավագույնը լավագույններից» շարքում: Հաճախ Յու. Մկրտումյանին կշտամբում էին ուսանողներին «երես տալու» համար, գտնելով, որ դրանից մեծամտանում են և իրենց կայացած գիտնականներ համարում: Այս հարցի շուրջ նա ուներ իր կարծիքը. «Մի փոքր ավելի գովասանքը օգտակար է, խելացի ուսանողին ոգևորում է»:

Յու. Մկրտումյանը, որպես մանկավարժ և երկրի քաղաքացի, մեծագույն պատասխանատվությամբ էր վերաբերվում նաև ազգագրագետ շրջանավարտների հետագա գործունեության հարցերին: Որոշ ազգագրագետներ դեռևս ուսանողական տարիներից էին ընդգրկվում աշխատանքի գիտամշակութային տարբեր կառույցներում, այդ թվում՝ իր ղեկավարած Ազգագրական լաբորատորիայում, էթնոմշակութային հետազոտությունների «Ոստան» կենտրոնում, որտեղ զբաղվում էին հայ փախստականների ադապտացիայի, ազգային փոքրամասնությունների և այլ հիմնախնդիրներով: Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում ջանք չխնայեց օգնելու ազգագրագետներին՝ աշխատելու հատկապես մասնագիտական ոլորտում: Նրան հաճախ էին հանդիմանում, որ ուսանողների խնդիրների լուծմանը շատ ժամանակ է տրամադրում, որից տուժում էր իր գիտական գործունեությունը: Այս հարցում էլ հստակ համոզմունք ուներ. «Պետք է շատ կարդալ, իսկ գրել՝ թեկուզ քիչ, բայց բովանդակալից, էական, խորը»:

Յու. Մկրտումյանի մանկավարժական հմտությունները, ուսումնական գործի կազմակերպման անկրկնելի տաղանդը կարծես թե սովերել էին նրա գիտական գործունեությունը: Նա մեծ մանկավարժ էր և միաժամանակ մեծ գիտնական: Հեղինակ է շուրջ չորս տասնյակ գիտական աշխատությունների, որոշ դրույթներ նորամուծություն են, զգալի ներդրում գիտության, հատկապես մշակույթի տեսության մեջ: Իրեն երբեք ազգաբան չանվանեց, սակայն նրա հետաքրքրություններն ընդգրկում էին ազգաբանական լուրջ հիմնախնդիրներ, նա իսկապես խորը տեսաբան ու վերլուծաբան էր:

Ազգագրության բնագավառում Յու. Մկրտումյանի հաջողության գրավականներից մեկը իր էությունն էր, այդ գործի համար շահեկան բնավորությամբ ու խառնվածքով. նա զրուցասեր էր, շփվող, կենսուրախ, լավատես, բարյացակամ: Մանկավարժության, կրթական գործի կազմակերպման մեջ նրա աննախադեպ ձեռքբերումներն առաջին հերթին պայմանավորված էին իր գործին անմնացորդ ու անշահախնդիր նվիրումով, գիտականորեն հիմնավորված մե-

թողների ու անհատական հմտությունների կիրառմամբ, և, վերջապես, նա ոչ միայն մեծ մտավորական էր, այլև բարոյական բարձր նկարագրով Մարդ:

Դասախոսության ժամանակ մատուցած նյութը մնայուն գիտելիքի վերածելու հաջողված մեթոդ էր կիրառում՝ *էքսպրես* հարցումներ. դասի սկզբում մի քանի ուսանողի հարցնում էր նախորդ դասախոսության նյութը և գնահատում էր: Դասախոսությունները համեմուն էր տպավորիչ օրինակներով՝ նյութը մատուցում էր կենցաղային ուշագրավ պատմություններով, նպաստելով, որ դրանք հիշվեն ողջ կյանքում: Դասախոսություններում կային ներշնչանք, ոգեշնչում: Լինելով արտիստիկ կերպար՝ նրան հաջողվում էր դասախոսության որոշ հատվածներ ներկայացնել որպես փոքրիկ բեմադրություններ:

Ազգագրագետի կոչմանը մեծանուն գիտնականը հավատարիմ մնաց նաև՝ Հայաստանի Հանրապետության համար բախտորոշ տարիներին ստանձնելով ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի շատ պատասխանատու պաշտոնը Ռուսաստանի Դաշնությունում: Քաղաքական գործունեությանը զուգահեռ՝ նա շատ բան արեց երկու պետությունների մշակութային ու կրթական համագործակցության խորացման ուղղությամբ:

Դիվանագիտական առաքելությունն ավարտելուց հետո վերադարձավ հարազատ ինստիտուտ, իսկ 2000 թ. կրկին ստանձնեց ամբիոնի ղեկավարությունը: 2003 թ. հերթական ՀԱԳ-ից վերադառնալու հաջորդ օրը ուղեղի կաթված ստացավ: Լինելով պայքարող անձնավորություն, որ հաղթահարել էր բազում դժվարություններ՝ նա չնահանջեց. կարողացավ վերադառնալ լսարան, կրթել նոր սերունդների, սակայն լիովին վերականգնվելն անհնար էր: Քաջ գիտակցելով, որ այլևս հնարավոր չէ լիարժեքորեն նվիրվել սիրած գործին, 2004 թ. սեպտեմբերին դիմեց համալսարանի ղեկավարությանը՝ դոցենտ-խորհրդատուի հաստիքի փոխադրվելու խնդրանքով: Թեև Յու. Մկրտումյանի նվիրական հերթական երազանքը՝ պատմության ֆակուլտետում բացել ազգագրության բաժին, իր կենդանության օրոք չիրականացավ, սակայն նա անմիջական մասնակցություն ունեցավ մշակութաբանության և կովկասագիտության բաժինների բացման գործում: Անգնահատելի է Յու. Մկրտումյանի դերը նաև Հնագիտության և ազգագրության բաժնի բացման գործում, քանզի նա իրական հիմք էր ստեղծել, որպեսզի աշակերտները շարունակեն մեծ ուսուցչի անավարտ գործը:

Յու. Մկրտումյանի գիտամանկավարժական գործունեության մեծագույն ձեռքբերումներից մեկն այն է, որ ստեղծեց ազգագրական դպրոց, որի ներկայացուցիչներն իրենց կարևոր տեղն ունեն ոչ միայն կրթության, գիտության և մշակույթի ասպարեզում, այլև բազմաթիվ հետազոտական ծրագրերով իրենց նպաստն են բերում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած բազում խնդիրների լուծմանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միրայեյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 985
Ստորագրված է տպագրության 06.12.2019 թ.:
Տպագրական 19 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 06.12.2019 г.
19 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 06.12.2019
19 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am